

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԳՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

ՀԱՅԱՍՏԱՆ

9-րդ դասարան

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ



2014

ՀՏԴ 373.167.1:914/919(075.3)
ԳՄԴ 26.8g72
Մ 246

Մանասյան Մ.
Մ 246 Աշխարհագրություն: Հայաստան: Հանրակրթական դպրոցի 9-րդ
դաս. դասագիրք/ Մանասյան Մ., Հովսեփյան Ա. - Եր.:
Տիգրան Մեծ, 2014.- 240 էջ:

ՀՏԴ 373.167.1:914/919(075.3)
ԳՄԴ 26.8g72

ISBN 978-99941-0-587-8

© Մ. Մանասյան, 2014 թ.
© Ա. Հովսեփյան, 2014 թ.
© «Տիգրան Մեծ», 2014 թ.

ԴԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ 9-րդ դասարանցիներ, ուսումնառության անցած տարիներին աշխարհագրության դասընթացների օգնությամբ դուք մտովի ճանապարհորդել եք մայրցամաքներով ու օվկիանոսներով, ծանոթացել երկիր մոլորակի՝ մարդկության ընդհանուր տան, նրա տարբեր շրջանների բնական պայմաններին ու ռեսուրսներին, տնտեսության ճյուղերին: Իմացել եք, որ աշխարհում բնակվող ավելի քան 4000 ժողովուրդները խոսում են տարբեր լեզուներով, պատկանում են տարբեր ռասաների, դավանում տարբեր կրոններ, ունեն տարբեր ավանդույթներ ու սովորույթներ: Գիտեք նաև, որ այդ ժողովուրդները միավորված են շուրջ 200 պետությունների մեջ, որոնք և բաժանված են պետական սահմաններով:

Ամեն մի ժողովուրդ յուրովի է կազմակերպում իր կյանքը և օգտագործում մարդկության ընդհանուր տան իրեն բաժին ընկած հատվածը, իր ավանդույթներով ու օրենքներով է կառուցում ու կառավարում սեփական տունը, որն իր հայրենիքն է:

Միջին դպրոցի 7-րդ և 8-րդ դասարաններում Հասարակական աշխարհագրության երկու դասընթացներով դուք ուսումնասիրել եք ժամանակակից աշխարհը որպես մեկ ամբողջություն: Միաժամանակ քննարկել եք աշխարհի տարբեր տարածաշրջանների և պետությունների բնության, բնակչության և տնտեսության առանձնահատկությունները, փոխադարձ կապերն ու հարաբերությունները հեռու ու մոտիկ հարևանների հետ, յուրաքանչյուրի տեղն ու դերն արդի անհանգիստ աշխարհում: Համոզվել եք, որ ամեն մի պետություն ու ժողովուրդ, հնարավորինս պահպանելով համամարդկային օրենքներն ու բարոյական արժեքները, ձգտում է միաժամանակ բարեկեցիկ դարձնել իր կյանքը, զարգացնել մշակույթը, հզորացնել սեփական պետությունը և ամրապնդել իր տեղն ու դերը աշխարհում:

Ժամանակակից աշխարհի շուրջ 200 պետություններից է նաև Հայաստանի Հանրապետությունը, որը համայն հայության հայրենիքն է: Նրա աշխարհագրության ուսումնասիրությանն է նվիրված սույն դասընթացը:

Այսպիսով՝ 7-9-րդ դասարանների աշխարհագրության դասընթացները կազմում են մեկ միասնական շղթա՝ բաղկացած երեք հիմնական օղակներից: Առաջին օղակի (7-րդ դասարան) բովանդակությունը մեկ ամբողջություն կազմող աշխարհն է, նրա բնակչությունը, քաղաքական բաժանումը, համաաշխարհային տնտեսությունը: Երկրորդ օղակը (8-րդ դասարան) նվիրված է մեկ ամբողջություն հանդիսացող աշխարհի հիմնական տարածաշրջաններին և դրանց կազմում գտնվող պետություններին: Միասնական շղթայի երրորդ՝ ավարտական օղակը նվիրված է միասնական աշխարհի և Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանի բաղադրիչներից մեկին՝ Հայաստանին, որը մենք ուսումնասիրելու ենք խորությամբ և բազմակողմանիորեն:

Մշտապես հիշենք, որ մեր հայրենիքի՝ Հայաստանի աշխարհագրության խոր իմացությունը յուրաքանչյուր հայի նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի, հայրենի ժողովրդի պատմության ու մշակույթի իմացությունը: Այն հայագիտական հիմնական դասընթացներից է:

Մեր հայրենիքի աշխարհագրության իմացությունը կօգնի մեզանից յուրաքանչյուրին ճիշտ գնահատել նաև նրա զարգացման հեռանկարներն ու իրական հնարավորությունները, ճիշտ կողմնորոշվել համաշխարհային ու տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին: Միայն խորապես ճանաչելով է հնարավոր ըստ արժանվույն գնահատել մեր հայրենիքը՝ Հայաստան աշխարհը, սիրել այն և նվիրվել նրա հզորացման ու բարգավաճման վեհ նպատակին:

Մեծն Րաֆֆին է ասել. «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

Ուրեմն, սիրելի պատանիներ ու աղջիկներ, նվիրումով ուսումնասիրենք հայության միակ հայրենիքի՝ ավետյաց երկիր Հայաստանի աշխարհագրությունը, խորապես ճանաչենք մեր երկիրը, սիրենք այն և հպարտությամբ ծառայենք նրա բարօրությանը:

Հայաստանի տարածքում աշխարհագրական հետազոտությունները կատարվել են անհիշելի ժամանակներից: Այդ են վկայում բաբելոնյան, ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունները: Հայկական լեռնաշխարհ այցելել և ուսումնասիրություններ են կատարել հույն հայտնի գիտնականներ **Հերոդոտոսը, Քսենոֆոնը, Ստրաբոնը և Պտղոմեոսը** (Ք.ա. V-I դ.դ.):

Հայ հեղինակների աշխատություններից աշխարհագրական տեղեկություններ և վերլուծություններ են պարունակում հատկապես **Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (V դ.) և Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց» (VII դ.)** գրքերը: Անանիա Շիրակացու աշխատանքներում առաջարկներ են արվում Հայաստանի վարչատարածքային բաժանման վերաբերյալ, տրվում են լեռնագրական, կլիմայական, ջրաբանական և կենսաաշխարհագրական բնույթի նկարագրություններ:

Համեմատաբար նոր ժամանակներում՝ սկսած XIX դարից, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական հետազոտություններ սկսել են կատարել արևմտաեվրոպական և ռուս գիտնականներն ու ճանապարհորդները (**Ի. Շոպեն, Հ. Աբիխ, Հ. Լինչ** և այլք): Մինչխորհրդային շրջանում հայ հեղինակների աշխարհագրական աշխատանքները հիմնականում կատարվել են Հայաստանից դուրս եղած գաղթավայրերում, մշակութային կենտրոններում, հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանությունում (**Ղ. Ալիշան** և ուրիշներ):

Հայաստանի բնության, բնակչության և տնտեսության, դրանց առանձին բաղադրիչների ճյուղային և համալիր տարածքային աշխարհագրական

հետազոտությունների ամենաբուռն ժամանակաշրջանը խորհրդային և հետխորհրդային տարիներն են: Այդ ժամանակաշրջանում աշխարհագրագետներն ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող բազում հիմնախնդիրների լուծմանը, որոնք վերաբերում են վարչատարածքային բաժանմանը, բնօգտագործմանը և բնապահպանությանը, բնակչության և տնտեսության արդյունավետ տեղաբաշխմանը, ՀՀ տարածաշրջանների համալիր սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Դասընթացն ունի հետևյալ թեմատիկ կառուցվածքը.

- ◆ Հայկական լեռնաշխարհ,
- ◆ Հայաստանի Հանրապետություն: Ընդհանուր ակնարկ,
- ◆ ՀՀ բնությունը,
- ◆ ՀՀ բնակչությունը,
- ◆ ՀՀ տնտեսությունը,
- ◆ ՀՀ վարչական մարզերը,
- ◆ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Յուրաքանչյուր թեմա բաժանված է ենթաթեմաների և դասերի (տեսական, գործնական և կրկնության):

ՀՀ-ի տարածքը թեև փոքր է, սակայն այն առանձնանում է բնության, բնակչության և տնտեսության խիստ բազմազանությամբ, դրանց տարածքային տարբերությունները, փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները ստեղծում են տարածաշրջանների խայտաբղետ պատկեր:

Եթե դասերում տրված նյութը խորացնում է ձեր գիտելիքները, օգնում ճանաչել բնական միջավայրի, բնակչության ու տնտեսության կապերը և զարգացման օրինաչափություններն ու օրենքները, ապա գործնական աշխատանքները, դաշտային էքսկուրսիաները և կրկնության համար նախատեսված ժամերն ուղղված են ձեր հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տեղ է զբաղեցնում Հայաստանի աշխարհագրություն դասընթացը դպրոցական աշխարհագրության համակարգում:
2. Որո՞նք են Հայաստանի աշխարհագրության դասընթացի նպատակն ու խնդիրները:
3. Ինչո՞ւ է անհրաժեշտ հայրենիքի աշխարհագրության խոր իմացությունը:
4. Ովքե՞ր են Հայաստանի տարածքի հին և նոր ժամանակաշրջաններում աշխարհագրական հետազոտություններ կատարող առաջին ճանապարհորդներն ու գիտնականները:
5. Ներկայումս հայ աշխարհագրագետները ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող ինչպիսի՞ հիմնախնդիրների լուծմանն են մասնակցում:
6. Բնութագրե՞ք Հայաստանի աշխարհագրության թեմատիկ կառուցվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

ԴԱՍ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶՈՒՄ: ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Հայաստան անունն աշխարհի տարբեր լեզուներով տարբեր կերպ է հնչում: Միջազգային տարածում ունի լատիներեն **Armenia** անվանումը: Կան նաև այլ անվանումներ՝ Արմանա, Արմենի, Էրմենիստան, Սոմխեթի և այլն:

Հայաստանի տարածքի չափերն ու սահմանները տարբեր են աշխարհի ֆիզիկական, պատմական, բնակչության և քաղաքական քարտեզներում: Ֆիզիկական քարտեզներում տեսնում ենք, որ Հարավարևմտյան Ասիայի բարձրավանդակների շարքում Հայաստան աշխարհը պատկերված է որպես կենտրոնական դիրք գրավող տարածք, որը կրում է **Հայկական լեռնաշխարհ** անվանումը: Նրանից արևմուտք տարածվում է **Փոքրասիական (կամ Անատոլիական) բարձրավանդակը**, իսկ հարավարևելյան հարևանությամբ **Իրանական բարձրավանդակն է**:

Հայկական լեռնաշխարհը նման է մի վիթխարի «պարսպապատ կղզու»՝ ընկած Պիրենեյան թերակղզուց մինչև Հնդկաչին թերակղզի ձգվող երկրագնդի ամենախոշոր՝ Ալպ-Հիմալայան լեռնային գոտում: Գտնվելով այս գոտու կենտրոնական մասում՝ այն գրավում է մոտ 400 հազ. կմ² մակերես:

Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական դիրքի նկարագիրը դրանով չի սպառվում: Նրա հյուսիսում **Մեծ Կովկասի լեռնային համակարգն է**, հարավում՝ **Միջագետքի դաշտավայրը**, արևելքում՝ **Կուր-Արաքսյան դաշտավայրը**, որը հարում է Կասպից ծովին, հյուսիս-արևմուտքում՝ **Սև ծովը**, իսկ հարավ-արևմուտքում՝ **Միջերկրական ծովի ափամերձ լեռնաշղթաները**:

Հայկական լեռնաշխարհի **համաաշխարհագրական կամ մաթեմատիկաաշխարհագրական դիրքը** քարտեզի վրա արտահայտվում է տարածքի եզրակետերի կամ կենտրոնական մասում գտնվող երկրաչափական կենտրոնի աշխարհագրական կոորդինատներով:

Քարտեզի վրա որոշեք Հայկական լեռնաշխարհի տարածքի ծայրակետերի և մոտավոր երկրաչափական կենտրոնի աշխարհագրական կոորդինատները, չափեք դրանց հեռավորությունը բևեռից ու հասարակածից կիլոմետրերով և ստացված փոյալները գրանցեք աշխարհագրության ձեր տետրում:

Հայաստան պետության և հայ ժողովրդի զբաղեցրած տարածքի սահմանները հազարամյակների ընթացքում բազմիցս փոփոխվել են: (Հիշեք Տիգրան Մեծի տերությունը, որը ձգվել է Միջերկրական ծովից մինչև

Կասպից ծով և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Միջագետքի դաշտային մասը): **Հայաստան** են կոչվել նաև Հայկական լեռնաշխարհի (պատմական Հայաստանի) տարբեր մասերում, տարբեր ժամանակներում ձևավորված թագավորություններից մինչև մերօրյա Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հայոց անկախ պետությունները:

Հայկական լեռնաշխարհը շարունակել են **Հայաստան** կոչել նույնիսկ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը զրկված է եղել անկախ պետականությունից:



Դուք արդեն գիտեք, որ աշխարհագրական դիրքի տարատեսակներից յուրաքանչյուր պետության համար առանձնահատուկ կարևորություն ունեն նաև **տնտեսաաշխարհագրական (ՏԱԴ)** և **քաղաքաաշխարհագրական (ՔԱԴ)** դիրքերը: Դրանք, ի տարբերություն նախորդների, ձևավորվում են հասարակական երևույթների ազդեցությամբ և ենթակա են այնպիսի արագ փոփոխությունների, որոնք կարող են տեղի ունենալ ինչպես տվյալ պետությունից անկախ պատճառներով (արտաքին պատճառներ), այնպես էլ ուղղակիորեն պայմանավորված են նրա ներքին քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումներով և փոփոխություններով (ներքին պատճառներ):

Այդ ամենն ակնառու կերպով երևում է նաև մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով:

Հայոց պետականության **հզորացման ու անկման ժամանակները** հանգեցրել են երկրի **ՔԱԴ**-ի ու **ՏԱԴ**-ի դիրքի արմատական փոփոխություն-

ների: Երբ Հայաստանը եղել է ծովային պետություն, ունեցել է բարեկամ հզոր հարևաններ և, գտնվելով Արևելքն Արևմուտքին կապող միջազգային առևտրական-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող **Մետաքսի ճանապարհի վրա՝** հզորացել է ու բարգավաճել:

Դրան հակառակ, շատ հաճախ ՔԱԴ-ի փոփոխությունը պետության ու ժողովրդի տառապանքների պատճառ է դարձել: Հայաստանը հայտնվել է թշնամական շրջապատման մեջ, զրկված է եղել ծովային սահմաններից, Արևելքի ու Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի հարևանների համար դարձել է **մրցակցության և տևական պատերազմների թատերաբեմ:** Նվաճվել ու թալանվել է նրանց կողմից, զրկվել է պետական անկախությունից, իսկ ժողովուրդը ենթարկվել է ճնշման և բռնազաղթի:

Այսօր, հարյուրամյակների ընդմիջումից հետո, հայ ժողովուրդը կարողացել է իր **անկախությունը վերահաստատել որպես միջազգայնորեն ճանաչված ինքնիշխան** պետություն ու միջազգային հանրության լիիրավ անդամ և գոյություն ունենալ իր պատմական բնատարածքի շուրջ 10%-ն ընդգրկող սահմաններում:

Հայաստանի Հանրապետության ՔԱԴ-ին և ՏԱԴ-ին մանրամասնորեն կծանոթանաք հաջորդ թեմաներն ուսումնասիրելիս:

Հարցեր և առաջադրանքներ


1. Ֆիզիկական քարտեզի վրա ցոյց տվեք Հայկական լեռնաշխարհը և նկարագրեք նրա սահմանները:
2. Համեմատե՞ք տարբեր պատմական քարտեզներում պատկերված Հայաստան պետության սահմանները Հայկական լեռնաշխարհի բնական սահմանների հետ:
3. Ո՞րն է «աշխարհագրական դիրք» հասկացության բովանդակությունը: Թվարկե՞ք և համեմատե՞ք դրա տարատեսակները:
4. Որո՞նք են Հայաստանի ՔԱԴ-ի և ՏԱԴ-ի փոփոխման պատճառները:

ԴԱՍ 3. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Միլիոնավոր տարիներ առաջ Ալպ-Հիմալայան լեռնային համակարգի տեղում եղել է նույնանուն գեոսինկլինալային իջվածքը, որտեղ տարածվել է Թետիս օվկիանոսը:

Հայկական լեռնաշխարհը ձևավորվել է մոտ 25-30 մլն տարի առաջ այդտեղ ընթացող ալպյան լեռնակազմական գործընթացների շնորհիվ: Ծովն աստիճանաբար նահանջել է, և բարձրացող գեոսինկլինալը վերածվել է լեռնային երկրի. երկրաբանական շերտերը խախտվել են, բեկորատվել՝ գոյացնելով ծալքաբեկորային լեռներ: Այդ ամենն ուղեկցվել է ուժեղ հրաբխային ժայթքումներով:

**Հայկական լեռնաշխարհի բնական պայմանների գլխավոր
առանձնահատկությունները**



Դրանց արդյունքում ձևավորվել է Հայկական լեռնաշխարհի ներկայիս բարդ մակերևույթը՝ բաղկացած **Միջնաշխարհ** կամ **Հայկական բարձրավանդակ** կոչվող հատվածից և դրա համար «պարսպի» դեր կատարող **եզրային լեռնաշղթաներից**:

Եզրային լեռնաշղթաների համակարգի մեջ են մտնում լեռնաշխարհը հյուսիսից, արևելքից, հարավ-արևելքից և հարավից պարսպի պես շրջապատող **ծալքաբեկորավոր լեռները**: Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում են **Արևելապոնտական** լեռները: Նրա հյուսիսային զառիթափ, անտառապատ լանջերը մխրճվում են Սև ծովի ջրերի մեջ և խիստ մասնատված են:


Լեռնաշխարհն արևելքից եզերող ծալքաբեկորավոր լեռնաշղթաները կազմում են **Փոքր Կովկասի** լեռնային համակարգը: Այն սկսվում է Սև ծովի ափերից և աղեղնաձև, զուգահեռաբար ձգվող երկու լեռնաշղթաներով հասնում մինչև Արաքս գետ՝ նրա ստորին հոսանքում:

Լեռնաշխարհը հարավ-արևելքից պարսպող լեռներից նշանավոր են Արաքսի աջ ափին գտնվող **Հայկական (Ղարադաղի), Զագրոսի** լեռնաշղթայի հյուսիսային հատվածի ծալքաբեկորավոր լեռներն ու **Սավալան** հրաբխային վիթխարի զանգվածը: Չորային կլիմայի պատճառով այս լեռները ենթարկվում են ֆիզիկական հողմահարման, մասնատված են ժամանակավոր գետերով:

Լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի ցածրադիր հարթավայրի հարևանությամբ, բարձրանում է **Արևելյան (Հայկական) Տավրոսի** լեռնաշղթան՝ իր ճյուղավորումներով: Լեռնաշղթայի արևելյան մասն



Հայկական Պար լեռնաշղթան



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆՆԵՐ

- Միջլեռնային գոգավորություններ, դաշտեր
- Սարահարթեր, սարավանդներ
- Բարձրադիր տեկտոնահրաբխային լեռներ
- Ծալքաբեկորավոր լեռներ
- 5165 • Խոշոր լեռնազանգվածներ (բացարձակ բարձրությունը՝ մետր)
- Խաբաձային կոներ



արևմտյանի համեմատ բարձր է և Աջքաքարում հասնում է 2840 մ-ի: Այս գագաթից արևելք Հայկական Տավրոսը լայնանում է և կոչվում **Սասնա լեռներ**՝ հայոց ազատագրական պայքարի կնիքը կրող **Անդոկ, Մարութա** և **Ծովասար** գագաթներով: Բաղեշի հովտից արևելք Հայկական Տավրոսի համակարգը կոչվում է **Կորդվաց**, ապա՝ **Հաքյարի (Այգառքի)**: Լեռնագագաթները հասնում են մեծ բարձրության: Այստեղ է գտնվում Հայկական լեռնաշխարհի բարձր գագաթներից **Ջիլոն** (4168 մ):

Հայկական բարձրավանդակը (Միջնաշխարհ) պայմանականորեն կարելի է բաժանել լեռնագրական երեք միավորի.

- ա) **Ներքին Տավրոսի լեռնային համակարգ,**
- բ) **Հայկական հրաբխային բարձրավանդակ,**
- գ) **միջլեռնային գոգավորություններ:**

Ներքին Տավրոսի լեռնային համակարգը զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Միջնաշխարհի կենտրոնական մասով: Այստեղ առանձնանում է **Հայկական Պար** լեռնաշղթան, որը ձգվում է Մեծ Մասիսից դեպի արևմուտք:

Հայկական հրաբխային բարձրավանդակն ընդգրկում է լեռնաշխարհի՝ երիտասարդ լավաներով ծածկված տարածքը և բաժանվում է **Հյուսիսային, Կենտրոնական** և **Հարավային** մասերի:

Հյուսիսային մասում տարածվում են **Արդահանի** և **Ախալքալաքի** ընդարձակ, բլրավետ սարավանդները, **Ջավախքի** լեռները: Ջավախքի լեռների վրա առանձնանում են սառցադաշտերի կողմից մասնատված **Աբուլ** և **Սամսար** գմբեթաձև գագաթները:

Կենտրոնական մասը ձգվում է Կարսի սարահարթից մինչև Այունիքի բարձրավանդակ: Այստեղ առանձնանում են **Արագած** լեռնազանգվածը և **Գեղամա** լեռները, բազմաթիվ լավային սարավանդներ:

Հարավային մասի հրաբխային լեռնագրական միավորները տարածվում են հիմնականում **Ներքին Տավրոսի** և **Հայկական Տավրոսի** միջև: Այստեղ է գտնվում Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը՝ **Մեծ Մասիսը՝ Բիբլիական Արարատը** (5165 մ):

Արարատը հայոց մեջ հայտնի է **Մեծ Մասիս** անվամբ: Այն հայ ժողովրդի սուրբ լեռն է, որին նվիրվել են բազմաթիվ լեգենդներ, ասույթներ և այլն: Ըստ ավանդության՝ այս լեռան վրա է ջրհեղեղից հետո իջել Նոյ նահապետի տապանը: Այդքան հրապուրիչ Արարատը, լինելով հրաբխային լեռնազանգված, ծածկված է քարացրոններով, գրեթե զուրկ է բուսական ծածկույթից: Նրա վրա չկան աղբյուրներ, բացառությամբ զոյգ Մասիսները միացնող թամբոցի վրա գտնվող Սարդարի աղբյուրի: Պարզկա օրերին լեռան վրա երևում է ստորոտից գագաթ ձգվող խորխորատը, որը հայտնի է «Վիհ Մասսյաց» անունով: Արարատյան դաշտի կողմից Մեծ Մասիսի հարաբերական բարձրությունը հասնում է 4300 մ-ի:

Հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում ձգվում է **Բյուրակնի** լեռնազանգվածը: Վերջինս իր անունը ստացել է լեռնազանգվածում գտնվող բազմաթիվ աղբյուրների և մանր լճերի պատճառով:



Մեծ և Փոքր Մասիսները

Վանա լճի արևմտյան մասում վեր է խոյանում ընդարձակ խառնարանով Նեմրուֆ գործող հրաբուխը, որից այժմ էլ դուրս են գալիս տաք գազեր, ջրեր ու գոլորշիներ: Նեմրուֆի վերջին ժայթքումները գրանցվել են 1441-1442 թթ.: **Ծաղկանց** լեռների արևելյան եզրին գտնվում է Թոնդրակ հրաբուխը, որը նման է հսկայական թոնրի և մինչ այժմ ծխում է: Վանա լճի հյուսիսային ափին է գտնվում Հայկական լեռնաշխարհի բարձր գագաթներից Սիփան լեռը (4434 մ):

Միջլեռնային գոգավորությունները ձգվում են լեռնային համակարգերին զուգահեռ և համապատասխանում են խոշոր գետերի ու լճերի ավազաններին: Առանձնանում են Արաքս, Արևմտյան և Արևելյան Եփրատ գետերի, Սևանա, Վանա, Ուրմիա լճերի գոգավորությունները: Հայագիտության մեջ միջլեռնային այդ գոգավորությունները կոչվում են նաև դաշտեր¹: Այդպիսիք են, օրինակ, Արարատյան, Շիրակի դաշտերը:

Արաքսի ավազանում հայտնի են Բասենի և Միջինարաքսյան գոգավորությունները: Բասենի գոգավորության հատակը՝ Բասենի դաշտը, տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում՝ 1700-1900 մ բարձրությունների վրա:

Արևմտյան Եփրատի ավազանում առանձնանում են Կարնո և Երզնկայի դաշտերը: Կարնո դաշտը տարածվում է Արևմտյան Եփրատի ակունքներում՝ 1800-2000 մ բարձրության վրա: Դաշտի հատակը հարթ է, տեղ-տեղ՝ ճահճոտ: Այստեղ շատ են հանքային աղբյուրները: Երզնկայի դաշտը տա-

¹ Դաշտ կոչվող հիշյալ գոգավորությունները չպետք է շփոթել «դաշտավայր» հասկացության հետ, որը, ինչպես գիտեք, վերաբերում է ծովի մակարդակից մինչև 200 մ բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրերին:



*Միփանը Վանա լճի
համայնապատկերում*



*Լիճ Նեմրուփի
խառնարանում*

րածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքում՝ 1200-1400 մ բարձրության վրա: Այն Հայկական լեռնաշխարհի սեյսմիկ ակտիվ շրջաններից է: Այստեղ հաճախակի են եղել ավերիչ երկրաշարժեր: 1463 թ. Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժը խլեց շուրջ 20 հազ. մարդկային կյանք:

Արևելյան Եփրատի (Արածանու) ավազանի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են **Ալաշկերտի, Մշո, Խարբերդի** դաշտերը: Ալաշկերտի դաշտն ամենաբարձրն է, գտնվում է 1700-1900 մ բարձրության վրա: Մշո դաշտը ձուլվում է Սասնա լեռների հյուսիսահայաց լանջերին: Այն ծածկված է բարեբեր հողերով, դաշտի կենտրոնով հոսում է Մեղրագետը: Մշո դաշտից արևմուտք՝ Արածանու ստորին հոսանքում, որտեղ միախառնվում են Արևմտյան և Արևելյան Եփրատի ջրերը, տարածվում է **Խարբերդի դաշտը**: Դաշտի մեծ մասն այժմ զբաղեցնում է Քեբանի խոշոր ջրամբարը:

Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունները հնագույն ժամանակներից եղել են հողագործության հայտնի շրջաններ:

Հայկական լեռնաշխարհի օգտակար հանածոները: Հայկական լեռնաշխարհը պղնձի, բրոնզի ու երկաթի ձուլման հնագույն շրջաններից է: Լեռնաշխարհը հարուստ է **մետաղային հանքավայրերով**, ինչը կապված է երկրի ընդերքում մագմայի առաջացրած ներժայթուկների հետ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մետաղների հարուստ հանքավայրերը լեռնաշխարհի եզրային մասերում են՝ Արևելապոնտական, Փոքր Կովկասի, Հայկական Տավրոսի լեռներում:

Երկաթի հանքավայրերից նշանավոր են Փոքր Կովկասի հյուսիսարևելյան լանջին գտնվող Դաշքեսանինը, ինչպես նաև Աղծնիքում, Արդվինի շրջանում և Տուրուբերանում հայտնաբերված հանքավայրերը և այլն:

Պղնձի խոշոր հանքավայրերից մեկը գտնվում է Արևելյան Տավրոսի լեռներում, Արկնի բերդաքաղաքի շրջանում: Պղնձի և նրան ուղեկից բազմամետաղների (ոսկի, արծաթ, կապար, ցինկ) հանքավայրեր են գտնվում Բաբերդի շրջանում, դեպի Սև ծով տանող ճանապարհի մերձակայքում և Ճորոխի ավազանում (Սպերի շրջան): Բազմամետաղների և պղնձի հարուստ պաշարներով նշանավոր են նաև Փոքր Կովկասի և Հայկական (Ղարադաղի) լեռները:

Շուրջ 4000 տարի առաջ Հայկական լեռնաշխարհում ոսկի են արդյունահանել, ինչի վկայությունը Սևանի ափին գտնվող Լճաշեն հնավայրում հայտնաբերված ոսկերչական իրերն են: Ոսկու և արծաթի հարուստ պաշարներ կան Ագիրոկաստրոնում (այժմ՝ Գյումուշհանե), Վանա լճի հարավում, Հայկական Տավրոսի լեռներում և այլուր:

Հայկական լեռնաշխարհի տարածքի մոտ 1/3 մասը ծածկող հրաբխային լավաներն առաջացրել են շինանյութերի (տուֆ, պեմզա, պեռլիտ և այլն) հարուստ հանքավայրեր: Տուֆի խոշոր հանքավայրերը գտնվում են Արագածի և Սիփանի լեռնազանգվածներում, Շիրակում և Մերձերևանյան շրջանում:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է բազալտի, գրանիտի ու մարմարի պաշարներով: Բազալտի պաշարներն այնքան շատ են, որ գործնականում դրանք չսպառվող են համարվում:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է հանքային բուժիչ ջրերի աղբյուրներով: Թոնդրակի հյուսիսային ու արևելյան մասում գտնվող տաք աղբյուրներում, որոնց կոչում են Վարշակի ցերմուկներ, մի շարք ճանապարհորդների վկայությամբ, առանց կրակի տեղացիները ոչխար էին եփում: Հանքային աղբյուրների շատ ելքեր կան Տիգրիսի վերին հոսանքներում, Ծովք լճի մոտ:

Լեռնաշխարհի տարածքում քիչ են նավթի, ածխի, կավի և նստվածքային ծագման այլ հանքային հարստություններ: Ածուխն առաջնություն չի օգտագործվել: Ոչ հարուստ հանքավայրեր կան Բաբերդում, Կարինից հյուսիս ու արևելք ընկած շրջանում և Օլթի գետի ավազանում: Լեռնաշխարհում նավթաբեր շրջանները չափազանց քիչ են: Նավթի փոքր պաշարներով առանձնանում են Արածանիի ավազանը, Վանա լճի և Տիգրիսի վերին հոսանքի շրջանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Լեռնակազմական դր գործընթացներն են ձևավորել Հայկական լեռնաշխարհի մակերևույթը:
2. Ի՞նչ լեռնագրական միավորների է բաժանվում Հայկական լեռնաշխարհը: Ի՞նչ գործոններով է այն պայմանավորված:
3. Թվարկե՛ք և քարտեզի վրա ցույց տվե՛ք Հայկական լեռնաշխարհի եզրային լեռնային համակարգերը:
4. Ի՞նչ մասերից է կազմված Հայկական հրաբխային բարձրավանդակը: Մակերևույթի ի՞նչ ձևեր են բնորոշ Հայկական հրաբխային բարձրավանդակին:
5. Թվարկե՛ք և քարտեզի վրա ցույց տվե՛ք Արաքսի, Արևմտյան Եփրատի և Արածանու ավազաններում գտնվող միջլեռնային գոգավորությունները:
6. Ի՞նչով է պայմանավորված Հայկական լեռնաշխարհի մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հարուստ հանքավայրերի առկայությունը:
7. Ուրվագծային քարտեզի վրա նշե՛ք օգտակար հանածոների նշանավոր հանքավայրերը:

ԴԱՍ 4. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհն իր աշխարհագրական դիրքի և լեռնային մակերևույթի պատճառով ունի ուրույն կլիմայական պայմաններ: Մեր **լեռնաշխարհի կլիման ձևավորող գլխավոր գործոններն են.**

1. աշխարհագրական դիրքով պայմանավորված արեգակնային ճառագայթման մեծությունը,
2. մթնոլորտի շրջանառության առանձնահատկությունները,
3. մակերևույթի լեռնային բնույթը և առանձնահատկությունները,
4. Միջերկրական և Կասպից ծովերի մոտիկությունը,
5. Իրանական և Արաբական անապատների մոտիկությունը:

Հիշեք Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:

Հայկական լեռնաշխարհում աշխարհագրական դիրքի պատճառով **լավ արտահայտված են տարվա չորս եղանակները:** Արեգակի ճառագայթների անկման անկյունն ամռանը կազմում է 72-77°, իսկ ձմռանը տատանվում է 25-30°-ի միջև: Ամռանը ցերեկվա տևողությունը հասնում է 15-16 ժամի, իսկ ձմռանն այն նվազում է մինչև 9 ժամ:

Կլիմայի կարևոր բնութագրիչներից է **արևափայլի տևողությունը**, որն արտահայտվում է տվյալ վայրում ամբողջ տարվա ընթացքում արևոտ ժամերի գումարով: Արևափայլի տևողությունը մեծ է Միջնաշխարհում և տարեկան կազմում է 2600-2800 ժամ, իսկ եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերին ամպամածության մեծացման պատճառով այն փոքրանում է:

Հայկական լեռնաշխարհի կլիմայի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողնում բարեխառն, արևադարձային և երբեմն նաև արկտիկական օդային զանգվածները:

Քարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից՝ բերելով խոնավություն և համեմատաբար մեղմ եղանակներ:

Դրանք, անցնելով Միջերկրական և Սև ծովերի տաք ջրերի վրայով, առատ տեղումներ են բերում Արևելապոնտական լեռների առափնյա հյուսիսահայաց լանջերին (2000-3000 մմ): Սակայն Հայկական լեռնաշխարհում տեղումներն առատ չեն: Միջնաշխարհը տարեկան միջինը ստանում է 400-500 մմ տեղումներ, իսկ դրա ցածրադիր գոգավորությունները (Արարատյան, Ուրմիայի և այլն)՝ 300 մմ-ից պակաս:

Հայկական լեռնաշխարհում ընդհանուր օրինաչափություն է արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տեղումների քանակի նվազումը և եզրային լեռնահամակարգերի արտաքին հողմակողմ լանջերին տեղումների ավելի մեծ քանակը, քան Միջնաշխարհի ներքին լանջերին:

Ամառային ամիսներին հարավից լեռնաշխարհ են թափանցում արևադարձային տաք և չոր օդային զանգվածները, որոնք բարձրացնում են

ցածրադիր գոգավորությունների ամառային ջերմաստիճանները (երբեմն +40°-ից բարձր), առաջացնում երաշտային եղանակներ:

Ձմռան ամիսներին մեր լեռնաշխարհ են թափանցում **բարեխառն, երբեմն նաև արկտիկական** օդային զանգվածները: Այստեղ հաճախակի են վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունները: Լեռների կատարային մասերում՝ 4200 մ-ից սկսած, ձյունը պահպանվում է ամբողջ տարին:

Միջնաշխարհում ձմեռը երկարատև է և ձյունառատ: Ձյան շերտի հաստությունը աճելով՝ բարձր լեռների գագաթամերձ մասերում հասնում է 2 մ-ի:

Միջլեռնային գոգավորություններում հաստատվում է **ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)**: Լեռնային գոգավորությունների երկրամերձ շերտը մայրամուտից անմիջապես հետո ճառագայթարձակման պատճառով սկսում է անմիջապես պաղել: Դա շարունակվում է մինչև արևածագ: Դրա հետ մեկտեղ պաղում է նաև գետնամերձ օդի շերտը և կուտակվում գոգավորությունների հատակային մասում: Մինչդեռ օդի բարձր շերտերում նախորդ ցերեկվա ընթացքում տաքացած օդը պաղում է ավելի դանդաղ և մնում է վերևում: Օդի այդ շերտում, ստորին շերտի համեմատ, ջերմաստիճանը բարձրանում է, ինչի պատճառով էլ խախտվում է ըստ բարձրության օդի ջերմաստիճանի նվազման ընդհանուր օրինաչափությունը, և տեղի է ունենում **ջերմաստիճանային շրջադասություն**:

Բարձրադիր գոգավորություններում (Կարսի, Աշոցքի) օդի ջերմաստիճանը՝ երբեմն կարող է իջնել -40°-ից ցած:

Հայկական լեռնաշխարհում **կլիմայական տարբերություններ առաջացնող տեղական ամենակարևոր գործոնը լեռնային բարդ ռելիեֆն է**: Տարածքի բարձր տեղադիրքը, միջլեռնային գոգավորությունների մակերևույթի բնույթը և լեռնալանջերի կողմնադրությունը մեծ ազդեցություն են թողնում լեռնաշխարհի առանձին հատվածների կլիմայի վրա: Այդ պատճառով Հայկական լեռնաշխարհը համարում են կլիմայական հակադրությունների երկիր: Լեռնաշղթաները և խոշոր հովիտներն ուղղորդում են օդային զանգվածներին: Օրինակ՝ Կասպից ծովից եկող խոնավ օդային զանգվածներն Արստևի հովտով հասնում են Վանաձոր, առաջացնում տեղումներ և մեղմացնում են կլիման: Նույն երևույթը կատար-



Ուրմիա լճի ավազանում է գրանցվել բացարձակ առավելագույն ջերմաստիճանը

1 Դասագրքում օդի ջերմաստիճանը տրված է ըստ Ցելսիուսի (C):

վում է Ճորոխի և Սևծովյան ավազանի այլ գետերի հովիտների միջին և վերին մասերում:

Լեռնաշխարհում կլիման փոփոխվում է վերընթաց ուղղությամբ. գլխավոր օրինաչափությունը ջերմաստիճանի 5° - 6° -ով անկումն է յուրաքանչյուր 1000 մ բարձրանալիս: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը մինչև 3000-3400 մ բարձրություններում դրական է, իսկ դրանից բարձր՝ բացասական: Քաջքար, Արարատ, Արագած լեռնագագաթներին այն կազմում է -2° - 6° :

Հայկական լեռնաշխարհում ամենատաք ամիսը հուլիսն է: Հուլիսյան միջին ջերմաստիճանն ամենացածրադիր դաշտերում հասնում է $+25^{\circ}$ - 30° , միջին բարձրության լեռնային գոտում՝ $+15^{\circ}$ - 20° , բարձր լեռնային գոտում՝ $+5^{\circ}$ - 10° : Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում ($+46^{\circ}$): Օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տատանման լայնույթն անցնում է 90° -ից: Վերջինս լեռնաշխարհի կլիմայի ցամաքայնությունը հաստատող հիմնական ցուցանիշն է:

Հայկական լեռնաշխարհում, ցրտահարություններից բացի, մարդու գործունեությանը մեծ վնասներ են հասցնում կարկուտները, զարնանային ձնհալքերից ու տեղատարափ անձրևներից առաջացած սելավները:


Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի կլիման ձևավորող հիմնական գործոնները: Ներկայացրե՞ք դրանց փոխադարձ կապերը:
2. Ի՞նչ առանձնահատկություններ ունի մթնոլորտի շրջանառությունը Հայկական լեռնաշխարհում:
3. Ի՞նչ օրինաչափություններ են նկատվում Հայկական լեռնաշխարհում մթնոլորտային տեղումների բաշխման մեջ:
4. Լեռնաշխարհի կլիմայի վրա ի՞նչ ազդեցություն ունի տեղանքի բացարձակ բարձրությունը:
5. Որո՞չեք Սիփան լեռան գագաթին օդի ջերմաստիճանը, եթե նույն պահին Վանա լճի ափին (1800 մ) այն $+12^{\circ}$ է:

ԴԱՍ 5. ՋՐԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՑԸ

Քանի որ Հայկական լեռնաշխարհի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է, այդ պատճառով նրա ջրագրական ցանցը թույլ է զարգացած: Այդուհանդերձ, այստեղ շատ են արագահոս, սահանքավոր լեռնային գետերը, գեղատեսիլ լճերը, բարձր լեռների կատարներին ամբողջ տարին պահպանվող փոքր սառցադաշտերը: Միջլեռնային գոգավորությունների ապարաշերտերում և լեռնավահանների ու սարավանդների ճեղքատված լավաներում կուտակված են ստորերկրյա ջրեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԸ



Մեր լեռնաշխարհը բարձրադիր ջրբաժան է **Կասպից** և **Սև** ծովերի, ինչպես նաև **Պարսից** ծոցի ավազանների միջև: Այստեղից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի նշանավոր գետեր Եփրատը, Տիգրիսն ու Արաքսը, որոնց ակունքները լեռնաշխարհի կենտրոնական հատվածում մոտենում են միմյանց:

Եփրատն ու Տիգրիսը պատկանում են **Պարսից** ծոցի ավազանին: **Եփրատը** կազմավորվում է Արևմտյան Եփրատի և Արևելյան Եփրատի (Արածանու) միախառնումից: **Արևմտյան Եփրատը** սկիզբ է առնում **Ծաղկավետ** լեռներից, հատելով մի քանի դաշտեր (հիշե՛ք դրանց անունները)՝ ստորին հոսանքում ստեղծում է **Ակն** խոր կիրճը և ապա դուրս գալիս **Խարբերդի** դաշտ:

Արևելյան Եփրատը (Արածանին) սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիսային լանջերից: Ալաշկերտի մոտ նրան է միախառնվում **Բագրևանդ** վտակը: Մինչ **Խարբերդի** դաշտում Արևմտյան Եփրատին միանալը գետն անցնում է մի քանի դաշտերով և դրանց միջև գտնվող խոր կիրճերով: Արածանու ջրերը հազարամյակներ շարունակ օգտագործվել են **Խարբերդի**, **Բալահովտի** և **Մշո** դաշտերի ոռոգման համար:



Թորթումի ջրվեժը



«Հայոց մայր գետ» Արաքսը

Եփրատը Մալաթիայի դաշտում մի քանի վտակներ ընդունելուց հետո «սղոցում» է **Հայկական Տավրոսի լեռնաշղթան** և, առաջացնելով ավելի քան 300 սահանք ու ջրվեժ, դուրս է գալիս Միջագետքի հարթավայր:

Տիգրիսը սկիզբ է առնում Հայկական Տավրոսի լեռներից և ձևավորվում է Արևմտյան և Արևելյան Տիգրիս վտակների միախառնումից: Այն, սնվելով Հայկական Տավրոսի միջին և բարձր գոտու առատ տեղումներից, Եփրատի համեմատ ավելի ջրառատ է: Ստորին հոսանքում այն Միջագետքի հարթավայրում միանում է **Եփրատին** և կազմում **Շաթ-էլ-Արաբ** գետը:

Կասպից ծովի ավազանի նշանավոր գետերն են **Արաքսը** և **Կուրը**: Արաքսը կոչել են «**հայոց մայր գետ**»: Սկիզբ առնելով **Բյուրակնի** լեռների լճակ-աղբյուրներից՝ Արաքսը հոսում է հյուսիսարևելք և ճեղքելով Հայկական Պարը՝ մտնում է **Բասենի** դաշտ:

Այնուհետև հոսելով **Կաղզվանի ոչ լայն դաշտում** առաջացրած 1000 մ խորությամբ կիրճով՝ գալարուն հունով մտնում է **Արարատյան** դաշտ:

Արաքսը Մեղրու կիրճում սահանքներ առաջացնելուց հետո հոսում է Կուր-Արաքսյան դաշտավայրով և ակունքից սկսած 1072 կմ թափառելուց հետո միանում է **Կուրին**:

Արաքսի բերուկները պատճառ են դարձել, որ գետն Արարատյան դաշտում փոխի իր հունը: Արգիշտիխինիլի, Արմավիր և Արտաշատ պատմական քաղաքներից բնակչությունը հեռացել է կենսական նշանակություն ունեցող Արաքսի հունը փոխվելու պատճառով: Արաքսը, ինչպես և Եփրատը, համարվում է **դրախտի չորս գետերից մեկը** (Գեհոն կամ Գիհոն):

Կուրը սկիզբ է առնում **Կող** բարձր լեռնային գոգավորության ճահիճներից: Վերին հոսանքում այն գեղատեսիլ կիրճերով լեռնային գետ է: Ստորին հոսանքում հանդարտ հոսելով՝ իր մեջ ներառում է Արաքսը և թափվում է Կասպից ծով: Կուրի նշանավոր վտակներն են **Խրամ** (Դեբեդի հետ միասին), **Աղստև**, **Փարվանա** և **Թարթառ** գետերը:

Սև ծովի ավազանին պատկանող գետերից Հայկական լեռնաշխարհում հայտնի է **Ճորոխը**¹ իր Թորթում և Օլթի վտակներով: Այս գետերն առաջացրել են խոր կիրճեր, սահանքներ ու ջրվեժներ: Նշանավոր է Թորթում գետի վրա 40 մ բարձրությամբ նույնանուն գեղատեսիլ ջրվեժը:

Հայկական լեռնաշխարհի **գետերի սևման ռեժիմը խառն է**: Հիմնականում սնվում են ձնհալքի, անձրևների և մասամբ ստորգետնյա ջրերով: Հորդացումները տեղի են ունենում գարնանը և աշնանը: Ամռանը և ձմռանը գետերում ջրի քանակը կտրուկ նվազում է: Միջնաշխարհի (հատկապես Ուրմիա լճի ավազանի) կարճ, սակավաջուր գետերն ամռանը հիմնականում ցամաքում են:

Լճերը: Հայկական լեռնաշխարհը հարուստ է լճերով, որոնք տարբեր ծագում ունեն: Լեռնաշխարհում առավել տարածված են **տեկտոնական, տեկտոնահրաբխային, հրաբխային և սառցադաշտային ծագման** լճերը:

Տեկտոնական ծագման ամենամեծ լիճը **Ուրմիան** է (հնում կոչվում էր Կապուտան ծով): Լճի մակերեսը 5,8 հազ. կմ² է, խորությունը՝ մինչև 15 մ: Լճի հայելու բարձրությունը ծովի մակարդակից 1275 մ է: **Ուրմիան անհոսք է**, մակարդակի տատանումները տարվա ընթացքում մեծ են: Գարնանը լճի ջրերը բարձրանալով ծածկում են մոտակա ճահիճներն ու աղուտները, իսկ ամռան վերջին լճի հատակի զգալի մասում բացվում է ձյունաճերմակ աղի շերտը: Այդ ժամանակ լճի աղիությունը հասնում է 250%-ի: Լիճ թափվող գետերը ջրառատ չեն: Համեմատաբար խոշոր են Սալմաստի գետը, Կարմիրջուրը: Ուրմիա լճում ձկներ չեն ապրում:

Տեկտոնահրաբխային ծագման լճերից խոշորներն են **Վանա և Սևանա** լճերը¹:

Վանա լիճը հնում կոչվել է Տոսպա լիճ, Ռշտունյաց ծով, Նաիրի երկրի ծով և այլ անուններով: Հարավային ափերին լճի մեջ են մխրճվում Հայկական Տավրոսի զառիթափ ժայռերը: Հյուսիսային մերձափնյա հարթություններին զուգահեռ ձգվում են **Ծաղկանց**, արևելքից՝ **Վասպուրականի** լեռները:

Վանա լճի մակարդակը հաճախակի տատանվել է: Ժամանակին լճի ափին կառուցված Արճեշի բերդի մնացորդներն այժմ կիսով չափ ջրի տակ են: Դա վկայում է լճի մակարդակի բարձրացման մասին:

Վանա լճի հայելին գտնվում է ծովի մակարդակից 1720 մ բարձրության վրա, առավելագույն խորությունը 451 մ է: Սա նույնպես անհոսք լիճ է: Աղիությունը Ուրմիայի համեմատ բավականին փոքր է, կազմում է մոտ 20% (բացատրե՛ք՝ ինչու): Լճի մեջ արևելքից և հյուսիս-արևելքից թափվում են Բերկրի, Արճեշ և այլ գետերը: Լճի միակ բնակիչը **Վանա տառեխ** ձկնատեսակն է:

Վանա լճում կան կղզիներ, որոնցից նշանավոր է **Աղթամարը**: Այստեղ է գտնվում հայոց միջնադարյան կոթողներից մեկը՝ 10-րդ դարի Սուրբ Խաչ եկեղեցին, որը վերջերս վերանորոգվել է:

¹ Սևանա լճին կծանոթանաք համապատասխան բաժնում:



Աղթամար կղզին

Միջնաշխարհում շատ են **հրաբխային ծագման** լճերը: Դրանք հատկապես շատ են Ախալքալաքի սարահարթում (**Փարվանա, Խանչալի, Տաբացկուրի, Սաղամո**): Փոքր լճեր են առաջացել հրաբուխների խառնարաններում, հնագույն լեռնային սառցադաշտերի առաջացրած գոգավորություններում:

Խառնարանային լճերը վերևից դիտելիս առանձնահատուկ հմայք են հաղորդում հրաբխային գագաթներին: Դրանցից ամենամեծը **Նեմրուֆի լիճն** է, որն առաջացել է համանուն լեռնագագաթի ընդարձակ խառնարանում: Խառնարանային լճերը հիմնականում սնվում են մթնոլորտային տեղումներով, իսկ սառցադաշտային լճերը՝ հալոցքային ջրերով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գործոններ են ազդում Հայկական լեռնաշխարհի ջրագրական ցանցի տեղաբաշխման վրա:
2. Ո՞ր ավազաններին են պատկանում Հայկական լեռնաշխարհի գետերը: Թվարկե՞ք և ցույց տվե՞ք քարտեզի վրա:
3. Հույն պատմագիր Վիրգիլիոսը Արաքսը կոչել է «կամուրջներ չհանդուրժող գետ»: Բացատրե՞ք ինչու:
4. Ինչպե՞ս են դասակարգվում Հայկական լեռնաշխարհի լճերն ըստ ծագման:
5. Բացատրե՞ք Ուրմիա և Վանա լճերի աղիությունների տարբերության պատճառները: Համեմատե՞ք Ուրմիա լճի աղիությունը Համաշխարհային օվկիանոսի աղիության հետ:

ԴԱՍ 6. ՀՈՂԵՐԸ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաշխարհի երկրաբանական առանձնահատկությունները, լեռնային բարդ ռելիեֆը և դրանով պայմանավորված կլիմայական պայմանների բազմազանությունն ու ջրագրական ցանցի տեղաբաշխումը **հանգեցրել են հողերի, բուսական ու կենդանական աշխարհի մեծ բազմազանության:**

Հայկական լեռնաշխարհը նախ և առաջ առանձնանում է **բազմազան ու խայտաբղետ հողային ծածկույթով, հողերի տարբեր տիպերով**, որոնք գոյացել են բազմաթիվ գործոնների փոխազդեցության արդյունքում: Դրանք են՝ լեռնային ռելիեֆը և բացարձակ բարձրությունների մեծ տարբերությունները, տարաբնույթ ապարները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները, կլիմայի և բուսածածկույթի բազմազանությունը:

Լեռնաշխարհի ցածրադիր գոգավորություններում (Արարատյան, Նախիջևանի, Խարբերդի) և դրանց նախալեռներում՝ մինչև 1000-1100 մ բարձրությունները, ձևավորվել են **կիսաանապատային գորշ և ոռոգելի մարգագետնային հողերի տիպերը**: Դրանք հումուսից աղքատ են (հումուսայնությունը չի անցնում 1-2%-ից): Այս հողերի զգալի մասը մարդու կողմից հազարամյակներ շարունակ մշակվելու արդյունքում վերափոխվել է **կուլտուր-ոռոգելի հողերի**:

Մինչև 1800 մ բարձրության միջլեռնային գոգավորություններում ձևավորվել են **շագանակագույն հողերը**: 1800-2500 մ բարձրություններում, հատկապես Միջնաշխարհում և հրաբխային սարահարթերում ու սարավանդներում ձևավորվել են **լեռնային սևահողերը**, որոնք ավելի բարձրադիր մասերում վերափոխվում են **մարգագետնատափաստանային հողերի**:

Արևելապոնտական լեռների սևծովյան առափնյա շրջաններում խոնավ մերձարևադարձային կլիմայի պայմաններում առաջացել են **կարմրահողեր և դեղնահողեր**: Եզրային մյուս լեռնաշղթաների արտաքին լանջերին ձևավորվել են անտառային **դարչնագույն և գորշ հողերը**:

2500 մ-ից բարձր ցուրտ լեռնային կլիմայի պայմաններում ձևավորվել են բարձր՝ 11-15% հումուսայնությամբ **լեռնամարգագետնային հողեր**: Հումուսի բարձր պարունակությունն այստեղ պայմանավորված է ոչ այնքան առատ բուսածածկույթով, որքան ցուրտ կլիմայի պայմաններում հողում կուտակված օրգանական նյութերի (հումուսի) դանդաղ քայքայմամբ: Ավելի բարձր, խիստ ցուրտ լեռնային կլիմայի պայմաններում գրեթե բուսազուրկ գոտում տարածվում են **թերզարգացած, այսպես կոչված, «կմախքային» հողերը**:

Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում **բուսական աշխարհի բացառիկ բազմազանությամբ**: Դրան նպաստել են ոչ միայն տեղական գործոնները, այլև **տարբեր բուսաբանական** (Իրանական, Կովկասյան և Միջերկրածովային) **մարզերի շփման գոտում գտնվելը**: Այստեղ աճող շուրջ 4000 բուսատեսակից 200-ը **էնդեմիկ են**, այսինքն՝ հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում:

Բուսականությունը, ինչպես և կլիման ու հողերը, վերընթաց ուղղությամբ փոփոխվում են: Ցածրադիր գոգավորությունների կիսաանապատային գորշ հողերում աճում են **աղասեր, ավազասեր և ճահճային** բուսատեսակներ: Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների



Եղեգնակապու



Հայկական իծ



Երաշտահավ

նախալեռնային գոտում տարածված է լեռնաչորասեր՝ **Ֆրիգանոիդ** բուսականությունը (ոզնաթուփ, ուրց, մասրենի, ցաքի):

Անտառային բուսականությունը բնորոշ է եզրային լեռնաշղթաների արտաքին հողմակողմ լանջերին: Արևելապոնտական լեռների հյուսիսային լանջերի՝ ծովափից մինչև 2000 մ բարձրությունները ծածկված են անտառներով: Փոքր Կովկասի և Հայկական Տավրոսի լեռներում անտառները բարձրանում են մինչև 2500 մ բարձրությունները: Անտառների ստորին հարկում տիրապետում են **լայնատերևները**, իսկ վերին հարկում՝ **փշատերևները**: Միջնաշխարհում՝ մինչև 2400-2500 մ բարձրություններում, գրեթե համատարած **տափաստանային** բուսականություն է, թեև տեղ-տեղ հանդիպում են անտառային փոքր կղզիներ:

Անտառային և տափաստանային բուսականությունից վեր տարածվում են **մերձալպյան և ալպյան գոտու** գետնատարած ծաղկազարդ «ալպյան գորգերը»:

Հայկական լեռնաշխարհում բուսական ծածկի տարբերություններին համապատասխան փոխվում է և **կենդանական աշխարհը**: Անտառներում հաճախ են հանդիպում այծյամը, եղջերուն, արջը, վարազը, սկյուռը: **Տափաստաններում** գերակշռում են կրծողները (դաշտամուկ, ճագարամուկ, նապաստակ), գիշատիչներից՝ աղվեսը, գայլը: **Բարձր լեռնային գոտու** քարափներում հանդիպում են վայրի ոչխարը (մուֆլոն), բեզուարյան այծը: **Ցածրադիր կիսաանապատներում** շատ են սողունները:

Ինչպես տեսանք, հողերը, բուսական և կենդանական աշխարհը Հայկական լեռնաշխարհում վերընթաց ուղղությամբ փոփոխվում են, արդյունքում փոփոխվում են նաև ամբողջ **բնական համալիրները՝ լանդշաֆտները**, որոնք պատկերված են էջ 24-ի քարտեզում:

Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները

Քարտեզի օգնությամբ թվարկեք Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտային գոտիները ստորոտներից դեպի լեռնագագաթները:

Հայկական լեռնաշխարհում ըստ բարձրության իրար են հաջորդում **մերձարևադարձային, անապատային-կիսաանապատային, լեռնատափաստանային, լեռնանտառային, մերձալպյան-ալպյան և ձյունամերձ լանդշաֆտային գոտիները**:

Միջնաշխարհի ամենացածրադիր շրջաններից մինչև 1000-1500 մ բարձրությունները տարածվում է **անապատային-կիսաանապատային գոտին**, որտեղ շատ են աղասեր և ավազասեր բույսերը: Դրանց հիմնական մասն ամռան սկզբին չորանում է:

Հայկական լեռնաշխարհում ամենից լայն տարածում ունի **տափաստանային գոտին**¹, որը զբաղեցնում է Միջնաշխարհի զգալի մասը՝ 1200-2500 մ բարձրությունները: Այս գոտու կլիման Միջնաշխարհի հարավային

¹ Տափաստանային գոտին բաժանվում է չոր տափաստանային և լեռնատափաստանային ենթագոտիների:

և կենտրոնական մասերում չորային է, այստեղ առավելապես գերիշխող է **խոտային** բուսականությունը:

Լեռնաշխարհի եզրային լեռնաշղթաների հողմակողմ լանջերը զբաղեցնում է **լեռնանտառային գոտին**: Այս գոտին հիմնականում ներկայացված է լայնատերև ծառատեսակներով (հաճարենի, կաղնի և այլն):

Հայկական լեռնաշխարհի բարձրադիր մասերում (հյուսիսային մասում 2100 մ-ից, իսկ հարավայինում՝ 2500 մ-ից բարձր) հաջորդաբար տարածվում են **մերձալպյան, ալպյան և ձյունամերձ լանդշաֆտային գոտիները**: **Մերձալպյան** գոտին առանձնանում է փարթամ և բարձր խոտային բուսականությամբ, իսկ **ալպյան գոտին**՝ բազմերանգ ծաղիկների գորգերով: **Ձյունամերձ** գոտին տարածվում է հիմնականում բարձր լեռների կատա...ում: Այստեղ երբեմն ստվերոտ գոգավոր փոքր տեղամասերում ձյունը պահպանվում է ամբողջ տարին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ բնական գործոններով է պայմանավորվում հողագոյացումը: Ինչպե՞ս են դրանք ազդում տարբեր հողատիպերի առաջացման վրա:
2. Ինչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվել Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհը:
3. Ինչո՞վ է պայմանավորված Հայկական լեռնաշխարհի բուսատեսակների և կենդանատեսակների մեծ բազմազանությունը:
4. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ: ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի շուրջ 200 անկախ, միջազգային ճանաչում ստացած պետություններից է: Տարածքի մեծությամբ (29743 կմ²) ու բնակչության թվով (3,02 մլն մարդ) փոքր երկիր է և զիջում է աշխարհի մոտ 130 պետությունների: Ընդհանուր տարածքն ընկած է հյուսիսային լայնության 38°50'-41°18'-ի և արևելյան երկայնության 43°27'-46°37'-ի միջև: Ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից՝ հարավ-արևելք՝ 360 կմ է:


Ձեզ հայտնի է, որ պատմական ժամանակներում Հայաստանի պետական սահմանները փոփոխվել են ոչ մեկ անգամ:

Հայաստանի Հանրապետությունն իր ներկայիս պետական սահմանները ժառանգություն է ստացել ԽՍՀՄ կազմում գտնվող կիսաանկախ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից (կրճատ՝ Հայկական ԽՍՀ):

Հայկական ԽՍՀ-ն ստեղծվել է 1920 թ.՝ ընդգրկելով Հայաստանի առաջին հանրապետության տարածքի միայն մի մասը: Դա տեղի է ունեցել միջազգային բարդ պայմաններում, երբ 1918 թ. Ռուսական կայսրությունից անջատված և նոր անկախացած անդրկովկասյան հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, տարբեր մոտեցումներ ունեին իրենց ապագա պետական սահմանների վերաբերյալ: Մինչ այդ Ռուսական կայսրության կազմում Անդրկովկասը (Հարավային Կովկասը) բաժանված էր **Նահանգների** (Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի) և **մեկ մարզի** (Կարսի): Այդ բաժանումը հաշվի չէր առնում էթնիկական սահմանները, և յուրաքանչյուր նահանգ միավորում էր տարբեր ազգերով բնակեցված տարածքներ: Այդ հանգամանքը դժվարացնում էր պետականություն ստեղծելու համար ազգերի համախմբումը և խոչընդոտում ազգային շարժումների ծավալմանը:

Անկախություն ստացած Ադրբեջանը և Վրաստանը ձգտում էին, որ պետական սահմաններն անցկացվեն Ռուսական կայսրության վարչական բաժանման սահմաններով: Անկախացած Վրաստանին ձեռնտու էր իրեն միացնել Թիֆլիսի նահանգն ամբողջությամբ, որի մեջ մտնում էին հայաբնակ Լոռին ու Զավախքը, իսկ Ադրբեջանը հավակնում էր ամբողջ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգին, որի կազմում էին հայաբնակ Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը:

ՀՀ տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի հատկանշական գծերը



Այդ ամենի արդյունքում 1920-1921 թթ. պաշտոնական ձևակերպում ստացան ՀԽՍՀ տարածքն ու սահմանները, որոնք 70 տարի անց նույնությամբ փոխանցվեցին Հայաստանի ներկայիս՝ երրորդ հանրապետությանը: Բայց այդ սահմաններն ունեին արդեն այլ բովանդակություն ու կարգավիճակ: 1922 թ. ստեղծվեց ԽՍՀՄ միասնական պետությունը: Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, մտնելով նրա կազմի մեջ, զրկվեցին պետական անկախությունից և ստացան կիսաանկախ քաղաքական տարածքային կազմավորման կարգավիճակ: Երեք հանրապետությունները բաժանող սահմանները դադարեցին պետական սահման լինելուց և դարձան միասնական պետության ներքին վարչական սահմաններ:

Պետական սահմանի կարգավիճակը պահպանեցին միայն Հայաստանի՝ Թուրքիայի ու Իրանի հետ սահմանները, բայց արդեն որպես ԽՍՀՄ սահմաններ:

Այդ վիճակը շարունակվեց մինչև ԽՍՀՄ լուծարումը (1991 թ.) և նախկին միութենական հանրապետությունների անկախացումը, երբ ստեղծվեց բոլորովին նոր քաղաքաաշխարհագրական իրադրություն:

Հայաստանի Հանրապետության ներկայիս ՔԱԴ-ի և ՏԱԴ-ի առանձնահատկություններից առանձնացնենք մի քանիսը.

1. ՀՀ-ն գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում: Նրա տարածքով անցնում են Թուրքիան Իրանին, Ադրբեջանին ու Կասպից ծովի ավազանին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը և Սև ծովը Իրանին ու արաբական երկրներին կապող երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր ճանապարհները:
2. Հարավային Կովկասով (և Հայաստանով) է անցնում Արևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհը, որը միջնադարի հռչակավոր «Մետաքսի ճանապարհի» օրինակով ստացել է «Մետաքսի նոր ճանապարհ» անունը: Դրա

զարգացմամբ շահագրգռված են ոչ միայն տարածաշրջանի երկրները, այլև ԱՄՆ-ը և Արևմուտքի մյուս խոշոր տերությունները:

3. Հայաստանը գտնվում է **արևմտյան (Եվրոպական), արևելյան (խլամական) և սլավոնական** քաղաքակրթությունների փոխազդեցության գոտում:
4. Ելք չունի դեպի ծովերն ու օվկիանոսները (ուղղակիորեն չի կարող օգտվել դրանց հաղորդակցության ուղիներից և բնական հարստություններից):
5. Հեռու է ընկած աշխարհի բարձր զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից:
6. Մոտ է գտնվում Պարսից ծոցի և Կասպից ծովի նավթագազաբեր ավազաններին, բնական տարբեր ռեսուրսներով հարուստ Ռուսաստանին և Իրանին:
7. Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական **շահերի բախման** տարածաշրջանում, որը հայտնի է **իր քաղաքական անկայունությամբ**:
8. Ռազմավարական դաշնակից համարվող Ռուսաստանի Դաշնության հետ չունի անմիջական սահման:

ՀՀ ներկա ՏԱԴ-ն բնութագրելիս և գնահատելիս պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Այդ դիրքը բնութագրող տնտեսաաշխարհագրական օբյեկտները՝ երկաթուղիները, ավտոխճուղիները, նավահանգիստները, նավթամուղներն ու գազամուղները, էլեկտրահաղորդման գծերը, հզոր արտադրական կենտրոնները, **եղել են նաև մինչև ՀՀ-ի անկախացումը**: Դրանք ծառայել են Հայաստանին և նրա ՏԱԴ-ն դարձրել նպաստավոր: Անկախացումից հետո էլ տվյալ կառույցները շարունակում են իրենց գոյությունը, զարգանում և կառուցվում են նորերը: **Սակայն ներկա պայմաններում Հայաստանի Հանրապետությունը չի օգտվում դրանց մեծ մասից**, որի պատճառով նրա ՏԱԴ-ն գնահատվում է ոչ նպաստավոր: Պատճառն այն է, որ գերակա նշանակություն է ձեռք բերել քաղաքաաշխարհագրական գործոնը:

Ինչ է դա նշանակում: **Ո՞րն է այդ քաղաքաաշխարհագրական գործոնի բովանդակությունը**: Անցյալ դարի 80-ական թվականների վերջերին բորբոքված ադրբեջանա-ղարաբադյան հակամարտությունը հանգեցրեց ՀՀ-ի հետ նրա անմիջական հարևաններից երկուսի՝ Ադրբեջանի և Թուրքիայի հարաբերությունների ծայրաստիճան լարվածության: Թուրքիան և Ադրբեջանն իրենց հռչակել են որպես թուրքալեզու «եղբայրական ժողովուրդներով» բնակեցված **ռազմավարական դաշնակից երկրներ** և հրաժարվում են դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: ՀՀ-ի նկատմամբ վարում են բացահայտ թշնամական քաղաքականություն, չեն բացում պետական սահմանները և ձգտում են ավելի խստացնել նրա տրանսպորտային շրջափակումը:

Հայաստանի Հանրապետության ՏԱԴ-ի վատթարացմանը նպաստում է նաև վրաց-աբխազական շարունակվող հակամարտությունը: Այդ պատ-

ճառով չի գործում Վրաստանը Աբխազիային ու Ռուսաստանին կապող երկաթուղին, որից նախկինում օգտվում էր նաև Հայաստանը:

Այլ երկրների նման ՀՀ-ի ՏԱԴ-ը նույնպես ժամանակի ընթացքում կարող է ենթարկվել փոփոխության, նրա ոչ նպաստավոր հատկանիշները կարող են դառնալ նպաստավոր: Այսպես՝ հետագայում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամական քաղաքականությունից հրաժարումը, նրա շրջափակման վերացումը, դարաբաղյան հարցի խաղաղ լուծումը կարող են արմատապես փոխել քաղաքական իրադրությունն ամբողջ Հարավային Կովկասում, վերջ դնել ազգամիջյան թշնամանքին և հաստատել կայուն խաղաղություն: **Դա թույլ կտա լիովին օգտագործել Հայաստանի և նրա հարևան երկրների ՏԱԴ-ի հնարավորությունները**, դրանք ծառայեցնել խաղաղության հաստատմանը և տարածաշրջանի բոլոր ժողովուրդների բարգավաճմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանի Հանրապետությունը տարածքի մեծությամբ և բնակչության թվով ինչպիսի՞ դիրք է գրավում աշխարհի պետությունների շարքում:
2. Վերլուծե՛ք այն միջազգային իրադարձությունները, որոնց արդյունքում ձևավորվեցին Խորհրդային Հայաստանի (Հայաստանի երկրորդ հանրապետության) սահմանները: Ի՞նչ ժառանգություն ստացավ ներկա անկախ ՀՀ-ն:
3. Ինչպե՞ս ձևավորվեցին Հայաստանի Հանրապետության արևելյան ու հարավարևմտյան (Ադրբեջանի հետ) և հյուսիսային (Վրաստանի հետ) սահմանները:
4. Թվարկե՛ք և գնահատե՛ք ՀՀ ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի՝ մեզ համար նպաստավոր կամ ոչ նպաստավոր հատկանիշները:
5. Ի՞նչ հանգամանքների դեպքում ՀՀ ՏԱԴ-ի ոչ նպաստավոր հատկանիշները կարող են դառնալ նպաստավոր:

ԴԱՍ 8. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր պետություն իր երկրի հասարակական կյանքը կազմակերպում է այն կանոնակարգելու և կառավարելու միջոցով: Մարդկության պատմության հազարամյակների փորձը ցույց է տալիս, որ հասարակության, պետության կառավարումն իրականացվում է երկու հատույթով՝ ճյուղային և տարածքային:

Ճյուղային կառավարման համար ստեղծվում են հատուկ կառույցներ (նախարարություն, կոմիտե և այլն): **Տարածքային կառավարում** իրականացնելու համար երկիրը բաժանում են մասերի (մարզ, նահանգ, շրջան և այլն), այսինքն՝ կատարում են վարչատարածքային բաժանում:


Պատմական զարգացման ընթացքում պետությունների արտաքին սահմանների ու քաղաքական կարգի հետ միասին փոփոխվում են նաև ներքին վարչատարածքային բաժանումները:



Հայոց պատմությունից ձեզ հայտնի բոլոր հայկական պետությունները (թագավորությունները) ունեցել են իրենց վարչական բաժանումները: Ցարական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանն ունեցել է եռաստիճան բաժանում. բաժանված է եղել **Նահանգների, նահանգները՝ գավառների, գավառները՝ ոստիկանական տեղամասերի**: 1918 թ. անկախ պետություն դարձած Հայաստանի Հանրապետության իշխանությունները բարեփոխեցին վարչատարածքային բաժանումը:

Խորհրդային Հայաստանը նույնպես կատարեց Նոր վարչատարածքային բաժանում: 1921 թ. ընդունած հատուկ դեկրետով փոփոխվեցին վարչատարածքային միավորների սահմանները, ինչպես նաև առաջին և երկրորդ աստիճանի միավորների անվանումները: **Երկիրը բաժանվեց 9 գավառի և 38 գավառակի:**

Պետության վարչատարածքային բաժանման միավորների գլխավոր հատկանիշները



1929-1930 թթ. հաստատվեց վարչատարածքային նոր կառուցվածքը, որը մասնակի փոփոխություններով պահպանվեց մինչև 1995 թ.: Ի տարբերություն նախորդ բաժանումների՝ մի քանի համեմատաբար մեծ քաղաքներ իրենց իրավունքներով հավասարվեցին վարչական շրջաններին և ուղղակիորեն ենթարկվեցին հանրապետական մարմիններին:

Խորհրդային Հայաստանն իր գոյության վերջին տարիներին բաժանված էր 59 առաջին աստիճանի վարչատարածքային միավորների՝ 37 վարչական շրջանների, 22 հանրապետական ենթակայության քաղաքների: Վարչատարածքային բաժանման երկրորդ աստիճանի միավորներ էին 5 շրջանային ենթակայության քաղաքները, 31 քաղաքատիպ ավանները և շուրջ 479 գյուղական խորհուրդները:

Իսկ ինչ հատկանիշներ են հիմք ընդունվել այս կամ այն տարածքը որպես վարչական մարզ առանձնացնելու համար: Այդ հատկանիշները մեծաթիվ են: Գլխավորները պատկերված են հետևյալ սխեմայում:

Հայաստանի Հանրապետության ներկայիս վարչատարածքային բաժանումը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի 1995 թ. ընդունած օրենքով: Վարչական նախկին շրջանների փոխարեն ստեղծվեցին **10 վարչական մարզեր** և Երևանը՝ մարզի կարգավիճակով: Ավելի ուշ՝ **2009 թ.**, հատուկ օրենքով **մայրաքաղաք Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ**: Այժմ ՀՀ-ն ունի **49 քաղաքային** և **866 գյուղական համայնքներ**:

Վարչատարածքային նոր բաժանմամբ առաջին կարգի միավորները՝ մարզերը (թվով 10), ձևավորվեցին նախկին 37 վարչական շրջանների միավորման և խոշորացման արդյունքում: Երկրորդ կարգի միավորի՝ համայնքի կարգավիճակ ստացան բոլոր քաղաքային բնակավայրերը և գյուղական բնակավայրերի մեծ մասը (շուրջ 90%): Համայնքի կարգավիճակ չստացած բնակավայրերը հիմնականում մանր և փոքր գյուղերն են: Մարզպետներին նշանակում է ՀՀ կառավարությունը, իսկ մարզերի սահմաններում իրականացվում է տարածքային կառավարում: Քաղաքային և գյուղական համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում, իսկ

համայնքների ղեկավարներն ընտրվում են համայնքների բնակչության կողմից:

Հայաստանի Հանրապետության մարզերը, որոնք պատկերված են ՀՀ վարչական բաժանման քարտեզում, նկատելիորեն տարբերվում են թե՛ տարածքի մեծությամբ և թե՛ բնակչության թվով: Դա երևում է նաև ստորև բերված աղյուսակից:

Քարտեզից և աղյուսակից դժուր գրեք տարածքով և բնակչության թվով ամենամեծ ու ամենափոքր մարզերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԸ (2011 թ.)

Մարզի անվանումը	Տարածքը, կմ ²	Բնակչությունը, հազ. մարդ			Բնակչության խտությունը, մարդ/կմ ²	Քաղաքային համայնքների թիվը	Գյուղական համայնքների թիվը	Գյուղերի թիվը
		Ամբողջը	Այդ թվում					
			քաղաքային	գյուղական				
ՀՀ	2974,3	3018,9	1911,3	1107,6	102	49	866	953
ք. Երևան	223	1060,1	1060,1	-	4754	1	-	-
1. Արագածոտն	2756	132,9	30,6	102,3	48	3	111	117
2. Արարատ	2090	260,4	74,1	186,3	125	4	93	95
3. Արմավիր	1242	265,8	85,1	180,7	214	3	94	95
4. Գեղարքունիք	5349	235,1	71,4	163,7	44	5	87	93
5. Լոռի	3799	235,5	137,8	97,7	62	8	105	122
6. Կոտայք	2086	254,4	137,5	116,9	122	7	60	62
7. Շիրակ	2680	251,9	146,9	105,0	94	3	116	128
8. Սյունիք	4506	141,8	95,2	46,6	32	7	102	127
9. Վայոց ձոր	2308	52,3	18,4	33,9	23	3	41	52
10. Տավուշ	2704	128,6	54,2	74,4	48	5	57	62

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են պետական տարածքը բաժանում վարչատարածքային միավորների:
2. Ժամանակի ընթացքում պետության վարչատարածքային բաժանումն ինչո՞ւ է ենթարկվում փոփոխությունների:
3. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումն ինչպիսի՞ փոփոխություններ է կրել:
4. Ինչպիսի՞ն է ՀՀ ներկա վարչատարածքային կառուցվածքը:
5. Տարածքի ի՞նչ հատկանիշներ են հաշվի առնվում պետության վարչատարածքային բաժանում կատարելիս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 9. ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Մեր հանրապետության տարածքն անցել է երկրաբանական զարգացման բարդ ուղի: Այստեղ՝ ընդամենը 30 հազ. կմ² տարածքի վրա, իրար են հաջորդում համարյա բոլոր երկրաբանական ժամանակաշրջաններին պատկանող լեռնային ապարները:

Միլիոնավոր տարիների ընթացքում ամբողջ տարածքը եղել է ծովի հատակ, հետագայում բարձրացել է և վերածվել ցամաքի, կրկին ծածկվել ծովով, ապա դարձել ցամաք: Դա ուղեկցվել է բուռն հրաբխականությամբ, ծալքավորմամբ: Երկրակեղևի շերտերը կոտրատվել են, գոյացել են ամբողջ լեռնային համակարգեր և ընդարձակ իջվածքներ: ՀՀ ժամանակակից ռելիեֆի ձևավորման գործում գլխավոր դերը պատկանել է **ալպյան լեռնակազմությանը**, երբ հանրապետության տարածքը թևակոխել է **ցամաքային զարգացման փուլ**: Շարունակվել են վերընթաց տեկտոնական շարժումները, և ձևավորվել են միջին բարձրության լեռները:

Կայնոզոյան դարաշրջանի Նեոգենի ժամանակաշրջանում տեղի են ունեցել նոր, հզոր լեռնակազմական գործընթացներ: Լեռները դարձել են ավելի բարձր, հովիտները՝ ավելի խոր: Գոյացել են երկրակեղևի նոր բեկվածքներ: Նոր թափ է առել հրաբխականությունը:

Երկրաբանական այդ բոլոր գործընթացների (դրանք ընդունված է անվանել ռելիեֆի ձևավորման ներծին գործոններ) և մակերևույթի հողմահարման, տեղատարման ու երկրակեղևի իջվածքներում կուտակման, հոսող ջրի, սառցադաշտերի ու քամու աշխատանքի (արտաքին գործոններ) արդյունքում այսօր մեր հանրապետության ոչ ընդարձակ տարածքն աչքի է ընկնում **երկրաբանական պայմանների ու ռելիեֆի ձևերի զարմանալի բազմազանությամբ**:

Այդ բազմազանությամբ է բացատրվում նաև ՀՀ-ում հայտնաբերված **օգտակար հանածոների** բազմազանությունը: Շատ են հատկապես **մետաղային և ոչ մետաղային հանքատեսակները**: Առայժմ չեն հայտնաբերված միայն հանքային վառելիքի՝ նավթի և բնական գազի արդյունաբերական նշանակության պաշարներ:

Մետաղային հանքային հարստություններից հատկապես շատ են գունավոր մետաղների՝ պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի և ալյումինի հումքի պաշարները: Պղինձը տարածված է **պղնձահրաքարային հանքավայրերում**, որտեղ այն հանդես է գալիս ծծմբի հետ միացությունների ձևով: Այդպիսի խոշոր հանքավայրեր են **Ալավերդին և Կապանը** (տես քարտե-

ՀՀ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԶԱՐՏԵԶ

Մասշտաբ 1:2 000 000



գը): Հայաստանում պղինձը հանդիպում է նաև մոլիբդենի հետ՝ **պղնձամոլիբդենային հանքավայրերում**: Հայտնի են **Քաջարանի, Ագարակի** և վերջերս շահագործման հանձնված **Թեղուտի** հանքավայրերը: Քաջարանի և Կապանի հանքաքարը, բացի գլխավոր մետաղներից, պարունակում է նաև թանկարժեք (ոսկի, արծաթ) և հազվագյուտ (ռենիում, կադմիում, սելեն և այլն) մետաղներ: Հազվագյուտ և համաշխարհային շուկայում բարձրարժեք նշանակություն ունեցող ուղեկից այդ մետաղներն անհրաժեշտ տեխնոլոգիաների բացակայության պատճառով Հայաստանում առայժմ չեն կորզվում: Դրանք հանքարդյունաբերական մյուս թափոնների հետ տեղափոխվում և կուտակվում են պոչամբարներում:



Բազմամետաղային (կապար, ցինկ, թանկարժեք և հազվագյուտ մետաղներ) հանքավայրերից նշանավոր են **Ախթալայինը** և **Շահումյանինը** (Կապան): Աշխարհում ալյումին ստանում են մի քանի տեսակի հումքից: Հայաստանում տարածված է **նեֆելինային սիենիտ** կոչվող հանքային հումքատեսակը: Դա համալիրային հանքատեսակ է, որից կարելի է ստանալ նաև բարձրորակ ցեմենտ և քիմիական տարբեր նյութեր: Այդ հումքի հարուստ հանքավայրեր հայտնաբերված են **Փամբակի** (Թեժ լեռան հանքավայր) և **Մեղրու** (Շվանիձոր) լեռներում:

Ազնիվ մետաղներից ՀՀ-ում կարևոր նշանակություն ունեն ոսկու պաշարները: Ոսկին այսպես կոչված «արմատային» հանքերում հանդես է գալիս գունավոր տարբեր մետաղների հետ, առանձին բնակտորներով, ինչ-

պես նաև որոշ գետերի ավազաբերուկների մեջ՝ «ցրոնային» տեսքով: ՀՀ տարածքում հիմնական արմատական հանքավայրերն են Սոթքինը և Մեղրածորինը:

Մեր երկրի ընդերքում հայտնաբերված սև մետաղներից ամենատարածվածը երկաթն է: Համեմատաբար խոշոր են Սվարանցի, Հրազդանի և Աբովյանի (Կապուտանի) հանքավայրերը:

Ոչ մետաղական օգտակար հանածոներից հանրապետության ընդերքը հարուստ է շինանյութերի՝ բազալտի, տուֆի, կրաքարի, մարմարի, պեմզայի, պեռլիտի ու զանազան կավերի պաշարներով: Տուֆը հրային ապար է, որն իր թեթևության, դիմացկունության և գեղեցիկ տեսքի շնորհիվ լայն կիրառություն ունի շինարարության մեջ: Տուֆակերտ են պատմական հուշարձանների մեծ մասը, բազմաթիվ բնակելի շինություններ: Տուֆի խոշորագույն հանքավայրերը գտնվում են Արագածի լանջերին, Շիրակում, Մերձերևանյան շրջանում:

ՀՀ-ում գործնականում անսպառ են բազալտի պաշարները: Այս դիմացկուն շինաքարի շերտերը հազարավոր քառակուսի կիլոմետր տարածք են զբաղեցնում: Արժեքավոր շինանյութ է գրանիտը: Մեզանում այն օգտագործվում է որպես որմնաքար, շենքերի արտաքին և ներքին երեսպատման համար և քանդակագործության մեջ: Տարածված է Սյունիքի և Լոռու մարզերում:

Հրաբխային ապարաշերտերում լայն տարածում ունեն օբսիդիանն ու պեռլիտը: Օբսիդիանը ապակենման, բազմերանգ լեռնային ապար է, որին անվանում են նաև «սատանի եղունգ»: Մեր երկրում հայտնաբերվել են օբսիդիանից նախամարդու պատրաստած զանազան գործիքներ (բրիչ, հատիչ և այլն): Օբսիդիանից այժմ պատրաստում են զանազան իրեր՝ զարդեր, հուշանվերներ և այլն:

Պեռլիտը արտաքուստ նման է օբսիդիանին և հանդես է գալիս ավազի ու խճի տեսքով: Այն հեշտությամբ ենթարկվում է ջերմային մշակման և տարբեր տեսակի շինարարական իրերի ու հախճապակու արտադրու-



Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը



*Երկրաբանական հրաշք.
Գառնու ծորի բազալտային սյուները*

թյան համար արժեքավոր հումք է: Արդյունաբերական պաշարները կուտակված են **Արագածավանի** հանքավայրում:

ՀՀ-ն ունի **կրաքարի** հարուստ պաշարներ: Կրաքարից ստանում են ցեմենտ, իսկ քիմիական արդյունաբերության մեջ՝ կալցիումի կարբիդի արտադրության հումք և այլն:

Հանրապետության ոչ մետաղային օգտակար հանածոներից նշանակալից են նաև կերակրի աղի ու կավերի պաշարները: **Կերակրի աղի** շատ մեծ պաշարներ կան Երևան-Արմավիր

գոտում:

ՀՀ-ն հարուստ է **հանքային ջրերի աղբյուրներով**: Դրանք տարածված են երկրակեղևի խորքային բեկվածքներին հարող տարածքներում, **գազերով հագեցած տաք կամ սառը աղբյուրների ձևով**: Մեր երկրում կա հանքային ջրերի շուրջ 700 աղբյուր: Հատկապես նշանավոր են **Ջերմուկի, Արզնու, Բջնիի, Դիլիջանի, Հանքավանի** հանքային աղբյուրները: Դրանցից մի քանիսի մոտ կառուցվել են խոշոր առողջարաններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երկրաբանական դիրքաբանություններում և ինչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվել մեր հանրապետության ներկայիս մակերևույթը:
2. Երբ և որ լեռնակազմության շնորհիվ է հանրապետության տարածքը թևակոխել ցամաքային զարգացման փուլ: Նկարագրեք գլխավոր գործոնները:
3. Ինչո՞վ եք բացատրում մեր տարածքի օգտակար հանածոների բազմազանությունը և մետաղային ու ոչ մետաղային հանքատեսակների հարուստ պաշարների առկայությունը:
4. Թվարկեք օգտակար հանածոների նշանավոր հանքավայրերն ու գլխավոր հանքատեսակները և դրանց օգտագործման բնագավառները:

ԴԱՍ 10. ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

Հայաստանի Հանրապետությունը, տարածվելով Հայկական լեռնաշխարհի արևելյան մասում, առանձնանում է **հարևան տարածքների նկատմամբ ավելի բարձր դիրքով**: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1800 մ-ից ավելի է: Սակայն դա միջինացված ցուցանիշ է, որը չի բացահայտում իրական պատկերը: Իրականում ՀՀ-ում բացակայում են դաշտավայրերը:

Հանրապետության տարածքի ամենացածր կետը գտնվում է ծայր հյուսիսում՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանում (375 մ): ՀՀ ամենաբարձր կետը **Արագածի լեռնագագաթն է** (4090 մ): Այսպիսով՝ հանրապետության տարածքի առավելագույն և նվազագույն բացարձակ բարձրությունների տարբերությունն անցնում է **3700 մ-ից**:

Հայաստանի Հանրապետությունը լեռնային երկիր է: Տարածքի շուրջ 3/4-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա: Լեռնաշղթաները զբաղեցնում են մոտ 14 հազ. կմ² տարածք (շուրջ 47%-ը): ՀՀ տարածքի 1/3-ը զբաղեցնում են բարձրավանդակները և սարավանդները:

ՀՀ-ում մարդու տնտեսական գործունեության համար նպաստավոր են մինչև 2500 մ բարձրության տարածքները: Դրանից ավելի բարձր տարածքի բնակլիմայական պայմանները մարդկանց մշտական բնակության և տնտեսական գործունեության համար պակաս նպաստավոր են: Դրան հակառակ՝ տնտեսական գործունեության, հատկապես գյուղատնտեսության համար առավել բարենպաստ պայմաններ կան ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրության տարածքներում, որոնք կազմում են հանրապետության ընդհանուր մակերեսի ոչ ավելի, քան 10%-ը:

Մեր հանրապետության բազմազան մակերևույթ ունեցող տարածքը գիտնականները բաժանում են **չորս լեռնագրական մարզի**.

- 1) հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների,
- 2) հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների,
- 3) հրաբխային լեռնավահանների և սարավանդների,
- 4) միջինարաքսյան գոգավորության:

Դրանցից առաջին երկու մարզերը, ըստ էության, իրենց մեջ են ընդգրկում **Փոքր Կովկասի** ծալքաբեկորավոր լեռնային համակարգի լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:

Փոքր Կովկասի հյուսիսային մասում շարունակվում են ուղղաձիգ տեկտոնական շարժումները: Օրինակ՝ Շիրակի դաշտը, Փամբակի հովիտը և Սևանի գոգավորությունը դանդաղորեն իջնում են, իսկ շրջապատող լեռնաշղթաները՝ բարձրանում:


Փոքր Կովկասի հյուսիսային լեռնաշղթաները բաղկացած են երկու՝ **արտաքին և ներքին շարերից**: Արտաքին շարին են պատկանում **Վիրահա-**



յոց, **Գուգարաց** և **Միափորի** լեռնաշղթաները, որոնք մինչև անցից բաժանված են Դեբեդ և Աղստև գետերի հովիտներով:

Ներքին շարին են պատկանում **Բազումի**, **Շիրակի**, **Փամբակի** և **Ծաղկունյաց** միջին բարձրության լեռնաշղթաները: Բազումի լեռնաշղթան հատվում է Պուշկինի լեռնանցքով, որը Փամբակ գետի հովիտը կապում է Լոռու դաշտին: Շիրակի լեռնաշղթան սկսվում է Ախուրյանի հովտից և ավարտվում Փամբակի վերին հոսանքի գետահովտով: Ներքին շարի լեռնաշղթաներից ամենաերկարը Փամբակի լեռնաշղթան է, որի ամենաբարձր

ՀՀ մակերևույթի գլխավոր առանձնահատկությունները



գագաթը **Թեժ** լեռն է (3101 մ): Ծաղկունյաց լեռնաշղթայի **Թեղենիս** գագաթի հարևանությամբ է գտնվում Ծաղկաձորի հանգստյան գոտին:

Սևանի լեռնաշղթայի Քաշաթաղ գագաթում ներքին շարին միանում է Փոքր Կովկասի Հյուսիսային լեռնաշղթաների արտաքին շարը՝ կազմելով մեկ միասնական համակարգ: Այս համակարգում հայտնի են **Արեգունու, Արևելյան Սևանի և Մռավի** լեռնաշղթաները:

Հյուսիսային մարզում առանձնանում է Ջավախքի լեռներից եկած, հրաբխային լավաներով ծածկված **Լոռու գոգավորությունը**: Այստեղով է հոսում Ձորագետը: Իսկ լավաներով, տուֆերով և լճային նստվածքներով լցված **Շիրակի գոգավորությունը** դեպի արևմուտք միաձուլվում է Կարսի սարահարթին:

Հարավային լեռնաշղթաների ու միջլեռնային գոգավորությունների մարզի մեջ են մտնում **Ուրծի, Վայքի և Զանգեզուրի** լեռնաշղթաներն իրենց լեռնաբազուկներով, որոնք համատեղ կազմում են **Փոքր Կովկասի Մերձարաքսյան** կոչվող համակարգը:

Ուրծի լեռնաշղթան, որն աչքի է ընկնում բուսածածկույթից զուրկ, լերկ լանջերով, ձգվում է Արարատյան դաշտի եզրով՝ կենտրոնական մասում հասնելով գրեթե 2450 մ բարձրության: Ուրծի լեռնաշղթայից արևելք՝ մինչև Զանգեզուրի լեռնաշղթա, ձգվում է Վայքի լեռնաշղթան, որը ջրբաժան է **Արփայի և Նախիջևանի** գոգավորությունների միջև: Լեռնաշղթայի հյուսիսային լանջերը կարճ են և զառիթափ: Այստեղ կրաքարային ապարների մեջ առաջացել են կարստային քարանձավներ: Նշանավոր են **Մոզրովի և Մագիլի** քարանձավները: Դեպի Նախիջևանի գոգավորություն իջնող լանջերը երկար են և մասնատված:

Միջօրեականի ուղղությամբ՝ **Ամուլսարից մինչև Արաքսի հովիտը** ձգվում է **Զանգեզուրի լեռնաշղթան**: Նա ամենաբարձրն է Փոքր Կովկասի լեռնահամակարգում և առանձնանում է ժայռոտ, ատամնավոր գագաթներով: Ամենաբարձր գագաթը **Կապուտջուղ լեռն է** (3904 մ): Հայտնի են լեռնաշղթայի հյուսիսային մասում գտնվող **Որոտանի** (2344 մ) և **Սիսիանի** (2345 մ) լեռնանցքները: Որոտանի լեռնանցքով անցնում է Զանգեզուրի գլխավոր «զարկերակը»՝ Երևան-Մեղրի ավտոմայրուղին, իսկ Սիսիանի



Կապույտջուղ լեռն օգոստոսին

լեռնանցքով տրանսպորտային կապ է հաստատվում Նախիջևանի գոգավորության հետ:

Ջանգեզուրի լեռնաշղթայից սկսվում և համարյա ուղղահայաց դեպի արևելք են ձգվում **Բարգուշատի** և **Մեղրու** լեռնաշղթաները, որոնք մասնատված են Որոտան, Ողջի, Ծավ և այլ գետերի՝ մինչև 500 մ խորություն ունեցող հովիտներով: Բարգուշատի լեռնաշղթայի և Սյունիքի հրաբխային լեռնավահանի յուրօրինակ համաձուլվածք է **700 մ խորությամբ Որոտանի կիրճը ստորին հոսանքում**, որը, ըստ էության, ծալքաբեկորավոր և հրաբխային ռելիեֆի ձևերի դիտարժան լաբորատորիա է բաց երկնքի տակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ՀՀ մակերևույթի գլխավոր առանձնահատկությունները: Ի՞նչ լեռնագրական մարզերի է բաժանվում ՀՀ-ն:
2. Ուրվագծային քարտեզի վրա մակագրեք Հյուսիսային և Հարավային լեռնագրական մարզերի նշանավոր լեռնաշղթաների ու գագաթների անունները:
3. Որո՞նք են Հյուսիսային և Հարավային լեռնագրական մարզերի նշանավոր միջլեռնային գոգավորությունները:
4. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք Հյուսիսային և Հարավային լեռնագրական մարզերի գլխավոր լեռնանցքները:

ԴԱՍ 11. ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ (շարունակություն)

ՀՀ-ում հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզը զբաղեցնում է Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի արևելյան հատվածը: Այստեղ նշանավոր են **Ջավախքի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի** հրաբխային լեռները, Սյունիքի հրաբխային բարձրավանդակը և դրանց մերձակա լավային սարավանդները:

Մակերևույթում արտահայտիչ են նեոգենի և չորրորդական երկրաբանական ժամանակաշրջանների հրաբխային հոսուն լավաները: Դրանք, ծածկելով ծալքաբեկորավոր անհարթ մակերևույթը, առաջացրել են **ընդարձակ, հարթ ռելիեֆով սարավանդներ**: Տարածված են նաև **կոնաձև հրաբխային զանգվածներ**՝ երբեմն լավ արտահայտված խառնարաններով: Ծալքաբեկորավոր լեռների համեմատ հրաբխային մարզի մակերևույթը քիչ է մասնատված, լեռնալանջերի թեքությունները փոքր են: Հրաբխային լեռնավահաններն ու սարավանդները հիմնականում անտառազուրկ են. տիրապետում են տափաստանային, մերձալպյան ու ալպյան լանդշաֆտները:

ՀՀ ծայր հյուսիսարևմտյան մասում են գտնվում **Ջավախքի և Եղնախաղի լեռները, Աշոցքի սարահարթը**: Ջավախքի լեռների միայն հարավային մասն է գտնվում մեր հանրապետության սահմաններում: Այստեղ լեռների վրա առանձնանում են հրաբխային կոներ՝ ժայռոտ գագաթներով: Դեպի հարավ լեռները աստիճանաբար ձուլվում են ճահճապատ **Լոռու գոգավորությանը**: Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ ձգվում են Եղնախաղի լեռները՝ **Մեծ Եղնախաղ** գագաթով (3042 մ):



Քառազագաթ Արագած լեռնազանգվածը

Աշոցքի սարահարթը տարածվում է Ջավախքի և Եղնախաղի լեռների միջև: Այստեղով է ձգվում Ախուրյանի հովիտը: Սարահարթի արևմտյան մասում Ախուրյանի հունի լավային արգելափակման հետևանքով գոյացել է Արփի լիճը:

Արագած լեռնազանգվածը լավաներով ծածկված երկրակեղևի գմբեթաձև բարձրացում է, որի վրա ավելի ուշ ձևավորվել է հրաբխային կոներ: Հնագույն սառցապատումների հետևանքով հրաբխի մոտ 400 մ խորությամբ խառնարանը վերածվել է ժայռային չորս գագաթներով եզերված սառցադաշտային վիթխարի կրկեսի: **Արագածը հանրապետության ամենաբարձր լեռն է (4090 մ):** Այն ճառագայթաձև մասնատված է խոր հովիտներով (Գեղարոտ, Ամբերդ, Մանթաշ), որոնց առանձին մասերում պահպանվել են հնագույն սառցապատման մորենային նստվածքները: Հրաբխային լավաները, սփռվելով լեռան շուրջը, առաջացրել են լավային սարավանդներ, որտեղ նստվածքների տակից հաճախակի մերկանում են տուֆի և պեմզայի հզոր ապարաշերտերը:

Սևանա լճի արևմտյան ափին, միջօրեականի ուղղությամբ, ձգվում է **Գեղամա լեռները:** Նրա ջրբաժանային գոտին լավաներով ծածկված սարավանդ է, որտեղ պահպանվել են հնագույն սառցապատման հետքերը: Այստեղ շատ են քարացրոնները: Լեռների առանցքային մասում բարձրանում են 200-500 մ հարաբերական բարձրությամբ հրաբխային կոներ: Դրանցից լավ արտահայտված խառնարան ունի ամենաբարձր գագաթը՝ **Աժդահակը (3597 մ)**, որտեղ գոյացել է լիճ:

Վարդենիսի լեռները եզերում են Սևանա լիճը հարավից: Լեռների հյուսիսային լանջերը երկար են և փոքրաթեք, մեղմ աստիճաններով իջնում են դեպի Սևանա լիճ: Հարավային լանջերը կարճ են և խիստ մասնատված էրոզիոն հովիտներով:

Սյունիքի հրաբխային բարձրավանդակի ընդհանուր բազալտային հիմքի վրա բարձրանում են **Ծղուկ (3581 մ)**, **Մեծ Իշխանասար (3549 մ)** հրաբխային գագաթները: Բարձրավանդակի մակերևույթն ամենուր ծածկված է երիտասարդ լավաներով:



Աժդահակ լիճը

Լեռնավահանների հարևանությամբ գոյացել են առանձին հրաբխային լեռնազանգվածներ, որոնցից նշանավոր են **Հատիսը, Արմաղանը և Արայի լեռը:**

ՀՀ հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզում տարածված էրոզիոն հովիտներից նշանավոր են **Քասաղի, Հրազդանի, Ազատի, Արգիճիի և Արփայի** վերին հոսանքի գառիթափ,

մինչև 100-200 մ խորության
լանջերով **կանիոնները**:

Միջինարաքսյան գոգավորության մարզը, եզրավորված լինելով բարձրաբերձ լեռնազանգվածներով և ծալքաբեկորավոր լեռնաշղթաներով, բաժանվում է երկու մասի՝ **Արարատյան և Նախիջևանի** գոգավորությունների: Արարատյան գոգավորությունն իր ավելի մեծ՝ ձախափնյա մասով գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններում:



Արայի լեռը

Գոգավորությունը սկսվում է Ախուրյան ու Արաքս գետերի միախառնումից հետո և տարածվում մինչև Նախիջևանի գոգավորությունը: Այդ երկու գոգավորությունների միջև սահման է ծառայում «**Գայլի դրունքը**» (դարպաս, դռներ): Արարատյան գոգավորության հատակին՝ ծովի մակարդակից 800-1100 մ բարձրության վրա տարածվում է լայնարձակ **Արարատյան դաշտը**:

Բացադրեք՝ ինչու Արարատյան գոգավորության հարակային մասը կոչվում է ոչ թե դաշտավայր, այլ դաշտ:

Դաշտի երկրաբանական հիմքը ծածկված է երիտասարդ լճագետային նստվածքներով: Արաքսի առափնյա հատվածում տարածվում է դաշտի ամենացածրադիր, տափարակ հարթությունը, որը Արաքսի վարարումների ժամանակ երբեմն ողողվում է գետի ջրերով և ծածկվում առատ տիղմով: Այստեղ պահպանվել են Արաքսի հին հունի մնացուկները: Դաշտի ամենայուրացված մասը մեղմաթեք հարթություն է: Տեղ-տեղ աչքի են ընկնում 100-120 մ հարաբերական բարձրության բլուրները, որոնցից նշանավոր է **Խոր Վիրապի** բլուրը՝ իր ձեռակերտ վանքային համալիրով:

Արարատյան դաշտը դեպի հյուսիս ձուլվում է **Կարմրաշենի, Շամիրամի, Եղվարդի և Կոտայքի** լավային սարավանդներին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ ռելիեֆի ձևեր են տարածված հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզում:
2. Ուրվագծային քարտեզի վրա նշեք մարզի հրաբխային խոշոր լեռնավահաններն ու սարավանդները:
3. Ուշադիր գննեք ՀՀ ֆիզիկական քարտեզը: Ինչո՞ւ ծալքաբեկորավոր շրջաններում մակերևույթն ավելի ուժեղ է մասնատված, քան հրաբխայինում:
4. Ի՞նչ գործոններ են ազդել Արարատյան դաշտի մակերևույթի ձևավորման վրա:

ԴԱՍ 12. ԿԼԻՄԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հիշեք Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա ազդող գործոնները:

Հայաստանի Հանրապետության տարածքը, լինելով Հայկական լեռնաշխարհի մասը, ենթարկվում է կլիմայական նույն գործոնների ազդեցությանը: Մեր երկիրը գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում: Արեգակի ճառագայթման ինտենսիվությունն ըստ բարձրության աճում է, և ամենամեծ ցուցանիշներ գրանցվում են Արագածի գագաթնամերձ մասում:

Սևանի ափին (Մարտունի) արևափայլի տևողությունն ամենամեծն է և հավասար է 2780 ժամի: Այստեղ տարեկան ամպամած օրերի թիվն ընդամենը 18 օր է: Այլ շրջաններում այդ օրերի թիվը բազմապատիկ ավելին է: Հանրապետության հյուսիսարևելյան շրջանում այն ամենամեծն է Իջևանում և հասնում է 64 օրվա (արևափայլի տևողությունը՝ ընդամենը 1930 ժամ):

ՀՀ-ում ամենացուրտ ամսվա՝ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է $+1,2^{\circ}$ և $-12,8^{\circ}$ -ի միջև: Օրվա առանձին ժամերին օդի ջերմությունը կարող է ավելի իջնել: ՀՀ տարածքում օդի ամենացածր ջերմաստիճանը (-46°) գրանցվել է Արփի լճի գոգավորությունում գտնվող **Պաղակն բնակավայրում**, որտեղ սառը օդը կուտակվելով առաջացնում է պարզկա եղանակներ և դրանով իսկ նպաստում երկրամերձ օդի առավել պաղելուն:


Ամենատաք ամիսների (հուլիս, օգոստոս) միջին ջերմաստիճանը տատանվում է $+9^{\circ}$ -ից $+26^{\circ}$ -ի միջև, առավելագույնը ($+43,7^{\circ}$) գրանցվել է Ջանգեզուրի հարավում (Մեղրի):

Տարվա ընթացքում ՀՀ տարածքում **տիրապետում է օդային զանգվածների արևմտյան հոսքը:**

Հիշեք մթնոլորտի շրջանառությունը Հայկական լեռնաշխարհում:

Տարվա ցուրտ կեսին հանրապետության տարածք են ներթափանցում բարեխառն, իսկ երբեմն՝ արկտիկական օդային զանգվածները: Ցուրտ օդային զանգվածները, հաղթահարելով Մեծ Կովկասի լեռնաշղթան, մասնակիորեն փոխակերպվում և մեր հանրապետություն են թափանցում որպես ցուրտ օդային հոսանքներ: Այդ ժամանակահատվածում կլիմագոյացնող գործոններից կարևոր դեր ունեն նաև **լեռնային ռելիեֆը, տեղանքի բարձր դիրքը և ներքին գոգավորությունները:** Այդ հանգամանքը նպաստում է օդի ջերմության կտրուկ նվազմանը: Գոգավորություններում ձմռանը հաճախ առաջանում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

Տարվա տաք կեսին հանրապետության տարածքում տիրապետում է **Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային տաք և չոր օդը:** Դրանով են պայմանավորվում մեր տարածքի ամենաչոգ, երաշտային եղանակները: Արևմուտքից, ինչպես նաև Սև ու Կասպից ծովերի կող-



Արագածի մերձազառային և Մեղրու օդերևութաբանական կայանների կլիմագրամներ

մից շարժվող անձրևաբեր օդային զանգվածները հանդիպում են եզրային լեռնաշղթաների արտաքին հողմահայաց լանջերին, որտեղ թափվում է տեղումների մեծ մասը: Հանրապետության ներքին շրջաններում դրանք պակաս խոնավաբեր են:

Լեռնային ռելիեֆի պատճառով օդային հոսանքները շեղվում են իրենց ուղղությունից և շարժվում գետահովիտների ուղղությամբ: Մասնավորապես, Կասպից ծովից եկող օդային զանգվածներն Աղստևի հովտով անցնում են Փամբակի գոգավորություն՝ բերելով շատ խոնավություն:

ՀՀ կլիմայի բնորոշ առանձնահատկություններից է լեռների և հովիտների անհավասարաչափ տաքացման պատճառով առաջացող օդային զանգվածների **տեղական շրջանառությունը**: Հատակի փոքր թեքություն ունեցող լայն և խորը, դեպի հարթավայրերը բացվող հովիտներում առաջանում են **լեռնահովտային քամիներ**:

Ցերեկը հարթավայրից օդի հոսանքն ուղղվում է դեպի հովիտ, իսկ գիշերը հովտի լանջով հակառակ ուղղությամբ սուրում դեպի հարթավայր և մեղմացնում ցածրադիր մասերի տապը: Լեռնահովտային քամիները լավ են արտահայտված Արարատյան գոգավորությունում, Դեբեդի և Աղստևի հովիտներում:

Թեև Հայաստանի Հանրապետությունը գտնվում է նույն լայնության վրա, ինչ Պիրենեյան և Բալկանյան թերակղզիները, որտեղ մեղմ կլիմայի շնորհիվ աճում են ցիտրուսային բույսեր, մեր հանրապետությունում դրանք բացակայում են կլիմայի ցամաքայնության պատճառով:

Ինչո՞վ է բացատրվում այդ ցամաքայնությունը:

Ըստ բարձրության ՀՀ-ում ավելանում է տեղումների քանակը: Դա առավելագույնին է հասնում Արագածի գագաթնամերձ մասում: Չնայած ոչ մեծ տարածքին՝ բավականին մեծ են տեղումների քանակի տատանումները՝ 230-1100 մմ: Ամենաշատ տեղումներ թափվում են եզրային լեռների հողմակողմ լանջերին, իսկ ամենաքիչը՝ ցածրադիր միջլեռնային գոգավորություններում, հատկապես Արարատյան դաշտում (230-300 մմ): Միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը հասնում է 600-700 մմ:

Քարտեզի վրա ցույց տվեք ամենաշատ և ամենաքիչ տեղումներ ստացող տարածքները:

Տարվա ընթացքում տեղումները բաշխվում են անհավասարաչափ: **Առավելագույնը թափվում է մայիս-հունիսին, նվազագույնը՝ ձմռանը:** Գարնան վերջին և ամռան սկզբին տեղումները կրում են տեղատարափ բնույթ՝ պատճառ դառնալով հեղեղների և սելավների առաջացման, որոնք մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսական հողահանդակներին, շինություններին և ճանապարհներին:

Ձմռանը հանրապետության տարածքում տեղումները թափվում են հիմնականում ձյան տեսքով: Սակայն ցածրադիր գոտում՝ Մեղրիում, Դեբեդի ստորին ավազանում, մասամբ՝ Արարատյան դաշտում, կայուն ձյունածածկույթ չի գոյանում: Դա պայմանավորված է այդ տարածքների ոչ միայն օդի համեմատաբար բարձր ջերմությամբ, այլև տեղումների սակավությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ՀՀ կլիմագոյացնող գործոնները:
2. Նշե՞ք մեր տարածքում ջերմության և խոնավության տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները:
3. Ինչո՞ւ բարձրլեռնային գոգավորություններում են գրանցվում ամենացածր ջերմաստիճանները: Ինչպե՞ս է առաջանում ջերմաստիճանային շրջադասությունը:
4. Ինչո՞ւ են ՀՀ ներքին գոգավորություններն ավելի քիչ տեղումներ ստանում, քան եզրային լեռնաշղթաները:
5. Ե՞րբ և որտե՞ղ են ձևավորվում լեռնահովտային քամիները:

ԴԱՍ 13. ՏԱՐՎԱ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ: ԿԼԻՄԱՅԻ ՎԵՐԸՆԹԱՑ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում նույնպես կլիման բնութագրող **հիմնական ցուցանիշները՝ ջերմությունն ու խոնավությունը**, կտրուկ փոփոխվում են տարվա ընթացքում և տեղից տեղ: Տարվա ընթացքում փոփոխությունները դրսևորվում են ըստ ցայտուն արտահայտված **տարվա կլիմայական եղանակների՝ սեզոնների** (ձմեռ, գարուն, ամառ, աշուն):

Երկրագնդի ո՞ր աշխարհագրական լայնություններում են փարվա բոլոր չորս սեզոնները լավ արտահայտված և ինչո՞ւ:

Քանի որ ՀՀ-ն լեռնային երկիր է, կախված տեղանքի բացարձակ բարձրությունից՝ տարվա կլիմայական սեզոնների տևողությունը տարբեր է: Բարձրլեռնային գոտում՝ 2500 մ-ից բարձր տեղամասերում, խիստ ձյունառատ **ձմեռը** տևում է 7-8 ամիս՝ հոկտեմբերից մայիս: Միջին բարձրության լեռնային գոտում (1500-2500 մ բարձրություններ) ձմռան տևողությունը երկու ամսով կարճ է. սկսվում է մեկ ամիս ուշ և ավարտվում է մեկ ամիս շուտ:

Ցածրադիր գոտում (մինչև 1300-1500 մ բարձրություններ) ձմեռն ավելի կարճատև է. հիմնականում սկսվում է դեկտեմբերի կեսերին և ավարտվում է փետրվարի վերջին:

Հանրապետության ծայր հարավի և հյուսիսային մասի որոշ վայրերում (Մեղրի, Նոյեմբերյան, Իջևան) հաստատուն ձյունածածկույթ գոյանում է ոչ ամեն տարի, իսկ հունվարի միջին ջերմաստիճանը չի իջնում $-1-3^{\circ}$ -ից:


Գարունը, կախված տեղանքի բարձրությունից, կարող է տևել 1,5-3 ամիս: Այս սեզոնի համար բնորոշ են մեղմ ու խոնավ, խիստ փոփոխական եղանակները. հաճախակի են արկտիկական սառը օդի ներխուժումները և դրա հետ կապված գարնանային ցրտահարությունները, որոնք մեծ վնաս են հասցնում բուսաբուծությանը:

Ամառը ցածրադիր գոտում տևում է մայիսի երկրորդ կեսից մինչև հոկտեմբերի սկիզբը՝ օդի $+24^{\circ}+26^{\circ}$ միջին ջերմությամբ: Այս սեզոնին գերիշխում են արևադարձային չոր օդային զանգվածները, հաճախակի են դառնում **խորշակները և երաշտները**: Միջլեռնային գոգավորություններում աշխուժանում են լեռնահովտային քամիները և մթնոլորտի վերընթաց հոսանքները: Հաճախակի են ամպրոպներն ու կարկտահարությունը:

Բարձրլեռնային գոտում ամառը կարճատև է ու զով: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը $+15^{\circ}$ -ից բարձր չի լինում:

Աշունը հանրապետության ցածրադիր, մասամբ նաև միջինլեռնային գոտում ամենահաճելի սեզոնն է: Բնորոշ են արևոտ, չափավոր տաք, անհողմ եղանակները: Լինում են նաև ցրտահարություններ, որոնք կրճատում են գյուղատնտեսական աշխատանքների տևողությունը:

Լինելով տիպիկ լեռնային և տարածքով համեմատաբար փոքր երկիր՝ ՀՀ-ում կլիմայի փոփոխությունը տեղի է ունենում ոչ թե ըստ հասարակածից



ունեցած հեռավորության, այլ ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության: ՀՀ-ում առանձնացվում են կլիմայի վերընթաց 8 գոտիներ.

- 1 - չոր մերձարևադարձային,
- 2 - չոր, խիստ ցամաքային,
- 3 - չոր ցամաքային,
- 4 - չափավոր ցամաքային,
- 5 - չափավոր շոգ,
- 6 - բարեխառն լեռնային,
- 7 - ցուրտ լեռնային,
- 8 - ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային:

2րդ մերձարևադարձային և չափավոր շոգ կլիմաները (1-ին և 5-րդ) բնորոշ են հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջաններին: 2րդ մերձարևադարձային կլիման ձևավորվում է մինչև 700-1000 մ

բարձրություններում: Ձմեռը կարճատև է, մեղմ: Օդի միջին հունվարյան ջերմաստիճանը տատանվում է 0°-ի շուրջ, տեղումները՝ մոտ 350 մմ: Կայուն ձյունածածկույթ առաջանում է միայն առանձին ցրտաշունչ տարիներին: **Չափավոր շոգ կլիմայի** տիպը տարածվում է մինչև 1300 մ բարձրությունները:

Չոր, խիստ ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000 մ բարձրություններում: Ձմեռը ցուրտ է, հունվարյան միջին ջերմաստիճանը՝ -3°-4° է: Ամառը տևական է, շոգ և չորային: Արարատյան դաշտի մեծ մասում, հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան ցածրադիր շրջաններում 170-190 օր օդի ջերմաստիճանը 10°-ից չի իջնում, ինչը լավ պայմաններ է ստեղծում ջերմասեր բույսերի մշակության համար:

Չոր ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան գոգավորության և Վայոց ձորի՝ մինչև 1400-1500 մ բարձրություններում: Ձմեռը չափավոր է, ամառը՝ շոգ ու չորային, աշունը՝ մեղմ ու արևոտ:

Չափավոր ցամաքային կլիման բնորոշ է Արարատյան գոգավորության և Վայոց ձորի՝ մինչև 1600-1800 մ բարձրություններին: Սա միակ գոտին է, որտեղ կլիմայական եղանակները համընկնում են օրացուցային եղանակների հետ:

Կլիմայի հաջորդ երեք տիպերն իրենց բնույթով **լեռնային են**:

Բարեխառն լեռնային կլիման ձևավորվում է մինչև 2400 մ բարձրության լեռնալանջերին և սարավանդներում: Ձմեռը տևական է, ցուրտ, հաստատուն ձյունածածկույթով, իսկ ամառը՝ տաք, համեմատաբար խոնավ: Բարեխառն լեռնային կլիմայից վեր հողագործությունը և մշտական բնակչությունը բացակայում են:

Ցուրտ լեռնային կլիման ձևավորվում է մինչև 3500 մ բարձրություններում, ուր տարածվում են մերձալպյան և ալպյան լանդշաֆտները: Ձմեռը ձյունառատ է:

Ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային կլիման ձևավորվում է 3500 մ-ից բարձր գագաթամերձ շրջաններում: Մակերևույթի ստվերոտ մասերում ամբողջ տարին պահպանվում են ձնաբծեր: Գարունն ու աշունը կարճատև են, ցուրտ: Ամառ չի լինում: Այստեղ թափվում են ամենաչատ տեղումները (1000-1100 մմ):

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք ՀՀ կլիմայի վերընթաց գոտիները:
2. Համեմատե՛ք չոր մերձարևադարձային և չոր խիստ ցամաքային կլիմաները:
3. Բնութագրե՛ք ՀՀ տարածքի տարվա եղանակները, տարվա եղանակների հերթափոխը՝ ըստ բարձրության:
4. Բնութագրե՛ք ձեր բնակավայրի տարվա եղանակները և դրանց տևողությունը:
5. Համեմատե՛ք ձեր բնակավայրի կլիմայական եղանակներն օրացուցային եղանակների հետ: Նշե՛ք դրանց տարբերությունները:

ԴԱՍ 14. ԶՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԳԵՏԵՐԸ

Յուրաքանչյուր երկրի բնական համալիրի կարևոր բաղադրիչ է ջրագրական ցանցը, որն իր մեջ ներառում է գետերի, լճերի, ջրամբարների ամբողջությունը: **Զրագրական ցանցի խտությունը կախված է տարածքի կլիմայական պայմաններից, տեղանքի ռելիեֆից և երկրաբանական կառուցվածքից:**

«Ն տարածքում ջրագրական ցանցն ունի **անհավասարաչափ տեղաբաշխում:** Գետային ցանցն առավել զարգացած է Կուրի ավազանում և Սյունիքում՝ ծալքաբեկորավոր լեռների շրջանում, համեմատաբար խոնավ կլիմայական պայմաններում, մինչդեռ Արաքսի ավազանի մեծ մասը հրաբխային ապարների ճեղքոտվածության, մթնոլորտային տեղումների պակասի, ուժեղ գոլորշացման պատճառով ունի համեմատաբար թույլ զարգացած գետային ցանց: Սյունիքում և «Ն-ի հյուսիս-արևելքում գետային ցանցի խտությունը հասնում է 1,5-2 կմ/կմ², հրաբխային սարավանդներում՝ 0,5-0,6 կմ/կմ², իսկ Արարատյան դաշտում՝ ընդամենը 0,2 կմ/կմ²»:

Որևէ տարածքի ջրային հաշվեկշիռը մուտք գործող և հեռացող (գոլորշիացող, արտահոսող) ջրի քանակի տարբերությունն է:

Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռում **մուտքի տարեկան քանակը 18,5 մլրդ մ³** է, որի կեսից ավելին գոլորշիանում է: Մնացած ջրերի մի մասը վերածվում է վերգետնյա հոսքի՝ գետակների, գետերի և կուտակվում է լճերում, իսկ ավելի փոքր մասը ներծծվում է հողի մեջ և առաջացնում ստորերկրյա հոսք:

Այսպիսով, մեր երկրի վերականգնվող ջրային պաշարները 8,5 մլրդ մ³ են, որից 6,54 մլրդ մ³-ը կազմում է վերգետնյա հոսքը: Դրանց մեծ մասը ձևավորվում է հանրապետության սահմաններում թափվող մթնոլորտային տեղումների հաշվին և միայն 1,4 մլրդ մ³-ի չափով լրացվում են հարևան տարածքներից՝ սահմանային Արաքս գետի պաշարների հաշվին:

Հայաստանի Հանրապետության գետերը պատկանում են Կուրի և Արաքսի ավազաններին: Արաքսի ավազանն ընդգրկում է հանրապետության տարածքի 76%-ը, իսկ Կուրի ավազանը՝ 24%-ը: Զրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռների կատարներով, որը, ինչպես գիտեք, միաժամանակ կլիմայական սահման է հանրապետության համեմատաբար խոնավ՝ հյուսիսային, և ավելի չոր՝ հարավային մասերի միջև:

«Ն գետերը սնվում են հիմնականում ձնհալքի, անձրևային և ստորերկրյա ջրերով: Սնումից կախված՝ գետերն ունեն **հոսքի անկայուն ռեժիմ**, այսինքն՝ ջրի մակարդակի մեծ տատանումներ: Գետերը հորդանում են առավելապես գարնանը: Հորդացումն ավելի թույլ է աշնանը, իսկ ամռանն ու ձմռանը գետերը խիստ ծանծաղում են: Ձմեռային ոչ շատ ցածր ջերմաստիճանների և սրընթաց հոսքի պատճառով գետերը չեն սառցակալում:

«Ն գետերը լեռնային են, սկիզբ են առնում բարձր կամ միջին բարձրության լեռներից, ունեն հունի զգալի թեքություն, հետևապես և հոսքի մեծ



արագություն: Դրանք հոսում են նեղ ու խոր կիրճերով՝ առաջացնելով սահանքներ ու ջրվեժներ: Հայտնի են **Ջերմուկի (Արփա գետի ավազանում), Շաքիի (Որոտանի վտակի վրա) և Թռչկանի (Փամբակի վտակ Չիչկանի վրա) ջրվեժները:**


Մեծ թեքությունների պատճառով գետերը կատարում են հսկայական էրոզիոն աշխատանք. քայքայում և տեղափոխում են միլիոնավոր տոննա ապարանյութ:

Հանրապետության գետերը **նավարկելի չեն, սակայն հարուստ են ջրաէներգետիկ պաշարներով:**

Գետաջրերի մեծ մասն ունի թույլ կամ միջին հանքայնացում, այսինքն՝ դրանցում քիչ են լուծված հանքային աղերը: Ամենաքիչ հանքայնացում ունեն հրաբխային մարզի ջրերը, որոնք խմելու համար լավագույն ջրերն են:

Հայաստանի Հանրապետության տարածքում կա 10 կմ-ից ավելի երկա-

ՀՀ գետերի գլխավոր հատկանիշները



րություն ունեցող շուրջ 380 գետ, որոնցից ամենաերկարն ու ջրառատը սահմանային Արաքս գետն է: Հանրապետության սահմաններում Արաքսի համեմատաբար խոշոր վտակներից են **Ախուրյանը, Մեծամորը, Հրազդանը, Ազատը, Արփան և Որոտանը:**

Ախուրյանը (երկարությունը՝ 186 կմ) սկիզբ է առնում Արփի լճից, որի հոսքը վերին հոսանքում կարգավորում է ջրամբարի վերածված Արփի լիճը, իսկ միջին հոսանքում՝ հայ-թուրքական սահմանին կառուցված Ախուրյանի ջրամբարը (525 մ ըն մ³ ջրի ծավալով): Ախուրյանի վտակներից են Գյումրիգետը, Կարկաչանը, իսկ Թուրքիայի տարածքից՝ Կարսագետը:

Մեծամորը (Սևջուր) կարճ գետ է, ամբողջովին հոսում է հարթավայրով և սնվում Այլր (Մեծամոր) լճից: Վերջինիս մակարդակը Արագածի հրաբխային լավաների տակից բխող աղբյուրների շնորհիվ կայուն է, ինչն ապահովում է Մեծամորի կայուն հոսքը տարվա ընթացքում:

Քասաղը Մեծամորի ձախակողմյան խոշոր վտակն է, սկիզբ է առնում Արագածի և Փամբակի լանջերից: Նրա վրա կառուցված է Ապարանի ջրամբարը, որի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Հրազդանը (երկարությունը՝ 141 կմ) սկիզբ է առնում Սևանա լճից: Լճից բաց թողնվող ջրի քանակը կարգավորվում է: Գետի ջրերն օգտագործվում են էներգետիկ նպատակով, կառուցվել է ջրէկ-ների կասկադ: Հրազդանի



Արփայի կիրճը

վրա կառուցված են նաև ջրամբարներ, որոնցից առավել խոշոր են Երևանյան լիճը և Հրազդանի ջրամբարը՝ Հրազդան քաղաքում: Գետից սնվում են մի շարք ջրանցքներ, որոնց միջոցով ոռոգվում են Արարատյան դաշտի հողերը: Հրազդանի վտակներից Գետառը հայտնի է իր կործանարար սելավներով: 1946 թ. մայիսին նա մեծ ավերածություններ է պատճառել Երևանին:

Արփան (երկարությունը՝ 133

կմ) հոսում է նեղ կիրճով, տեղ-տեղ ընդմիջվում է գոգավորություններով և հատելով ՀՀ պետական սահմանը՝ Արաքսի մեջ է թափվում Նախիջևանի Հանրապետության տարածքում: Արփայի վերին հոսանքում կառուցվել է Կեչուտի ջրամբարը, որտեղից սկսվում է **Որոտան-Արփա-Սևան ջրատար թունելի Արփա-Սևան հատվածը**:



Որոտանի վրակ Շաքիի գեղալսեսիլ ջրվեժը

Որոտանը (երկարությունը՝ 178 կմ) Զանգեզուրի ամենամեծ գետն է, հովտի խորությունը տեղ-տեղ հասնում է մի քանի հարյուր մետրի: Տաթևի վանքի մերձակա կիրճում գետն անցնում է հանքային աղերի նստվածքներից գոյացած բնական՝ «Սատանի կամրջի» տակով:



Սատանի կամրջի փակ

Որոտանի վրա կառուցվել է ջրէկ-ների կասկադ՝ կից ջրամբարներով:

Արաքսի ավազանի հայտնի գետերից են նաև **Ազատը, Վեդին, Ողջին և Մեղրիգետը**:

Կուրի ավազանի ամենախոշոր գետը **Դեբեդն** է (երկարությունը՝ 178 կմ), որը կազմավորվում է Փամբակ և Ձորագետ գետերի միախառնումից: Այն հանրապետության **ամենաջրառատ** գետն է: Գետի ջրերն օգտագործում են էներգետիկ, ոռոգման և ջրամատակարարման նպատակներով:

Աղստը (երկարությունը՝ 128 կմ) սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայից, սնումը հիմնականում ձնհալքաանձրևային է: Վտակներից հայտնի են **Գետիկը և Ոսկեպարը**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսին է Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշիռը:
2. Որո՞նք են ՀՀ գետերի հիմնական հատկանիշները:
3. Բնչ տարբերություններ կան Արաքսի և Կուրի համակարգերին պատկանող գետերի սնման պայմանների ու դրանց հոսքի ռեժիմների միջև:
4. Ուրվագծային քարտեզի վրա նշե՞ք խոշոր գետերն ու նշանավոր ջրամբարները:
5. Որոշե՞ք Ախուրյան գետի անկումն ու թեքությունը (գետաբերանի բացարձակ բարձրությունը 950 մ է):

ԴԱՍ 15. ԶՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԼՃԵՐԸ: ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

Զրագրական ցանցի կարևոր բաղադրիչներ են լճերը: Հայաստանի Հանրապետության բոլոր լճերը քաղցրահամ են, իսկ ծագմամբ՝ բազմազան: Այստեղ կան **տեկտոնահրաբխային, տեկտոնական, հրաբխային, խառնարանային, սառցադաշտային** և այլ ծագման լճեր:

Խոշոր լճերի շարքին է դասվում **Սևանա** լիճը: Այն ունի **տեկտոնահրաբխային** ծագում: Հնում հայերը Սևանա լիճը կոչել են տարբեր անուններով՝ Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով և այլն:

Լիճը սնվում է իր մեջ թափվող **28** փոքր գետերից (համեմատաբար խոշոր են Գավառագետը, Արգիճին, Ձկնագետը, Մասրիկը և Ծակքարը) և մակերեսին թափվող մթնոլորտային տեղումներից: Լճից սկիզբ է առնում Հրազդան գետը:

Բնական վիճակում Սևանի մակարդակը կայուն է եղել: Սևանա լճի բնական ռեժիմը փոխելու միջոցով այն երկրի տնտեսական զարգացման շահերին ծառայեցնելու գաղափարը ծագել է դեռևս 19-րդ դարի վերջին: Սակայն այն կյանքի կոչելու իրական հնարավորություններ ստեղծվեցին միայն 1930-ական թվականներին: Մշակվեց լճի օգտագործման համալիր ծրագիր, այնուհետև՝ «Սևան-Հրազդան» ոռոգչաէներգետիկ համալիրի կառուցման նախագիծ: Ծրագիրը և նախագիծը հիմնվում էին լճի հատուկ աշխարհագրական հետազոտությունների շնորհիվ ճշտված հետևյալ տվյալների վրա.

լճի հայելու բացարձակ բարձրությունը – 1916 մ,

լճի մակերեսը – 1416 կմ²,

լճի առավելագույն խորությունը – 98,9 մ:

Հաշվարկվել էր նաև լճի ջրային հաշվեկշիռը՝ ջրի մուտքը և ելքը: Զշտվել էր, որ տարեկան լիճ մուտք գործող 1,322 մլն մ³ ջրից Հրազդան գետով արտահոսում է ընդամենը 50 մլն մ³, այսինքն՝ ամբողջ մուտքի 5%-ից էլ պակասը: Դրանից քիչ ավելի (60 մլն մ³) հեռանում էր ստորգետնյա հոսքի ձևով, իսկ հիմնական մասը՝

92% (1,212 մ³), գոլորշիանում էր լճի հայելային մակերեսից:

Խնդիրն այն էր, որ թույլ չտրվեր այդպիսի գոլորշիացում, և լճում կուտակվող ջուրն ի սպաս դրվեր հանրապետության տնտեսական զարգացման շահերին:

Խնդրի առաջին մասը լուծվում էր Հրազդան գետով արտահոսքի մեծացման և դրա շնորհիվ լճի մակարդակի իջեցման ու հայելային (գոլոր-



Կապուրայա Սևանը՝ Նորայոս թերակղզու փեսարանով

շիացման) մակերեսի կրճատման միջոցով: Խնդրի երկրորդ մասը լուծվում էր Հրազդանի վրա ջրաէլեկտրակայանների և գետից սկիզբ առնող ջրանցքների կառուցման միջոցով:

Ըստ էության, Սևանի համալիր օգտագործման ծրագիրը խոստանում էր ապահովել հանրապետության տնտեսական զարգացման երկու արմատական հարցերի՝ էներգետիկ կայուն բազայի ստեղծման և ոռոգելի հողերի ընդարձակման լուծումը:

Նախատեսվում էր ծրագիրն իրականացնել հնարավոր կարճ ժամանակում՝ 10-13 տարում: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմը խախտեց նախատեսված ժամկետները, և ծրագրի վերջին կառույցի՝ Երևանի ջրէկ-ի շինարարությունն ավարտվեց միայն 1962 թ., այսինքն՝ 15 տարի ուշացումով: Այդ ընթացքում տնտեսական իրադրությունը ՀՀ-ում էական փոփոխություններ կրեց: Կառուցվեցին դեպի Հայաստան եկող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր ու գազամուղներ: Արարատյան դաշտում հայտնաբերվեցին ստորերկրյա ջրային պաշարներ, որոնք կարող են օգտագործվել ոռոգման նպատակով: Պարզ դարձավ, որ Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ծագում են մի շարք բացասական երևույթներ և բնապահպանական խնդիրներ (ճահճացում, ջրի աղտոտում և այլն), որոնք պահանջում են անհետաձգելի լուծում: Որոշում ընդունվեց փոխել լճի օգտագործման ծրագիրը և այն պահպանել բնականին մոտ վիճակում: Պետք է կրճատվեր Հրազդան գետով ջրի արտահոսքը, դադարեցվեր մակարդակի իջեցումը, իսկ հետագայում բարձրացվեր 5-6 մետրով: Մշակվեցին և շարունակում են մշակվել ու իրականացվել մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նպատակ ունեն թույլ չտալ լճի հետագա աղտոտումը, բարելավել շրջակա միջավայրի որակը:

Սևանը անհրաժեշտ է պահպանել որպես քաղցրահամ (խմելու) ջրի կարևորագույն ռեզերվ՝ հատկապես նկատի ունենալով, որ բնակչությանը խմելու ջրով ապահովելու խնդիրը գնալով սրվում է մեր տարածաշրջանի բոլոր երկրներում:

Արդեն իրագործվել է Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատար թունելների կառուցումը, որով լիճը Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարներում կուտակված ջրային պաշարներից լրացուցիչ կարող է տարեկան ստանալ 350-400 մլն մ³ ջուր:

Ներկայումս Սևանա լճի մակարդակը բարձրացել է ավելի քան 3 մ-ով և շարունակում է բարձրանալ, իսկ լճի հայելու բացարձակ



Կապույտ (Կապույտան) լիճը

բարձրությունը անցել է 1900 մետրից: Լճի առավելագույն խորությունը այժմ հասնում է մոտ 83 մ, իսկ ջրային հայելու մակերեսը՝ 1276,3 կմ²: Դրա հետևանքով ափամերձ հատվածի ցածրադիր մասերը, որոնցում ստեղծված էին անտառային տնկարկներ, նորից ծածկվում են ջրով: Այդ հատվածներում կատարվում են անտառահատումներ:

Վիթխարի և Սևանա լճի և բնապահպանական, և տնտեսական նշանակությունը: Այստեղ է ամբարված հանրապետության քաղցրահամ ջրի պաշարների մեծագույն մասը՝ 37,9 մլրդ մ³: Լճում բազմանում են էնդեմիկ իշխան ձուկը, Լադոգա լճից բերված սիգ ձկնատեսակը: Դրանց պաշարների նվազումն այսօր վտանգավոր չափերի է հասել:

Սևանա լճի բնության ու ջրային պաշարների պահպանությունը և խնայողական օգտագործումը համազգային և պետական կարևորագույն խնդիր է: Սևանի բնապահպանական խնդիրների լուծմանը նպաստելու համար ստեղծվել է «Սևան» ազգային պարկը:

Սևանից հետո մեր երկրի ամենախոշոր ջրավազանը **Արփի** լիճն է: Այն գտնվում է Աշոցքի սարահարթում, ծովի մակարդակից 2020 մ բարձրության վրա և ունի տեկտոնահրաբխային ծագում: Լիճը սնվում է աղբյուրներից ու գետակներից: Լճի ելքի մոտ՝ Ախուրյան գետի վրա կառուցվել է 10 մ բարձրության պատնեշ, որի շնորհիվ բարձրացել է լճի մակարդակը: Արփի լիճը ջրամբարի վերածելուց հետո նրա մակերեսն ավելացել է 4 անգամ և այժմ կազմում է 20 կմ²:

«Վ մյուս լճերը շատ ավելի փոքր են: Հրաբխային ծագում ունի **Ակնա** լիճը, որը գտնվում է Գեղամա լեռների մերձգագաթային սարավանդի վրա: Լիճն օղակված է երիտասարդ հրաբխային կոներով և ալպյան մարգագետիններով: Հրաբխային շրջաններում գոյացած լճերից գեղատեսիլ են **Աժդահակի** և **Արմաղանի** խառնարանային լճերը:

Հանրապետության ավելի փոքր լճերից ուշադրության են արժանի սառցադաշտային ծագում ունեցող **Քարի** (Արագած), **Սև**, **Ալ** (Սյունիքի բարձրավանդակ), **Կապույտ** (Ջանգեզուրի լեռնաշղթա) լճերը, ինչպես նաև սողանքային պատվարի շնորհիվ գոյացած **Պարզ լիճը** (Տավուշի մարզ):

Այդր (Մեծամոր) լիճն առաջացել է երկրի խորքային շերտերից բխող աղբյուրների հետևանքով: Լճի ջրի ծախսը շուրջ տարին գրեթե նույնն է: Անփոփոխ է նաև ջրի ջերմաստիճանը:



Կեչուրի ջրամբարը

Ջրամբարները: Մեր հանրապետության գետերի ջրերն արդյունաբերական, էներգետիկ, ոռոգման, կենցաղային և այլ նպատակներով օգտագործելու համար կառուցվել են ավելի քան երկու տասնյակ ջրամբարներ: Դրանք հնարավորություն են տալիս գետերով



Արմադանի խառնարանի լիճը



Սպանդարյանի ջրամբարը

տեղափոխվող գարնանային առատ տեղումների և ձյան հալոցքային ջրերն ամբարելու միջոցով ոչ միայն նվազեցնել ջրհեղեղների վտանգը, այլև սակավաջուր սեզոնին օգտագործել այդ ջրերը տարբեր նպատակներով: ՀՀ բոլոր ջրամբարներում կուտակվում է ավելի քան 1 մլրդ մ³ ջուր: Առավել խոշոր են **Ախուրյանի, Սպանդարյանի, Արփի լճի, Ազատի, Կեչուտի և Ապարանի** ջրամբարները:

ՀՀ ջրագրական ցանցի կարևոր բաղադրիչ են **արտեզյան ավազանները**: Դրանց ջրերը գոյանում են կավային ջրամերժ շերտերի միջև: Ամենամեծ պաշարներ ունի **Արարատյան արտեզյան ավազանը**, որը սնվում է Արարատյան գոգավորությունը եզրավորող լեռներից: Հայտնի են նաև **Շիրակի, Մասրիկի, Փամբակի և Սիսիանի** ավելի փոքր ավազանները:

Արտեզյան ջրերի հանքայնացումը մեծ չէ: Դրանք օգտագործվում են ոչ միայն ոռոգման և խմելու, այլև ձկնաբուծության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ծագում ունեն ՀՀ տարածքի լճերը: Ինչո՞վ է դա պայմանավորված:
2. Տվե՛ք Սևանա լճի ֆիզիկաաշխարհագրական (նաև ջրագրական) բնութագիրը:
3. Գնահատե՛ք Սևանա լիճը տնտեսաաշխարհագրական տեսանկյունից: Ինչ խնդիրներ է այն լուծում:
4. Որո՞նք են Սևանա լճի օգտագործման հետ կապված հիմնախնդիրները, ինչպե՞ս կարելի է դրանք լուծել:
5. Բնութագրե՛ք ՀՀ հրաբխային, սառցադաշտային և այլ ծագման նշանավոր լճերը: Նշե՛ք դրանք ուրվագծային քարտեզի վրա:
6. Ինչ նպատակներով են ՀՀ-ում օգտագործվում ջրամբարները և արտեզյան ավազանները:

ԴԱՍ 16. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Չնայած Հայաստանի Հանրապետության սահմանափակ տարածքին՝ նրա հողային ծածկույթը աչքի է ընկնում բացառիկ բազմազանությամբ: Դա տարբեր գործոնների ազդեցության հետևանք է: Դրանք են մակերևույթի տարաբնույթ ապարները, կլիմայական պայմանները (ջերմություն, խոնավություն), բուսականությունը և տեղանքի ռելիեֆը: Հայաստանին՝ որպես լեռնային երկրի, բնորոշ է հողածածկույթի փոփոխությունը ոչ միայն հորիզոնական, այլև վերընթաց ուղղությամբ:

Վերհիշե՛ք՝ ինչպես են փոփոխվում օդի ջերմաստիճանը և խոնավությունը ՀՀ-ում վերընթաց ուղղությամբ բարձրանալիս:

Վերընթաց գոտիականությունը, լեռնային երկրների համար լինելով ընդհանուր, ունի իր յուրահատկությունը: Եզրային լեռնաշղթաներում բնական պայմանների և դրա հետ կապված հողերի տիպերի վերընթաց հերթափոխությունը տարբերվում է ներքին շրջաններում դիտվող հերթափոխությունից: Եթե եզրային լեռնաշղթաներում առկա է անտառային հողերի գոտին, ապա ներքին շրջաններում այն բացակայում է:


Այժմ, հետևելով քարտեզին, ծանոթանանք հողային գլխավոր տիպերին:

Կիսաանապատային գորշ հողեր: Այս հողերը զբաղեցնում են հիմնականում Արարատյան գոգավորության ցածրադիր գոտու մինչև 1300 մ բարձրությունները: Ձևավորվում են խիստ չոր ցամաքային կլիմայի և աղքատ բուսածածկույթի պայմաններում, հումուսով աղքատ են (1-2%), բայց հարուստ են կրով, մեծ մասամբ քարքարոտ են և փոշիացած: Չնայած ցածր որակական ցուցանիշներին, այս հողերն ինտենսիվ օգտագործվում են, ինչի շնորհիվ փոխել են իրենց բնական հատկանիշները. հարստացել են հումուսով, ձեռք են բերել կնձիկային կառուցվածք և վերածվել արգավանդ կուլտուր-ռոտգելի հողերի:

Արարատյան դաշտի որոշ մասերում գրունտային ջրերի (գետնաջրեր) «մազական» բարձրացման և արագ գոլորշիացման հետևանքով առաջացել են հեռվից ձյունածածկ տարածքի նմանվող **աղուտներ**, որոնց վրա այժմ աճում են աղասեր բույսեր: Աղուտների մոտ 20%-ն աղազերծվել և դարձել են մշակովի հողեր: Սակայն հատուկ փորված խրամատների՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգի՝ տարիներ շարունակ չմաքրվելու հետևանքով գրունտային ջրերը բարձրանում և պատճառ են դառնում հողերի երկրորդային աղակալման:

Արարատյան գոգավորության նախալեռնային որոշ հատվածներում, հիմնականում լավաների վրա, առաջացել է **կիսաանապատային հողերի հատուկ տիպ**, այսպես կոչված՝ «ղռեր»:

Լեռնաշագանակագույն հողերը տարածվում են հանրապետության հյուսիս-արևելքում՝ մինչև 800 մ, և հարավում՝ 1300-1700 մ բարձրությունների վրա: Այս հողերը ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմա-



յական պայմաններում, հումուսով ավելի հարուստ են (4-5%), ունեն ավելի հզոր շերտ (40-50 սմ):

Լեռնային սևահողերը մեզանում ամենատարածվածն են: Դրանք հանրապետության գյուղատնտեսության գլխավոր հարստությունն են, տարածվում են 1300-2400 մ բարձրություններում՝ հիմնականում զբաղեցնելով հրաբխային սարավանդների ընդարձակ տարածքներ: Սևահողերն ունեն կնճիկահատիկային կառուցվածք: Դրանց վերին շերտը լավ հումուսացված է (4-11%), և հզորությունը հասնում է մինչև 75 սմ-ի:

Լեռնամանտառային գորշ և դարչնագույն հողերը հիմնականում տարածված են հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան լեռ-



Լեռնամարգագետնային հողերում շափ են քարացրոնները

նալանջերի 900-2400 մ բարձրություններում: Սրանք գոյացել են չափավոր տաք և խոնավ կլիմայի պայմաններում: Այս հողերի զգալի մասը, հատկապես անտառի ստորին սահմանում, տափաստանացված է, օգտագործվում է որպես վարելահող, խոտհարք և արոտավայր:

Մարգագետնատափաստանային հողերը տարածվում են սևահողերից և լեռնաանտառային հողերից բարձր՝ 2100-ից մինչև 2500 մ բարձրություն-

ներում: Դրանք ձևավորվում են համեմատաբար խոնավ, զով ամառներ ու ցուրտ, երկարատև ձմեռներ ունեցող կլիմայի և խոտային բուսածածկույթի պայմաններում և նման են սևահողերին: Բարձր է հումուսի պարունակությունը՝ 8-13%:

Մարգագետնատափաստանային հողերի տարածման գոտու ստորին մասն օգտագործվում է որպես խոտհարք, իսկ վերինը՝ արոտավայր:

Լեռնամարգագետնային հողերը ձևավորվել են ցուրտ լեռնային կլիմայի՝ համեմատաբար բարձր խոնավության և ցածր ջերմաստիճանի պայմաններում, մերձալպյան ու ալպյան բուսածածկույթի տակ: Այս գոտին արոտային անասնապահության գլխավոր շրջանն է: Այս հողերում շատ են հանդիպում ֆիզիկական հողմահարության արդյունքում առաջացած քարացրոնները:

Հողը կարևոր և անփոխարինելի բնական ռեսուրս է, և այն պետք է պահպանել տեղատարումից, էրոզիայից և աղտոտումից: Հողի պահպանության խնդիրը հրատապ է հատկապես ՀՀ-ի նման սակավահող երկրների համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված ՀՀ տարածքի հողային տիպերի բազմազանությունը:
2. Ո՞ր հողային տիպն է հանրապետությունում ամենատարածվածը: Նշե՞ք տարածման վայրերը:
3. Հողատիպերի տարածման ինչ առանձնահատկություններ կարելի է առանձնացնել ՀՀ տարածքի հյուսիսարևելյան, հարավարևելյան և հրաբխային մարզերում:
4. Ուրվագծային քարտեզի վրա գույներով պատկերե՞ք հանրապետության հիմնական հողատիպերի տարածման շրջանները:

ԴԱՍ 17. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Հայաստանի փոքր տարածքը բնության հակադրությունների երկիր է: Ապացուցված է նաև նրա բուսականության և կենդանական աշխարհի զարմանալի բազմազանությունը, որը **հետևանք է տարածքի բնապատմական զարգացման առանձնահատկությունների, աշխարհագրական դիրքի** (այն գտնվում է Կովկասյան և Արևելամիջերկրածովային բուսաբանական մարզերի շփման հատվածում) **և լեռնային բնույթի:**

Երկրաբանական վաղ անցյալում այստեղ աճել է արևադարձային և մերձարևադարձային բուսականություն: Հնագույն սառցապատումների ժամանակ միմյանց հաջորդող ցուրտ, խոնավ և շոգ ու չոր կլիմաների ներգործությամբ առաջացել են նոր բուսատեսակներ:

ՀՀ-ում հանդիպում է 3200 բարձրակարգ բուսատեսակ. գրեթե այնքան, ինչքան մեր տարածքը հարյուրապատիկ անգամ գերազանցող Արևելաեվրոպական հարթավայրում:

Մեր բուսական աշխարհի ներկայացուցիչների **120 տեսակը էնդեմիկ է**, և դրանցից շատերը գիտության մեջ կոչվում են Հայաստանի տարբեր մասերի անուններով: Օրինակ՝ **պատատուկ հայկական, ոզնաթուփ հայկական, օշինդր հայաստանյան, «Հայաստանի արմատ»՝ տորոն, սզնի Զանգեզուրի, կաղնի արաքսյան:**

Բազմազան է նաև Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհը. հանդիպում է **12000 կենդանատեսակ:** Դրանցից կաթնասուններ են 75-ը, թռչուններ՝ 302-ը, սողուններ՝ 43-ը, անողնաշարավորներ՝ ավելի քան 11000-ը: Շատ կենդանատեսակներ հատուկ են միայն Հայկական լեռնաշխարհին և հարակից տարածքներին: Դրանցից են **հայկական վայրի ոչխարը, բեզարյան այծը, կովկասյան փասիանը, հայկական եղջերավոր օձը** և այլն:

Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը:

Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Սակայն կենդանիների շարժունակության պատճառով շատ տեսակներ հանդիպում են գրեթե բոլոր գոտիներում (նապաստակ, գորշ արջ, աղվես, գայլ):

Անապատային և կիսաանապատային գոտու բուսականությունը տարածվում է Արարատյան գոգավորության ցածրադիր մասերում: Բուն անապատային բուսատեսակները հանդես են գալիս կղզիների ձևով՝ Արարատյան դաշտի աղուտներում և ավազուտներում: Հաճախակի հանդիպող բուսատեսակներն են ծառանման օշինդրը, հազարատերևուկը, ինչպես նաև վաղանցիկ (էֆեմերային) բույսերը, որոնցից ամենատարածվածն աղածաղիկն է: Դրանք ունեն զարգացած արմատային համակարգ, որը հողի խորքից անհրաժեշտ քանակությամբ ջուր վերցնելու հնարավորություն



Հայկական վայրի ոչխար (մուֆլոն)

է տալիս: Ճյուղերը ցախանման են, տերևները՝ մանր, երբեմն մսալի, որը նվազեցնում է ջրի գոլորշիացումը:

Գետերի ողողատների ճահճոտ վայրերում մեծ տարածում ունեն եղեգնուտները (շամբուտները) և ջրային բույսերը: Շամբուտներում հանդիպում են վարազը և եղեգնակատուն:

Արարատյան գոգավորության կիսաանապատներում՝ 1000-1400 մ բարձրությունների վրա տարածված են հոտավետ օշինդրը, կապառը, ջանգյուլունը և անթառամ ծաղիկները:

Ամռանը դրանք, բացառությամբ օշինդրի, չորանում են:

Այս գոտում տարածված թռչուններից են օձակեր բազեն, արագիլը և լորը: Կենդանիներից հաճախ հանդիպում են աքիսը, համստերը և այլն: Տարածված են **թունավոր օձերը** (գյուրզան) և **միջատները** (թունավոր մորմերն ու կարիճները):

Լեռնային չորասեր (ֆրիգանտիդ) բուսականության գոտին տարածվում է հատկապես Ուրծի, Երանոսի, Վայքի լեռների քարքարոտ հողերում: Շատ են չորասեր, սուր փշեր ունեցող մանրատերև մացառուտները, գաճաճ ծառերը: Տարածված են **դեղատու, եթերայուղատու և թելատու բույսերը** (մասրենի, բազմատեսակ ծաղիկներ): Լեռնային չորասեր բուսականության գոտուն բնորոշ են բեզոարյան այծը, վայրի ոչխարը (մուֆլոն) և այդ խոտակերների որսով հրապուրված Արաքսի հովտից թափանցած **հովազը** (ընծառյուծը): Այս երեք կենդանատեսակներն էլ անհետացման վտանգի տակ են: Այդ պատճառով գրանցված են միջազգային Կարմիր գրքում: Դրանց որսն արգելված է:

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված է 1400-2400 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է **փետրախոտային, սիգախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը**:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք, սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով՝ մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Անտառային գոտին իր ուրույն տեղն ունի հանրապետության բուսական աշխարհում: Առանձնանում են երկու համեմատաբար ընդարձակ անտառային զանգվածներ՝ **հյուսիսարևելյան և հարավարևելյան**: Հյուսիսարևելքում տարածքի անտառապատվածությունը կազմում է շուրջ 30%: Այստեղի հիմնական ծառատեսակը **արևելյան հաճարենին** է, որի անտառը

տեղ-տեղ ընդմիջվում է կաղնուտներով և սոճուտներով: Հարավարևելյան անտառային զանգվածը գրավում է փոքր տարածություն և գլխավորապես բաղկացած է **վրացական կաղնուց**: Հանդիպում են նաև արաքսյան կաղնի, հացենի, թխկի, ընկուզենի և այլ ծառատեսակներ:

Զանգեզուրի Ծավ գետի ավազանում պահպանվել է **սոսու պուրակը**, որը միակն է հանրապետությունում: Այն հեթանոսության ժամանակաշրջանում համարվել է յուրօրինակ սրբավայր, որտեղ քրմերն իրենց աղոթքներն էին կարդում և սոսու տերևների սոսափյունով գուշակություններ անում:

Հայաստանի անտառներն ունեն հիմնականում էկոլոգիական՝ **հողապահական, ջրապահական ու կլիմայակարգավորող** նշանակություն: Սահմանափակված է այս անտառների արդյունաբերական հատումը: Թույլատրվում է սանիտարական անտառահատում՝ անտառվերականգնման նպատակով: Անտառները հարուստ են վայրի պտղատու ծառերով և հատապտուղների թփերով:

Անտառների կենդանական աշխարհը հարուստ է **կաթնասուններով**: Հյուսիսում հանդիպում են այծյամ, լուսան, գորշ արջ, վարազ, իսկ Զանգեզուրում՝ մացառախոզ, շնագայլ, սիրիական արջ, ժայռածերպերին՝ բեզդարյան այծ:

Մերձալպյան և ալպյան գոտու բուսականությունը տարածվում է 2000-2200 մ-ից բարձր: Մերձալպյան գոտու ստորին մասում տիրապետում են մեկ մետր և ավելի բարձրություն ունեցող մեծատերև խոտաբույսերը:

Բուն ալպյան բուսականությունը հանրապետության հյուսիսում սկսվում է 2700-2800 մ, իսկ հարավում՝ 2900-3000 մ բարձրություններից և ընդգրկում բարձր լեռների ու լեռնաշղթաների մերձգագաթային հատվածները: Դաժան կլիմայի պատճառով բույսերը գետնատարած են, ունեն մի քանի սանտիմետրից մինչև 10-15 սմ բարձրություն: Բազմազան ծաղիկներով զարդարված մարգագետինները հեռվից թողնում են գույնզգույն գորգերի տպավորություն և այդ պատճառով հայտնի են նաև **ալպյան գորգեր** անունով:

Մերձալպյան և ալպյան գոտին աչքի է ընկնում թռչունների, միջատների և գույնզգույն թիթեռների առատությամբ: Այս գոտին իր փարթամ խոտհարքներով ու արոտավայրերով բացառիկ նշանակություն ունի անասնապահության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գործոններով է պայմանավորված ՀՀ բուսականության և կենդանական աշխարհի բազմազանությունը:
2. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք ՀՀ բուսականության վերընթաց գոտիները:
3. Նշեք յուրաքանչյուր գոտու բուսածածկույթի և կենդանական աշխարհի կապը:
4. Համեմատեք գոտիներն ըստ տնտեսական նշանակության ռեսուրսների:
5. Աշխարհագրության տեսրում նշեք ձեր բնակավայրի մերձակայքում տարածված բուսատեսակներն ու կենդանատեսակները:

ԴԱՍ 18. ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԸ: ՎԵՐԸՆԹԱՑ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում ուղղաձիգ ուղղությամբ հերթափոխվում են հետևյալ հինգ վերընթաց լանդշաֆտային գոտիները. անապատակիսաանապատային, լեռնատափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան ու ալպյան և ձյունամերձ:

Լանդշաֆտային գոտիականության առաջացման գլխավոր պատճառը վերընթաց ուղղությամբ ջերմության և խոնավության փոփոխությունն է:

Հիշեք, թե փեղանքի բացարձակ բարձրության ավելացմանը զուգընթաց ինչպես են փոփոխվում ջերմությունը և խոնավությունը:

Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիականության մեջ նկատելի են մի քանի օրինաչափություններ: Ներքին գոգավորություններում անտառային գոտին հիմնականում բացակայում է, իսկ Փոքր Կովկասի լեռնային համակարգերի արտաքին հողմակողմ լանջերին միևնույն լանդշաֆտների սահմանները ներքին գոգավորությունների համեմատ մի քանի հարյուր մետրով ավելի ցածր են:

Հետևելով կից ներկայացված ՀՀ լանդշաֆտային գոտիների քարտեզին՝ համառոտակի ծանոթանանք յուրաքանչյուր լանդշաֆտային գոտուն:

Անապատակիսաանապատային լանդշաֆտների գոտին առաջացել է գոգավոր ռելիեֆի պատճառով ձևավորված չոր, խիստ ցամաքային կլիմայի պայմաններում և տարածված է Արարատյան ու Վայքի գոգավորություններում: Այս գոտում **անապատային** լանդշաֆտները տարածված են կղզյակներով և առանձին համատարած գոտի չեն առաջացնում: Այստեղ են տարածվում ձեզ արդեն հայտնի աղուտները:

Կիսաանապատային լանդշաֆտներն ընդարձակ գոտի են կազմում նախալեռներում՝ 800-1400 մ բարձրություններում, որտեղ տարեկան տեղումների քանակը 230-300 մմ է: Մշակվող տարածքներում լեռնային գորշ հողերը բարելավվել և դարձել են կուլտուր-ոռոգելի:

Գարնանային անձրևների շրջանում կիսաանապատը ծածկվում է **կարճակյաց (էֆեմեր)** բուսականությամբ, որն ամռանը չորանում է:

Անապատակիսաանապատային գոտին զբաղեցնում է հանրապետության տարածքի 10%-ը, այն ջերմասեր մշակաբույսերի տարածման հիմնական շրջանն է:

Լեռնատափաստանային լանդշաֆտները ՀՀ տարածքում ամենամեծ տարածումն ունեն: Առանձնանում են երկու լանդշաֆտային ենթագոտի՝ չոր լեռնատափաստանային և սևահողային տափաստանային:

Չոր լեռնատափաստանային ենթագոտին ձգվում է հիմնականում Արարատյան և Վայքի նախալեռներով՝ մինչև 1800 մ բարձրությունները՝ զբաղեցնելով ՀՀ տարածքի մոտ 15%-ը: Կլիման տաք է, չորային: Տեղումները նախորդ գոտու համեմատությամբ քիչ ավելին են (300-400 մմ):



Չոր լեռնատափաստանները հանրապետության հյուսիս-արևելքի և Զանգեզուրի նախալեռներում վարելահողերի ընդարձակման ու բնափայտի մթերման նպատակով մարդու դարավոր ներգործության արդյունքում առաջացած **հետանտառային լանդշաֆտներ են**: Դրանք ձևավորվել են մերձարևադարձային՝ չափավոր տաք և մեղմ ձմեռներով կլիմայի պայմաններում: Այս լանդշաֆտները զբաղեցնում են հանրապետության տարածքի մոտ 15%-ը:

Սևահողային տափաստանների ենթագոտին ձգվում է չոր լեռնատափաստաններից բարձր՝ մինչև 2000-2400 մ բարձրությունները՝ զբաղեցնելով հանրապետության տարածքի մոտ 25%-ը:

Քարտեզով որոշե՛ք լեռնափաստանային լանդշաֆտների փարածման շրջանները:

Սևահողային տափաստանները հիմնականում ձևավորվել են լավային սարավանդներում և բարձրադիր գոգավորությունների հատակին: Այս ենթագոտին բնութագրվում է տաք ամառով և ցուրտ ձմեռով, տեղումների տարեկան քանակը հասնում է 600-700 մմ-ի:

Լեռնային համեմատաբար ցուրտ կլիմայի պայմաններում օրգանական նյութերի քայքայումը հողում մինչև վերջ չի կատարվում: Դա նպաստում է հումուսի ավելացմանը (մինչև 15%): Գոտու վերին սահմանին մոտ՝ համեմատաբար խոնավ վայրերում, ձևավորվում են մարգագետնային տափաստաններ:


Լեռնաանտառային լանդշաֆտները զբաղեցնում են հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանները՝ Փոքր Կովկասի լեռնային համակարգի հիմնականում հողմակողմ լանջերը: Դրանք կազմում են ՀՀ տարածքի մոտ 10%-ը: Հյուսիսարևելյան՝ համեմատաբար խոնավ շրջաններում անտառի վերին սահմանը հասնում է մինչև 2000 մ, իսկ հարավ-արևելքում՝ Զանգեզուրում՝ մինչև 2400 մ բարձրությունները:

Բացատրե՛ք փարբերության պատճառը:

Լեռնաանտառային գոտու կլիման այլ գոտիների համեմատությամբ մեղմ է. ձմեռը չափավոր ցուրտ է, ձնառատ, իսկ գարունը՝ զով և խոնավ: Ամառը տաք է, արևոտ եղանակներով, աշունը՝ մեղմ: Տեղումների տարեկան քանակը 600-700 մմ է:

Վերհիշե՛ք բուսականությանը նվիրված դասը, նշե՛ք այս գոտում փարածված ծառատեսակները:

Մերձալպյան ու ալպյան լանդշաֆտները հանրապետության հյուսիսում սկսվում են շուրջ 2000 մ, իսկ հարավում՝ 2400 մ բարձրություններից: Դրանք ձևավորվել են ցածր ջերմաստիճանների և համեմատաբար առատ



Անտառապատ լեռներ Չանգեզուրում



Լեռնափաստանային լանդշաֆտ



Մերձալպյան և ալպյան գոտու բուսականություն

խոնավության պայմաններում: Այս գոտում շուրջ կես տարի ձմեռ է, իսկ ամառը կարճ է ու զով: Բարձր է Արեգակի ճառագայթային էներգիայի ինտենսիվությունը, ինչը նպաստում է ցերեկվա ընթացքում գետնի արագ և ուժեղ տաքացմանը:

Ձյունամերձ լանդշաֆտները տարածվում են բարձր լեռների գագաթային մասերում՝ 3500 մ-ից վեր (Արագած, Կապուտջուղ և այլն): Այդտեղ տիրապետող են մերկ ժայռերը, ձյան բծերն ու եռանդուն սառնամանիքային հողմահարումը: Բուսածածկույթ չի գոյանում: Ամենուրեք քարացրոններ են, ավազ ու «պարզագույն հողեր»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ առանձնահատկություններ ունի լանդշաֆտների վերընթաց գոտիականությունը ՀՀ-ում:
2. ՀՀ տարածքում ինչ վերընթաց գոտիներ են առանձնացվում:
3. Ինչպիսին են անապատակիսաանապատային լանդշաֆտների օգտագործման հնարավորությունները:
4. Ինչո՞ւ է լեռնատափաստանային լանդշաֆտն ամենատարածվածը ՀՀ-ում:
5. ՀՀ տարածքի ո՞ր մասն է զբաղեցնում լեռնաանտառային գոտին: Ինչո՞ւ է անհրաժեշտ անտառների պահպանումն ու ընդարձակումը:
6. Որոշե՞ք, թե ձեր բնակավայրը որ լանդշաֆտային գոտում է գտնվում: Բնութագրե՞ք այդ գոտու հիմնական առանձնահատկությունները:

ԴԱՍ 19. ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետության բնական միջավայրի պահպանության հիմնախնդիրները պայմանավորված են բնածին և մարդածին մի շարք գործոններով:

Բնածին գործոններից են մակերևույթի լեռնային բնույթը, միջլեռնային գոգավորությունների ցամաքայնությունն ու ջրասակավությունը, տարածքի բարձր սեյսմիկությունը, հողասակավությունն ու անտառասակավությունը: Վերջիններս մարդկանց արտադրական գործունեության ընթացքում բնական միջավայրը դարձնում են առավել խոցելի և պահանջում են մեծ ջանքեր դրա կայունությունը պահպանելու համար:

Մակերևույթի լեռնային բնույթը, բարձր սեյսմիկությունն ու միջլեռնային գոգավորությունների առկայությունն ուղղակիորեն ազդում են տարածքի յուրացման, կառուցապատման, ձեռնարկությունների տեղաբաշխման վրա և երբեմն անհնարին են դարձնում տնտեսական գործունեությամբ զբաղվելը:

Ջրասակավությունն ու հողասակավությունն ուղղակի պայմանավորում են գյուղատնտեսական արտադրության կառուցվածքն ու տեղաբաշխումը: Անտառասակավությունը և անտառների շարունակվող կրճատումն առաջացնում են տարաբնույթ էկոլոգիական տեղական խնդիրներ (գետերի չորացում, բնական լանդշաֆտների անդառնալի փոփոխություններ, նույնիսկ անապատացում):

Բնական միջավայրի փոփոխության մարդածին գործոններն ավելի բազմազան են: Դրանք հիմնականում կապված են նյութական ար-



Անտառային հրդեհ Հայաստանում

տադրության ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի հետ:

Քննարկենք մեր հանրապետությունում օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի պահպանության հիմնախնդիրները:

Առավել աղտոտված օդային ավազան ունեն Երևանը, Հրազդանը, Արարատը, Վանաձորը, Ալավերդին: Այս քաղաքներում գործում են բնապահպանական առումով վնասակար էներգետիկական, քիմիական, մետալուրգիական և շինանյութերի արտադրության ձեռնարկություններ: Երևանում օդային ավազանի գլխավոր աղտոտիչը **ավտոմոբիլային տրանսպորտն է**, որին բաժին է ընկնում մթնոլորտ արտանետվող գազերի շուրջ 90%-ը:

Ավտոմեքենաների վնասները նվազեցնելու նպատակով ուժեղացվում է տեխնիկական հսկողությունը դրանց նկատմամբ: Օրենքով մեծացվում են մթնոլորտն աղտոտող ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանված հարկերն ու պետական տուրքերը:

Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից օդային ավազանի աղտոտման նվազեցումը կամ ամբողջական չեզոքացումը հնարավոր է իրականացնել արտադրության տեխնոլոգիայի կատարելագործման, փոշեծծիչ և գազակլանիչ կայանքների տեղադրման, անթափոն և սակավաթափոն արտադրությունների կազմակերպման միջոցով:

Բնակավայրերի օդային ավազանների մաքրության ապահովման արդյունավետ միջոց են մի կողմից կանաչ տնկարկների ընդարձակումը, մյուս կողմից՝ դրանց կրճատման դեմ ուղղված հետևողական պայքարը:

Հայաստանի Հանրապետությունն ունի նաև ջրային պաշարների պահպանության և ռացիոնալ օգտագործման խնդիրներ: Ջրի ամենամեծ սպառողներն են գյուղատնտեսությունը (հատկապես հողագործությունը) և բնակչությունը:

Ինչ եղանակներով կարելի է մեղմել ջրի պակասը ՀՀ-ում, ձեր բնակավայրում և ջրօգտագործումը դարձնել ռացիոնալ:

Մեր հանրապետության ջրային ռեսուրսներին մեծ վնաս են հասցնում արդյունաբերական և կենցաղային աղտոտումները: Աղտոտված են հատկապես Հրազդան, Փամբակ, Դեբեդ և Ողջի գետերը, ինչպես նաև Սևանի առափնյա տարածքների զգալի մասը: Ջրային պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման նպատակով խրախուսվող **միջոցառումների հիմնական ուղղություններն են՝ ջրատար ար-**



*Արծվանիկի պոչամբարը
(Ողջի գետի ավազան)*

տադրությունների փոխարինումը ոչ ջրատար արտադրություններով, ջրի խնայողական օգտագործումը, արդյունաբերական և կենցաղային ջրերի մաքրման հատուկ կայանքների ցանցի ընդլայնումը, նոր ջրամբարների կառուցումը:

ՀՀ-ում կենսական նշանակություն ունեն հողային ռեսուրսների պահպանման ու օգտագործման խնդիրները: Այստեղ գլխավորը գյուղատնտեսական հողահանդակների քայքայումն ու տեղատարումն է՝ էրոզիան: Բացի այդ, տարբեր վայրերում տարիների ընթացքում կուտակվել են արդյունաբերական (լեռնահանքային և քիմիական ձեռնարկությունների մոտակայքում) և կենցաղային (քաղաքային բնակավայրերի մոտակայքում) տասնյակ միլիոնավոր խորանարդ մետր թափոններ և ծածկել ընդարձակ հողատարածքներ: Դրանք, միաժամանակ լինելով վարակի տարածման աղբյուր, վատացնում են շրջակա միջավայրի որակը: Արդյունաբերական թափոնների հետ հիմնախնդիրները հատկապես սուր են արտահայտված Այունիքի մարզում, Ողջի գետի ավազանում:

Մեզանում արտակարգ նշանակություն ունի նաև բուսական և կենդանական աշխարհի պահպանության հիմնահարցը: Բնակչության կողմից ուտելի բույսերի, դեղաբույսերի և դաշտային ծաղիկների հավաքը կատարվում է անխնա կերպով. ավերվում է բույսերի արմատային համակարգը, ինչը հանգեցնում է այդ բուսատեսակների ոչնչացմանը:

Արդյունավետ չեն օգտագործվում խոտհարքներն ու արոտավայրերը: Անասունների գերարածեցումը մի կողմից նոսրացնում է բուսածածկույթը, մյուս կողմից՝ նպաստում մոլախոտերի տարածմանը:

Առավել հրատապ է համարվում անխնա օգտագործման հետևանքով կրճատվող անտառապատ տարածքների, ոչնչացման եզրին հասած արժեքավոր բուսատեսակների ու կենդանատեսակների պահպանությունը: Դրա համար կազմվել են բույսերի և կենդանիների «Կարմիր գրքեր», ստեղծվել են հատուկ պահպանվող տարածքներ:

Ընդունվել են բնօգտագործումը կարգավորող և բնական միջավայրի պահպանությունն ապահովող օրենքներ ու կառավարության որոշումներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ՀՀ բնօգտագործման և բնապահպանության վրա ազդող բնածին և մարդածին գործոնները:
2. Թվարկե՞ք օդային ու ջրային ավազանների ու հողերի աղտոտման աղբյուրները և նշե՞ք դրանց ռացիոնալ օգտագործման ու պահպանման հիմնական ուղղությունները:
3. Ո՞րն է անտառների պահպանության առաձնահատուկ կարևորությունը մեր հանրապետության համար:
4. Թվարկե՞ք ձեր բնակավայրի օդային և ջրային ավազանների ու հողերի աղտոտման աղբյուրները: Ինչպե՞ս կարելի է պայքարել բնական միջավայրի աղտոտման դեմ:

ԴԱՍ 20. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ: ՀՀ «ԿԱՐՄԻՐ ԳՐՔԵՐԸ»

Բնական միջավայրի ինտենսիվ շահագործման հետևանքով բնական շատ լանդշաֆտներ իրենց տեղը զիջել են մարդածին լանդշաֆտներին (այգիներ, բնակավայրեր և այլն): Դրան զուգահեռ՝ ՀՀ-ում անհրաժեշտություն է առաջացել առանձնացնել բնության առանձին կուսական անկյուններ և անաղարտ վիճակում պահպանել դրանց բնական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը: ՀՀ-ում նույնպես պետական որոշումներով առանձնացված հատուկ պահպանվող տարածքներն ունեն տարբեր կարգավիճակ՝ կախված այն բանից, թե բնության որ բաղադրիչները հատուկ պահպանության կարիք ունեն, և ամբողջովին կամ մասամբ արգելված է դրանց օգտագործումը:

Հատուկ պահպանության տակ վերցված տեղամասերը կարող են լինել **ազգային պարկ, արգելոց, արգելավայր և բնության հուշարձան:**

Ազգային պարկերում սահմանվում է բնական միջավայրի պահպանության հատուկ ռեժիմ, իսկ **ազգային պարկի ներսում** հատուկ առանձնացված հատվածներում (գոտիներ) և առհասարակ արգելոցներում արգելված է էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող ամեն տեսակի տնտեսական գործունեություն: Հայաստանում առանձնացված են չորս ազգային պարկեր՝ «Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիկ»:

Նախատեսվում է ստեղծել նաև «Ջերմուկ», «Գնիշիկ» և այլ ազգային պարկեր: **«Սևան» ազգային պարկը** կազմակերպվել է 1978 թ. և ընդգրկում է մոտ 150 հազ. հա մակերես: Դրա 17%-ը ցամաքային, մնացածը՝ ջրային տարածք է: Այն հիմնադրվել է Սևանա լճի ոչ միայն ջրային, այլև մյուս ռեսուրսները, պատմական ու մշակույթի հուշարձանները պահպանելու նպատակով: Թույլատրված է հարակից տարածքում իրականացնել այնպիսի տնտեսական գործունեություն, որը չի աղտոտի լիճը և չի վնասի նրա կենդանական աշխարհին: Այդ նպատակով ազգային պարկը **բաժանված է արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիների:**

Առանձնահատուկ պահպանության տակ է վերցված միայն Սևանում հանդիպող իշխան ձկնատեսակը: Վերջին տասնամյակներին լճի ջրի մակարդակի իջեցման և լճում կատարվող անվերահսկելի ձկնորսության պատճառով էապես կրճատվել են ոչ միայն իշխան, այլ նաև սիգ, կողակ և այլ ձկնատեսակների պաշարները:

«Դիլիջան» ազգային պարկը հիմնադրվել է 2002 թ. (մինչ այդ եղել է պետական արգելոց): Այն տարածվում է Գետիկ ու Աղստե գետերի ջրհավաք ավազանում՝ 1000-2300 մ բարձրությունների վրա: Պարկի տարածքը կազմում է 28 հազ. հա: Այստեղ պահպանվում է **կենու պուրակը**, որը հազվագյուտ է ամբողջ Կովկասում: Պահպանվող օբյեկտներ են նաև հաճարենու և կաղնու մի քանի տեսակներով կուսական անտառները, որտեղ հանդիպում են նաև վայրի պտղատուների տեսակներ՝ հոնենի, տխլենի, սզնի և այլն: «Դիլիջան» ազգային պարկում պահպանության տակ են 172



Տեսարան «Արփի լիճ» ազգային պարկից

ողնաշարավոր կենդանիներ՝ անտառային կատու, կզաքիս, ոզնի, սկյուռ, սպիտակագլուխ անգղ, մորուքավոր արծիվ և այլն:

«Արփի լիճ» ազգային պարկը հիմնադրվել է 2009 թ.: Այն ընդգրկում է Եղնախաղի լեռների արևելյան, Զավախքի լեռների հարավարևմտյան լանջերը և դրանց միջև ընկած լեռնատափաստանային, մերձալպյան լանդշաֆտները: Պարկի տարածքը կազմում է մոտ 62 հազ. հա: Պարկի տարածքում ստեղծված արգելոցներում ու արգելավայրերում հատուկ պահպանության տակ են գտնվում հազվագյուտ թռչունները՝ գանգրափետուր հավալուանը և մարգահավը: Արփի լճի կղզիներում են ձվադրում նաև էնդեմիկ հայկական որորը և ևս շուրջ 80 թռչնատեսակ:

«Արևիկ» ազգային պարկը հիմնադրվել է 2009 թ., Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերին: Այն ընդգրկում է շուրջ 34,5 հազ. հա տարածք: Պարկի տարածքում հատուկ պահպանության ու վերահսկողության շնորհիվ զգալիորեն աճել է մուֆլոնի գլխաքանակը: Իսկ ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված կենդանատեսակներից այստեղ երբեմն հանդիպում է Արաքսից թափանցած ընձառյուծը:

«Արփի լիճ» և «Արևիկ» ազգային պարկերը գտնվում են կազմավորման փուլում, և հետազոտական, կառավարման, տնտեսական և այլ խնդիրներ դեռևս լուծման գործընթացում են:

Հայաստանի Հանրապետության տարածքում **պետական արգելոցները երեքն են՝ Խոսրովի, Շիկահողի և Էրեբունու:**

Խոսրովի արգելոցը տարածվում է Գեղամա լեռների հարավային մասում՝ Ազատ և Վեդի գետերի ջրհավաք ավազաններում՝ 1000-2300 մ բարձրությունների վրա՝ զբաղեցնելով ավելի քան 29 հազ. հա մակերես: Նշանավոր է շուրջ 1800 բուսատեսակներով: Դրանք կազմում են Հայաստանի բուսատեսակների շուրջ 60%-ը, իսկ արգելոցի բուսատեսակների ավելի քան 1/3-ը հազվագյուտ են: Այստեղ պահպանվող հազվագյուտ և էնդեմիկ բուսատեսակներից են հայկական ալոճենին, վավիլովյան աշորան (տարեկանը) և այլն: Կենդանական աշխարհի եզակի տեսակներից պահպանվում են բեզուարյան այծը, մուֆլոնը, առաջավորասիական ընձառյուծը, կովկասյան գորշ արջը, գառնանգղը և այլն:

Շիկահողի արգելոցը գտնվում է Ծավ գետի ջրհավաք ավազանում՝ 700-2400 մ բարձրության վրա: Արգելոցի 94%-ը անտառապատ է և ունի

խիստ մասնատված ռելիեֆ: Այստեղ աճում է 1000-ից ավելի բուսատեսակ, որոնցից նշանավոր են արաքայան կաղնու, վրացական թխկու, բազմապտուղ գիհու, ընկուզենու պուրակները և շուրջ 64 հա կազմող հաստաբուն, երկնասլաց արևելյան սոսու պուրակը:

Էրեբունու արգելոցը կազմակերպվել է Երևանից հարավ-արևելք ընկած բլրապատ կիսաանապատային տարածքում: Նրա գլխավոր նպատակն է պահպանել հացազգիների վայրի տեսակների հարուստ գենոֆոնդը, որտեղ հատուկ արժեք են ներկայացնում **ցորենի վայրի տեսակները**՝ միահատիկ ցորենը, արարատյան ցորենը:

Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել են նաև 25-ից ավելի **արգելավայրեր**: Արգելավայրերում պահպանության տակ է վերցված ոչ թե ամբողջ տարածքը, այլ առանձին բուսատեսակներ ու կենդանատեսակներ կամ այլ բնական օբյեկտներ: Արգելավայրերում բնական միջավայրի մյուս տարրերի օգտագործումն արգելված չէ:

Մեր հանրապետության տարածքը հարուստ է բնության հուշարձաններով, որոնք ունեն գիտական, մշակութային և գեղագիտական նշանակություն: Նշանավոր են հատկապես Որոտան գետի վրայով անցնող՝ արդեն հիշատակված անձեռակերտ «Սատանի կամուրջը», Վայոց ձորում գտնվող ստալակտիդներով ու ստալագմիտներով զարդարված Մոզրովի և Մագիլի կարստային քարանձավները, Զերմուկի, Շաքիի և Թռչկանի ջրվեժները և այլն:

Հիշատակված հատուկ տարածքների պահպանության նպատակով ծավալուն աշխատանք է կատարվում բնակչության էկոլոգիական գրագիտության բարձրացման և բնական միջավայրի պաշտպանության գործը բարելավելու ուղղությամբ: Չնայած դրան, բնապահպանական շատ հարցեր դեռևս լուծված չեն: Շարունակում են վերացման վտանգի տակ մնալ շատ բուսատեսակներ ու կենդանատեսակներ, աղքատանում են մեր անտառները, տափաստաններն ու ալպյան մարգագետինները, նվազում է մեր երկրի կենսաբազմազանությունը:



«Արևիկ» ազգային պարկի տեսարանը Մեղրու լեռնանցքից



Տեսարան Խոսրովի արգելոցից



Սոսու պուրակը Շիկահողի արգելոցում

որում՝ բուսատեսակների ևս 7%-ի վիճակը մտահոգիչ է: Դրանցից 155-ը հազվագյուտ են և զբաղեցնում են սահմանափակ տարածք, ուստի ամենախոցելի խումբն են կազմում: Այդ բուսատեսակներից են Թաղթաջանի կաթնուկը, հունական ջրահյուսը, հատապտղային կենին և այլն: Անհետացման վտանգի տակ են գտնվում արարատյան իշամոռուկը, դուրեկան թխկին և տասնյակ այլ բուսատեսակներ:

Կենդանիների «Կարմիր գրքում» գրանցված է կաթնասունների, սողունների և թռչունների ընդհանուր քանակի մոտ 1/4-ը: Այժմ անհետացման եզրին են 153 ողնաշարավոր և անողնաշար կենդանիներ, այդ թվում՝ իշխան ձկան մնացած 2 տեսակները: Առավել վտանգված կաթնասուններից են բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, երկարականջ ոզնին, իսկ սողուններից՝ հայկական իժը, միջերկրածովային կրիան: Թռչուններից հատուկ պահպանության կարիք են զգում սև անգղը, վարդագույն հավալուսնը և մի քանի այլ տեսակներ: Ողնաշարավոր **կենդանիների 6 տեսակ** (միջերկրածովային կրիան, հայկական իժը, գանգրափետուր հավալուսնը, կովկասյան սապսանը, առաջավորասիական ընձառյուծը և սպիտակապոչ արծիվը) մտել են «Միջազգային Կարմիր գիրք»:

Ամբողջ երկրագնդի աշխարհագրական թաղանթի և առանձին պետությունների կենսաբազմազանության վիճակի մասին տեղեկություններ տալիս են պարբերաբար հրատարակվող միջազգային և ազգային «Կարմիր գրքերը»: Բույսերի «Կարմիր գրքերում» տեղեկություններ են տրվում բուսատեսակների նախկին ու ներկայիս տարածման վայրերի, դրանց էկոլոգիական, աշխարհագրական առանձնահատկությունների, հազվագյուտ տեսակների քանակական փոփոխությունների մասին: Կենդանիների «Կարմիր գրքերը» նվիրվում են անհետացած և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակներին:

Մեր հանրապետության բույսերի «Կարմիր գրքում» ընդգրկված են վայրի բուսատեսակների 14%-ը (452 տեսակ) և սնկերի 40 տեսակ, ընդ

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքներ առանձնացվել: Ի՞նչ չափանիշներով են դրանք միմյանցից տարբերվում:
2. Թվարկե՞ք և քարտեզի վրա ցո՞լյց տվե՞ք ՀՀ ազգային պարկերն ու արգելոցները:
3. Բնութագրե՞ք և համեմատե՞ք Խոսրովի և Շիկահողի արգելոցները:
4. Թվարկե՞ք ՀՀ «Կարմիր գրքերում» գրանցված առավել արժեքավոր բուսատեսակներն ու կենդանատեսակները:
5. Ուսուցչի օգնությամբ կազմե՞ք ձեր բնակավայրին հարող տարածքի այն բուսատեսակների և կենդանատեսակների ցուցակը, որոնք գրանցված են միջազգային և ՀՀ ազգային «Կարմիր գրքերում»:

ԴԱՍ 21. ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Ուսուցչի օգնությամբ ուսումնասիրե՞ք ձեր բնակավայրի մոտ գտնվող՝ ստորև հիշատակված բնական օբյեկտները, և յուրաքանչյուր հարցադրման վերաբերյալ ստացված արդյունքները գրանցե՞ք **աշխարհագրության տետրում**: Հնարավորության դեպքում համապատասխան գրանցումներին կից տեղադրե՞ք լրատվարներ, կազմե՞ք սխեմատիկ քարտեզներ և աղյուսակներ:

Էքսկուրսիան առավել արդյունավետ կազմակերպելու համար առաջարկվում է դասարանը պայմանականորեն բաժանել չորս խմբի՝ «գեոմորֆոլոգների» (երկրաձևաբաններ), «կլիմայագետների», «ջրաբանների» և «լանդշաֆտագետների»: Նրանք պետք է տան հետևյալ հարցերի պատասխանները.

1. Որո՞նք են ձեր տարածքի մակերևույթի խոշոր ձևերը (լեռներ, գոգավորություններ, գետահովիտներ): Ի՞նչ կառուցվածք ունեն դրանք: Նկարագրե՞ք դրանց տնտեսական օգտագործման առանձնահատկությունները:
2. Ի՞նչ լեռնային ապարներ են տարածված մակերևույթի տարբեր ձևերում: Դասարանով ստեղծե՞ք «Իմ բնակավայրի քարաշխարհը» խորագրով լեռնային ապարների, օգտակար հանածոների հավաքածու: Նշե՞ք դրանց օգտագործման բնագավառները:
3. Վերլուծե՞ք ձեր բնակավայրի կլիման՝ օգտագործելով մերձակա օդերևութաբանական կայանի հետևյալ տվյալները.
 - ա) մթնոլորտային ճնշումը, տիրապետող քամիների արագությունն ու ուղղությունը,
 - բ) օդի միջին ջերմաստիճանների տարեկան ընթացքը,
 - գ) ամենատաք և ամենացուրտ ամիսների միջին, նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները,
 - դ) մթնոլորտային տեղումների քանակը և բաշխվածությունն ըստ ամիսների,

- ե) Գնահատե՞ք ըստ կլիմայական սեզոնի՝ ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների ազդեցությունը բնակչության կենցաղի և արտադրական գործունեության վրա:
- 4. Ո՞ր գետի ափին է գտնվում ձեր բնակավայրը: Գետի վրա կառուցված որևէ կամրջի հատվածում չափե՞ք գետի լայնությունը, միջին խորությունը, հոսքի արագությունը: Ստացված տվյալներով որոշե՞ք գետի ջրի ծախսը, օրական հոսքը:
- 5. Լրացնելով ստորև բերված աղյուսակ 1-ը՝ կազմե՞ք ձեր բնակավայրին հարակից «Լանդշաֆտային գոտիների բնութագիրը»:

Աղյուսակ 1

----- բնակավայրի վերընթաց լանդշաֆտային գոտիների բնութագիրը

Վերընթաց լանդշաֆտային գոտիներ	Բացարձակ բարձրությունը, մ	Կլիման	Հողերը	Բուսականությունը	Կենդանական աշխարհը

ԴԱՍ 22. ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ» ԲԱԺԻՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

- 1. Գնահատե՞ք Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը:
- 2. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի ձևավորման երկրաբանական առանձնահատկությունները:
- 3. Սխեմատիկ քարտեզի վրա առանձնացրե՞ք Հայկական լեռնաշխարհի գլխավոր լեռնագրական միավորները:
- 4. Բնութագրե՞ք Հայկական լեռնաշխարհի կլիմայի առանձնահատկությունները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները:
- 5. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի գետային ցանցի գլխավոր առանձնահատկությունները: Թվարկե՞ք և բնութագրե՞ք լեռնաշխարհի խոշոր գետերը:
- 6. Ի՞նչ ծագում ունեն Հայկական լեռնաշխարհի լճերը: Տվե՞ք Վանա և Ուրմիա լճերի համեմատական բնութագիրը:
- 7. Աշխարհագրության տեսրում արտագծե՞ք ստորև բերված աղյուսակը և համապատասխան սյունակում լրացրե՞ք Հայկական լեռնաշխարհի լեռնագրական միավորների անվանումները: Աղյուսակը լրացնելիս կարող եք օգտվել նաև 10-11 էջերի քարտեզից:

Ծալքաբեկորավոր լեռներ, լեռնագագաթներ	Հրաբխային լեռնազանգվածներ, սարավանդներ	Միջլեռնային գոգավորություններ, դաշտեր

Լեռնագրական միավորներ

Արևելապոնտական, Սավալան, Կարսի, Բալահովտի, Ջիլո, Նեմրուֆ, Դերջանի, Արդահանի, Հայկական Պար, Բյուրակնի, Վանա լճի, Փամբակի, Նախիջևանի, Ախալքալաքի, Քաջքար, Բասենի, Սուկավետ, Խարբերդի, Ծաղկանց, Վասպուրականի, Արարատյան, Երզնկայի, Հայկական Տավրոս, Մնծուրի, Կարնո, Ալաշկերտի, Մշո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

- Ո՞րն է ՀՀ մակերևույթի ձևավորման գլխավոր լեռնակազմական փուլը: Բնութագրե՞ք ներծին և արտածին ուժերի դերը ՀՀ մակերևույթի ձևավորման գործում:
- Քարտեզի վրա ցույց տվե՞ք և բնութագրե՞ք.
 - ծալքաբեկորավոր լեռները,
 - հրաբխային լեռներն ու սարավանդները,
 - միջլեռնային գոգավորությունները, խոշոր գետահովիտները,
 - օգտակար հանածոների հանքավայրերը:
- Որո՞նք են ՀՀ կլիման պայմանավորող գործոնները: Ինչպե՞ս են դրանք անդրադառնում տարվա եղանակների և կլիմայի տիպերի վերընթաց փոփոխության վրա:
- Վերլուծե՞ք ՀՀ ջրագրական ցանցի տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները:
- Դասակարգե՞ք ՀՀ լճերն ըստ ծագման: Բնորոշե՞ք Սևանա լճի հիմնախնդրի էությունը և դրա լուծման ուղիները:
- Ի՞նչ գործոններով է պայմանավորված ՀՀ հողերի բազմազանությունը: Բնութագրե՞ք ՀՀ հիմնական հողատիպերի տարածման օրինաչափությունները:
- Որո՞նք են ՀՀ բուսականության և կենդանական աշխարհի բազմազանության պատճառները:
- Բնութագրե՞ք ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիները: Ինչո՞ւ է լեռնատափաստանային լանդշաֆտն ամենաընդարձակը:
- Որո՞նք են ՀՀ բնօգտագործման և բնապահպանական գլխավոր հիմնախնդիրները:
- Որո՞նք են ՀՀ հատուկ պահպանվող տարածքները: Ի՞նչ բուսատեսակներ և կենդանատեսակներ են պահպանվում այնտեղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 23. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ: ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

Հայերը պատկանում են եվրոպոիդ մեծ ռասայի հարավային ճյուղի **արմենոիդ** (առաջավորասիական) մարդաբանական տիպին և որպես էթնիկ խումբ ձևավորվել են Հայկական լեռնաշխարհում: Հազարամյակներ ի վեր նրանք եղել են տարածաշրջանի հիմնական բնակիչները:

Հայերը պատկանում են այն ազգերի թվին, որոնք սփռված են աշխարհով մեկ: Աշխարհում հայ բնակչության թվաքանակի մասին տվյալները մոտավոր են, քանի որ առանձին երկրներ պաշտոնական տեղեկություններ չեն հրապարակում սեփական բնակչության ազգային կազմի վերաբերյալ: Աշխարհում հայերի թիվը գնահատվում է մոտ 10 մլն մարդ, որից ավելի քան 7 մլն-ը ապրում է ՀՀ սահմաններից դուրս՝ 100-ից ավելի երկրներում, առավելապես Ռուսաստանում (2 մլն-ից ավելի), ԱՄՆ-ում (1,2 մլն), Ֆրանսիայում (0,5 մլն), Վրաստանում (0,4 մլն): Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2011 թ. մարդահամարի տվյալներով կազմել է մոտ 3,0 մլն մարդ:

Այդ թիվը մեծ է, թե՛ փոքր: Ինչպես արդեն նշել ենք, մեր երկիրը բնակչության թվաքանակով փոքր պետություն է, աշխարհում զիջում է շուրջ 130 պետությունների և համեմատելի է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Նորվեգիան, Ալբանիան, Ուրուգվայը, Լիտվան, Մոնղոլիան:


Այդ երկրները, ունենալով մոտավորապես հավասար բնակչություն, խիստ տարբերվում են տարածքի մեծությամբ: Տարածքների տարբեր մեծության պատճառով տարբեր է **բնակչության խտությունը**: ՀՀ-ն խտաբնակ երկրներից է՝ 102 մարդ/կմ² (առանց Սևանա լճի մակերեսի՝ 107 մարդ/կմ²): Այդ ցուցանիշով ՀՀ-ն գերազանցում է իր անմիջական հարևաններին՝ **Թուրքիային, Իրանին, Վրաստանին**, որոնց զգալիորեն զիջում է բնակչության ընդհանուր թվաքանակով:

Բնակչության ընդհանուր թվաքանակից ու խտությունից բացի, ցանկացած երկրի բնակչությունը բնութագրող կարևոր ցուցանիշ է **թվաքանակի շարժընթացը**:

Պատմական երկարատև ժամանակաշրջանում Հայաստանի զարգացման ներքին և արտաքին պայմանների փոփոխությունների հետևանքով լուրջ, հաճախ նաև ճակատագրական փոփոխություններ են կատարվել բնակչության միգրացիաների, տեղաբաշխման, ազգային կազմի ցուցանիշներում և ժողովրդագրական տարբեր գործընթացներում:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու պահին (1827 թ.) ՀՀ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺՆԹԱՑՆ (մլն մարդ)



Ներկա տարածքում բնակվում էր ընդամենը 97 հազ. մարդ: Հետագա տարիներին, երբ հաստատվեցին խաղաղ կյանքի և տնտեսական գործունեության համեմատաբար նպաստավոր պայմաններ, բնակչության թիվը սկսեց արագորեն աճել:

Ուշադիր զննեք գծագիրը: Դուք տեսնում եք, որ 1828 թ. ի վեր Հայաստանի Հանրապետության ներկա տարածքի բնակչությունն աճել է ավելի քան 30 անգամ, այսինքն՝ ավելի արագ, քան աշխարհի բնակչության ընդհանուր թիվը, որն աճել է 7 անգամ: Կտեսնեք նաև, որ Արևելյան Հայաստանի բնակչության աճն այդ տարիներին հիմնականում կայուն է եղել, թեև ոչ հավասարաչափ: Ժամանակաշրջանը պարզորոշ բաժանվում է չորս հատվածի. 1828-1918 թթ., 1918-1920 թթ., 1920-1989 թթ., 1989-2013 թթ.:

Կյանքի խաղաղ պայմանները և տնտեսության զարգացումը Արևելյան Հայաստանում 1828-1918 թթ. ապահովել են բնակչության կայուն և արագ աճ: Դա տեղի է ունեցել Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի հայերի ներգաղթի և համեմատաբար բարձր ծնելիության հաշվին: Դրան հաջորդում է 1918-1920 թթ. բնակչության ընդհանուր թվի կտրուկ նվազումը: Դրա պատճառներն են հայ-թուրքական պատերազմները, սովն ու համաճարակները:

Բնակչության կայուն աճը վերականգնվել է խորհրդային տարիներին 1920-1989 թթ., երբ բնակչության ընդհանուր թիվը 720 հազարից հասել է 3,3 մլն: Դա տեղի ունեցավ բարձր բնական աճի ու ներգաղթի շնորհիվ:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունում տնտեսական խոր ճգնաժամի պատճառով իջավ բնակչության կենսամակար-

դակը, նվազեց ծնելիությունը, ավելացավ մահացությունը, կտրուկ աճեց արտագաղթը: Այս ամենի հետևանքով բնակչության թիվը նվազեց: 2001 թ. մարդահամարի տվյալներով այն կազմում էր 3,2 մլն: ՀՀ բնակչության թվի նվազման միտումը շարունակվում է նաև վերջին տարիներին: Այսպես՝ 2011 թ. հոկտեմբերին անցկացված մարդահամարի տվյալներով ՀՀ մշտական բնակչության թիվը կազմում էր 3,02 մլն մարդ, իսկ առկա բնակչության թիվը՝ 2,87 մլն մարդ¹: Մոտակա տարիներին բնակչության ծնելիության և դրա հետ կապված բնական աճի նվազման և արտագաղթի արդի միտումների պահպանման պայմաններում ՀՀ բնակչության թվի նվազումը կշարունակվի, ինչը, իհարկե, չի բխում մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և ռազմաքաղաքական շահերից:

Եթե ՀՀ ներկա տարածքի բնակչության թվի փոփոխությունները համեմատենք աշխարհի և տարածաշրջանի շատ երկրների բնակչության թվի փոփոխությունների հետ, ապա կստացվի հետևյալ պատկերը. 1920-1990 թթ. ՀՀ ներկա տարածքի բնակչության թվի աճի տեմպերն ավելի բարձր էին: **Վերջին երկու տասնամյակներին ՀՀ բնակչության բացարձակ թիվը նվազել է, մինչդեռ աշխարհի և տարածաշրջանի երկրների մեծ մասի բնակչության թվի աճի տեմպերը շարունակում են մնալ բարձր:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Որքան է ամբողջ աշխարհում հայերի թիվը, և ինչպե՞ս է այն բաշխվում:
2. Ըստ բնակչության թվաքանակի Հայաստանի Հանրապետությունը ինչպիսի՞ պետություն է համարվում: Թվարկե՞ք և քարտեզի վրա ցույց տվե՞ք այն պետությունները, որոնք իրենց բնակչության թվաքանակով համեմատելի են ՀՀ-ի հետ:
3. Վերջին 180 տարիների ընթացքում բնակչության թվի շարժընթացի ինչպիսի՞ տատանումներ են եղել: Նշե՞ք դրանց պատճառները:
4. XX դարի սկզբի իրադարձություններն ինչպե՞ս ազդեցին ՀՀ ներկա տարածքի բնակչության թվաքանակի փոփոխության վրա:
5. Դիագրամի օգնությամբ նշե՞ք այն ժամանակաշրջանները, երբ բնակչության թիվը նվազել է: Բացատրե՞ք դրա պատճառները:

1 Մշտական բնակչությունը տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բացակայող բնակչության թվաքանակի ցուցանիշն է: Առկա բնակչությունը տվյալ տարածքում մշտապես բնակվող և հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակի ցուցանիշն է:

ԴԱՍ 24. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԲՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺԵՐԸ

Բնակչության թվաքանակը փոփոխվում է նրա բնական և մեխանիկական շարժի շնորհիվ:

Բնակչության թվի բնական շարժը բնակչության թվաքանակի փոփոխությունն է բնական ճանապարհով, այսինքն՝ ծնելիության և մահացության հետևանքով:

Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն են ծնելիության և մահացության գործակիցները և դրանց տարբերությունը բնութագրող բնական աճի գործակիցը:

Ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցները համապատասխանաբար ցույց են տալիս ծնունդների և մահացությունների թիվը բնակչության յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով (%՝ պրոմիլ): Օրինակ՝ 2012 թ. ՀՀ-ում ծնելիության ընդհանուր գործակիցը կազմել է 14,0%, մահացությանը՝ 9,1%:


Մինչև Հայաստանի խորհրդայնացումը բնակչության բնական շարժին հատուկ էին ծնելիության և մահացության բարձր գործակիցները և դրա հետևանքով՝ բնակչության ոչ բարձր բնական աճը:

1920-1960-ական թվականներին բնակչության բնական աճի գործակիցներն զգալիորեն բարձրացել են: 1950-1960-ական թվականներին Հայաստանում գրանցվել են ԽՍՀՄ հանրապետությունների մեջ մահացության ամենացածր (5-6%) և բնական աճի ամենաբարձր (30-35%) ցուցանիշները (բնական աճի ցուցանիշն աշխարհում ամենաբարձրերից էր):

Բնական աճի նման բարձրացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ծնելիության գործակիցը, ինչպես ցույց է տալիս դիագրամը, ողջ ժամանակաշրջանի ընթացքում շարունակում էր մնալ բարձր, իսկ մահացության գործակիցն առողջապահության զարգացման և բնակչության կենսամակարդակի աճի շնորհիվ անընդհատ նվազում էր:

1960-ական թվականներից բնակչության ծնելիության ցուցանիշը սկսել է նվազել: Այն նվազագույնի է հասել անցյալ դարի վերջին: Միևնույն ժամանակ բարձրացել է մահացության ցուցանիշը: Կրկին դիմենք դիագրամին: Այն ցույց է տալիս, որ վերջին տասնամյակներում նկատելիորեն նվազել է նաև բնական աճի գործակիցը. ներկայումս այն տատանվում է 4-5% սահմաններում և գրեթե 2,5 անգամ ցածր է աշխարհի միջին ցուցանիշից: Եթե մի քանի տասնամյակ առաջ ՀՀ յուրաքանչյուր ընտանիքին բաժին էր ընկնում 3-4 երեխա, ապա ներկայումս սովորական են դառնում 1-2 երեխա ունեցող ընտանիքները: Վերջին երկու տասնամյակում ծնունդների թվի էական նվազումը և մահացությունների թվի ավելացումը բացատրվում են մի շարք պատճառներով: Դրանցից են գործազրկության և աղքատության աճը, երիտասարդ տղամարդկանց արտագաղթը, բնակչության ծերացումը, ամուսնությունների թվի կրճատումը և այլն:

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ԱՃԸ**
(Ընդհանուր գործակիցներ 1000 մարդու հաշվով)



ՀՀ-ում քաղաքային և գյուղական բնակչության բնական վերարտադրության ցուցանիշները գրեթե նույնն են: Սակայն նկատելի են վերոհիշյալ ցուցանիշների, հատկապես ծնելիության և բնական աճի տարբերություններ՝ ըստ մարզերի: Այսպես՝ բնական աճի ցուցանիշները բարձր են Երևանին հարակից Արմավիր, Կոտայք, Արարատ և Արագածոտն մարզերում (5,1-6,0%), իսկ ցածր են հեռավոր և լեռնային Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում (1,8-2,0%):

Բնակչության մեխանիկական շարժը: ՀՀ-ն պատկանում է այն երկրների թվին, որոնց բնակչության ընդհանուր թվաքանակի փոփոխության մեջ մեծ դեր է կատարել **բնակչության մեխանիկական շարժը, այսինքն՝ ներգաղթը և արտագաղթը:**

Եթե դարեր շարունակ Հայաստանում գերակշռող է եղել արտագաղթը, ապա Ռուսաստանին միացվելուց հետո Արևելյան Հայաստանում տիրապետող դարձավ ներգաղթը: Զանգվածային ներգաղթը մի քանի խոշոր ալիք է ունեցել: Առաջինը եղել է 1828-1830 թթ., երբ Արևմտյան Հայաստանից և Պարսկահայաստանից Արևելյան Հայաստան գաղթեց 140 հազար մարդ՝ գրեթե մեկուկես անգամ ավելի, քան տեղի ամբողջ բնակչությունն էր: Ներգաղթի գլխավոր ալիքները և ուղղությունները պատկերված են կից ներկայացվող գծապատկերում:

Հաջորդ ալիքները համընկել են Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմական գործողությունների կամ էլ թուրքական իշխանությունների կողմից բռնությունների ու հայկական ջարդերի ուժեղացման հետ: Այդպես է եղել 1894-1896 թթ. և հատկապես Մեծ եղեռնի ժամանակ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՂԻՆԵՐԸ



XIX դարի կեսերին Ռուսաստանի կենտրոնական նահանգներից դեպի Արևելյան Հայաստան են ներգաղթել ռուս ուղղափառ եկեղեցու կողմից հալածվող տասնյակ հազարավոր ռուս կրոնական աղանդավորներ՝ մոլոկաններ: Նրանց տրամադրվեցին ընդարձակ հողատարածություններ ռազմավարական նշանակության ճանապարհների հանգույցներում և կարևոր լեռնանցքների մոտ: Այդպես են ծագել նախկինում միայն ռուսներով բնակեցված Ելենովկան (ներկայիս Սևան քաղաքը), Վորոնցովկան (Տաշիր), Միխայլովկան (Ճամբարակ) և մոտ երկու տասնյակ այլ բնակավայրեր:

Խորհրդային տարիներին ներգաղթը ստացավ նոր բովանդակություն և տեղի է ունեցել երեք ձևով:

Առաջին՝ ներգաղթել են առանձին ընտանիքներ և անհատներ Ադրբեջանից, Վրաստանից և աշխարհի այլ հայաշատ երկրներից: Դա նկատվել է բոլոր տարիներին:

Երկրորդ՝ պետականորեն կազմակերպված զանգվածային հայրենադարձություն: Այն տևեց ավելի քան կես դար, որի ընթացքում մայր հայրենիքում հաստատվեց շուրջ 200 հազ. հայ աշխարհի տարբեր երկրներից: Մեծաքանակ էին հատկապես 1946-1948 թթ. ներգաղթածները՝

գրեթե 100 հազ. մարդ գլխավորապես Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրներից:

Երրորդ՝ Հայաստանից դուրս գտնվող իրենց բնակավայրերից բռնի վտարվածների ներգաղթ: Միայն Ադրբեջանից 1988-1992 թթ. Հայաստան գաղթեց ավելի քան 350 հազ. փախստական:

Հայաստանից տեղի է ունեցել նաև **բնակչության արտագաղթ**: Խորհրդային տարիներին, բացի կամավոր, տարերայնորեն ձևավորված արտագաղթից, կատարվել է նաև բռնի զանգվածային արտագաղթ: Առաջինը 1940-ական թվականների վերջերին էր, երբ հազարավոր ընտանիքներ աքսորվեցին Սիբիր:

Առավել խոշոր զանգվածային արտագաղթ տեղի ունեցավ 1988-1990 թթ.: Այդ տարիներին ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայության մի մասը: 1988 թ. երկրաշարժով էր պայմանավորված տասնյակ հազարավոր բնակչության արտագաղթն աղետի գոտուց:

1990-ական թվականների սկզբներից մինչև մեր օրերը շարունակվող և ավելի քան մեկ միլիոնի հասնող բնակչության արտագաղթը պայմանավորված էր անցման շրջանի տնտեսական դժվարություններով, արդյունաբերության ճգնաժամով, գործազրկության աճով, բնակչության կենսամակարդակի անկմամբ: Տարեկան տասնյակ հազարների են հասնում Ռուսաստան և այլ երկրներ ժամանակավոր արտագնա աշխատանքի մեկնողները:

Միայն ՀՀ տնտեսության և հատկապես արդյունաբերության վերականգնման և զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծման և աղքատության վերացման շնորհիվ հնարավոր կլինի նվազեցնել արտագաղթը և բարձրացնել բնակչության բնական աճի ցուցանիշը: Ծնելիության աճին կարող է նպաստել նաև պետության կողմից իրականացվող արդյունավետ ժողովրդագրական քաղաքականությունը (նորածին ունեցող և բազմազավակ ընտանիքներին նպաստների և լրացուցիչ արտոնությունների տրամադրում և այլն):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն է Հայաստանի Հանրապետության բնակչության թվի բնական շարժը: Ի՞նչ փոփոխություններ է այն կրել:
2. Ինչպիսի՞ն են ՀՀ բնակչության բնական շարժի տարածքային տարբերությունները:
3. Ինչպիսի՞ն է կազմակերպված ներգաղթի դերը Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակի աճի մեջ:
4. Վերլուծե՞ք Հայաստանի Հանրապետության բնակչության արտագաղթի պատճառներն ու ուղղությունները նախկինում և ներկայումս:
5. ՀՀ բնակչության թվի աճի համար մոտակա տարիներին ինչպիսի՞ պայմաններ և նախադրյալներ են անհրաժեշտ:

ԴԱՍ 25. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Ցանկացած երկրի բնակչության կարևորագույն բնութագրիչներից է նրա կազմը:

Տարբերում են բնակչության **ազգային, սեռային, տարիքային, սոցիալական, կրոնական, ըստ բնակավայրերի տեսակների կազմ** և այլն:

Բնակչության ազգային կազմը: Հայաստանի Հանրապետությունը բնակչության ազգային կազմով աշխարհի առավել միատարր երկրներից է: Հիմնական ազգը՝ հայերը, 2011 թ. մարդահամարի տվյալներով կազմում են բնակչության ընդհանուր թվի 98,1%-ը:

Նախորդ դասընթացներից հիշեք, թե հայերը մարդկային ռասաների ո՞ր խմբին, իսկ հայերենը՝ ո՞ր լեզվաընտանիքին են պատկանում:

Ի տարբերություն Պատմական Հայաստանի՝ ՀՀ-ի ներկայիս տարածքում 1918-ից ի վեր հայերի բաժինը բնակչության ընդհանուր թվում անընդհատ աճել է:

Հայաստանի Հանրապետությունում թվաքանակով **երկրորդ ազգը եզդիներն են:** Նրանց թիվը 2011 թ. մարդահամարի տվյալներով 35,3 հազ. է: Մեծ մասը բնակվում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում: Հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, հատկապես ոչխարաբուծությունը: Թեև նրանց ծնելիության և բնական աճի ցուցանիշները բավականին բարձր են, սակայն արտագաղթի պատճառով եզդիների թիվը վերջին տասը տարիներին նույնիսկ նվազել է:

Երրորդ տեղում ռուսներն են, որոնց թիվը 2011 թ. մարդահամարի տվյալներով 11,9 հազ. է: Ռուսների մեծ մասն ապրում է Երևանում, Գյումրիում, Վանաձորում և այլ քաղաքներում: Նախկինում ռուս կրոնական աղանդավորներով՝ մոլոկաններով և դուխոբորներով են բնակեցված եղել հանրապետության հյուսիսի, հատկապես Լոռու մարզի մի շարք գյուղական բնակավայրեր (Լեւոնտովո, Ֆիոլետովո, Մեդովկա և այլն): Սակայն վերջին տարիներին նրանց մեծ մասն արտագաղթել է:

Հիշեք, թե երբ և ինչ հանգամանքներում են ռուսները հայրնվել Արևելյան Հայաստանի տարածքում:

ՀՀ-ում մյուս ազգերից համեմատաբար մեծաքանակ են **ասորիները, քրդերը, ուկրաինացիները, վրացիները, հույները,** որոնցից յուրաքանչյուրի թիվը 3 հազարից էլ պակաս է: Հույների մեծ մասն ապրում է պղնձարդյունաբերական քաղաքներում (Ալավերդի, Ախթալա, Շամլուղ), ասորիները՝ Արարատի մարզի Վերին Դվին և Դիմիտրով գյուղերում: Ուկրաինացիները հիմնականում քաղաքաբնակ են:

Երկրի գործող սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, անկախ ազգային պատկանելությունից, ունեն **հավասար իրավունքներ ու պարտականություններ:** Ազգային փոք-

րամասնությունները կարող են ունենալ ազգային դպրոց, զարգացնել ազգային մշակույթը, պահպանել ազգային ավանդույթները:

2011 թ. մարդահամարի տվյալներով՝ ըստ կրոնական դավանանքի ՀՀ բնակչության շուրջ 96%-ը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են:

Բնակչության սեռային կազմը: Սա բնակչության ընդհանուր թվում տղամարդկանց և կանանց թվաքանակների հարաբերակցությունն է:

ՀՀ-ում բնակչության սեռային կազմը տարբեր տարիքային խմբերում տարբեր է: Ցածր տարիքային խմբերում (մինչև 20-25) գերակշռում են տղաները: Ավելի բարձր տարիքային խմբերում գերակշռող են դառնում կանայք, իսկ ծերերի մեջ կանանց գերակշռությունն էլ ավելի է մեծանում:

2011 թ. մարդահամարի տվյալներով՝ ՀՀ մշտական բնակչության ընդհանուր թվում տղամարդիկ կազմում են 48,0%, իսկ կանայք՝ 52,0%: Առկա բնակչությունում կանանց բաժինն ավելի բարձր է (53,1%), ինչը վկայում է ՀՀ-ից ժամանակավոր բացակայողների մեջ տղամարդկանց զգալի գերակշռության մասին: ՀՀ քաղաքային մշտական բնակչության կազմում կանանց բաժինը (53,2%) զգալիորեն բարձր է, քան գյուղական բնակչության կազմում (50,1%): Կանանց գերակշռությունը հատկապես մեծ է Երևանում, Լոռու, Շիրակի և Արարատի մարզերում:


Բնակչության տարիքային կազմը: Բնակչության տարիքային կազմը կամ կառուցվածքը որոշելու համար ընդունված է առանձնացնել տարիքային խմբեր՝ մինչաշխատունակ, աշխատունակ և հետաշխատունակ:

Ըստ տարիքային խմբերի որոշում են աշխատանքային և դպրոցական տարիքի բնակչության, զինապարտների, թոշակառուների թիվը: ՀՀ-ում տղամարդկանց և կանանց թոշակային տարիքը սկսվում է 63 տարեկանից:


Բնակչության տարիքային կազմը բնութագրող դիագրամից երևում է, որ ՀՀ բնակչության գրեթե 1/5-ը մինչաշխատունակ (մանկական և անչափահաս) տարիքի է (0-15 տ.): Վերջին երկու տասնամյակներին մինչաշխատունակ տարիքի բնակչության բաժինն անընդհատ նվազում է, իսկ աշխատունակ և հետաշխատունակ (թոշակային) տարիքի բնակչության բաժինը՝ մեծանում:

Ներկայումս բնակչության ընդհանուր թվում աշխատունակ բնակչության բաժինը կազմում է մոտ 69%:

Բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկություններն ընդունված է արտահայտել սեռատարիքային բուրգերի միջոցով (տես էջ 89): Արևմտյան Եվրոպայի երկրների համեմատությամբ՝ ՀՀ ծեր բնակչության բաժինը դեռևս մեծ չէ, գերակշռում են



ՀՀ բնակչության սեռատարիքային բուրգը (2011 թ.)



միջին տարիքային խմբերի բնակչությունը: Սակայն վերջին 1-2 տասնամյակում նկատվում է բնակչության «ծերացման» միտում:

2011 թ. տվյալներով ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը 74,2 տարի է: Ընդ որում՝ այդ ցուցանիշը կանանց մոտ ավելի բարձր է (77,5 տ.), քան տղամարդկանց (70,7 տ.):

Բնակչության կազմն ըստ բնակավայրերի տեսակների (բնակչության վայրի): Բնակչության կազմի բնութագրության ժամանակ կարևոր է իմանալ, թե ինչպես է բնակչությունը բաշխված քաղաքի և գյուղի միջև:

Հիշեք, թե որն է ուրբանիզացման մակարդակի ցուցանիշը:

Հայաստանը 1918 թ.՝ իր ազգային պետականությունը վերականգնելու նախօրյակին, տիպիկ ագրարային երկիր էր, որի բնակչության 90%-ը բնակվում էր գյուղերում և միայն 10%-ը՝ քաղաքներում:

Խորհրդային տարիներին երկրի տնտեսության, հատկապես արդյունաբերության, շինարարության, սպասարկման ոլորտի ճյուղերի զարգացման շնորհիվ գյուղական բնակչության հաշվին աճեց քաղաքաբնակների բաժինը և 1980-ական թվականների վերջերին կազմեց 68%: Սակայն վերջին երկու տասնամյակներում արդյունաբերության ճգնաժամի հետևանքով մեծ չափերի հասավ քաղաքաբնակների արտագաղթը: Դրա հետ կապված նվազեց քաղաքային բնակչության բաժինը, որը 2011 թ. մարդահամարի տվյալներով կազմում է ավելի քան 63,3%:

Չնայած դրան՝ Հայաստանի Հանրապետությունը համարվում է ուրբանիզացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող երկիր: Այն ավելի բարձր է, քան տարածաշրջանի շատ երկրներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ցուցանիշներով է բնութագրվում բնակչության կազմը:
2. Ինչպիսին է ՀՀ բնակչության ազգային կազմը: Ո՞րն է նրա գլխավոր առանձնահատկությունը:
3. Որո՞նք են ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունները, ինչպե՞ս են տեղաբաշխված ՀՀ տարածքում, ի՞նչ իրավունքներից են նրանք օգտվում:
4. Ինչպիսին է ՀՀ բնակչության սեռային կազմը: Ինչո՞ւ և ինչպե՞ս է այն փոփոխվում ըստ տարիքի: Վերլուծե՞ք սեռատարիքային բուրգը:
5. Օգտվելով դիագրամից՝ վերլուծե՞ք և գնահատե՞ք ՀՀ բնակչության տարիքային կազմը:
6. Ինչպիսին է ՀՀ ուրբանիզացման մակարդակը: Ինչպե՞ս և ի՞նչ պատճառներով է այն փոփոխվել վերջին հարյուրամյակում:

ԴԱՍ 26. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Աշխատանքային ռեսուրսների քանակով և որակով, դրանց օգտագործման բնույթով են որոշվում ցանկացած երկրի տնտեսական զարգացման հնարավորություններն ու մակարդակը:

Աշխատանքային ռեսուրսների քանակը պայմանավորված է բնակչության ընդհանուր քանակով և տարիքային կազմով: Այն մեծ է, եթե մեծ է բնակչության ընդհանուր թիվը և այդ թվում աշխատունակ տարիքի բնակչության բաժինը: Ներկայումս Հայաստանի Հանրապետության աշխատանքային ռեսուրսների քանակը 2,26 մլն է: Դա կազմում է բնակչության ընդհանուր թվի ավելի քան 70%-ը: Այդ ցուցանիշն ավելի բարձր է Երևանում և առավել քաղաքաբնակ Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում:

Աշխատանքային ռեսուրսների ցուցանիշները սովորական պայմաններում կտրուկ փոփոխություններ չեն կրում: Աշխատանքային ռեսուրսների քանակը կարևոր է այն առումով, որ հուշում է, թե զանգվածային գործազրկություն թույլ չտալու համար որքան լրացուցիչ աշխատատեղեր են հարկավոր: Բայց աշխատատեղերի ընդհանուր թվի իմացությունը բավարար չէ: Անհրաժեշտ է պարզել նաև, թե ինչպիսին պետք է լինեն այդ աշխատատեղերը: Իսկ դա արդեն կախված է տարբեր ոլորտների ու ճյուղերի պահանջներից և առնչվում է աշխատանքային ռեսուրսների **որակական ցուցանիշին**: Որակական ցուցանիշն ուղղակիորեն կախված է բնակչության **կրթական և մշակութային մակարդակից**:

Անցյալ դարասկզբին Արևելյան Հայաստանի բնակչության միայն 10-12%-ը գրել ու կարդալ գիտեր: Աշխատանքային ռեսուրսների հիմնական մասը գտնվում էր կրթական ամենացածր մակարդակի վրա, չունեի անհրաժեշտ մասնագիտական որակավորում ժամանակակից արտադրություն կազմակերպելու համար:

Ներկայումս մեր երկրի գրեթե **ամբողջ բնակչությունը գրագետ է**: Ամբողջ երիտասարդությունը պարտադիր ստանում է հիմնական, իսկ ճնշող

մեծամասնությունը՝ լրիվ միջնակարգ կրթություն: Շատ են բարձրագույն կրթությամբ մասնագետները: 2011 թ. մարդահամարի տվյալներով՝ 15 տարեկան և բարձր տարիքի բնակչության 96,8%-ը ունեցել են բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, միջնակարգ և հիմնական կրթություն: Դա նշանակում է, որ ՀՀ-ն իր աշխատանքային ռեսուրսների որակական ցուցանիշներով կարող է մրցել աշխարհի շատ երկրների հետ:

Մեր երկիրն ի վիճակի է լայնորեն օգտագործել գիտատեխնիկական նորագույն նվաճումները և զարկ տալ ժամանակակից բարդ արտադրություններին: Այն ունի հզոր մտավոր ներուժ, որի ճիշտ օգտագործումը տնտեսական անկախության կարևոր պայմաններից է:

Աշխատանքային ռեսուրսների օգտագործումը: Աշխատանքային ռեսուրսներում ընդգրկված են ինչպես տնտեսապես ակտիվ, այնպես էլ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը:


Տնտեսապես ակտիվ է կոչվում բնակչության այն մասը, որն ունի (կամ կարող է ունենալ) սեփական եկամուտ: Դրանք բոլոր աշխատողներն են և աշխատանք փնտրող գործազուրկները:

2012 թ. տվյալներով՝ ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչությունը մոտ 1,4 մլն մարդ է, որը կազմում է աշխատանքային ռեսուրսների 62%-ը: Այս ցուցանիշն առավել բարձր է գյուղական բնակչության բարձր բաժին ունեցող մարզերում (Արագածոտն, Տավուշ, Արարատ, Գեղարքունիք): Տնտեսապես ակտիվ մշտական բնակչության 80,5%-ը կազմում են զբաղվածները, իսկ 19,5%-ը՝ գործազուրկները: Զբաղվածների բաժինը մեծ է առավել գյուղաբնակ մարզերում, իսկ Երևանը և քաղաքային բնակչության մեծ բաժին ունեցող մարզերը (Շիրակ, Լոռի և այլն) ունեն գործազրկության համեմատաբար բարձր մակարդակ:

Վերջին հարյուրամյակում զգալի փոփոխություններ է կրել ՀՀ բնակչության **սոցիալ-դասակարգային** կազմը:

Մինչև 1920-ական թվականների վերջը Հայաստանն իր բնույթով մանր սեփականատիրական էր: Այսինքն՝ բնակչության ճնշող մեծամասնությունը մենատնտես գյուղացիներ էին, արհեստավորներ և քաղաքի մանր սեփականատերեր:

Բնակչության զբաղվածության կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների (2011 թ.)



1 Բնակչության սոցիալ-դասակարգային կազմը որոշվում է այն ցուցանիշներով, թե բնակչության ընդհանուր թվում ինչպիսին է սոցիալական տարբեր խավերին ու դասակարգերին պատկանող անձերի և դրանց ընտանիքների թիվը:

1930-ական թվականներին անցկացվեց համատարած կոլեկտիվացում, և վերացվեց մասնավոր սեփականությունը: Արտադրության միջոցները կենտրոնացան հիմնականում մեկ սեփականատիրոջ՝ պետության ձեռքում: Ամբողջ աշխատունակ բնակչությունը դարձավ բանվոր, կոլտնտեսական և ծառայող: Այդ վիճակը շարունակվեց մինչև 1991 թ., երբ բնակչության սոցիալ-դասակարգային կազմի 85%-ը բանվորներ ու ծառայողներ էին և նրանց ընտանիքի անդամներ, իսկ մնացած 15%-ը՝ կոլտնտեսականներ:

Խորհրդային տարիներին ոչ միայն մեծացավ բնակչության զբաղվածության մակարդակը, այլև զգալիորեն փոխվեց բնակչության զբաղվածության կառուցվածքը: Այսպես՝ նվազեց զբաղվածությունը գյուղատնտեսության ճյուղում, իսկ դրան հակառակ՝ աճեց արդյունաբերության մեջ և սպասարկման ոլորտի ճյուղերում:

Վերջին 1-2 տասնամյակում ՀՀ բնակչության սոցիալ-դասակարգային կազմն արմատապես փոխվել է: Հասարակությունը դարձել է **բազմակարգությամբ**, առկա են սեփականատիրության բոլոր ձևերը՝ պետական, մասնավոր, կոլեկտիվ: Հողի սեփականաշնորհման շնորհիվ գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը մենատնտես է, փոքր մասը միավորված է կոլեկտիվ գյուղացիական տնտեսությունների մեջ: **Ձևավորվել են բնակչության նոր սոցիալական խմբեր՝ խոշոր ձեռնարկատերեր, բանկիրներ, վարձու աշխատողներ, ֆերմերներ և այլն:**

Մեծանում է մասնավոր սեփականատերերի և ինքնուրույն արտադրողների կամ, այլ կերպ ասած, **փոքր ու միջին բիզնեսով զբաղվածների բաժինը:**

Կարևոր որակական փոփոխություն է նաև այն, որ վերջին երկու տասնամյակներին բնակչության զբաղվածությունը կտրուկ նվազել է արդյունաբերության մեջ և ավելացել է գյուղատնտեսության ու ծառայությունների (սպասարկման) ոլորտներում, թեև վերջին տարիներին նկատվում են գյուղատնտեսության մեջ զբաղվածության նվազման միտումներ, որոնք հավանաբար կպահպանվեն մոտակա տարիներին: Հեռանկարում բնակչության կենսամակարդակի բարձրացմանը զուգընթաց զգալիորեն մեծանալու է զբաղվածությունը ծառայությունների ոլորտում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրեք «աշխատանքային ռեսուրսներ» և «տնտեսապես ակտիվ բնակչություն» հասկացությունները:
2. Տվեք ՀՀ աշխատանքային ռեսուրսների քանակական և որակական բնութագիրը:
3. ՀՀ բնակչության սոցիալ-դասակարգային կազմն ինչ փոփոխություններ է կրել վերջին տասնամյակներում: Ինչպիսին է այն ներկայումս:
4. Ինչ փոփոխություններ է կրել ՀՀ բնակչության զբաղվածության կառուցվածքը:

ԴԱՍ 27. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ: ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ

Բնակչության տեղաբաշխումը բնութագրող ընդհանրական ցուցանիշը տվյալ տարածքի բնակչության միջին խտությունն է:

Նշեք՝ ինչպես են որոշում որևէ տարածքի բնակչության միջին խտությունը:

Բնակչության խտության ցուցանիշը միջինացված, հարաբերական, բայց կարևոր թիվ է, որը ցույց է տալիս, թե **տվյալ տարածքն ինչպես է բնակեցված և յուրացված:**

Պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում (150-200 տարի) Հայաստանը նոսր բնակեցված տարածքից դարձել է **բնակչության բարձր խտություն ունեցող երկիր** (102 մարդ/կմ²): Այն աշխարհի բնակչության խտության միջին ցուցանիշը գերազանցում է **ավելի քան երկու անգամ:**

Բնակչության միջին խտությունը ցույց է տալիս միայն միջինացված ընդհանուր պատկերը, **բայց ոչ տարածական տարբերությունները**, որոնք ՀՀ-ում շատ մեծ են:


Բնակչության խտության տարածական տարբերությունները պայմանավորված են մարդկանց **կենսամիջավայրի՝** ապրելու և աշխատելու պայմանների տարբերություններով: Բնակչությունն ավելի խիտ է այնտեղ, որտեղ ավելի բարենպաստ են **մարդկանց կյանքի ու աշխատանքի բնական ու սոցիալ-տնտեսական պայմանները:** ՀՀ-ում դրանք ավելի նպաստավոր են Արարատյան և Շիրակի դաշտերում, ինչպես նաև միջլեռնային գոգավորությունների հատակային հատվածներում:

Բնակչության միջին խտության ցուցանիշով մեծապես տարբերվում են նաև ՀՀ վարչական մարզերը: Բնակչության խտության ամենաբարձր ցուցանիշն ունի Արմավիրի մարզը (214 մարդ/կմ²): Խտաբնակ են նաև Կոտայքի, Արարատի և Շիրակի մարզերը: Բնակչության խտության ամենացածր ցուցանիշներն ունեն առավելապես լեռնային մակերևույթ ունեցող Սյունիքի և Վայոց ձորի մարզերը (25-30 մարդ/կմ²):

Բնական և փոփոխական ինչ պայմաններ են խոչընդոտում նշված մարզերին՝ ունենալ ավելի խիտ բնակչություն:

Բնակչության տեղաբաշխումն ըստ վերընթաց գոտիների: Ինչպես այլ լեռնային երկրներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ է բնակչության խտության աստիճանական նվազումն ըստ տեղանքի բարձրության:

ՀՀ-ում մշտական բնակչություն կա 400-2400 մ բացարձակ բարձրություններն ընդգրկող վերընթաց գոտիներում: Հանրապետության ամենացածր բնակավայրը Տավուշի մարզի **Դեբեդավան գյուղն է** (ծովի մակար-



դակից 400 մ), ամենաբարձրը՝ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղը (2350 մ):

Առանձնանում են բնակչության տեղաբաշխման հինգ վերընթաց գոտիներ, որոնք պարզորոշ երևում են քարտեզի վրա:

Առաջին գոտին (մինչև 1000 մ բարձրություններ) զբաղեցնում է հանրապետության տարածքի ընդամենը 10%-ը, բայց կենտրոնացնում է բնակչության կեսից ավելին: Բնակչության խտությունն այստեղ ամենաբարձրն է:

Երկրորդ գոտին (1000-1500 մ) տարածքով համարյա երկու անգամ ավելի մեծ է, քան առաջին գոտին, բայց բնակչությունը գրեթե երեք անգամ պակաս է: Համապատասխանաբար ցածր է և բնակչության խտությունը:

ՀՀ տարածքի 70%-ից ավելին ընկած է 1500 մ-ից բարձր երեք գոտի-

ներում, որտեղ բնակվում է միայն ամբողջ բնակչության մեկ քառորդից ավելին: Այդտեղ է գտնվում նաև մշտական բնակչությունից զուրկ բարձրլեռնային գոտին (2500 մ և ավելի), որը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի ավելի քան 16%-ը: Այս գոտում կան ժամանակավոր բնակատեղիներ՝ բարձրլեռնային յայլաներ, ուր ամառվա արոտային ժամանակաշրջանում՝ մոտավորապես 3 ամիս, ապրում են անասնապահները և նրանց ընտանիքների անդամները:



Տեսարան Արենի գյուղից

Բնակչության տարաբնակեցում: Հայտնի է, որ բնակչությունը ցրված է տարածքով մեկ, այլ կենտրոնանում է բնակավայրերում՝ քաղաքներում և գյուղերում: Ժամանակի ընթացքում բնակավայրերը միմյանց հետ կապվել են ճանապարհներով և գոյացել է բնակավայրերի ցանց:

«Ը բնակավայրերի ցանցը կամ տարաբնակեցումը, միասնական լինելով հանդերձ, իր տարբեր մասերում տարբեր խտություն ու գծագրություն ունի: Բնակավայրերը շատ են ցածրադիր հարթավայրերում և միջլեռնային գետահովիտներում:

Առանձնանում է նաև մի շերտ, որը, սկսվելով հայ-վրացական պետական սահմանից, երկաթուղուն զուգահեռ ձգվում է դեպի Արարատյան դաշտ, ապա՝ Սևանի ավազան: Դա մեր երկրի **տարաբնակեցման գլխավոր շերտն է:** Այդ շերտի ձևավորման հիմնական նախադրյալը երկաթուղին է: Երկաթուղին դեպի իրեն է ձգել նոր բնակավայրեր և խթանել հին բնակավայրերի արագացված զարգացումը:

Քաղաքային տարաբնակեցում: Քաղաքը, ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, **միշտ եղել և մնում է բնակչության ոչ գյուղատնտեսական գործունեության վայր:**

«Ը քաղաքային տարաբնակեցման համակարգը բաղկացած է 49 քաղաքից՝

Քաղաքային բնակավայրերի ներկայիս ցանցը ձևավորվել է ոչ միանգամից: Մինչև Հայաստանի խորհրդայնացումը քաղաքի կարգավիճակ ունեցել է ընդամենը 4 բնակավայր՝ Երևանը, Ալեքսանդրապոլը (այժմ՝ Գյումրի), Նոր Բայազետը (այժմ՝ Գավառ) և Գորիսը:

«Ը տագայում երկրում արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և սպասարկման ոլորտի զարգացման շնորհիվ աճեցին հին քա-

1 Դուր արդեն գիտեք, որ մինչև 1995 թ. վարչատարածքային ռեֆորմը քաղաքային բնակավայրեր էին համարվում 58-ը: Դրանք բաժանված էին 3 կատեգորիայի՝ հանրապետական ենթակայության քաղաքների, շրջանային ենթակայության քաղաքների և քաղաքատիպ ավանների: Ռեֆորմից հետո այս կատեգորիաները վերացան, իսկ փոքր և քաղաք դառնալու հեռանկար չունեցող քաղաքատիպ ավանների մի մասը ստացավ գյուղի կարգավիճակ:

ղաքները, նախկին գյուղերի տեղում արագ թափով ծնվեցին նոր քաղաքներ: Այդպիսիք են, օրինակ, Վանաձորը, Արթիկը, Կապանը, Արտաշատը, Աբովյանը և Հրազդանը: Քաղաքների մյուս մասը ձևավորվեց «ղատարկ տեղում»՝ նոր կառուցված էլեկտրակայանների ու հանքավայրերի շնորհիվ, ինչպիսիք են, օրինակ, Չարենցավանը, Քաջարանը և Նոր Հաճնը:

Քաղաքները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով՝ մարդաշատությամբ, գործառույթներով, տնտեսաաշխարհագրական դիրքով, աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ մասնակցության աստիճանով: Դրանց հիման վրա կատարում են **քաղաքների դասակարգում**:

Ըստ մարդաշատության ՀՀ-ում 2013 թ. տվյալներով առանձնանում են.

1. Միլիոնանոց քաղաք - Երևան:
2. Մեծ քաղաք (100-250 հազ. բնակիչ) - Գյումրի:
3. Միջին մեծության քաղաք (50-100 հազ. բնակիչ) - Վանաձոր:
4. Կիսամիջին մեծության քաղաքներ (20-50 հազ. բնակիչ): Դրանք 12-ն են՝ Վաղարշապատ, Արմավիր, Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Կապան, Գորիս, Իջևան, Արտաշատ, Արարատ, Մասիս, Գավառ:
5. Փոքր քաղաքներ (մինչև 20 հազ. բնակիչ): Դրանք 34-ն են, այդ թվում՝ Աշտարակը, Եղեգնաձորը և այլն:

Քաղաքների հիմնական գործառույթներով որոշվում են նրանց տեղը և դերը երկրի տնտեսական և հասարակական կյանքում:

Քաղաքների մի մասը կատարում է արտադրական և ոչ արտադրական բնույթի մի քանի գործառույթներ, օրինակ՝ արդյունաբերական, տրանսպորտային, վարչական, առևտրական, մշակութային-կրթական և այլն: Դրանք **բազմագործառույթային քաղաքներ են**: Այդպիսիք են ՀՀ բոլոր մարզկենտրոնները և բնակչության համեմատաբար մեծ թիվ ունեցող քաղաքները:

Փոքր քաղաքները հիմնականում միագործառույթային են: Դրանք լեռնահանքային (Քաջարան, Ախթալա, Ագարակ), վերամշակող արդյունաբերության (Մեծամոր, Նոր Հաճն, Բյուրեղավան) և առողջարանային (Զերմուկ, Ծաղկաձոր) կենտրոններն են:

Քաղաքների զարգացման գործում կարևոր դեր ունի տնտեսաաշխարհագրական դիրքը (ՏԱԴ): Բարենպաստ ՏԱԴ ունեն ՀՀ այն քաղաքները, որոնք մոտ են գտնվում մայրաքաղաք Երևանին, տրանսպորտային հանգույցներին, կարևորագույն մայրուղիներին և ինտենսիվ գյուղատնտեսություն, որակյալ աշխատուժ, բնական հարուստ ռեսուրսներ ունեցող շրջաններին:

Գյուղական տարաբնակեցում: Գյուղական բնակավայրերի ցանցը, ի տարբերություն քաղաքների, ձևավորվել է շատ ավելի վաղ ժամանակներում և ավելի կայուն է: Այդ ցանցը ներկայումս ընդգրկում է 953 գյուղական բնակավայր:

Վերջին 4-5 տասնամյակներին այստեղ նույնպես տեղի են ունեցել էական փոփոխություններ: Նշենք դրանցից առավել կարևորները:

Առաջին՝ բարձրլեռնային շատ գյուղեր վերացել են: Դրա հետևանքով էլ այդ գոտու բնակավայրերի ցանցը նոսրացել է: Միևնույն ժամանակ բազմաթիվ նոր գյուղեր են հիմնվել ցածրադիր գոտիներում, որտեղ ոռոգման շնորհիվ յուրացվել են նախկինում ամայի ընդարձակ տարածքներ:

Երկրորդ՝ նկատելիորեն մեծացել է գյուղերի միջին մեծությունը՝ **մարդաշատությունը:** Սակայն գյուղական բնակավայրերի մեծ մասը համեմատաբար փոքր է և ունի մինչև 1000 բնակիչ: Միաժամանակ կան երեք տասնյակից ավելի գյուղեր, որոնք ունեն 5000 մարդուց ավելի բնակիչ, և այդ գյուղերին բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության մոտ 20%-ը: ՀՀ խոշորագույնը Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղն է, որն ունի մոտ 9900 բնակիչ:

Լեռնային տարածքներին բնորոշ է **գծային (կամ շղթայաձև) տարաբնակեցումը**, երբ լեռնաշղթաներով սեղմված նեղ գետահովիտներում հաջորդաբար տեղադրված են տարբեր մեծության գյուղեր: Լեռնային տարածքներում, հատկապես Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, որտեղ գյուղատնտեսական հողակտորները փոքր են և ցրված, գերակշռում են մինչև 500 բնակիչ ունեցող փոքր և մանր գյուղերը:

Դրան հակառակ՝ **հարթավայրերում (Արարատյան և Շիրակի դաշտեր, Սևանի գոգավորություն) գերակշռում են մեծ և խոշոր գյուղերը, բնակավայրերի ցանցն էլ շատ խիտ է:** Օրինակ՝ Արարատյան դաշտի առանձին տեղամասերում գյուղերն այնպես են ձուլվել իրար, որ դժվար է նկատել, թե որտեղ է ավարտվում մի գյուղը և սկսվում մյուսը: Այդպիսի տարաբնակեցումը հայտնի է **համատարած կամ հոծ տարաբնակեցում** անվամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսին է ՀՀ բնակչության միջին խտությունը: Ինչպե՞ս է այն փոփոխվել վերջին հարյուրամյակի ընթացքում:
2. Նկարագրե՞ք ՀՀ բնակչության տեղաբաշխումն ըստ վարչական մարզերի և վերընթաց գոտիների:
3. Ինչպիսին է ՀՀ քաղաքային բնակավայրերի ցանցը, ինչպե՞ս է այն ձևավորվել:
4. Նշե՞ք ՀՀ քաղաքների տիպերն ըստ մարդաշատության:
5. Բնութագրե՞ք ՀՀ գյուղական տարաբնակեցումը:

ԴԱՍ 28. ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր քաղաք բազմաբնույթ կապերի մեջ է գտնվում իրեն շրջապատող տարածքի հետ և այդ տարածքի ծնունդն է: **Ինչքան խոշոր է քաղաքը և բազմազան գործառույթները, այնքան ընդարձակ է դրա ազդեցության ոլորտը շրջակա բնակավայրերի վրա:**

Իրենց աշխարհագրական նշանակությամբ, այսինքն՝ աշխատանքի աշխարհագրական բաժանմանն իրենց մասնակցության աստիճանով ՀՀ քաղաքները բաժանվում են երեք խմբի.

1. **Համապետական կենտրոն:** Դա ՀՀ տարաբնակեցման միասնական համապետական համակարգի կենտրոնն է՝ **Երևան մայրաքաղաքը:** Երևանում կենտրոնացած են ՀՀ իշխանության բարձրագույն մարմինները, այստեղ հանգուցվում են ներհայաստանյան և միջազգային տրանսպորտային ուղիները:
2. **Մարզային (տարածաշրջանային) կենտրոններ,** որոնցից յուրաքանչյուրը կենտրոն է երկրի մի մասի՝ համեմատաբար ընդարձակ տարածաշրջանի համար: Լրիվ ձևավորված կամ ձևավորվող այդպիսի կենտրոններ են մարզերի վարչական կենտրոնները: Դրանց շարքում առավել հասուն և բարձր կարգի կենտրոններ են Գյումրին, Վանաձորը, Կապանը, Գավառը և Իջևանը:
3. **Տեղական նշանակության կենտրոններ:** Այդպիսիք են ՀՀ մնացած քաղաքները, այդ թվում՝ նախկին վարչական շրջանների կենտրոնները: Դրանց ազդեցության ոլորտում են գտնվում մոտակա գյուղական բնակավայրերը:

Եթե Երևանն իրեն է ձգում երկրի տարածքն ամբողջությամբ, ապա տարածաշրջանային (մարզային) կենտրոնը՝ այդ տարածքի միայն մի մասը:


Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք ՀՀ տարածաշրջանային կենտրոնները:

Ծանոթանանք քաղաքային խոշոր կենտրոններին առավել մանրամասն: **Գյումրի:** Գյումրին ՀՀ երկրորդ քաղաքն է (122 հազ. բնակիչ), Շիրակի մարզի վարչական, տնտեսական ու մշակութային կենտրոնը և խոշոր տրանսպորտային հանգույցը:

Քաղաքն ընկած է Թուրքիայի հետ ՀՀ պետական սահմանից ոչ հեռու, Շիրակի արգավանդ դաշտի կենտրոնական տափարակ տեղամասում, Ախուրյանի վտակ Գյումրիգետի ափին, Հայաստանը (և Անդրկովկասը) Թուրքիային կապող երկաթուղու վրա, որը, սակայն, պետական սահմանը փակ լինելու պատճառով չի գործում:

Գյումրիի կենտրոնական դիրքը Շիրակի մարզի տարածքում բարենպաստ պայմաններ է ստեղծում կազմակերպիչ-համախմբող կենտրոնի գործառույթներ իրականացնելու համար:

Քաղաքի կարգավիճակ է ստացել 1840 թ.: Քաղաքի դերը մեծացել է, երբ այստեղ հիմնվել է ռուսական գինվորական կայազորը: Խորհրդային



տարիներին քաղաքը շարունակում էր զարգանալ, և արդեն 1980-ական թվականների վերջին նրա բնակչությունը հասել էր 230 հազարի: Ստեղծվել էր բազմաճյուղ արդյունաբերություն, որտեղ առաջատար էին **տեքստիլ, սննդի և մեքենաշինական ճյուղերը**: Գործում էին բուսիեր, գիտահետազոտական հիմնարկներ: Ակտիվ էր մշակութային կյանքը:

Գյումրու համար ողբերգական եղավ 1988 թ. դեկտեմբերի 7-ը: Երկրաշարժի հետևանքով ավերվեցին և շարքից դուրս եկան քաղաքի գրեթե բոլոր գործարանները, դադարեց գործել քաղաքային տնտեսությունը: Եղան մեծաթիվ զոհեր: Հազարավոր ընտանիքներ զրկվեցին կացարանից և հեռացան Գյումրիից:

Կազմվեց քաղաքի նոր հատակագիծ, ստեղծվեց շինարարական հզոր բազա: Սկսվեց քաղաքի վերականգնումը:

Վերջերս Գյումրին դարձավ ԱՊՀ մշակութային մայրաքաղաքը: Դա լայն հեռանկարներ է ստեղծում քաղաքի սոցիալ-տնտեսական և զբոսաշրջային զարգացման համար:

Վանաձոր: Վանաձորը ՀՀ երրորդ քաղաքն է (86 հազ. բն.), Լոռու մարզի վարչական և տնտեսական-մշակութային կենտրոնը: Քաղաքի միկրո-աշխարհագրական դիրքին բնորոշ է այն, որ գտնվում է Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև ընկած նեղ ու երկարավուն գոգավորությունում՝ Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում: Քաղաքով են անցնում Թբիլիսի-Գյումրի երկաթուղին, ինչպես նաև մի քանի ավտոխճուղիներ:

Մինչև 1920-ական թվականների կեսերը Վանաձորը աննշան գյուղաքաղաք էր: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1924 թ.: Նրա տնտեսական զարգացումը սկսվում է լայնածավալ արդյունաբերական շինարարությամբ: Մեկը մյուսի հետևից կառուցվում են քիմիական կոմբինատը, մեքենաշինական, թեթև ու սննդի արդյունաբերության գործարաններ, ջերմաէլեկտրակայանը:

Այժմ վերականգնվում են երկրաշարժից տուժած քաղաքային տնտեսությունը, բնակելի ու արդյունաբերական շենքերը:

Քաղաքում գործում են բուհեր, գիտահետազոտական և մշակութային խոշոր հիմնարկներ, «Հայաստան» առողջարանը, տուրիստական հանգրվաններ և դպրոցական ճամբարներ:



Վաղարշապատ

Վաղարշապատ: Վաղարշապատը (1945-1995 թթ. կոչվել է Էջմիածին¹) բնակչության թվով (46,5 հազ. բն.) չորրորդն է ՀՀ-ում: Այն առանձնահատուկ տեղ է գրավում Հայաստանի քաղաքների շարքում:

Ճիշտ է՝ իր տնտեսական նշանակությամբ Վաղարշապատը չի կարող համեմատվել մայրաքաղաքի և վերը բնութագրված քաղաքների հետ, բայց բացառիկ է նրա հոգևոր-մշակութային նշանակությունը: Այդ առումով Վաղարշապատը ոչ միայն համահայաստանյան, այլև համահայկական կենտրոն է: Այստեղ է գտնվում Հայ առաքելական եկեղեցու գլխավոր կենտրոնը՝ Մայր

1 Ներկայումս Էջմիածին անունն է կրում միայն Վաղարշապատի կենտրոնական հոգևոր-մշակութային հատվածը:

Աթոռ Ս. Էջմիածինը՝ Մայր տաճարը, ինչպես նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը:

Այդ հանգամանքը խոր կնիք է թողել Վաղարշապատի ճարտարապետական դիմագծի վրա: Քաղաքի կենտրոնում վեր է խոյանում 303 թ. հիմնված Մայր տաճարի համալիրը՝ իր տարաբնույթ շինություններով: Մայր տաճարից ոչ հեռու գտնվում են Ս. Հռիփսիմե տաճարը և Ս. Գայանե եկեղեցին (VII դ.), ճարտարապետական այլ հուշարձաններ: Մայր տաճարին կից գործում է Գևորգյան հոգևոր ճեմարանը:

Վաղարշապատի տնտեսական կյանքում մեծ դեր են խաղում սննդի արդյունաբերությունը, սպասարկման ոլորտը և զբոսաշրջությունը:

Հրազդան: Հրազդանը (42 հազ. բն.) ՀՀ երիտասարդ քաղաքներից է, Կոտայքի մարզի վարչական կենտրոնը: Ստեղծվել է մի քանի գյուղերի և Սևան-Հրազդան ջրէկերի կասկադի շինարարների ավանի միավորումից: Ունի բարենպաստ տրանսպորտային-աշխարհագրական դիրք: Հեռավորությունը Երևանից 50 կմ է:

Հրազդանը արդյունաբերական կենտրոն է: Այստեղ կառուցվել են հանրապետության ամենահզոր ջերմաէլեկտրակայանը, ցեմենտի խոշոր գործարան, մեքենաշինական գործարան և այլն:

Կապան: Կապանը հանրապետության հարավարևելյան հատվածի ամենամեծ քաղաքն է (43,2 հազ. բն.), Սյունիքի մարզկենտրոնը: Գտնվում է Խուստուփ լեռան ստորոտին՝ Ողջի գետի ափերին, որը քաղաքի սահմանում իր մեջ է ընդունում Վաչագան ու Կավարտիջուր վտակները²:

Կապանի աշխարհագրական դիրքը, համեմատած ՀՀ մյուս տարածաշրջանային կենտրոնների հետ, պակաս նպաստավոր



Հրազդան



Կապան

2 Ներկայիս Կապան քաղաքը ձևավորվել է դեռևս միջնադարից այստեղ գործող պղնձահանքերի, պղնձածուլարանների և մի քանի գյուղերի հիման վրա: Այժմ էլ քաղաքի առաջատար ճյուղը գունավոր մետալուրգիան է (պղնձի, ոսկու և բազմամետաղների արդյունահանումը և հարստացումը):

է: Քաղաքը հեռու է հանրապետության տնտեսական կենտրոններից (Երևանից՝ 301 կմ): Ոչ բարենպաստ դիրքի պատճառով թույլ են արտահայտված նաև Կապանի կազմակերպիչ-համախմբող կենտրոնի գործառույթները մարզի տարածքում: Ներկայումս չեն գործում քաղաքի օդանավակայանը և միակ երկաթուղին (Կապան–Միջնավան):

Կառուցվել են մեքենաշինական, ավտոնորոգման, շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

Սյունիքի մարզկենտրոն դառնալուց հետո Կապանում ակտիվացավ տնտեսական և մշակութային կյանքը, վերակառուցվեցին և ստեղծվեցին նոր կրթամշակութային, առողջապահական, մարզական և այլ հիմնարկներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. ՀՀ քաղաքները ինչ խմբերի են բաժանվում ըստ աշխատանքի, աշխարհագրական բաժանման իրենց մասնակցության աստիճանի:
2. Գյումրու զարգացման տարբեր փուլերում ինչ գործոններ էին նպաստել կամ խանգարել նրա տնտեսական վերելքին:
3. Տվեք Վանաձոր քաղաքի աշխարհագրական բնութագիրը:
4. Հայաստանի քաղաքների շարքում ո՞րն է Վաղարշապատի հատուկ դերը:
5. Գնահատեք Կապան քաղաքի զարգացման բնական և տնտեսական նախադրյալները:
6. Տվեք Գյումրի, Վանաձոր, Հրազդան և Կապան քաղաքների տնտեսա-աշխարհագրական դիրքերի համեմատական գնահատականը:

ԴԱՍ 29. ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Երևանը՝ որպես մայրաքաղաք, Հայաստանի Հանրապետության տարածքը պետականորեն միավորող ու կազմակերպիչ կենտրոնն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկայիս 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Երևանն աշխարհի ամենահին քաղաքներից է: Հիմնադրվել է Ք.ա. 782 թ. Արգիշտի թագավորի կողմից և անվանվել է Էրեբունի:

Երևան բնակավայրը վարչական նշանակություն է ձեռք բերել Պարսկաստանի կազմում, երբ եղել է **Երևանի խանության վարչական կենտրոնը**, խանի նստավայրը: Ռուսաստանին անցնելուց հետո այն դարձել է **Հայկական մարզի**, այնուհետև՝ **Երևանի նահանգի կենտրոնը**:

Հայաստանի անկախության վերականգնումով՝ 1918 թ., Երևանը հռչակվել է Հայաստանի Հանրապետության, այնուհետև Հայկական ԽՍՀ մայրաքաղաք: Պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ խորհրդային տարիներին, նրա բնակչության թիվն ավելացել է ավելի քան 40 անգամ՝ անցնելով 1,2 մլն-ից:

Անկախության տարիներին ինչպես ՀՀ բոլոր մարզերի, այնպես



Քաղաքամայր Երևանի համայնապարկերը

Էլ Երևանի բնակչության բացարձակ թիվն արտագաղթի հետևանքով նվազեց և ներկայումս կազմում է մոտ 1,0 մլն մարդ: Սակայն նրա բաժինը ՀՀ ընդհանուր բնակչության թվում մնացել է անփոփոխ՝ շուրջ 35%:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների (Կենտրոն, Արաբկիր, Ավան, Էրեբունի և այլն):

Երևանը զբաղեցնում է 223 կմ² տարածք և ունի բարենպաստ միկրոաշխարհագրական դիրք. ընկած է Արարատյան գոգավորության կենտրոնական մասում՝ Արարատյան դաշտից դեպի հյուսիս բարձրացող նախալեռների ամֆիթատրոնաձև լանջերին: Հարավում տեղանքի բացարձակ բարձրությունը 860 մ է, հյուսիսում՝ գրեթե 1350 մ: Տարածքի ռելիեֆը բարդ է և կտրտված: Երևան քաղաքով է անցնում Հրազդան գետը՝ իր հրաշագեղ և խոր կիրճով:

Երևանի կլիման ցամաքային է, ամենատաք ամիսները հուլիսն ու օգոստոսն են. հուլիսյան միջին ջերմաստիճանը +25° է, իսկ առավելագույնը՝ +41°: Ամենացուրտ ամիսը հունվարն է՝ միջինը -4°, իսկ գրանցված բացարձակ նվազագույնը -31° է:

Գարնան վերջերին ու ամռանն Արագածից և Գեղամա լեռներից փչում են զով քամիներ, երբեմն՝ շատ մեծ արագությամբ: Դրանք Երևանին բնորոշ լեռնահովտային քամիներն են: Մթնոլորտային տեղումների քանակը շուրջ 300 մմ է, որոնք գերազանցապես թափվում են գարնանը և աշնանը:

Քաղաքի մեծ մասը նստած է բազալտի հզոր շերտի վրա, իսկ Ավան



*Սասունցի Դավթի արձանը
կայարանամերձ հրապարակում*



*Ժամանակակից Երևանը.
Հյուսիսային պողոտա*

և Ջրվեժ թաղամասերի ընդերքը հարուստ է տուֆի և հրաբխային խարամի պաշարներով: Հայտնի է նաև բարձրորակ կերակրի աղի խոշոր հանքավայրը (Ավան), որն այժմ շահագործվում է:

Երևանն ունի հարմար տրանսպորտաաշխարհագրական դիրք: Երևանում հանգուցվում են Սև ծովը Պարսից ծոցին կապող և Երևան–Հրազդան–Իջևան–Աղստաֆա ուղիները: Վերջինս միանում է Բաքու–Թբիլիսի գծին: Տեղական նշանակություն ունի Երևան–Սևանի ավազան–Սոթք երկաթգիծը: Երևանը Գյումրու ու Կարսի միջոցով կապվում է նաև Թուրքիայի երկաթուղիներին:


Երևանը շահեկան դիրք է գրավում միջազգային օդային ուղիների ցանցում և նպաստավոր պայմանների դեպքում կարող է դառնալ Ռուսաստանից Մերձավոր Արևելք և Արևմտյան Եվրոպայից Կենտրոնական ու Հարավային Ասիա գնացող ուղիների հանգուցակետ:

Երևանով անցնում են մի շարք միջազգային ավտոմայրուղիներ:

Քարտեզի վրա ցույց տվեք այն միջազգային ավտոմայրուղիները, որոնք անցնում են Երևանով:

Խորհրդային տարիներին Երևան քաղաքի բնակչության թվի բուռն աճը պայմանավորված էր ոչ միայն բնական, այլև մեխանիկական բարձր աճով: Մայրաքաղաքային գործառույթների զարգացումը, արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի արագընթաց աճը ստեղծում էին նոր աշխատատեղեր: Դա նպաստում էր հանրապետության բոլոր շրջաններից ու քաղաքներից բնակչության ներհոսքին դեպի Երևան:

Երևանի մի քանի հիմնական
ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում
(%, 2012 թ.)



Երևանը խոշոր արդյունաբերական կենտրոն է: Այստեղ է գտնվում ՀՀ արդյունաբերական ներուժի 40%-ից ավելին: Մինչև անկախացումը Խորհրդային Միության կազմում Երևանը հռչակ էր ձեռք բերել արդյունաբերության այնպիսի ճյուղերով, ինչպիսիք են մեքենաշինությունը (հատկապես էլեկտրատեխնիկական մեքենաների ու հաստոցների արտադրությունը), քիմիական արդյունաբերությունը, սննդի և թեթև արդյունաբերությունը:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո ընդհատվեցին արտադրական կապերը ԽՍՀՄ այլ հանրապետությունների և շրջանների հետ: Սեփականաշնորհված արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, սպառման շուկաների կորստի հետ կապված, դադարեցրեցին աշխատանքները:

Արդյունաբերության վերականգնման առաջին նշանները երևացին 1990-ական թվականների կեսերից միայն: Այժմ նոր պայմաններում ձևավորվում է Երևանի արդյունաբերության նոր ճյուղային կառուցվածքը: Ներկայումս ճյուղային կառուցվածքում առաջատար տեղ է զբաղեցնում սննդի, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը: Նոր պայմաններում, բացի մի քանի ավանդական ճյուղերից ու արտադրություններից, հեռանկարային են համարվում հատկապես գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հենվող ճյուղերն ու արտադրությունները:

Երևանը հանրապետության գիտական, կրթական, մշակութային և ֆինանսական գլխավոր կենտրոնն է: ՀՀ-ում իրականացվող ծառայությունների հիմնական ծավալի ավելի քան 85%-ը կենտրոնացած է Երևանում: Այստեղ է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան՝ իր ճյուղային մի քանի տասնյակ ինստիտուտներով: Երևանում է կենտրոնացած ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանը՝ երկրի խոշորագույն և առաջատար բուհը:

Երևանում են գտնվում հանրապետության Ազգային ժողովն ու Կառավարությունն իր բոլոր նախարարություններով: Երևանը ՀՀ Նախագահի նստավայրն է: Այստեղ են կենտրոնացված արտասահմանյան երկրների

բոլոր դեսպանատները, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և միջազգային մյուս կազմակերպությունների ու ներկայացուցչությունների կենտրոնական գրասենյակները, ինչպես նաև Կենտրոնական բանկը և մյուս բանկերի կենտրոնական գրասենյակները, օտարերկրյա (միջազգային) բանկերի և այլ ֆինանսական հիմնարկների մասնաճյուղեր:

Երևանի **քաղաքաշինական-ճարտարապետական համապատկերում** տիրապետող են Մասիսները՝ հարավում, և քառագագաթ Արագածը՝ հյուսիս-արևմուտքում: Հրազդան գետի ու կիրճի վրայով կառուցված են մի քանի հոյակերտ կամուրջներ («Հաղթանակ», «Կիլյան» և «Դավթաշեն»), որոնք իրար են միացնում քաղաքի աջափնյա և ձախափնյա թաղամասերը:

Ներկայիս Երևանի՝ որպես հայոց պետության մայրաքաղաքի կառուցապատումն սկսվել է 1924 թ. գլխավոր հատակագծով, որի հեղինակն է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Հետագայում մշակվել են նոր հատակագծեր, որոնցում հիմնականում պահպանվել են Ա. Թամանյանի քաղաքաշինական-ճարտարապետական մտահղացումները:

Երևանի **կենտրոնը Հանրապետության հրապարակն** է, որից ճառագայթաձև ձգվում են քաղաքի հիմնական տրանսպորտային զարկերակները:

Հին թաղամասերից հայտնի են հատկապես Նորքը և Կոնդը, որոնք դեռևս միջին դարերում եղել են ինքնուրույն բնակավայրեր: Հետպատերազմյան տարիներին ստեղծված թաղամասերից են Արաբկիրը, Մարաշը, Սեբաստիան, Մալաթիան, Նոր Արեշը, Զեյթունը:

1960-ական թվականներից քաղաքի արվարձաններում կառուցվեցին Աջափնյակի, Նոր Նորքի, Ավան-Առինջի և Դավթաշենի բազմահարկ բնակելի զանգվածները:

Հետագա բարեկարգման ու կառուցապատման, քաղաքային տնտեսության նորացման, կանաչ տարածությունների վերականգնման ու պահպանման, միջավայրի առողջացման և ջրամատակարարման բարելավմանն առնչվող մի շարք հիմնախնդիրների լուծմամբ Երևանը կդառնա ավելի գեղեցիկ ու բարեկարգ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրեք և գնահատեք Երևանի աշխարհագրական դիրքը: Որո՞նք են միկրոաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:
2. Բնութագրեք Երևանի բնական պայմաններն ու ռեսուրսները:
3. Որո՞նք են Երևանի բնակչության թվի արագ աճի պատճառները:
4. Թվարկեք Երևանի արդյունաբերության ավանդական և նոր ճյուղերը:
5. Ի՞նչ գիտեք Երևանի գլխավոր հատակագծերի մասին: Նկարագրեք քաղաքի քաղաքաշինական-ճարտարապետական կառուցվածքը:

**ԴԱՍ 30. ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ» ԲԱԺՆԻ
ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

1. Դիագրամի օգնությամբ բնութագրեք ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացը:
2. Ինչպիսի փոփոխություններ են կրել ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները: Բնութագրեք կոնկրետ փաստերով:
3. Ինչպիսի փոփոխություններ են կրել ՀՀ բնակչության մեխանիկական շարժերը:
4. Սեռատարիքային բուրգի օգնությամբ բնութագրեք ՀՀ բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները:
5. Տվեք ՀՀ աշխատանքային ռեսուրսների քանակական և որակական բնութագիրը:
6. Նկարագրեք Հայաստանի Հանրապետության բնակչության տեղաբաշխումը:
7. Բնութագրեք ՀՀ քաղաքային տարաբնակեցումը:
8. Որո՞նք են ՀՀ գյուղական տարաբնակեցման առանձնահատկությունները:
9. Քարտեզի օգնությամբ համեմատեք և գնահատեք Գյումրի և Վանաձոր քաղաքների աշխարհագրական դիրքերը:
10. Տվեք Երևան քաղաքի աշխարհագրական համառոտ բնութագիրը:
11. Համեմատե՛ք Հրազդան և Կապան քաղաքները:
12. Ի՞նչ ընդհանրություն և տարբերություն կարող եք նշել Էջմիածնի և Վատիկանի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 31. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանը հազարամյակների պատմության ընթացքում ունեցել է ինչպես տնտեսական բարգավաճման ու մշակույթի ծաղկման, այնպես էլ խոր անկման ու քայքայման ժամանակաշրջաններ:

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում տնտեսության նոր աշխուժացման ու զարգացման առաջին նշանները երկարատև ընդմիջումից հետո հանդես եկան XIX դարի կեսերից, երբ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը և ընդգրկվեց նրա հասարակական զարգացումների գործընթացների մեջ: Հենց այդ ժամանակ սկսեց ավելանալ Հայաստանի բնակչությունը, ընդարձակվեցին վարելահողերը, աշխուժացան արհեստները և արտաքին տնտեսական կապերը: Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմից (1870 թ.) հետո, երբ ակտիվացան կապիտալիստական արտադրահարաբերությունները, Հայաստանում արագորեն աճեցին գյուղատնտեսության ճյուղերը, հատկապես **բամբակագործությունը և պտղաբուծությունը**: Դրանք դարձան երկրի գլխավոր մասնագիտացման ճյուղերը:

XIX դարի վերջերին դրվեցին նաև **ֆաբրիկագործարանային արդյունաբերության հիմքերը**: Բուռն վերելք ապրեց պղնձի արդյունաբերությունը: Ֆրանսիացիները գնեցին պղնձահանքերն ու պղնձաձուլարանները: Ալավերդիում նրանք կառուցեցին իր ժամանակի առաջավոր տեխնոլոգիայով աշխատող «Մանես» **հզոր պղնձաձուլական գործարանը**: Այն սկսեց աշխատել ոչ միայն Ալավերդու, այլև Զանգեզուրի հանքաքարով: Արևելյան Հայաստանը դարձավ Ռուսաստանի պղնձի արդյունաբերության երեք գլխավոր շրջաններից մեկը՝ տալով ողջ կայսրության թողարկվող պղնձի 1/4-ը:

Ռուսական կապիտալի ներդրման շնորհիվ արագ թափով զարգացավ արդյունաբերության մի ճյուղ ևս՝ **գինու-կոնյակի արտադրությունը**:

Պղնձաձուլության և գինու-կոնյակի ճյուղերից բացի, որոնց բաժինը XX դարի սկզբին կազմում էր արդյունաբերության համախառն արտադրանքի 71%-ը, զարգանում էին նաև էլեկտրաէներգետիկայի, կաշվի-կոշիկի, մրգի պահածոների, մետաղամշակման, շվեյցարական պանրագործության ճյուղերն ու արտադրությունները:

Ավելի նշանակալի էր **երկաթուղային տրանսպորտի** զարգացումը: Կառուցվեցին Թբիլիսի-Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղին, որով Արևելյան Հայաստանը երկաթուղով կապվեց Ռուսաստանի և նրա միջոցով՝ Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպայի հետ:

Արևելյան Հայաստանի տնտեսական նվաճումներն ի չիք դարձան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: 1914-1920 թթ. խիստ կրճատվեց բնակչության թիվը, 4 անգամ պակասեցին ցանքատարածությունները, կազմալուծվեց արդյունաբերությունը (բոլոր ձեռնարկությունները դադարեցին արտադրանք տալ, շատերը ավերվեցին ու քայքայվեցին), սահմանափակ էր գործում երկաթուղային տրանսպորտը:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո առաջին երկու տասնամյակներին ոչ միայն վերականգնվեց տնտեսությունը, այլև դրվեցին ծանր արդյունաբերության հիմքերը:

Հանրապետության տնտեսության նոր վերելք սկսվեց հետպատերազմյան տարիներին: Կատարվեցին ոչ միայն քանակական, այլև **որակական և կառուցվածքային փոփոխություններ**:

Նշենք առավել կարևոր որակական փոփոխությունները:

Կառուցվեցին միջհանրապետական **գազամուղներ**, և Հայաստանը սկսեց դրսից բնական գազ ստանալ: Շարք մտան նոր հզոր ջրային և ջերմային էլեկտրակայաններ: Բոլոր էլեկտրակայաններն էլեկտրահաղորդման բարձր լարման գծերով **միավորվեցին միասնական էներգահամակարգի մեջ: Հայաստանն էլեկտրաէներգիա ներմուծող երկրից դարձավ արտահանող և համատարած էլեկտրիֆիկացման երկիր:**


Վերամշակող արդյունաբերության մյուս կարևոր որակական փոփոխությունը մեքենաշինության և թեթև արդյունաբերության ճյուղերի արագ զարգացումն էր:

Երկրի ինդուստրացումն **ընդգրկեց Հայաստանի ամբողջ տարածքը:** Նոր արդյունաբերական շինարարության շնորհիվ արագ թափով **զարգացան քաղաքները: Ինդուստրացման և ուրբանիզացման մակարդակով Խորհրդային Հայաստանն առաջավոր տեղ գրավեց ԽՍՀՄ հանրապետությունների և Մերձավոր Արևելքի երկրների շարքում:**

Խորհրդային տարիներին Հայաստանում ձևավորվեց միասնական տարածքային-արտադրական համալիր՝ բավականին հասուն ներքին ճյուղային կառուցվածքով և կայուն արտաքին տնտեսական կապերով: Արդյունաբերության բաժինը Հայաստանի ՀՆԱ-ում 1980-ական թթ. կազմում էր մոտ 2/3, այսինքն՝ զգալիորեն ավելի շատ, քան մնացած ոլորտներինը միասին վերցրած:

ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած **քաղաքական ու տնտեսական համակարգային փոփոխությունները** հետխորհրդային բոլոր անկախացած հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում, **հանգեցրին խոր ճգնաժամով բնութագրվող անցումային տնտեսության ձևավորմանը:** ՀՀ-ում ճգնաժամն առավել խորացավ **տեղական պատճառներով:** Դրանք էին **1988 թ. Սպիտակի երկրաշարժը** (որը շարքից հանեց հանրապետության արտադրական կարողությունների գրեթե մեկ քառորդը) և **Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղ հակամարտության սրումը**, որն ստիպում էր ՀՀ տնտեսական ռեսուրսների զգալի մասը հատկացնել Լեռնային Ղարաբաղի օգնությանը և Ադրբեջանից բռնի արտաքսված հարյուրհազարավոր

**ՀՀ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալի աճը
1998-2012 թթ.**



հայ գաղթականությանը: Լուրջ պատճառ էր նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տրանսպորտային շրջափակումը, որը դեռևս շարունակում է պահպանվել:

Մինչ տնտեսության արդի վիճակի ընդհանուր բնութագիրը տալը նշենք այն գլխավոր տնտեսական ցուցանիշները, որոնք օգտագործվում են աշխարհի երկրները բնութագրելու և միմյանց հետ համեմատելու համար: Դրանք են՝ պետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ)¹ ծավալը, արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքների և մատուցվող ծառայությունների ծավալները:

Բայց այդ բացարձակ ցուցանիշները բավարար չեն երկրի զարգացածության աստիճանը, տնտեսական զարգացման մակարդակը ցույց տալու համար:

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը գնահատվում է հարաբերական ցուցանիշներով, որոնք ստացվում են բացարձակ ցուցանիշի և բնակչության թվի հարաբերությունից, այսինքն՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Հայաստանի Հանրապետությունը տնտեսության զարգացման բացարձակ ցուցանիշներով պատկանում է աշխարհի փոքր երկրների թվին:

Հարաբերական ցուցանիշներով մեր երկիրը բնութագրվում է որպես զարգացման միջինից ցածր մակարդակ ունեցող երկիր:

ՀՀ-ն տնտեսության կառուցվածքով ինդուստրիալ-ագրարային երկիր է, որտեղ տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, իսկ

¹ ՀՆԱ-ն մեկ տարում երկրում արտադրված վերջնական արտադրանքի ու մատուցված ծառայությունների գումարային արժեքն է:

արտադրական ոլորտը դեռևս գերիշխում է ծառայությունների ոլորտի համեմատ: Իսկ որո՞նք են ՀՀ տնտեսական զարգացման հիմքը հանդիսացող արտադրական ոլորտի գլխավոր առանձնահատկությունները:

Առաջին առանձնահատկությունն արտադրության բազմաճյուղային լինելն է: Ճյուղերի այդպիսի բազմազանությունն ունի իր ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: **Դրական է այն**, որ դրանով ստեղծվում է միջճյուղային և ներճյուղային կապերի հաստատման, այլ կերպ՝ **համալիր զարգացման հնարավորություն**: Բացասական է այն, որ այդ բազմազանությունը չի նպաստում շրջանների կամ մարզերի արտադրական մասնագիտացմանը, հետևապես և աշխատանքի աշխարհագրական բաժանման խորացմանն ու դրա միջոցով աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Երկրորդ առանձնահատկությունը կախվածությունն է էներգակիրների արտաքին շուկայից: Հանրապետությունը ներմուծում է անհրաժեշտ այրվող գազի, նավթի ու նավթամթերքների, ատոմային էլեկտրակայաններում օգտագործվող միջուկային վառելիքի ամբողջ քանակությունը:

Երրորդ առանձնահատկությունը համեմատաբար զարգացած **ներքին՝ միջշրջանային (միջմարզային) տնտեսական կապերի** առկայությունն է, որը հանրապետությանը հաղորդում է **միասնական տարածքային-արտադրական համալիրի (ՏԱՀ) հատկանիշ**:

Առանձնահատկություն է նաև այն, որ ԽՍՀՄ նախկին հանրապետությունների հետ տնտեսական կապերի թուլացման հետևանքով տնտեսության ճյուղային կառուցվածքի արմատական փոփոխություններ տեղի ունեցան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչն էք բնորոշ համարում Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման համար:
2. Ինչպիսի՞ ցուցանիշներ են օգտագործվում երկրների տնտեսական զարգացման մակարդակները որոշելու համար:
3. Թվարկե՞ք խորհրդային տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման գլխավոր ձեռքբերումները:
4. Թվարկե՞ք և վերլուծե՞ք ՀՀ տնտեսության հիմնական առանձնահատկությունները:

ԴԱՍ 32. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստանի արդյունաբերությունը խորհրդային տարիներին ձևավորվեց որպես **տնտեսության առաջատար ճյուղ**: Մինչև անկախացումը Հայաստանի արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում ավելին էր, քան մնացած բոլոր ճյուղերինը միասին վերցրած: **Արդյունաբերությունն էր որոշում երկրի արտադրական դիմագիծը և տեղն աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:**

Արդյունաբերությունն այդպիսի տիրապետող դիրք գրավեց իր **զարգացման շատ բարձր տեմպերի շնորհիվ**: Մինչև 1988 թ. Սպիտակի երկրաշարժն այն առնվազն 600 անգամ ավելի արտադրանք էր թողարկում, քան 1920-ական թթ. վերջին: Խորհրդային Միության հանրապետությունների շարքում Հայաստանն **արդյունաբերության զարգացման տեմպերով գրավում էր առաջին տեղը**:

Նշենք մի հատկանշական փաստ ևս. 1913 թ. արդյունաբերական ձեռնարկություններ կային ընդամենը 8 բնակավայրում: Դրանք էին **Երևանը, Ալավերդին, Գյումրին, Արտաշատը, Կապանը, Մեղրին, Գավառը և Դիլիջանը**: Արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը չէր գերազանցում 6 հազ. մարդը:

1980-ական թվականների վերջին ավելի քան 700 արդյունաբերական ձեռնարկություններ էին գործում **բոլոր վարչական շրջաններում ու քաղաքներում՝ ավելի քան 200 բնակավայրերում**, այդ թվում՝ տասնյակ արդյունաբերական կետերում և կենտրոններում: Դրանց զգալի մասը գտնվում էր ձևավորված կամ ձևավորման գործընթացում գտնվող 6 արդյունաբերական հանգույցներում (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Հրազդանի, Ալավերդու և Կապան-Քաջարանի):

Արդյունաբերական ձեռնարկությունների շարքում քիչ չէին ամբողջ ԽՍՀՄ-ի համար աշխատող արտադրական և գիտաարտադրական միավորումները, հսկա գործարանները ու կոմբինատները: Այդպիսիք էին, օրինակ, **Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը, Վանաձորի քիմիական, Ալավերդու լեռնամետալուրգիական, Երևանի էլեկտրամեքենաշինական և էլեկտրատեխնիկական գործարանները, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, տարբեր քաղաքներում գտնվող մեքենաշինության, տեքստիլ ու սննդի արդյունաբերության ճյուղերի այլ հայտնի ձեռնարկությունները**: Արդյունաբերության մեջ զբաղված էր գրեթե **կես միլիոն մարդ**:

Ինչի՞ վրա էր հենվում արդյունաբերության այդպիսի արագ զարգացումը:

Սկզբնական շրջանում **գլխավորը տեղական բնական ռեսուրսների յուրացումն էր**: Դրանք էին **գունավոր մետաղները, կրաքարը** (սինթետիկ կաուչուկ և ցեմենտ ստանալու համար), **բնական շինանյութերը և գետերի ջրաէներգետիկ պաշարները**:

1950-ական թվականներից հետո ավելի մեծ նշանակություն ձեռք բե-

րեցին **աշխատանքային ռեսուրսները**: Ամեն տարի աշխատանքային տարիքի հասնող երիտասարդներին աշխատանքով ապահովելու համար անհրաժեշտ էր լինում կառուցել նորանոր գործարաններ ու ֆաբրիկաներ:

Արդյունաբերության հիմնական ցուցանիշների՝ համախառն արտադրանքի ծավալի և աշխատողների թվի կայուն աճի շնորհիվ **Հայաստանի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում** առաջատար դիրք գրավեցին **մեքենաշինությունը, թեթև, սննդի և քիմիական արդյունաբերության ճյուղերը**:


«Հանկախության առաջին տարիներին սկսված տնտեսական խոր ճգնաժամը և արտադրական ձեռնարկությունների հախուռն ապապետականացումը (մասնավորեցումը) **մեծագույն վնաս հասցրին առաջին հերթին արդյունաբերությանը**: Արդյունաբերական հսկաների մեծ մասը դադարեց արտադրանք տալ, ապա և փակվեց կամ բաժանվեց մանր արտադրամասերի, որոնց մի մասը միայն կարողացավ պահպանել իր գոյությունը:

Քայքայվեց տասնամյակների ընթացքում ձևավորված արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Տնտեսական ճգնաժամին հաջորդող տարիներին՝ 1990-ական թթ. վերջերին, երբ սկսվեց արդյունաբերության վերականգնումը, նրա **Նախկին ճյուղային կառուցվածքը նույնությամբ պահպանվել չէր կարող**: Բանն այն է, որ արմատապես փոխվել էին արդյունաբերության զարգացման պայմանները:

Նախկինում գլխավոր պայմանն այն էր, որ Հայաստանի արդյունաբերությունը, **զարգանալով որպես Խորհրդային Միության միասնական տնտեսական համակարգի բաղադրամաս**, իր կառուցվածքը պետք է ձևավորեր այդ համակարգի պահանջներին համապատասխան: **ԽՍՀՄ փլուզումով քանդվեց նաև այդ համակարգը**: Հայաստանի արդյունաբերական ապրանքատեսակների մեծ մասը զրկվեց սպառման շուկայից, և դրանց արտադրությունը դադարեցվեց:

Արդյունաբերության վերականգնումը և հետագա զարգացումը, **հենվելով տեղական բնական, արտադրական և աշխատանքային ռեսուրսների վրա**, պետք է կարևորագույն նշանակություն տար պահանջարկին: Այսինքն՝ կարո՞ղ էին զարգանալ այն ճյուղերը, որոնց արտադրանքն ուներ պահանջարկ, և կարո՞ղ էր այն սպառվել: Դա նշանակում էր, որ պետք է ձևավորվեր արդյունաբերության նոր ճյուղային կառուցվածք:

Հայաստանի Հանրապետու-






թյան արդյունաբերությունը ճգնաժամը հաղթահարելուց հետո թևակոխել է կայուն զարգացման փուլ: Մեծացել է նաև համատեղ կամ միայն արտասահմանյան կապիտալին պատկանող ձեռնարկությունների թիվը: Արդյունաբերության արտադրանքի տարեկան ծավալն անցնում է 1,1 տրլն դրամից (2012 թ.): Այդ ծավալի մեծ մասը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը:

Եթե արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն ընդունենք 100%, ապա կառուցվածքն ըստ աշխարհում ընդունված տնտեսական-արտադրական գործունեության խմբերի կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծագիրը):

Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալում առավել մեծ

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ վարչական մարզերի (% , 2012 թ.)



բաժին ունեն սննդի արդյունաբերությունը, գունավոր մետաղաձուլությունը, ինչպես նաև նոր ճյուղերը՝ ադամանդագործությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրությունը:

ՀՀ արդյունաբերությունը դեռևս անհամաչափ է տեղաբաշխված: Արդյունաբերության արտադրանքի ծավալի ավելի քան 40%-ը բաժին է ընկնում Երևանին: Արդյունաբերության զարգացման մակարդակով և ճյուղերի բազմազանության առումով առաջատար դիրքեր են զբաղեցնում նաև Սյունիքի, Կոտայքի, Արարատի և Լոռու մարզերը (տե՛ս գծագիրը):

Արդյունաբերության հեռանկարային զարգացման ընդհանուր միտումն այն է, որ նրա ընդհանուր կառուցվածքում կայուն ձևով պետք է աճի մշակող արդյունաբերության, առանձնապես գիտատար և աշխատատար նորագույն ճյուղերի բաժինը: Միաժամանակ կնվազի արդյունահանող ճյուղերի և արտադրությունների բաժինը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանում արդյունաբերությունը էրբ է սկսել ձևավորվել որպես առանձին ճյուղ և ինչպիսի՞ զարգացում է ունեցել խորհրդային տարիներին:
2. Թվարկե՛ք և գնահատե՛ք այն գործոնները, որոնց ազդեցությամբ արդյունաբերությունը դարձավ Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղ:
3. Որո՞նք են արդյունաբերությունը բնութագրող հիմնական վիճակագրական ցուցանիշները: Թվարկե՛ք այդ ցուցանիշներով արդյունաբերության առաջատար ճյուղերը:
4. Ինչպիսի՞ քանակական ու որակական կորուստներ ունեցավ արդյունաբերությունն անկախության առաջին տարիներին և ի՞նչ պատճառով:
5. Բնութագրե՛ք ՀՀ արդյունաբերության արդի կառուցվածքն ըստ տնտեսական-արտադրական գործունեության 3 խմբերի:

ԴԱՍ 33. ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԼԻՐԸ

Վառելիքաէներգետիկ համալիրն այն հիմքն է, որի վրա ներկայումս զարգանում է յուրաքանչյուր երկրի տնտեսությունը: Այն ապահովում է տնտեսության բոլոր ճյուղերի և բնակչության՝ վառելիքի ու էլեկտրաէներգիայի պահանջարկը:

Մեր հանրապետության տարածքում առայժմ հանքային վառելիքի նշանակալից արդյունաբերական պաշարներ հայտնաբերված չեն: Իսկ հայտնաբերված ածխի (Իջևան, Ջաջուռ) և տորֆի (Վարդենիս) պաշարներն աննշան են և ունեն տեղական նշանակություն: Վառելիքը գրեթե ամբողջությամբ ներմուծվում է դրսից: Բնական գազ ստացվում է Ռուսաստանից և Իրանից եկող գազամուղներով, նավթ, նավթամթերքներ և քարածուխ՝ երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտով:

Մեր երկիրը համեմատաբար լավ է ապահովված ջրաէներգետիկ ռեսուրսներով, որոնց յուրացումը սկսվել է դեռևս մինչխորհրդային տարիներին: Առաջին ջրաէլեկտրակայանը կառուցվել է 1903 թ. Կապանի մոտակայքում՝ Ողջի գետի հովտում: Հետագա տասը տարիների ընթացքում դրանց թիվը հասավ 13-ի, որոնց տարեկան արտադրությունը կազմում էր 5,1 մլն կՎտ·ժ էլեկտրաէներգիա:

Հայաստանի Հանրապետության վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի գազը: Գազը Հայաստան է մուտք գործել 1960 թ.: Դա հնարավորություն տվեց 1963 թ. Երևանում կառուցել առաջին ջերմաէլեկտրակայանը: Մինչ այդ Հայաստանը զուտ ջրաէներգետիկ երկիր էր, քանի որ ամբողջ էլեկտրաէներգիան ստացվում էր ջրէկ-ներում: Այժմ Ադրբեջանի տարածքով Հայաստան եկող գազամուղը չի գործում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է գազամուղների ներքին միասնական ցանց, որն ընդգրկում է քաղաքները և գյուղական բնակավայրերի մեծ մասը:

Հայաստանի Հանրապետության միասնական էներգահամակարգը բարդ արտադրական օրգանիզմ է: Դրա մեջ մտնում են էլեկտրակայանները,



Հայկական աէկ (Մեծամոր)

ները, ինչպես նաև տրանսֆորմատորային ենթակայանները և էլեկտրահաղորդման գծերը, այսինքն՝ էլեկտրաէներգիայի թե՛ արտադրությունը, թե՛ սպառողին հասցնելը:

ՀՀ-ում էլեկտրակայանների գումարային հզորությունը 3,5 մլն կՎտ է: Եթե 1990 թ. ՀՀ-ում արտադրվում էր 15 մլրդ կՎտ·ժ, ապա այժմ՝ շուրջ 7,5 մլրդ կՎտ·ժ էլեկտրաէներգիա: Էլեկտրաէներգիայի արտա-



դրության նվազման հիմնական պատճառներն են. 1) ներմուծվող վառելիքի (նավթ, բնական գազ) թանկացումն ու ծավալների կրճատումը, 2) արդյունաբերության ճգնաժամով պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի սպառման ծավալների էական նվազումը:


Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրությունը ոչ միայն բավարարում է հանրապետության ներքին պահանջներն, այլ հնարավորություն է տալիս նաև արտահանել:

Էլեկտրակայաններն ըստ տեսակների բաշխվում են հետևյալ կերպ.

- **ջրային**¹ – 130-ից ավելի կայան (գումարային հզորությունը՝ 1,19 մլն կՎտ),

¹ Ջրային էլեկտրակայանների մեծ մասը (100-ից ավելի) կառուցվել են վերջին երկու տասնամյակում փոքր գետերի վրա և ունեն շատ փոքր հզորություն:

Էլեկտրաէներգիայի գումարային հզորությունը (հազ. կՎտ) և արտադրանքը կՎտ·ժ (2012 թ.)



- **ջերմային** – 3 կայան (գումարային հզորությունը՝ 1,91 մլն կՎտ),
- **ատոմային** – 1 կայան (հզորությունը՝ 0,82 մլն կՎտ), բաղկացած է երկու էներգաբլոկից (այժմ գործում է մեկը՝ 0,41 մլն կՎտ հզորությամբ),
- **հողմային** – հզորությունը՝ 4 հազ. կՎտ:

ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում առաջատարը (շուրջ 42%) ջերմային էներգետիկան է: Ջրային և ատոմային էներգետիկաները գրեթե հավասարաչափ են ներկայացված (տես գծագիրը): Սակայն ջրային էներգետիկան միակն է, որ կախված չէ ներմուծվող էներգակիրներից և կարող է աշխատել նույնիսկ տրանսպորտային լիակատար շրջափակման պայմաններում:

Ճանապարհորդելիս կամ ձեր բնակավայրի հարևանությամբ դուք հաճախ եք հանդիպում երկաթյա հզոր սյուներով «քայլող» մետաղյա լարերի: Դրանք երկրի տնտեսության «արյունատար անոթներն» են, որոնցով էլեկտրաէներգիան արտադրության վայրից հաղորդվում է սպառողին:

ՀՀ-ում ամենաերկարն ու հզորը Հրազդան-Սևանի ավազանից Զանգեզուր՝ 220 հազ. վոլտ լարման էլեկտրահաղորդման գիծն է: Դրանից ճյուղավորվում են 110 հազ. և 35 հազ. վոլտ լարման գծեր, որոնք էլ իրենց հերթին սկիզբ են տալիս բաշխիչ ցանցը կազմող ավելի ցածր լարման գծերին և էլեկտրաէներգիան հասցնում են երկրի բոլոր քաղաքներն ու գյուղերը:

Հայաստանի Հանրապետության առավել հզոր էլեկտրակայաններն են.

Հրազդանի ջէկը – 1110 հազ. կՎտ,

Հայկական (Մեծամոր) աէկը – 820 հազ. կՎտ,

Երևանի ջէկը – 550 հազ. կՎտ,

Արգե՛լի (Գյումրի) ջրէկը – 218 հազ. կՎտ,

Տաթևի ջրէկը – 157 հազ. կՎտ,

Շամբի ջրէկը – 151 հազ. կՎտ,

Քանաքեռի ջրէկը – 102 հազ. կՎտ:

Մնացած էլեկտրակայաններից յուրաքանչյուրի հզորությունը 100 հազ. կՎտ-ից պակաս է:

Գետերի ջրաէներգետիկ ռեսուրսներն ավելի արդյունավետ են օգտագործվում, երբ նույն գետի հունի երկայնքով կառուցում են **էլեկտրակայանների կասկադ**: ՀՀ-ում համեմատաբար խոշոր ջրէկ-ներ կասկադի ձևով կառուցված են **Հրազդան և Որոտան գետերի վրա**: Հրազդանի վրա կառուցված 6 էլեկտրակայանները (Սևանի, Հրազդանի, Արգելի, Արզնու, Քանաքեռի, Երևանի) սնվում են հիմնականում Սևանա լճից, ուստի հայտնի են **Սևան-Հրազդան կասկադ** անունով: Նշված էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 555 հազ. կՎտ:

Որոտանի կասկադը բաղկացած է 3 կայանից՝ Տաթևի (ամենախոշորը), Շամբի և Սպանդարյանի ջրէկ-ներից:

Հայաստանի տնտեսական զարգացման տարբեր փուլերում տարբեր է եղել էլեկտրաէներգիայի արտադրանքի և պահանջարկի հարաբերակցությունը, այսինքն՝ էներգահաշվեկշիռը:

1970-ական թվականներին Հայկական (Մեծամորի) աէկ-ի և այլ խոշոր էլեկտրակայանների շահագործումից հետո Հայաստանը էներգետիկա ներմուծող երկրից վերածվեց հարևան երկրներ (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա) էլեկտրաէներգիա արտահանող երկիր:

1991-1994 թթ. Հայաստանի էներգետիկայի համար **խոր ճգնաժամի տարիներ են եղել**: Դադարել էր էներգակիրների ներկրումը: Ատոմակայանն ամբողջությամբ և ջերմաէլեկտրակայանները՝ մեծ մասամբ, չէին աշխատում:

Հայկական աէկ-ի վերագործարկման շնորհիվ երկիրն աստիճանաբար դուրս եկավ էներգետիկական ճգնաժամից:

Ներկայումս էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկը, ինչպես ասվեց, բավարարվում է լիովին: Զգալի քանակության էլեկտրաէներգիա մեր հանրապետությունը բարձր հաղորդման էլեկտրալարման գծերով մատակարարում է Իրանին, Վրաստանին և ԼՂՀ-ին:

Ապագայում ևս Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկան հիմնվելու է ատոմային, ջերմային (գազով աշխատող) և ջրէկ-ների վրա: Վերակառուցվում ու ընդլայնվում են ջերմային էլեկտրակայանները: **Մեծամորի գործող աէկ-ը**, որն աշխատում է հնացած սխեմայով և վտանգավոր է, նախատեսվում է փակել և կառուցել նոր, կատարելագործված ու ավելի հզոր ատոմակայան: Նախատեսվում է առաջիկայում կառուցել Մեղրու (Արաքս գետի վրա, Իրանի հետ համատեղ) և Շնողի ջրէկ-ները:



Քանաքեռի ջրէկ

Ծավալուն աշխատանքներ են տարվում **փոքր գետերի էներգառեսուրսների և, այսպես կոչված, ոչ ավանդական էներգետիկ աղբյուրների (արևի, քամու, երկրի ընդերքի) օգտագործման ուղղությամբ**: Արդեն գործում են քամու (Պուշկինի լեռնանցք) և արևի էներգիայով աշխատող առաջին փոքր հզորության էլեկտրակայանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է իրենից ներկայացնում վառելիքաէներգետիկ համալիրը, ո՞րն է նրա գլխավոր գործառույթը:
2. Ինչպիսին է ՀՀ էլեկտրաէներգետիկայի կառուցվածքը: Թվարկեք առավել հզոր էլեկտրակայանները:
3. Ինչո՞ւ է շահավետ էլեկտրակայանները միավորել էլեկտրահաղորդման գծերի միասնական ցանցի մեջ: Ինչպիսին է ՀՀ միասնական ցանցը:
4. Վերլուծե՞ք ՀՀ 'նախկին' խորհրդային վերջին տարիների և ներկայիս էներգահաշվեկշիռը:
5. Ինչպիսին եք տեսնում ՀՀ վառելիքաէներգետիկ համալիրի զարգացման հեռանկարը:

ԴԱՍ 34. ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մետալուրգիան Հայաստանի Հանրապետության արդյունաբերության հնագույն և առաջատար ճյուղերից է: Հին Հայաստանը հարակից երկրների հետ միասին եղել է մետաղաձուլական համաշխարհային կենտրոններից մեկը: Այստեղ Ք. ա. IV հազարամյակից արդեն ձուլվել է բրոնզ, իսկ Ք. ա. II հազարամյակի կեսերից՝ երկաթ:

Հայտնի է, որ մետաղի ստացումն անցնում է **տեխնոլոգիական մի քանի փուլ՝ սկսած հանքանյութի հանույթից, հարստացումից մինչև մետաղի ձուլումը և գլանվածքի ստացումը**:

ՀՀ մետալուրգիական համալիրը բաղկացած է մի քանի ենթաճյուղերից՝ պղնձի, մոլիբդենի, բազմամետաղների (կապար, ցինկ և այլն), ալյումինի և ոսկու: Դրանցից ավարտուն տեխնոլոգիական ցիկլ ունեն պղնձի, մոլիբդենի և ոսկու արտադրությունները: ՀՀ մետալուրգիայում զգալի է օտարերկրյա ընկերությունների (Գերմանիա, Ռուսաստան, Կանադա և այլն) ներկայությունը:

Դեռևս XVIII դ. 60-70-ական թվականներին Զանգեզուրում (Կապան) և Հյուսիսային Հայաստանում (Ալավերդի) կառուցվեցին տեղական հումքով աշխատող պղնձի ձուլման գործարաններ: XX դ. սկզբին Հայաստանը Ռուսաստանի պղնձաձուլության առաջատար երկրներից մեկն էր: 1913 թ. Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքում գունավոր մետաղաձուլության (բացառապես պղնձաձուլության) բաժինը կազմում էր մոտ 60%: Խորհրդային տարիներին փոքր պղնձաձուլարանների փոխարեն կառուցվեց Ալավերդու

լեռնամետալուրգիական խոշոր կոմբինատը, որի վերջնական արտադրանքը՝ մաքուր պղինձը, գլանվածքի ձևով առաքվում էր մեքենաշինական ձեռնարկություններին:

Ներկայում Ալավերդու պղնձաձուլական կոմբինատը, բացի տեղական հումքից (Ալավերդի, Ախթալա, Շամլուղ), հարստացված հանքանյութ է ստանում Սյունիքի մարզից (Քաջարան, Կապան, Ագարակ) և ԼՂՀ-ից (Դրմբոնի հանքահարստացուցիչ կոմբինատից): 2014 թ. Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի բազայի հիման վրա շահագործման է հանձնվել լեռնահարստացուցիչ կոմբինատը, որը նույնպես պղնձի խտանյութ կմատակարարի Ալավերդու պղնձաձուլարանին: Պղնձաձուլության թափոնները (խարամը) և ծծմբային գազերն աղտոտում են շրջակա միջավայրը:

Նախատեսվում է կառուցել նոր պղնձաձուլարան Սյունիքի մարզում: 2012 թ. ՀՀ-ում արտադրվել է 155 հազ. տ պղնձի խտանյութ և 10 հազ. տ սև պղինձ:

ՀՀ մետալուրգիայի մյուս ենթաճյուղը **մոլիբդենի արդյունաբերությունն է**, որը վերջերս սկսել է աշխատել ավարտուն արտադրական ցիկլով: Նախկինում հարստացված հանքանյութը՝ խտանյութը, արտահանվում էր արտասահման՝ հետագա մշակման և մետաղային մոլիբդեն ստանալու համար: Այժմ Երևանի մաքուր երկաթի գործարանում մշակում են խտանյութի մի մասը և ստանում մետաղային մոլիբդեն (ֆերոմոլիբդեն): Ծրագրվում է մոլիբդենի ամբողջ խտանյութի (շուրջ 10 հազ. տ) վերամշակումը և մաքուր մոլիբդենի ու մյուս արժեքավոր նյութերի ստացումը կազմակերպել այս գործարանում:

Մոլիբդենի պաշարներով ՀՀ-ն աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը: Դրանց հիմնական մասը գտնվում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում, որի բազայի վրա գործում է **Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը**՝ ՀՀ արդյունաբերական խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Տեղական հումքի բազայի վրա մոլիբդենի հանքանյութ է արտադրվում նաև Ագարակ քաղաքում:

Դուք գիտեք, որ Հայաստանի մետաղային հանքավայրերը համալիրային են: Այսինքն՝ գլխավոր մետաղին ուղեկցում են այլ արժեքավոր մետաղներ և տարբեր քիմիական տարրեր՝ ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, թելուր և այլն, որոնց



Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի ծխնելույզը



Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ

կորզումը նույնպես նախատեսվում է կազմակերպել տեղում: Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան տեղական բազմամետաղային հանքավայրի մշակման հիման վրա, պղնձից բացի, արտադրում է նաև ցինկի խտանյութ:

Ոսկու արդյունաբերության ենթաճյուղն ունի լրիվ արտադրական ցիկլ: Հայտնաբերված շուրջ երկու տասնյակ ոսկու հանքավայրերից առավել մեծ արդյունաբերական նշանակություն ունեն **Սոթքի** և **Մեղրաձորի** հանքերը, որտեղից ստացվող հումքը վերամշակվում է **Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում**:

ՀՀ-ում ալյումինի արդյունաբերության ենթաճյուղը ստեղծվել է 1950-ական թվականների սկզբներին, երբ ջրէկ-ների Սևան-Հրազդան կասկադի շինարարության շնորհիվ առաջանում էր էլեկտրաէներգիայի ավելցուկ (ալյումինի ծուլումը խիստ էներգատար է): Կառուցվեց Քանաքեռի ալյումինի գործարանը: Մետաղական ալյումինի ծուլումը բավականին թանկ էր նստում: Այդ հանգամանքը, ինչպես նաև այն, որ մայրաքաղաքի մթնոլորտ էին արտանետվում թունավոր գազեր, պատճառ հանդիսացան, որ մետաղական ալյումինի արտադրությունը դադարեցվի: Գործարանը, որն այժմ



Փայլաթիթեղի արտադրությունը Ռուսալ-Արմենալ գործարանում

կոչվում է **Ռուսալ-Արմենալ**, տարբեր երկրներից ներմուծվող ալյումինի հիման վրա թողարկում է մեծ պահանջարկ ունեցող **փայլաթիթեղ** և **պատրաստի այլ իրեր**:

Մեր հանրապետությունն ունի սև մետաղածուլության զարգացման լայն հնարավորություններ: Դեռևս խորհրդային տարիներին Չարենցավանում և Երևանում ստեղծվեցին մետաղի ջարդոնի և թուջի վերածուլման

հիման վրա ոչ մեծ արտադրություններ մեքենաշինության պահանջները սև մետաղներով մասնակիորեն բավարարելու համար: Ներկայումս դրանք չեն գործում:

Առայժմ չեն շահագործվում հարուստ երկաթահանքերը (Սվարանցի, Կապուտանի և Հրազդանի):

Չնայած դրան՝ մետալուրգիան ՀՀ տնտեսության գերակա ուղղություններից մեկն է: Մեր երկիրն ունի բավարար պայմաններ բարձր արդյունավետ և բնապահպանական առումով մաքուր մետալուրգիական բազմաճյուղ արդյունաբերություն զարգացնելու համար: Այն ամբողջությամբ պետք է հենվի սեփական հանքավայրերի, ինչպես նաև լեռնահանքային արդյունաբերության կուտակած թափոնների օգտագործման վրա: Սակայն ՀՀ-ում լեռնահանքային արդյունաբերության զարգացման ուղղությունները պետք է բացառապես հիմնվեն էկոլոգիական գործոնների առաջնահերթ հաշվառման վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գնահատե՞ք մետալուրգիական համալիրի դերը և տեղը ՀՀ տնտեսության մեջ:
2. Ի՞նչ ենթաճյուղերից է բաղկացած ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը:
3. Բնութագրե՞ք և գնահատե՞ք ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացման բնական և տնտեսական նախադրյալները:
4. Համեմատե՞ք տեղական հումքն օգտագործող ենթաճյուղերի (պղինձ, մոլիբդեն, ոսկի, բազմամետաղներ) տեխնոլոգիական շղթաները:
5. Քարտեզի վրա ցոյց տվե՞ք գունավոր մետալուրգիայի կենտրոնները և նշե՞ք դրանցում առկա ենթաճյուղերը:

ԴԱՍ 35. ՄԵՔԵՆԱՇԻՆ ՈՒԹՅՈՒՆԸ

Մեքենաշինության նշանակությունը երկրի տնտեսական կյանքում շատ մեծ է: Գլխավորապես **մեքենաշինության շնորհիվ է, որ կատարվում են տնտեսության տեխնիկական վերազինում, արտադրության ավտոմատացում ու կոմպյուտերացում:**

Մինչխորհրդային Հայաստանում մեքենաշինության ճյուղն ըստ էության բացակայում էր: Խորհրդային տարիներին այն դարձավ արդյունաբերության առաջատար և ամենաարագ զարգացող ճյուղը: Այն **առաջին տեղն էր գրավում բոլոր հիմնական տնտեսական ցուցանիշներով:** Նրան բաժին էր ընկնում հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 1/3-ից ավելին, արտադրանքն արտահանվում էր արտասահմանյան տասնյակ երկրներ:

Մեքենաշինության ճյուղային կառուցվածքի գլխավոր առանձնահատկությունը ոչ մետաղատար, գիտատար ու աշխատատար, արտադրական բարձր մշակույթ պահանջող ենթաճյուղերի գերակշռությունն էր:

Այդ ենթաճյուղերի՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերության, հաստոցաշինության և սարքաշինության արտադրանքի ծավալներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ում գրավում էր առաջին տեղերից մեկը:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը ՀՀ-ի մեքենաշինական համալիրի ամենազարգացած ենթաճյուղն էր: Մինչ ճգնաժամը դրան բաժին էր ընկնում ամբողջ մեքենաշինության համախառն արտադրանքի կեսը:

Բազմազան էր Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքը: Հատկապես մեծ ծավալ էին կազմում տարբեր հզորության շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, գեներատորները, էլեկտրաշարժիչները, էլեկտրագոդման սարքերը, էլեկտրալամպերը, էլեկտրական հաշվիչները և մալուխները, որոնք ամբողջ ԽՍՀՄ տարածքում ունեին մեծ պահանջարկ:

Այս ենթաճյուղի ձեռնարկություններից հատկապես լայն ճանաչում



*Հրազդանի «Հարվալ Մաշինըրի»
հաստոցաշինական գործարանի
արտադրամաս*



*Մարտկոցների արտադրության
«Էլբաթ» ընկերության արտադրամաս*

հաստոցաշինական, ֆրեզերային հաստոցների, «Ալմաստ» (արհեստական ալմաստների և ալմաստ գործիքների), Չարենցավանի հաստոցաշինական ու գործիքաշինական, Վանաձորի ճշգրիտ հաստոցների գործարանները, որոնք այժմ գործում են մասնակիորեն: Հրազդան քաղաքում կառուցվել է հայ-կանադական հաստոցաշինական նոր գործարան:

Կարևոր ու հեռանկարային ենթաճյուղ է **սարքաշինությունը, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրությունը**: Այս ենթաճյուղի ձեռնարկություններում թողարկվում էին ժամացույցներ (3-րդ տեղը նախկին ԽՍՀՄ-ում), պոմպեր, չափման միջոցներ, կառավարման ավտոմատացված համակարգեր և այլն (Երևան, Գյումրի, Վանաձոր): Այս ենթաճյուղի ձեռնարկությունների մեծ մասը նույնպես չեն գործում:

«Վ մեքենաշինական համալիրի ամենաերիտասարդ ենթաճյուղը **ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունն** է: Այն թողարկում է գլխավորապես էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ռադիոսարքեր, կապի միջոցներ, կիսահաղորդիչներ: Այս բնագավառի խոշորագույն ձեռնարկություններն են «Հրազդան-մեքենա», Երևանի «Տրանզիստոր», «Մարս» գործարաններն ու միավորումները:

«Վ մեքենաշինության տեղաբաշխումն ունի իր յուրահատկությունները: Այն ենթաճյուղերը, որոնք բնորոշ են մեր հանրապետությանը (հիշեք

ունեին Երևանի էլեկտրամեքենաշինական, էլեկտրալամպերի, մալուխի և էլեկտրատեխնիկական գործարանները: Համեմատաբար փոքր ձեռնարկություններ ունեին Գյումրի, Վանաձոր, Կապան, Գորիս և Գավառ քաղաքները:

Նշված ձեռնարկություններն այժմ չեն գործում կամ գործում են մասամբ, խիստ նվազել են դրանց արտադրանքի ծավալները, փոխվել են նաև թողարկվող արտադրատեսակները: Դրանցից նշանավոր է ժամանակակից մարտկոցների արտադրության «Էլբաթ» ընկերությունը (Երևան):

Հաստոցաշինական-գործիքաշինական ենթաճյուղը թողարկում էր տարբեր տեսակի մետաղահատ և քարհատ հաստոցներ, ալմաստե հատիչներ, կտրիչ գործիքներ և այլն:

Խոշոր ձեռնարկություններից հայտնի էին հատկապես Երևանի

դրանք), սովորաբար տեղաբաշխվում են ոչ թե հումքի կամ էներգիայի աղբյուրների մոտ, այլ այն վայրերում, որտեղ շատ են աշխատանքային ռեսուրսները: Իսկ դուք գիտեք, որ մեր քաղաքներում ու խոշոր գյուղերում միշտ էլ աշխատանքային ազատ ռեսուրսներ են եղել:

Նշենք ՀՀ մեքենաշինության տեղաբաշխման մի քանի առանձնահատկություններ:

Առաջին՝ ճյուղն ունի **ցրված տեղաբաշխում**: Ի տարբերություն էներգետիկ, մետալուրգիական ու քիմիական արդյունաբերության ճյուղերի, որոնք տեղաբաշխված են մի քանի հզոր կենտրոններում՝ մեքենաշինությունը ցրված է հանրապետության տարբեր քաղաքներում և նույնիսկ մի շարք խոշոր գյուղերում:

Երկրորդ՝ մեքենաշինության ցրված տեղաբաշխման ընդհանուր պատկերում **առանձնանում է Երևանը**, որն ունի գրեթե բոլոր այն ճյուղերն ու ենթաճյուղերը, որոնք առկա են ընդհանրապես ամբողջ հանրապետությունում: Մյուս խոշոր, բազմաճյուղ կենտրոններն են՝ **Գյումրին, Վանաձորը, Հրազդանը, Աբովյանը, Չարենցավանը**:

Ներկայումս շուկայական տնտեսության զարգացման, մեքենաշինական ձեռնարկությունների սեփականաշնորհման և ապապետականացման պայմաններում դրանց մի մասը չի գործում, իսկ մի մասն էլ աշխատում է փոքր հզորությամբ: Դրա գլխավոր պատճառը սպառման շուկայի բացակայությունն է և այլ երկրներում գտնվող ձեռնարկությունների հետ արտադրական կապերի խզումը: Ճյուղի բաժինը ՀՀ տնտեսության մեջ և արտահանման ծավալներում էապես նվազել է:

Այս ճյուղի հետագա զարգացումը պահանջում է կառուցվածքային լուրջ վերափոխումներ: Շուկայի պահանջներից ելնելով՝ հանվում են մի շարք հին արտադրատեսակներ, ներդրվում են նորերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանի տնտեսության մեջ ինչ տեղ է գրավել մեքենաշինությունը:
2. Թվարկե՛ք ՀՀ մեքենաշինության գլխավոր ճյուղերը և արտադրությունները:
3. Վերլուծե՛ք ՀՀ մեքենաշինության տեղաբաշխման առանձնահատկությունները, համեմատե՛ք մետալուրգիայի տեղաբաշխման առանձնահատկությունների հետ:
4. Բնութագրե՛ք ճյուղի վիճակը և արդի հիմնախնդիրները շուկայական տնտեսության զարգացման պայմաններում:

ԴԱՍ 36. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային տարիներին մեր հանրապետության քիմիական արդյունաբերությունը բարդ համալիր էր և ընդգրկում էր բազմաթիվ ենթաճյուղեր և արտադրություններ:

Քիմիական արդյունաբերության բազմակողմանի ու արագ զարգացման համար նախադրյալներ են եղել.

- ◆ բարձրորակ կրաքարի (տրավերտին) խոշոր պաշարների առկայությունը (Արարատի և այլ հանքավայրեր),
- ◆ էլեկտրակայանների Սևան–Հրազդան կասկադի կառուցումը և սկզբնական շրջանում էժան էլեկտրաէներգիայի առկայությունը,
- ◆ պղնձածուլության ընթացքում անջատվող ծծմբային գազերն ու առաջացող թափոնները,
- ◆ քիմիական արտադրանքի մեծ պահանջարկը նախկին ԽՍՀՄ-ի տարածքում,
- ◆ բնական գազի ներմուծումը, որը մեծապես նպաստեց քիմիական արդյունաբերության հումքային բազայի ընդլայնմանը,
- ◆ բարձրորակ քիմիկոս կադրերի առկայությունը:

Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում ձևավորվել են քիմիական արդյունաբերության հետևյալ արտադրական համալիրները (ենթաճյուղերը).

1. Բնական գազի հիմքի վրա սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիր:

Այս համալիրը ծագել է տեղական հանքային հումքի՝ կրաքարի վերամշակումից: Դա էներգատար էր և բնապահպանական առումով վնասակար: Ուստի կազմակերպվեց սինթետիկ կաուչուկի ստացումը բնական գազից: Այս համալիրի գլխավոր ձեռնարկությունը Երևանի «Նաիրիտ» գործարանն էր, որն արտադրում էր սինթետիկ կաուչուկի հատուկ տեսակ՝ քլորոպրենային կաուչուկ:

Կաուչուկի արտադրության հիմքի վրա լայն զարգացում ստացավ ավտոդողերի և ռետինատեխնիկական իրերի արտադրությունը: Վերջին երկու տասնամյակներում դրանց արտադրությունը պարբերաբար ընդհատվում է: Անհրաժեշտ է սարքավորումների նորացում և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, որոնց համար պահանջվում են մեծ կապիտալ միջոցներ: Միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեցող հայկական սինթետիկ կաուչուկի արտադրությունը հեռանկարային ճյուղ է: Վերջերս սինթետիկ կաուչուկի արտադրության հայաստանյան տեխնոլոգիան հատուկ պայմաններով տեղափոխվել և ներդրվել է Չինաստանում:

2. Ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիր: Այս համալիրը հիմնված է բնական գազի և օդից անջատվող ազոտի օգտագործման վրա: Խորհրդային տարիներին արտադրվում էր մեծ քանակությամբ ամիակ, ազոտաթթու, մելամին, որոնք լայն կիրառություն ունեն արտադրության ամենատարբեր բնագավառներում, հատ-

կապես գյուղատնտեսության մեջ: Այս համալիրի կենտրոնը Վանաձոր քաղաքն է:

3. Գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման (ուտիլացման) համալիր: Ալավերդու կոմբինատի պղնձաձուլության թափոնների հիման վրա կազմակերպվել էր պղնձարջասպի և ծծմբաթթվի արտադրությունը, որը կիրառություն ունի գյուղատնտեսության մեջ:

Պղնձաձուլության արտադրության ընդլայնման հետ կապված՝ մասամբ վերականգնվել է դրանց արտադրությունը:

4. Առանձին համալիր է կազմում քիմիական կենցաղային իրերի արտադրությունը: Այն հենվում է քիմիական մյուս համալիրներում թողարկվող նյութերի վրա և արտադրում է բնակչության կենցաղում և տնտեսության տարբեր ճյուղերում լայն կիրառում ունեցող լվացող հեղուկներ, լաքեր ու ներկեր, թունաքիմիկատներ և այլ նյութեր: Դրա գլխավոր կենտրոնը Երևան քաղաքն է:

5. Քիմիական արդյունաբերության հեռանկարային ենթաճյուղ է փոքր քիմիան: Ի տարբերություն քիմիական արդյունաբերության այլ ենթաճյուղերի և արտադրությունների, որոնք սովորաբար էներգատար և հումքատար են, այս ենթաճյուղի արտադրանքը փոքրածավալ, գիտատար ու աշխատատար է և պահանջում է նուրբ ու ճշգրիտ տեխնոլոգիա: ՀՀ-ում բոլոր նախադրյալները կան, որպեսզի փոքր քիմիան դառնա առաջատար ենթաճյուղ և զարգացման գերակա ուղղություն: Արտադրանքի գլխավոր տեսակներն են քիմիական ռեակտիվները, վիտամինները, կենսաքիմիական միացությունները: Վերջերս ստեղծված դեղերի արտադրության ձեռնարկությունների շնորհիվ արագորեն զարգանում է նաև դեղագործական քիմիան: Այս ենթաճյուղի գլխավոր կենտրոնը նույնպես Երևան քաղաքն է:

Բացի նշված համալիրներից (ենթաճյուղերից)՝ Հայաստանում զարգացած էին նաև պոլիմերային նյութերի ու պլաստմասսաների (Երևան, Վաղարշապատ), սինթետիկ կորունդի ու սինթետիկ թելերի (Վանաձոր) արտադրությունները:

Քիմիական արդյունաբերությունը նույնպես, ինչպես և մետալուրգիան, չունի ցրված տեղաբաշխում: Ընդհակառակը՝ բնորոշ է **տարածքային բարձր համակենտրոնացումը**, այսինքն՝ ծավալուն արտադրության տեղաբաշխումը փոքրաթիվ կենտրոններում: ՀՀ քիմիական արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ տեղաբաշխված է երեք կենտրոնում՝ **Երևանում, Վանաձորում և Ալավերդիում:** Մի քանի մանր ձեռնարկություններ կան այլ քաղաքներում:

ՀՀ քիմիական արդյունաբե-



Վանաձորի քիմիական կոմբինատը

րության համար կարևորագույն հիմնախնդիր է **բնապահպանական ուղղվածության ապահովումը**: Մեր փոքր տարածքի համար կենսական նշանակություն ունի այն, որ քիմիական գործարաններն ու արտադրությունները լինեն **էկոլոգիապես անվնաս, չաղտոտեն շրջապատի օդը, ջուրը, հողը, չվնասեն բուսականությունն ու կենդանական աշխարհը**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նախադրյալներ կային Հայաստանում քիմիական արդյունաբերության բազմակողմանի և արագ զարգացման համար:
2. Թվարկեք և բնութագրեք ՀՀ-ում ձևավորված քիմիական արդյունաբերության գլխավոր արտադրական համալիրները:
3. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք քիմիական արդյունաբերության կենտրոնները: Ինչո՞վ են դրանք հայտնի:
4. Նշեք ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացումը սահմանափակող գործոնները:

ԴԱՍ 37. ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչխորհրդային Հայաստանում թեթև արդյունաբերությունն ուներ տնայնագործական բնույթ: Խորհրդային տարիներին ճյուղի արագ զարգացմանը նպաստել է աշխատանքային ռեսուրսների (հատկապես կանանց) առկայությունը: Այդ տարիներին ճյուղի զարգացմանը որոշ չափով նպաստեցին նաև բամբակենու մշակությունը, ոչխարաբուծության (մատակարարում էր բուրդ) և տավարաբուծության (մատակարարում էր կաշի) զարգացումը: Սակայն դրանք մասամբ էին բավարարում ճյուղի պահանջները բնական հումքով:

Դրան հակառակ՝ քիմիական արդյունաբերությունը թողարկում է հումքի փոխարինիչներ՝ սինթետիկ թելերի ու կաշիների որոշ տեսակներ:

Այսպիսով՝ **Հայաստանի թեթև արդյունաբերության հումքային բազան թույլ է ապահովված, և դրա զգալի մասը (կաշի, բուրդ, բամբակ, մետաքս) ներմուծվում է դրսից**:

Այդ ամենով հանդերձ՝ թեթև արդյունաբերությունը խորհրդային տարիներին Հայաստանի արդյունաբերական համալիրի **երկրորդ** ճյուղն էր: Իր գլխավոր տնտեսական ցուցանիշներով (արտադրության ծավալով և աշխատողների թվով) այն զիջում էր միայն մեքենաշինությանը:

Բավականին բազմազան է Հայաստանի **թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքը**: Դրա բազմաթիվ ենթաճյուղեր ու արտադրություններ միավորում են հարյուրից ավելի ձեռնարկություններ, որոնք տեղաբաշխված են Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում և մի շարք խոշոր գյուղերում: Տեղաբաշխման հիմնական նախադրյալը կանանց աշխատուժի առկայությունն է:

Խորհրդային տարիներին արտադրված գործվածքների, տրիկոտաժե-

ղենի, գուլպեղենի և կոշկեղենի 3/4-ը, պատրաստի հագուստեղենի ու գորգեղենի կեսից ավելին սպառվում էր Հայաստանի սահմաններից դուրս:

ԽՍՀՄ փլուզումը, հումքի ներկրման և արտադրանքի սպառման ավանդական շրջանների ու երկրների հետ կապերի խզումը, էներգետիկ ճգնաժամը, տրանսպորտային շրջափակումը գրեթե կազմալուծեցին մեր երկրի արդյունաբերության առաջատար այս ճյուղը: Բացի այդ, Գյումրիում և Սպիտակում գտնվող ճյուղի առաջատար ձեռնարկություններից մի քանիսը 1988 թ. ավերիչ երկրաշարժի պատճառով վերածվեցին փլատակների:

Թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում գլխավորը **տեքստիլ արդյունաբերությունն էր**: Այն թողարկում էր բամբակե (Գյումրի, Մարալիկ), ինչպես նաև բրդե ու մետաքսե գործվածքեղեն (Երևան):

Տեքստիլ արդյունաբերությունն իր հումքի մեծ մասը ստանում էր դրսից: Դրա հիմքի վրա տեղում ստեղծվել են **մանվածքային, գործվածքային ու ներկման արտադրություններ**:

Բամբակի տեքստիլ խոշորագույն ձեռնարկությունները գտնվում էին Գյումրի քաղաքում: Այժմ դրանք աշխատում են մասնակիորեն: Մեծ ծավալի աշխատանքներ են տարվում երկրաշարժից ավերված արտադրությունները վերականգնելու համար: Խոշոր ձեռնարկություն է **Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկան**, որը նույնպես մասնակիորեն է աշխատում:

Մեծ տեղ էր գրավում **գորգագործությունը**, որը Հայաստանի համար ավանդական ճյուղ է: Հայկական գորգերը հռչակված են եղել դեռևս հին և հատկապես միջին դարերում:



Ձեռագործ գորգերի արտադրամաս

Վենետիկցի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն (XIII դար), անցնելով հայկական Կիլիկիայով, հիշատակում է, որ հայերը և հույները «գործում են աշխարհի ամենալավ գորգերը»: Հայկական գորգերը մեծ համբավ են ունեցել Եվրոպայի ու արտասահմանյան այլ երկրների իշխանավորների ու մեծահարուստների մոտ: Հետաքրքիր է, որ XV-XVI դարերի եվրոպական շատ գեղանկարիչներ իրենց կտավներում պատկերել են հայկական գորգեր:

Առավել բարձրարժեք են **ձեռագործ գորգերը**: Ձեռագործ գորգերի արտադրության մանր և միջին մեծության ձեռնարկություններ կան մի շարք քաղաքներում ու գյուղերում:

Ենթաճյուղի խոշորագույն ձեռնարկությունը **Իջևանի գորգագործական կոմբինատն է**, որը թողարկում է **մեքենայական արտադրության գորգեր**:

Ցրված տեղաբաշխում ունի **տրիկոտաժի ենթաճյուղը**: Այն արտադրում է ներքնազգեստ ու վերնազգեստ, գուլպեղեն, ձեռնոցներ և գլխարկներ:

Տրիկոտաժի արտադրությունը բուռն վերելք ապրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ժամանակակից խոշոր ֆաբրիկաներ կառուցվեցին **Երևանում, Վանաձորում, Գորիսում, Գավառում, Արթիկում, Արտաշատում և Կապանում**: Գյումրիում կառուցվեց գուլպեղենի խոշոր գործարան: Մեր հանրապետությունը դարձավ նախկին Խորհրդային Միության տրիկոտաժեղեն արտահանող կարևոր շրջաններից մեկը: Ձեռնարկությունների մեծ մասը ներկայումս չեն աշխատում կամ աշխատում են փոքր հզորությամբ:

Կարի արդյունաբերությունը թեթև արդյունաբերության ենթաճյուղերից ամենացրված տեղաբաշխում ունեցողն էր: Այն տասնյակ ոչ մեծ ձեռնարկություններով ներկայացված էր երկրի բազմաթիվ քաղաքներում և որոշ գյուղերում: Վերջին տարիներին համեմատաբար էժան և որակյալ աշխատուժի (հիմնականում կանանց) օգտագործման նպատակով, օտարերկրյա կապիտալի ներդրմամբ, առկա հզորությունների հիման վրա ստեղծվել են համատեղ ձեռնարկություններ: Ենթաճյուղի մասնակի վերականգնման շնորհիվ հնարավոր կդառնա աստիճանաբար հայկական շուկայից դուրս մղել Չինաստանից և ասիական այլ երկրներից ներկրած ցածրորակ ու էժանագին հագուստեղենը և այլ ապրանքատեսակները:

Մեր երկրում հարուստ ավանդույթներ ունի **կաշվի-կոշիկի** արդյունաբերությունը: Ճյուղի հիմնական արտադրատեսակներն են բնական կաշին, որն ստացվում է կենդանիների մորթուց, և բնական ու արհեստական կաշվից պատրաստվող կոշիկեղենը: Երևանի «Մասիս» կոշիկի ֆիրմայի արտադրանքը մեծ պահանջարկ ուներ ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Այժմ ջանքեր են թափվում կոշիկի արտադրությունը և թեթև արդյունաբերության մյուս ճյուղերը վերականգնելու, արտադրանքը մրցունակ դարձնելու, ներքին և արտաքին շուկաներ ձեռք բերելու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրեք և գնահատեք Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացումը և նախադրյալները:
2. Գնահատեք թեթև արդյունաբերության տեղը մեր երկրի տնտեսության մեջ անցյալում և ներկայումս:
3. Նկարագրեք թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքը:
4. Ինչպիսի՞ն է ՀՀ տեքստիլ արդյունաբերությունը: Ի՞նչ գիտեք հայկական գորգագործության մասին:
5. Որո՞նք են տրիկոտաժի և կարի արդյունաբերության տեղաբաշխման առանձնահատկությունները:

ԴԱՍ 38. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային արդյունաբերության կառուցվածքում արագորեն մեծանում է նորագույն ճյուղերի բաժինը: Դրանք այն ճյուղերն են, որոնց զարգացումը հենվում է նախ և առաջ գիտատեխնիկական առաջընթացի և կրթություն-գիտություն-արտադրություն կապերի հաստատման ու զարգացման, դրանց սերտաճման վրա:

Դրանց շնորհիվ աշխարհի առաջավոր երկրներում ստեղծվել են տեխնոպարկեր և գիտաարտադրական կենտրոններ, որոնք մասնագիտանում են տեղեկատվական տեխնոլոգիաների, համակարգչային տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, լազերային տեխնիկայի և կենսատեխնոլոգիաների գիտական մշակման, դրանց արդյունքներն արտադրության մեջ և կենցաղում ներդնելու գծով:


Հայաստանի Հանրապետությունում առկա են բոլոր նախադրյալները նշված ոչ նյութատար և ոչ էներգատար, բայց գիտատար և որակյալ աշխատանք պահանջող ճյուղերի զարգացման համար: Երևանում, Գյումրիում, Վանաձորում և մի շարք այլ քաղաքներում բուհերի, գիտական կենտրոնների և որակյալ կադրերի առկայությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում նշված ճյուղերի զարգացման համար:

ԽՍՀՄ-ի օրոք Հայաստանը համարվում էր էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար կենտրոններից մեկը՝ ավելի քան մեկ տասնյակ խոշոր գիտահետազոտական ինստիտուտներով և արդյունաբերական ձեռնարկություններով, որոնցից խոշորագույնը Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն էր:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորագույն ճյուղերը նույնպես լուրջ ճգնաժամ ապրեցին, ինչը, սակայն, հաղթահարվեց 1990-ական թվականների վերջերին, երբ հետզհետե ի հայտ եկան մասնավոր նոր ձեռնարկություններ: 2000 թ. ՀՀ կառավարությունը տեղեկատվական և հեռահաղորդակցային ոլորտը հայտարարեց Հայաստանի տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություն և մշակեց դրա գերակա զարգացման ծրագրեր: Այդ ծրագրերը, երկրի տնտեսական զարգացման և միջազգային շուկայի պահանջներին համապատասխան, պարբերաբար վերանայվում են:

Արդյունաբերության նորագույն ճյուղերից ՀՀ-ում առավել արագորեն զարգանում է տեղեկատվական տեխնոլոգիաների՝ բնագավառը: Այն ներկայացված է հարյուրից ավելի արտասահմանյան և հայկական ընկերություններով: Տեղական շուկայում մեծ մասամբ գործում են հայկական ընկերություններ, իսկ արտահանումների հիմնական մասը պատկանում

1 Տեղեկատվական տեխնոլոգիան տվյալների հավաքման, մշակման և հաղորդման միջոցով օբյեկտի, գործընթացի կամ երևույթի որակական նոր վիճակի վերաբերյալ տեղեկատվության ստացման մեթոդների և միջոցների ամբողջությունն է:



«Դիջիթեք» բարձր տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսը Երևանում, 2013 թ.

է արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերին: Վերջիններիս շարքում գերակշռում են հայ-ամերիկյան ընկերությունները: Այսօր արդեն արդյունաբերության նորագույն ճյուղերի արտադրանքը և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություններն արտահանվում են ավելի քան 20 երկրներ, ինչը վկայում է ոլորտի կազմավորման ու զարգացման մասին: Միաժամանակ այն լիովին բավարարում է հայկական շուկայի տակավին փոքր պահանջարկը, թեև վերջին տարիներին գրանցվում է այդ պահանջարկի զգալի աճ:

Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ընկերությունների հիմնական մասնագիտացումներն են՝ կիսահաղորդիչների նախագծումը, ծրագրային ապահովման պատվերների իրականացումը, ֆինանսական ծրագրերի մշակումը, մուլտիմեդիա նախագծումը, ինտերնետային ծրագրավորումը, տեղեկատվական համակարգերի մշակումները և այլն: Հայաստանը լուրջ հաջողությունների է հասել հատկապես կիսահաղորդիչների նախագծման, ծրագրերի մշակման բնագավառներում: Մեր հանրապետությունում այսօր գործում են տնտեսական բարձր աճի ցուցանիշներով առանձնացող հարյուրավոր SS ընկերություններ: Այս ընկերությունների 90%-ը տեղակայված են Երևանում: Բայց միաժամանակ տարեցտարի աճում է ՀՀ այլ մարզերում գործող ընկերությունների թիվը՝ մարզային զարգացման ծրագրերի հիման վրա կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ:

Ներկայումս արդյունաբերության նորագույն ճյուղերը միավորող ոլորտում զբաղվածների թիվն անցնում է մի քանի հազարից և շարունակում է արագ աճել:

Սակայն կրթության բնագավառի առկա սահմանափակ հնարավորությունները, որակյալ մասնագետների պակասը խոչընդոտում են ոլորտի ավելի արագ զարգացմանը: Նշված խնդրի լուծման լավագույն ուղին հայտնի ընկերությունների և համապատասխան մասնագետներ պատրաստող բուհերի **համատեղ կրթական և ճարտարագիտական ծրագրերի մշակումն ու իրականացումն է:**

Այսպես՝ «Սինոփսիս» հայտնի ընկերության հայկական մասնաճյուղը՝ «Սինոփսիս Արմենիան», Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և մի շարք այլ բուհերի հետ համատեղ մշակել և իրականացնում է բուհ-արտադրություն կրթական մոդելով համագործակցության ծրագրեր:

Առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքներն ու մարդկային ռեսուրսները, որպեսզի առաջիկայում ՀՀ-ն դառնա **տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տարածաշրջանային կենտրոն** և դեպի իրեն ձգի օտարերկրյա, այդ թվում՝ սփյուռքահայ գործարարների ու ընկերությունների:

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը հիմնականում կենտրոնացված է **Երևանում և մասամբ Գյումրիում, Վանաձորում ու մի շարք այլ քաղաքներում:** Նախատեսվում է այդ **կենտրոններում ստեղծել նաև տեխնոպարկեր (Գյումրի, Աշտարակ):** Տեխնոպարկերում որոշակի տարածքի վրա պետք է սերտաճեն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ապահովող բաղադրիչները՝ **գիտությունը, կրթությունը և արտադրությունը:**

ՀՀ արդյունաբերության նորագույն և հեռանկարային ճյուղերից է **լազերային տեխնիկայի արտադրությունը**, որի գիտահետազոտական և արտադրական հզորությունները կենտրոնացված են **Երևանում:**

Հեռանկարային է **կենսատեխնոլոգիաների** ուղղությամբ գիտական մշակումների և դրանց հիման վրա արտադրությունների կազմակերպումը:

ՀՀ-ի համար զարգացման գերակա ուղղություն հանդիսացող նորագույն ճյուղերի (բարձր տեխնոլոգիաների) զարգացումն այն գլխավոր միջոցն է, որը կարող է նպաստել **երկրի ամբողջ տնտեսության հզորացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը, արտահանման ծավալների կտրուկ աճին և այդ ամենի շնորհիվ՝ բնակչության բարեկեցության բարձրացմանը:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրե՞ք արդյունաբերության նորագույն ճյուղերը, գնահատե՞ք դրանց դերը և տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
2. Որո՞նք են նորագույն ճյուղերի զարգացման նախադրյալները ՀՀ-ում:
3. Ինչո՞ւ են ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաները համարվում գերակա ուղղություն, որո՞նք են նրա գործունեության հիմնական ուղղությունները:
4. Որո՞նք են տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական կենտրոնները ՀՀ-ում:
5. Արդյունաբերության նորագույն ճյուղերի գերակա զարգացումը ՀՀ-ում ի՞նչ արդյունքներ կարող է ապահովել:

ԴԱՍ 39. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐԸ

Նախորդ դասերին դուք ծանոթացաք արդյունաբերության հիմնական ճյուղերին, որոնք որոշում են մեր երկրի տեղն աշխատանքի միջազգային բաժանման մեջ: Ամեն մի երկիր ունի նաև օժանդակ և տեղական նշանակության արդյունաբերության ճյուղեր, որոնք հիմնականում աշխատում են երկրի ներքին պահանջները բավարարելու համար և սպասարկում են հիմնական ճյուղերին: ՀՀ-ում այդպիսիք են շինանյութերի, ապակուհախճապակու և փայտամշակման արդյունաբերության ճյուղերը:

Շինանյութերի արդյունաբերություն: ՀՀ տնտեսության առաջատար ճյուղերից է շինարարությունը, որի պահանջները տարատեսակ շինանյութերի նկատմամբ տարեցտարի աճում են:

Հայտնի է, որ զանգվածային կիրառություն ունեցող տեղական շինանյութեր (շինարարական քար, ավազ, կավ) կան գրեթե ամենուրեք: Ընդ որում՝ դրանք մեծածավալ են և ոչ տրանսպորտահարմար: Ուստի դրանց արտադրության ծավալը հիմնականում կախված է տեղական պահանջներից և սովորաբար արտահանման նպատակ չի հետապնդում:

Սակայն ՀՀ-ում այդ առանձնահատկությունները որոշ չափով խախտված են: Բնական շինանյութերի առանձին տեսակներ (պեռլիտ, մարմար) իրենց բարձր որակի շնորհիվ պահանջարկ ունեն արտաքին շուկայում:

Հայաստանում շինանյութեր արդյունահանվել են վաղնջական ժամանակներից: Բայց որպես արդյունաբերական ճյուղ այն մեզանում ձևավորվել է միայն 1920-ական թվականների վերջերին: Երբ ստեղծվեցին «Անիպեմզա», «Արթիկտուֆ» ձեռնարկությունները, Երևանի գաջի գործարանը և այլն: Այժմ այն բարդ կառուցվածք ունեցող մի ճյուղ է՝ բաղկացած բազմաթիվ արտադրություններից, որոնք բաժանվում են երեք խմբի:

Առաջինը բնական շինանյութերի՝ որմնաքարի, խճի, ավազի, թեթև լցանյութերի արդյունահանումն ու նախնական մշակումն է: **Երկրորդը** մածոլ (կապակցող) նյութերի՝ ցեմենտի, գաջի, կրի արտադրությունն է: Եվ **երրորդը՝** բետոնե ու երկաթբետոնե իրերի արտադրությունը:

Որպես բնական շինանյութ ծառայում են գլխավորապես հրաբխածին ապարները՝ տուֆը, պեմզան, պեռլիտը, որոնք, ինչպես գիտեք, լայն տարածում ունեն մեր երկրում:



Արարատի ցեմենտի գործարանը

Բնական շինանյութերի առավել խոշոր մեքենայացված հանքերը գտնվում են **Արթիկում, Քարակերտում, Արագածում, Աշտարակում և Անիպեմզայում:**

Պեռլիտը, պեմզան և հրաբխային խարամը որպես լցանյութ լայնորեն օգտագործվում

են ցեմենտի, բետոնի և երկաթբետոնե իրերի, իսկ պեռլիտը՝ նաև բյուրեղապակու և այլ նյութերի արտադրության համար:

Մարմարի և այլ բնական կարծր քարերի մշակման ամենախոշոր ձեռնարկությունը գտնվում է **Նուռնուսում**:

Մածող նյութերի շարքում գլխավորը ցեմենտն է: Գործում են ցեմենտի երկու գործարան **Արարատում** և **Հրազդանում**, որոնք օգտագործում են Արարատի հանքավայրի կրաքարը: Գործարանները տարածաշրջանում խոշորներից են և արտադրում են ցեմենտ, ջրատար խողովակներ և այլն:

Արտաքին բարենպաստ պայմանների դեպքում Հայաստանը կարող է դառնալ ամբողջ Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի երկրներին ցեմենտ մատակարարող միջազգային կենտրոն:

Շինանյութերի արդյունաբերության երիտասարդ ենթաճյուղ է **բետոնի ու երկաթբետոնե իրերի և հավաքովի կոնստրուկցիաների** արտադրությունը: Այն ստեղծվել է անցյալ դարի 50-60-ական թվականներին, երբ շինարարության մեջ սկսեցին տարածում գտնել ինդուստրիալ մեթոդները:

Այս ենթաճյուղի տեղաբաշխումը տարբերվում է բնական շինանյութերի արտադրության տեղաբաշխումից:

Բնական շինանյութերի արտադրություն կարելի է կազմակերպել միայն այնտեղ, որտեղ հանքավայրն է: Մինչդեռ բետոնի, երկաթբետոնե իրերի, ինչպես նաև ասֆալտի արտադրությունը և դրա վրա հենվող տնաշինական գործարանները տեղաբաշխվում են այնտեղ, որտեղ խոշոր ծավալի շինարարություն է կատարվում, այսինքն՝ արտադրանքի սպառման վայրերին մոտ:

Դա է պատճառը, որ այս ենթաճյուղի կենտրոններն են Երևանը, Գյումրին, Վանաձորը, Հրազդանը, Աբովյանը, Չարենցավանը, Կապանը: Սակայն վերջին երկու տասնամյակներին ՀՀ-ում խոշորամասշտաբ շինարարության ծավալների կտրուկ անկումը բացասաբար անդրադարձավ հատկապես այս ենթաճյուղի ձեռնարկությունների վրա:

Շինանյութերի արդյունաբերությունն այն ճյուղերից է, որն ուժեղ ազդեցություն է ունենում բնական միջավայրի վրա: Բնական շինանյութերի հանույթը կատարվում է **բաց հանքերում, որոնք ընդգրկում են փոքր խորություն, բայց ընդարձակ տարածություն**: Դա նշանակում է, որ ընդարձակ տարածություններ դուրս են գալիս գյուղատնտեսական օգտագործման շրջանառությունից:

Բացի այդ, քարհանքերում տուֆի, բազալտի, գրանիտի, մարմարի արդյունահանման ընթացքում արտադրանքի կեսից ավելին դառնում է **թափոն**: Դա մի կողմից գցում է հումքի օգտագործման արդյունավետությունը, մյուս կողմից, կուտակվելով հանքավայրերի մոտ, աղտոտում է շրջապատը:

Հանրապետության բնապահպանական օրենսդրության համապատասխան՝ արդյունաբերական ձեռնարկությունները պարտավոր են անաղարտ պահել շրջակա միջավայրը: Ամեն մի օգտագործված հանքավայրի տեղում նույն այդ ձեռնարկությունը պետք է վերականգնի հողա-

ծածկը, քարհանքի տեղամասը դարձնի օգտագործելի, օրինակ՝ ստեղծի ջրավազան, կատարի անտառատնկումներ:

Ապակու և հախճապակու արդյունաբերություն: Այս ենթաճյուղն օգտագործում է նույն հումքային բազան, ինչ շինանյութերի արդյունաբերությունը (պեռլիտ, հրաբխային խարամ, ավազ և այլն): Ենթաճյուղի արտադրանքի գլխավոր տեսակներն են՝ ապակե տարաները (սննդի արդյունաբերության համար), էլեկտրաջահերը, կենցաղային օգտագործման բյուրեղապակե, հախճապակե և ճենապակե իրերը: Այս ենթաճյուղի առաջին խոշոր ձեռնարկությունը կառուցվել է Երևանում (1936 թ.) և առ այսօր թողարկում է շինարարական, տեխնիկական և ապակե տարաներ և շշեր: Արագածի և Աբովյանի պեռլիտի հումքի բազայի վրա գործում են Բյուրեղավանի բյուրեղապակու, Արտաշատի ճենապակու գործարանները:

Փայտամշակման արդյունաբերություն: Մեծ է տնտեսության պահանջը փայտամշակման ճյուղի արտադրանքի նկատմամբ: Սակայն այդ պահանջը սեփական արտադրության հաշվին բավարարվում է մասամբ: Ճյուղի տեղական հումքային բազան թույլ է: Այդ պատճառով էլ **ճյուղին հատուկ տեխնոլոգիական շղթան մեր հանրապետությունում չրիվ չէ:** Առկա են միայն փայտանյութի մեխանիկական մշակման արտադրությունները: Ճյուղի համեմատաբար խոշոր ձեռնարկություններից են Իջևանի փայտամշակման կոմբինատը, Ալավերդու փայտասղոցարանը, Դիլիջանի մանրատախտակի գործարանը: Բացակայում են փայտաքիմիական և ցելյուլոզի-թղթի արտադրությունները:

Ներկայումս առաջատար ենթաճյուղը կահույքի արտադրությունն է, որը հիմնականում կենտրոնացված է սպառման վայրերին մոտ՝ Երևանում և այլ համեմատաբար մեծ քաղաքներում:

ՀՀ-ում բավականաչափ զարգացած է թանկարժեք քարերի (Նոր Հաճն) և ոսկերչական իրերի (Երևան) արտադրությունները: Թողարկած արտադրանքի մեծ մասը արտահանվում է զարգացած երկրներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք ՀՀ արդյունաբերության օժանդակ և տեղական նշանակության ճյուղերը: Ինչ դեր են դրանք կատարում հանրապետության տնտեսության մեջ:
2. Ուրվագծային քարտեզի վրա նշեք բնական շինանյութերի խոշոր հանքավայրերը և արտադրության կենտրոնները:
3. Բնութագրեք ՀՀ ապակու և հախճապակու-ճենապակու արդյունաբերությունը: Որո՞նք են դրա գլխավոր կենտրոնները:
4. Որո՞նք են ՀՀ փայտամշակման արդյունաբերության բնորոշ գծերը:

ԴԱՍ 40. ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղատնտեսությունը հազարամյակներ շարունակ եղել է Հայաստանի բնակչության հիմնական զբաղմունքն ու ապրուստի միջոցը: Հայերը հնուց ի վեր վարել են նստակյաց կյանք, զբաղվել են հողագործությամբ և անասնապահությամբ, կառուցել են ոռոգիչ ջրանցքներ:

ՀՀ գյուղատնտեսությունն իր զարգացման ընթացքում կտրուկ փոփոխություններ է կրել հաճախակի կրկնվող սոցիալ-տնտեսական ցնցումների պատճառով:

Մինչխորհրդային Հայաստանում ձևավորվել էր տիպիկ ագրարային տնտեսություն, որին բաժին էր ընկնում զբաղված բնակչության շուրջ 85%-ը: Հողի մեծ մասը պատկանում էր մանր սեփականատերերին: Ապրանքային բնույթ ուներ մի քանի մշակաբույսերի արտադրությունը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հողը պետականացվել է: Գյուղացիական մանր տնտեսությունների միավորման հիման վրա ձևավորվել են գյուղատնտեսական պետական (սովխոզ) և կոլեկտիվ տնտեսություններ (կոլխոզ): Գյուղատնտեսությունը տնտեսության մյուս ճյուղերի պես զարգանում էր սոցիալիստական ուղիով, և արդեն 1990 թ. հանրապետությունում կար սոցիալիստական տիպի 850 ձեռնարկություն՝ սովխոզներ, կոլտնտեսություններ և միջտնտեսային ձեռնարկություններ:

Գյուղացիական խոշոր տնտեսությունները մանր, փոշիացած տնտեսությունների համեմատությամբ նաև առավելություններ ունեն: Հեշտանում են ոռոգման միասնական համակարգի կառուցումն ու շահագործումը, գյուղատնտեսական արտադրության մեքենայացումը, քիմիացումը, գիտության նվաճումների կիրառումը: Սակայն խորհրդային ժամանակաշրջանում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման մեջ առկա էին որոշակի թերություններ: Արտադրողը, չլինելով իր արտադրանքի տերը, շահագրգռված չէր արտադրանքի ավելացման, ջրի, պարարտանյութերի և գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործման մեջ, սահմանափակ էր օգտվում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման վերոնշյալ առավելություններից:

1991 թ. ՀՀ անկախացումից հետո գյուղատնտեսության մեջ սոցիալ-տնտեսական նոր փոփոխություններ տեղի ունեցան: Հաստատվեց հողի և գյուղատնտեսական մյուս արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականություն: Լուծարվեցին սովխոզները և կոլտնտեսությունները, և հողը բաժանվեց գյուղացիական մասնավոր տնտեսությունների միջև: Դրանց թիվը այժմ շուրջ 340 հազ. է, իսկ գյուղատնտեսության մեջ զբաղված է տնտեսության տարբեր ոլորտներում զբաղվածների ընդհանուր թվի ավելի քան 40%-ը:


Այժմ գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում է



հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 18%-ը, իսկ սննդի արդյունաբերության հետ միասին՝ մոտ 25%-ը: Ներկայումս ցածր մրցունակություն ունեցող մանր գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսական ապրանքային արտադրության զարգացման հիմնական խոչընդոտներից են: Այն հաղթահարելու նպատակով պետական աջակցությամբ Արարատյան դաշտում, նախալեռնային ու հեռավոր սահմանամերձ շրջաններում ստեղծվում են մանր սեփականատերերի ներհամայնքային և միջհամայնքային գյուղացիական տնտեսությունների կամավոր միավորումներ՝ **կոոպերատիվներ**: Դրանց արտոնյալ պայմաններով տրվում են գյուղատնտեսական վարկեր, գյուղտեխնիկա, պարարտանյութեր և այլն:

ՀՀ-ը, չնայած հողային ռեսուրսների սահմանափակությանը, առանձնանում է **բազմաճյուղ** գյուղատնտեսությամբ: Դա նախ և առաջ պայմա-

« գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքն ըստ մարզերի (2012 թ.)



նավորված է մեր հանրապետության բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Այժմ գյուղատնտեսության մեջ հաշվվում է **մոտ երեք տասնյակ ճյուղ, արտադրություն: « բնակլիմայական պայմանները թույլ են տալիս մշակել շուրջ 100 մշակաբույս (աշխարհում մշակաբույսերի թիվը մոտ 1600 է):**

Անկախության տարիներին էական տեղաշարժեր են կատարվել « գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում: Գլխավոր տեղաշարժն այն է, որ փոխվել է գյուղատնտեսության հիմնական երկու ճյուղերի՝ **բուսաբուծության և անասնապահության հարաբերակցությունը:** Ավելի մեծացել է բուսաբուծության բաժինը (60%):

« գյուղատնտեսության մեջ իրենց նշանակությամբ առանձնանում են՝

ա) ճյուղերը, որոնք ունեն արտահանման նշանակություն և որոշում են հանրապետության արտադրական մասնագիտացումը: Դրանք են **խաղողագործությունը, պտղաբուծությունը, հարավային բանջարաբուծությունը և ծխախոտագործությունը:**

բ) ճյուղերը, որոնք ունեն տեղական նշանակություն: Դրանք են **հացահատիկի, կերաբույսերի և կարտոֆիլի մշակությունը, ինչպես նաև անասնապահությունը** (չնայած այս ճյուղերի արտադրանքի որոշ տեսակներ սահմանափակ քանակությամբ արտահանվում են, օրինակ՝ թռչնի միս, ձու, կարտոֆիլ):

Կետային տեղաբաշխում ունեցող արդյունաբերության և գծային տեղաբաշխում ունեցող տրանսպորտի համեմատ գյուղատնտեսական արտադրությունն ունի **գերազանցապես համատարած տեղաբաշխում**, զբաղեցնում է ընդարձակ տարածքներ և ավելի մեծ կախվածության մեջ է գտնվում բնական միջավայրից:

Գյուղատնտեսությունը անհամաչափ է տեղաբաշխված: « գյուղատնտեսական արտադրանքի ծավալի կեսից ավելին բաժին է ընկնում Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերին (տե՛ս գծագիրը):

« տարածքում առանձնացվում են դեռևս XX դարի առաջին կեսին



Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկն է

ձևավորված գյուղատնտեսական մասնագիտացման երեք գոտիներ (տես Գյուղատնտեսություն քարտեզը, էջ 138).

1. **ցածրադիր գոտի**, որը մասնագիտացել է ջերմասեր բանջարեղենի մշակության, խաղողագործության, պտղաբուծության և կաթնամսատու անասնաբուծության ուղղությամբ.

2. **նախալեռնային գոտի**. մասնագիտացել է գլխավորապես հացահատիկի, ցրտադիմացկուն բանջարեղենի, ինչպես նաև ծխախոտի մշակությամբ.

3. **լեռնային գոտի**. առանձնանում է հիմնականում արոտային անասնապահությամբ (խոշոր և մանր եղջերավոր անասուններ):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի փոփոխություններ է կրել գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը խորհրդային և հետխորհրդային տարիներին:
2. Գնահատե՛ք գյուղատնտեսության տեղն ու դերը ՀՀ տնտեսության մեջ:
3. Բացատրե՛ք ՀՀ գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական առանձնահատկությունները: Նշե՛ք այն ճյուղերը, որոնք ունեն արտահանման նշանակություն:
4. ՀՀ տարածքում ինչպիսի գյուղատնտեսական մասնագիտացման գոտիներ են առանձնացվում:

ԴԱՍ 41. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Այս կամ այն երկրի գյուղատնտեսության զարգացման հնարավորություններն առաջին հերթին պայմանավորված են **հողային ռեսուրսների զբաղեցրած տարածքով և որակով**: Հողերի որակը որոշվում է ըստ հողերի տիպերի, որոնք ձեզ հայտնի են նախորդ դասերից:

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի **70%-ը (2077 հազ. հա) գյուղատնտեսական նշանակության հողեր են**: Գյուղատնտեսական նշանակության հողերի 51%-ը արոտներ են, 22%-ը՝ վարելահողեր (տես դիագրամը, էջ 141): Այլ նշանակության հողերն են կառուցապատված տարածք-

ները, ճանապարհները, ջրային տարածքները, անտառները և այլն:

Մեր երկրում բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 0,63 հա (6300 մ²) գյուղատնտեսական նշանակության հողահանդակ, որից վարելահող՝ 0,14 հա (1400 մ²): Այս թվերն ապացուցում են, որ Հայաստանի Հանրապետությունը **սակավահող երկիր է:**


Մակերևույթի լեռնային ռելիեֆի պատճառով մեր երկրի մշակովի հողերի խոշոր հողակտորներն ընկած են միջլեռնային գոգավորությունների հատակային մասերում և մեղմաթեք (մինչև 15° թեքություն ունեցող) լեռնալանջերին (Արարատյան գոգավորության հատակային և Նախալեռնային հատված, Շիրակի դաշտ, Սևանի ավազան): Սակայն մշակովի տարածքի մեծ մասը փոքր՝ մինչև 1-3 հա մակերես ունեցող հողակտորներ են և հիմնականում տարածված են դարավանդավորված լեռնալանջերում:

ՀՀ գյուղատնտեսական հողաբարելավման տեսակները բազմազան են: Դրանց ընտրությունը կախված է հողերի տիպից, կլիմայի չորության աստիճանից, լեռնալանջերի թեքությունից:

Քիմիական մելիորացում: Ձեզ հայտնի է, որ Արարատյան դաշտի մերձարաքայան հատվածում տարածված են աղուտներն ու աղակալած հողերը: Գյուղատնտեսական նպատակով օգտագործելու համար դրանք «լվանում» են քիմիական նյութերով, որոնք լուծում են հողի մեջ եղած աղերը: Հողաբարելավման այդ տեսակը կոչվում է **քիմիական մելիորացում:** Այդ եղանակով արդեն յուրացվել են հազարավոր հեկտար աղուտներ:

Քարամաքրում: ՀՀ-ում հողաբարելավման լայնորեն տարածված տեսակ է դաշտերի մաքրումը **քարերից և հողի վերին քարացած շերտից:** Դա կատարվում է մեքենաներով և մեխանիզմներով: Այս ձևով յուրացվել են ընդարձակ հողատարածքներ՝ հատկապես Արագած լեռան արևմտյան և հարավային ստորոտներում: Դրանք նախկին **դռերն են:**

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքը (2012 թ.)



Արզնի-Շամիրամի ջրանցքը



Չորացում (ցամաքեցում): ՀՀ-ում կան նաև գերխոնավ, ճահճակալած հողեր: Դրանց մեկիորացումը կատարվում է **ցամաքեցման միջոցով**: Փորում են հատուկ խրամատներ՝ **ցամաքուրդներ**, որտեղ ներծծվում է ավելորդ ջուրը և հոսում-հեռանում դաշտից:

Հակաէրոզիոն միջոցառումներ: Հողաբարելավման աշխատանքներում կարևոր տեղ ունի **էրոզիայի (հողատարման) դեմ պայքարը**: Լեռնալանջերի մեծ թեքությունները նպաստում են էրոզիային, որն իսկական չարիք է մեր գյուղատնտեսության համար: Բոլոր վարելահողերի, ինչպես և արոտավայրերի 30%-ը թույլ և ուժեղ էրոզացված հողեր են:

Հակաէրոզիոն միջոցառումներից ամենատարածվածներն են **լանջերի հերկումը ոչ թե երկայնակի (վերից վար), այլ լայնակի ուղղությամբ, ճնապատումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը:**

Մեր բնակլիմայական պայմաններում հողաբարելավման գլխավոր տեսակը **արհեստական ոռոգումն է՝ իռիգացիան:**

Արհեստական ոռոգում: Արհեստական ոռոգումը տնտեսապես արդյունավետ է այն ոչ միայն ապահովում է բարձր և կայուն բերք, այլև հնարավորություն է տալիս մշակովի դարձնել նոր հողատարածքներ: Այժմ մեր երկրի ոռոգելի հողատարածքները **(286 հազ. հա) կազմում են մշակովի հողատարածությունների մոտ 64%-ը:** Արարատյան դաշտում, որը մեր երկրի գլխավոր շտեմարանն է, ամբողջ բերքը ստացվում է ոռոգվող հողերից: Ընդ որում՝ գյուղատնտեսական հողատարածքների 88%-ը ոռոգվում է մակերևութային, մնացածը՝ ստորերկրյա (արտեզյան) ջրերով:

Հայաստանը նույնպես արհեստական ոռոգման հնագույն երկրներից է: Հնագույն ոռոգիչ ջրանցքներ կառուցվել են դեռևս Ք.ա. II հազարամյակում, որոնցից մի քանիսը վերակառուցվելով ծառայում են իրենց նպատակին նաև այսօր: Ներկայումս գործող հնագույն ջրանցքներից են **Սարդարապատի, Դալմայի, Էջմիածնի և Աշտարակի ջրանցքները:**

Լանդշաֆտային գոտիներում տարբեր են մթնոլորտային տեղումների և գոլորշիացման չափերը, հետևաբար տարբեր է ոռոգման պահանջը: Օրինակ՝ Արարատյան դաշտում, Վայոց ձորի և Զանգեզուրի ցածրադիր հատվածներում առանց արհեստական ոռոգման հողագործությունն անհնար է **(բացարձակ ոռոգման գոտի):** Դրան հակառակ՝ ոռոգման անհրաժեշտություն չի զգացվում բարձրլեռնային գոտում՝ 2000-2200 մ բարձրությունից սկսած:

ՀՀ-ում գործում է ոռոգման միասնական համակարգ: Ստեղծվել են բազմաթիվ մեծ ու փոքր ջրատեխնիկական կառույցներ՝ **ջրամբարներ, մայր ջրանցքներ, ջրհան պոմպակայաններ, հզոր խողովակաշարեր:**

Ջրամբարները կառուցվում են ձմեռային և գարնանային ջրերը կուտակելու և ոռոգման սեզոնին օգտագործելու համար: Դրանց միջոցով կարգավորվում է նաև գետերի հոսքը:

ՀՀ ոռոգման համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում Արզնի-Շամիրամի (Հրազդան), Արմավիրի (Արաքս), Թալինի (Ախուրյան), Շիրակի (Ախուրյան), Շիրակամուտի (Փամբակ), Որոտանի (Որոտան) մայր ջրանցքները (տես քարտեզը, էջ 142):

ՀՀ-ում ամենախոշոր ջրային կարգավորիչը Սևանա լիճն է, որից Սևան-Հրազդան ոռոգչաէներգետիկ համակարգի միջոցով սնվում են Արարատյան դաշտի մի շարք մայր ջրանցքներ: Ամենախոշոր արհեստական ջրամբարը Ախուրյանինն է, որի մի կեսը պատկանում է մեր հանրապետությանը, իսկ մյուս կեսը տնօրինում է Թուրքիան:

Արարատյան դաշտում, ինչպես նաև Դեբեդ, Արփա և Որոտան գետերի վրա կառուցված են ջրհան կայաններ (Մխչյան, Արևշատ, Ռանչպար և այլն), որոնք ջուրը պոմպերի միջոցով ցածր նիշերից մղում են ավելի բարձր դիրքում գտնվող ջրանցքներին, ջրանցույցներին: Դրանք էլ ջուրը ինքնահոսով հասցնում են դաշտերին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսին է ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքը: Որտեղ են տարածվում գյուղատնտեսական խոշոր հողատարածությունները և ինչո՞ւ:
2. Որո՞նք են Հայաստանում հողերի մելիորացիայի հիմնական տեսակները:
3. Ինչո՞ւ է ոռոգման նշանակությունը նվազում ըստ բնական վերընթաց գոտիների:
4. Ուրվագծային քարտեզի վրա նշե՞ք ՀՀ խոշոր ջրամբարները և ոռոգիչ ջրանցքները:

ԴԱՍ 42. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բուսաբուծությունը ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղն է: Այժմ տալիս է տնտեսության այս ճյուղի համախառն արտադրանքի մոտ 60%-ը:

Բուսաբուծության հիմնական արտադրամիջոցը մշակովի հողերն են, որոնք հայտնի են **ակտիվ օգտագործվող գյուղատնտեսական հանդակներ** անունով:

Մշակովի հողերի մեծ մասն օգտագործվում է որպես վարելահող (450 հազ. հա), որտեղ կատարվում է վարուցանք, մշակվում են բույսեր: Դա բուսաբուծության **դաշտավարության** ճյուղն է:

Որտեղ են տեղաբաշխված ՀՀ ամենարնդարձակ մշակովի հողերը:

Դաշտավարության վերին սահմանը մեր հանրապետությունում հասնում է շուրջ 2200 մ բացարձակ բարձրությունները: Մշակովի բույսերի շարքում ամենամեծ բաժինն ունեն **հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերը**, որոնք կազմում են **ցանքատարածությունների շուրջ 55%-ը: Երկրորդ տեղում են կերային մշակաբույսերը՝ շուրջ 23%-ը**, որոնք բազմամյա ու միամյա խոտաբույսեր, անասնակերի եգիպտացորեն, արմատապտուղներ են: **Մինչև 90-ական թվականները կերային մշակաբույսերը եղել են առաջին տեղում:**

ՀՀ-ում հացահատիկ մշակում են գրեթե ամենուրեք՝ 500-ից մինչև 2200 մ բարձրություններում: Դրանց մշակության համար առավել բարենպաստ պայմաններ կան Շիրակի դաշտում և Տեղի (Գորիսի) սարավանդում:

Հացահատիկի ցանքատարածություններում գերակշռողն **աշնանացան ցորենն է**, երկրորդ տեղում գարնանացան գարին է: Մշակում են նաև **եգիպտացորեն, լոբի, ոլոռ, վարսակ, հաճար և այլն:** ՀՀ-ում 2012 թ. արտադրվել է ավելի քան 450 հազ. տ հացահատիկ:

ՀՀ-ն ագրոկլիմայական պայմաններում բարձր բերքատվություն և եկամտաբերություն ունեն **տեխնիկական և բանջարաբուստանային մշակաբույսերը:** Բանջարաբուստանային մշակաբույսերի տարածման հիմնական շրջանը Արարատյան դաշտն է: Այստեղ բարձր բերք են տալիս

հատկապես ձմերուկն ու սեխը և ջերմասեր բանջարեղենը՝ լոլիկը, տաքդեղը և սմբուկը: Սրանք մշակվում են նաև հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան ցածրադիր մասերում: Հողագործական առումով առանձնանում է 1500-2000 մ բարձրության գոտին, որը մասնագիտանում է պակաս ջերմասեր ու ցրտադիմացկուն բանջարաբուստանային մշակաբույսերի՝ կաղամբի, գազարի և բազուկի մշակման գծով:

Կարևորագույն պարենային մշակաբույս է **կարտոֆիլը**, որն աճում է բոլոր բնական գոտիներում:

ՀՀ-ում առավել հայտնի կարտոֆիլացան շրջաններն են Սևանի ավազանը, Շիրակի և Լոռու դաշտերը: Արարատյան դաշտը մասնագիտացած է վաղահաս կարտոֆիլի մշակության գծով: Կարտոֆիլի համախառն բերքն անցնում է 600 հազ. տ-ից, որի մի մասն արտահանվում է Վրաստան:


Անցած տասնամյակներին մեծ փոփոխություն է կրել **տեխնիկական մշակաբույսերի** տեսականին: Վերջին տարիներին թռիչքային աճ է գրանցել ծխախոտագործությունը, որի համախառն բերքը 2007 թ. համեմատ աճել է 7 անգամ՝ կազմելով 1,8 հազ. տ (2012 թ.): Շիրակի դաշտի ագրոկլիմայական պայմանները նպաստավոր են շաքարի ճակնդեղի, իսկ Արարատյան դաշտինը՝ եթերայուղատու խորդենու մշակության համար: Ներկայումս փորձեր են արվում վերականգնելու նշված մշակաբույսերի արտադրությունը:

Այգեգործությունը: Հանրապետության մշակովի հողերից բազմամյա տնկարկներ են պտուղների, հատապտուղների և խաղողի այգիները, որոնց ցանքերը կազմում են 56,7 հազ. հա (2012 թ.): Այգեգործությունն ունի երկու ենթաճյուղ՝ խաղողագործություն և պտղաբուծություն:


Այգեգործությունը հանրապետության գյուղատնտեսական մասնագիտացման գլխավոր ուղղություններից է: Այն բնակչությանն ապահովում է անհրաժեշտ թարմ և պահածոյացված սննդամթերքով, իսկ գինու-կոնյակի ու պահածոների արդյունաբերությանը՝ հումքով: Հանրապետությունում 2012 թ. արտադրվել է ավելի քան 240 հազ. տ խաղող և 330 հազ. տ պտուղ:

ՀՀ-ում խաղողագործության վերին սահմանը հասնում է մոտ 1400-1500 մ բացարձակ բարձրությունները: Հայաստանում հազարամյակների ընթացքում ժողովրդական սելեկցիայի շնորհիվ ստեղծվել են խաղողի բազմազան տեսակներ: Ներկայումս լայն տարածում ունեցող տեղական տեսակներն

ՀՀ ցանքարարածությունների կառուցվածքն ըստ մշակաբույսերի



Բուսաբուծության արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը (2012 թ.)



են Ոսկեհատը, Գառան դմակը, Սև Արենին, Կարմրահյութը, Նռնենին և այլն: Ներմուծված տեսակ է Ռկացիթելին:

Հանրապետությունում ձևավորվել է խաղողագործական չորս շրջան: Առաջին տեղում Արարատյան դաշտն է՝ նախալեռնային գոտու հետ միասին: Երկրորդը հյուսիս-արևելքն է, երրորդը՝ Արփայի հովիտը և չորրորդը՝ Զանգեզուրի հարավը (Մեղրին):

Պտղաբուծության համախառն բերքի վրա մեծ ազդեցություն են թողնում մեր հանրապետության փոփոխական եղանակային պայմանները, հատկապես վաղ գարնանային և ուշ աշնանային ցրտահարությունները: Պտղի և հատապտղի պահանջարկը ներքին շուկայում վերջին տարիներին գրանցել է դանդաղ, բայց կայուն աճի միտումներ, ինչի շնորհիվ էլ բազմամյա տնկարկների տարածքն աննշան չափով ընդլայնվել է և 2012 թ. կազմել է 39,2 հազ. հա:



Հացահատիկային հիմնական մշակաբույսը աշնանացան ցորենն է



Առավել տարածված տեխնիկական մշակաբույսը ծխախոտն է

Պտղատու տնկարկների կառուցվածքում գերակշռում են **հնդավորները** (խնձոր, տանձ և սերկևիլ): Երկրորդ տեղում են **կորիզավորները** (ծիրան, դեղձ, սալոր, բալ, կեռաս): Կան նաև **ընկուզապտուղներ** (ընկուզ, նուշ, պիստակ), ինչպես նաև **մերձարևադարձային պտուղներ** (թուզ, նուռ):

Պտղաբուծությամբ զբաղվում են հանրապետության գրեթե բոլոր շրջաններում՝ ընդհուպ մինչև 2100 մ բացարձակ բարձրությունները: Այունիքի և Տավուշի մարզերի չոր մերձարևադարձային կլիմայական պայմաններում մշակում են մերձարևադարձային պտուղներ: Արարատյան դաշտում, Վայոց ձորի, Այունիքի, Լոռու և Տավուշի մարզերի ցածրադիր գոտիներում և միջին բարձրություններում (մինչև 1400-1500 մ) մշակում են կորիզավորներ և ընկուզապտուղներ: Բարձրադիր գոտիներում (1500-2100 մ) հիմնականում մշակում են հնդավորներ (խնձորենի, տանձենի):

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է բուսաբուծության ճյուղի նշանակությունը:
2. Ինչպիսի՞ն է ՀՀ ցանքատարածությունների կառուցվածքը: Ի՞նչ փոփոխություններ է այն կրել վերջին տասնամյակներում:
3. Ձեր կարծիքով՝ դաշտավարության ո՞ր ճյուղերն են ՀՀ-ի համար հեռանկարային: Փորձե՞ք հիմնավորել:
4. Բնութագրե՞ք հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի տարածման առանձնահատկությունները ՀՀ-ում:
5. Ո՞րն է այգեգործության տեղը ՀՀ գյուղատնտեսության մեջ: Որո՞նք են այս ճյուղի կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները:

ԴԱՍ 43. ԱՆԱՍՆԱԴԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Անասնապահությունը արտադրական առումով անասնակեր ծառայող բուսական մթերքների «վերամշակումն» է մարդու համար ավելի արժեքավոր մթերքների՝ կաթի, մսի, բրդի, մորթու, կաշվի:

Անասնապահության կերային բազան: Անասնապահության զարգացման հնարավորությունները պայմանավորված են նախ և առաջ դրա կերային բազայով: Աշխարհի պետությունների մեծ մասում, ինչպես և Հայաստանում, տարվա տաք սեզոնին անասունները սնվում են բնական արոտային թարմ խոտով, իսկ ցուրտ սեզոնին՝ նախօրոք կուտակված մսուրային կերով: Մեր երկրում արոտային կերը բավարար է, բայց անբավարար է մսուրային կերը:

Մսուրային կերի խնդիրը լուծելու համար օգտագործում են բնական խոտհարքները, կերային մշակաբույսերը (բազմամյա ու միամյա խոտաբույսեր, անասնակերի եգիպտացորեն, կերային արմատապտուղներ), ինչպես նաև խտացված և համակցված կերը, որն արտադրվում է արդյունաբերական եղանակով:

Մեր լեռնային երկրի համար բնորոշ է արոտային անասնապահության

վերընթաց գոտիական համակարգը. ցածրադիր գոտու տնտեսություններն անառվա ամիսներին կենդանիներին տանում են բարձրադիր մերձալայան ու ալպյան գոտիներ, որտեղ և կազմակերպում են արոտը, կաթի ստացումն ու մշակումը:

ՀՀ համարյա բոլոր տարածաշրջաններում արոտավայրերը ծանրաբեռնված են 50-70%-ով: Միաժամանակ նկատելի է, որ անասունների գրեթե չկառավարվող արոտը հանգեցրել է առանձին արոտավայրերի գերբեռնվածության և գերարածեցման:

Անասնապահության ճյուղային կառուցվածքը: Անասնապահության ճյուղային կառուցվածքը ձևավորվում է ոչ միայն բնական պայմանների, այլև բնակչության պահանջմունքների և տնտեսական պայմանների ազդեցությամբ:


Անասնապահության ճյուղային կառուցվածքը որոշվում է յուրաքանչյուր ճյուղին պատկանող անասունների գլխաքանակով կամ արտադրվող մթերքի ծավալով: Ավելի տարածված է երկրորդ ցուցանիշը:

Մեր հանրապետությունում անասնապահության համախառն արտադրանքի մոտ 70%-ը բաժին է ընկնում խոշոր եղջերավոր անասնապահությանը (տավարաբուծությանը), երկրորդ տեղում է ոչխարաբուծությունը (մոտավորապես 12%):

Խոշոր եղջերավոր անասնաբուծության տեղաբաշխումը, ի տարբերություն անասնապահության մյուս ճյուղերի, ավելի համաչափ է: Այնուհանդերձ, որոշ շրջաններ առանձնանում են թե՛ անասունների գլխաքանակով և թե՛ բարձր մթերատվությամբ (Արարատյան դաշտ, Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր):

Վերջին տարիներին անասնապահության ոլորտում իրականացված արմատական բարեփոխումների շնորհիվ հնարավոր է դարձել հատկապես

Անասնագլխաքանակը (2003, 2013 թթ.)



խոշոր եղջերավոր կենդանիների պահելու ավանդական պայմանները փոխարինել ժամանակակից տեխնոլոգիաներով, իսկ ցածր մթերատու կենդանիների փոխարեն բուծել մեր երկրի բնակլիմայական պայմաններին առավել հարմարված **համաշխարհային լավագույն ցեղերի բարձր մթերատու կենդանիներ**: Այդ նպատակով եվրոպական երկրներից ներկրվել են բարձր մթերատվությամբ և ամուր կազմվածքով կաթնատու և կաթնամսատու (հիմնականում սիմենթալ, շվից, հոլշտին ցեղատեսակների) տոհմային երինջներ:

Արարատյան դաշտում բնակչության մեծ խտությունը, մայրաքաղաքին մոտ լինելու հանգամանքը, կերային մշակաբույսերի համեմատաբար ընդարձակ տարածքները և կաթի վերամշակման ձեռնարկությունների խիտ ցանցը հնարավոր են դարձնում բացառապես **կաթնային տավարաբուծության** ուղղությամբ մասնագիտացումը:

Նախալեռնային գոտին մասնագիտանում է **կաթնամսատու տավարաբուծության** ուղղությամբ: Դրան նպաստում են նաև տավարի ներմուծված նոր ցեղերը և տեղական «կովկասյան գորշ» ցեղը: **Լեռնային գոտին** մասնագիտանում է **մսակաթնատու և մսատու տավարաբուծությամբ**, որը պայմանավորված է հարուստ բուսածածկ ունեցող ալպյան մարգագետինների առկայությամբ:

Ոչխարաբուծության զարգացման համար մեր երկրի բնական պայմաններն ընդհանուր առմամբ բարենպաստ են: Չնայած դրան՝ ոչխարների և այծերի գլխաքանակը նախորդ տասնամյակների համեմատ աստիճանաբար կրճատվել է և վերջին տարիներին կազմում է շուրջ 600-700 հազ. (առավելագույնը եղել է XX դարի 70-ական թվականներին՝ մոտ 2 մլն): Տարբեր ցեղերի ոչխարներ տալիս են տարբեր քանակի բուրդ, միս և կաթ: Կախված այն բանից, թե դրանցից որն է շատ, որոշվում է ոչխարաբուծության ուղղությունը՝ **մասնագիտացումը**: Մեզանում տիրապետող է **մսակաթնաբրդատու ուղղությունը**: Բուծում են բալբաս, արագածյան և այլ ցեղերի ոչխարներ:

Ոչխարաբուծությունը նույնպես տարածված է ամենուրեք: Սակայն դրա նշանակությունն ավելի մեծ է լեռնային ու նախալեռնային շրջաններում: Ոչխարների



Շվից ցեղաբուծակի կովեր



Ոչխարաբուծությունը բարձրլեռնային շրջանների անասնապահության առաջատար ճյուղն է

և այծերի գլխաքանակով առաջատար տեղ են գրավում Գեղարքունիքի, Արագածոտնի, Սյունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերը:

Թռչնաբուծությունը վերջին տարիներին ամենաարագ աճող ճյուղն է: Այժմ այն ոչ միայն լիովին բավարարում է թռչնի մսի և ձվի ներքին շուկայի պահանջարկը, այլև արտադրանքի մի մասն արտահանվում է: Գործում են խոշոր թռչնաբուծական ֆաբրիկաներ մերձերևանյան գոտում (Լուսակերտ, Արզնի), ինչպես նաև Գյումրիում և Կապանում:

Խոզաբուծությունն աչքի է ընկնում մսի արտադրությունն ավելացնելու լայն հնարավորություններով, քանի որ մյուս կենդանիների համեմատ խոզերի վերարտադրության բնական ցիկլն ավելի կարճ է: Հակառակ վերջերս հաճախակի գրանցվող աֆրիկյան ժանտախտի դեպքերին, ինչը խոզերի գլխաքանակի զանգվածային անկման պատճառ է դարձել, այնուամենայնիվ, դրանց ընդհանուր գլխաքանակի դանդաղ, կայուն աճ է նկատվում: Չնայած դրան, խոզերի գլխաքանակը XX դարի 80-ական թվականների համեմատ դեռևս երեք անգամ պակաս է: Սովորաբար խոզաբուծությունը զարգանում է հացահատիկազգիների մշակության շրջաններում և սննդարդյունաբերության ավելցուկների հիման վրա: Խոզաբուծության զարգացման առաջատար շրջաններ են Երևանին հարակից մարզերը և բնական կերով հարուստ անտառաշատ Տավուշի մարզը:

Անասնապահության ճյուղերից ՀՀ-ում առանձնահատուկ նշանակություն ունի **մեղվաբուծությունը**: Բացի բուն մեղրի արտադրությունից՝ Հայաստանը լավ հեռանկարներ ունի նաև այլ մեղվամթերքների արտադրման ոլորտում, քանի որ նպաստավոր պայմաններ կան մեղվակաթ, ծաղկափոշի, ինչպես նաև ակնամոմ (պրոպոլիս) ստանալու համար: Վերջինս մեծ կիրառություն ունի դեղարտադրության մեջ:



Ձկնաբուծական արհեստական լճակ

Լայն իմաստով անասնապահության ճյուղ է համարվում նաև **ձկնաբուծությունը**: Նախկինում ձկան որս կատարվում էր միայն Սևանա լճում, որի ձկնային պաշարները սպառման վտանգի տակ են: Այժմ ձկնաբուծության ծավալները հիմնականում աճում են հանրապետության մի քանի փոքր լճերում, գետերի հունի մերձակա արհեստական ջրավազաններում, ջրամբարներում և հատկապես Արարատյան դաշտի աղակալած

հողերում ստեղծված **արհեստական լճակներում**: Վերջին տարիներին այս ջրավազաններում բուծված ձկան մի մասն արտահանվում է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրե՞ք ՀՀ անասնապահության կերային բազան: Ինչպիսի՞ տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրներ են առնչվում դրան:
2. Որո՞նք են ՀՀ խոշոր եղջերավոր անասնաբուծության զարգացման ու տեղաբաշխման առանձնահատկությունները:
3. Ոչխարաբուծության դիր ուղղությունն է զարգացած ՀՀ-ում և ինչո՞ւ:
4. Որո՞նք են ՀՀ խոզաբուծության տեղաբաշխման բնորոշ գծերը:

ԴԱՍ 44. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ: ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Սննդի արդյունաբերությունը շարունակում է գյուղատնտեսական արտադրության տեխնոլոգիական շղթան՝ գյուղատնտեսական մթերքները ենթարկում է արդյունաբերական վերամշակման և առաքում սպառողին: Գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը համատեղ կազմում են ագրոարդյունաբերական համալիր:

ՀՀ սննդի արդյունաբերությունը միավորում է հարյուրավոր խոշոր, միջին և մանր ձեռնարկություններ, որոնց բաժինն արդյունաբերության համախառն արտադրանքում կազմում է շուրջ 34%: Ճյուղի արտադրանքի 2/3-ը բաժին է ընկնում սննդամթերքի, իսկ մնացած մասը՝ խմիչքների և ծխախոտի արտադրությանը:

ՀՀ-ում սննդի արդյունաբերության հիմնական ճյուղերը զարգանում են տեղական հումքային բազայի վրա:

Մեր երկրում արտահանման նշանակություն ունեն գինու-կոնյակի, մրգի ու բանջարեղենի պահածոների և հանքային ջրերի արտադրությունները, որոնք հանդես են գալիս որպես տվյալ տարածքի մասնագիտացման ճյուղեր:

Գինու-կոնյակի արտադրանքի ծավալը մեծ չէ, բայց մեծ համբավ է ձեռք բերել առաջին հերթին արտադրանքի բարձր որակի շնորհիվ:

Գինեգործությունը որպես արդյունաբերության ճյուղ Հայաստանում հիմնադրվել է XIX դարի երկրորդ կեսին: Գինու և օղու գործարաններ են հիմնել հայազգի գործարարները Երևանում և կից շրջաններում: Հայտնի էր հատկապես Ն. Թաիրովի՝ 1881 թ. Երևանում կառուցած գործարանը, որի հիմքի վրա ձևավորվեց գինու-կոնյակի ներկայիս խոշոր ձեռնարկություններից «Նոյ» ընկերությունը:



Երևանի կոնյակի գործարանը

XIX դարի վերջին Ն. Թաիրովի գործարանը գնեց «Շուստով և որդիներ» մոսկովյան ֆիրման, որն էլ կազմակերպեց կոնյակի արտադրություն և կառուցեց նոր գործարաններ:

Ներկայումս հանրապետության գինու-կոնյակի արդյունաբերությունը միավորում է գինենյութի, օղու և կոնյակի (բրենդի) արտադրության մի քանի տասնյակ ձեռնարկություններ: Դրանց արտադրանքի տեսականին մեծ է՝ ավելի քան 60 անուն: Հայտնի են տարբեր ապրանքանիշի կոնյակները, սովորական և թնդեցված գինիները, շամպայն գինին, օղու տարբեր տեսակները: **Արտադրվող գինիների ու կոնյակների մեծ մասն արտահանվում է շուրջ 25 երկիր:**

Գինու-կոնյակի արդյունաբերությունը **տեղաբաշխված է խաղողագործական շրջաններում:** Խոշոր գործարաններ կան **Երևանում, Արմավիրում, Վաղարշապատում, Արտաշատում, Աշտարակում և Վեդիում:** Ավելի փոքր են հյուսիսարևելյան և հարավարևելյան խաղողագործական շրջանների (Բերդ, Իջևան, Մեղրի) գործարանները:

Հայաստանն աշխարհին հայտնի է նաև որպես գարեջրի արտադրության հնագույն երկիր: Այդ մասին վկայություններ է թողել հույն պատմիչ Քսենոփոնը (Ք.ա. V դար): Ներկայումս գարեջրի արտադրության խոշոր ձեռնարկություններ կան Երևանում, Գյումրիում և Աբովյանում, որոնք արտադրում են «Կիլիկիա», «Էրեբունի», «Գյումրի» և «Կոտայք» ապրանքանիշով գարեջուր: Դրանք բավարարում են ոչ միայն տեղական պահանջարկը, այլ նաև արտահանվում են:

Սննդի արդյունաբերության կարևոր մասնագիտացման ճյուղ է **մրգի ու բանջարեղենի պահածոների արդյունաբերությունը:** Այն ձևավորվել է 1920 թ. հետո (մինչ այդ մրգի պահածոների մի փոքրիկ արտադրություն եղել է Մեղրիում): Կառուցվել են խոշոր ժամանակակից գործարաններ: Դրանք նույնպես տեղաբաշխված են հումքի՝ մրգերի ու բանջարեղենի մշակության շրջաններում: Այդ պատճառով էլ **պահածոյագործության տեղաբաշխումը համընկնում է գինեգործության տեղաբաշխմանը:**

Պահածոների արտադրությունը ՀՀ-ում բարձր ապրանքայնություն ունեցող ճյուղ է, որի արտադրանքի շուրջ 2/3-ը արտահանվում է: Այս ճյուղի արտադրանքի **տեսականին բազմազան է:** Արտադրվում են ծիրանի, դեղձի, սալորի, խնձորի, այլ քաղցրահամ մրգերի հյութեր ու մուրաբաներ, լոլիկի մածուկ, սմբուկի, վարունգի և այլ բանջարեղենի պահածոներ:



Պահածոների արտադրության տեղամաս

ՀՀ-ում առանձնահատուկ տեղ ունի **հանքային ջրերի արտադրությունը:** Ի տարբերություն սննդարդյունաբերության մյուս ճյուղերի՝

սա հումքը ստանում է ոչ թե գյուղատնտեսությունից, այլ Երկրի ընդերքից: Մեր հանքային աղբյուրները բազմաթիվ են: Ներկայումս շահագործվում են մի քանի հանքային աղբյուրներ: Լցարկվում է հանքային ջրերի տարեկան պաշարների միայն 2-3%-ը: Դա նշանակում է, որ այս ճյուղի զարգացման համար հումքային պաշարները որևէ սահմանափակում չեն դնում: Հատկապես հայտնի են «Ջերմուկ», «Արզնի», «Բջնի», «Դիլիջան» և «Հանքավան» հանքային ջրերի գործարանները:



Շշալցման հոսքային գիծ

Մեր հանրապետության մենդի արդյունաբերության տեղական նշանակության կարևոր ճյուղ է **պանրագործությունը**: Դրա արտադրանքի մեծ մասը տեղական (սպիտակ) պանիրներն են՝ «Չանախ», «Լոռի», «Եղեգնաձոր», ինչպես նաև «Շվեյցարական» կոչվող պանիրը: **Պանրագործության համար բնորոշ է ցրված տեղաբաշխումը**:

Կաթնամթերքի արտադրությամբ հայտնի ձեռնարկությունների մեծ մասը նույնպես տեղաբաշխված է Երևանում և մերձակա՝ Կոտայքի ու Արագածոտնի մարզերի բնակավայրերում:

Ալրաղաց և մսի արտադրությունները, որոնք աշխատում են տեղական սպառման համար, նախկինի համեմատ ընդլայնել են տեղաբաշխման աշխարհագրությունը, ավելացրել արտադրանքի տեսականին:

Ալրաղաց խոշոր ձեռնարկություններ կան Երևանում, Բաղրամյանում և Սևանում: Մսամթերքի արտադրության հիմնական ձեռնարկությունները գտնվում են Երևանում:

Երևանում և Մասիսում են գտնվում **ծխախոտի արտադրության** ձեռնարկությունները, որոնք աշխատում են տեղական և ներմուծվող հումքով: Թողարկված արտադրանքի մի մասն արտահանվում է:

Շաքարի արտադրությունը նախկինում եղել է Սպիտակ քաղաքում:

1988 թ. երկրաշարժից այն լիովին ավերվեց և դադարեց գործել: Այժմ նոր գործարան է կառուցվել Ախուրյան գյուղում: Այն կարող է աշխատել Շիրակի դաշտում բարձր բերքատվություն ապահովող շաքարի ճակնդեղի հումքով:

Հրուշակեղենի արտադրությամբ զբաղվում են մեր հանրապետության տարբեր բնակավայրերում ցրված բազմաթիվ փոքր և միջին ձեռնար-



Ախուրյանի շաքարի գործարանը

կույություններ: Հրուշակեղենի արտադրության հսկան Երևանում գտնվող «Գրանդ Քենդի» ընկերությունն է, որի արտադրատեսակների թիվն անցնում է 300-ից:

Կերակրի աղի արտադրությունն իրականացվում է Ավանի աղահանքի շահագործումով:

Ջովացուցիչ ջրերի և լիմոնաղի տարբեր տեսակների արտադրությունը առավելապես տեղաբաշխված է Երևանում և մերձակա բնակավայրերում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է ագրոարդյունաբերական համալիրը:
2. Որո՞նք են սննդի արդյունաբերության տեղաբաշխման առանձնահատկությունները:
3. Որո՞նք են ՀՀ սննդի արդյունաբերության մասնագիտացման ճյուղերը:
4. Ինչպիսի՞ն է գինու-կոնյակի արտադրության տեղաբաշխումը:
5. Գնահատե՞ք ՀՀ պահածոների արտադրության զարգացման պայմանները և մակարդակը:
6. Քննարկե՞ք՝ որ բնական և տնտեսական գործոններն են սահմանափակում մեր հանրապետության սննդի արդյունաբերության զարգացումը:


ԴԱՍ 45. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում արտադրական կապերը արդյունաբերության և գյուղատնտեսության միջև բավականին սերտ են, և դրանք անընդհատ զարգանում ու ավելի բազմազան են դառնում:

Օգտվելով դասագրքի նախորդ դասերի նյութերից՝ կազմե՞ք ՀՀ գյուղատնտեսության և թեթև ու սննդի արդյունաբերության միջև ձևավորված արտադրական կապերի գծապատկերը:

- ◆ Սկզբում աշխատանքային տեսքում արտագծե՞ք ստորև բերված գծապատկերը:
- ◆ Գծապատկերի ձախ մասի վանդակներում գրե՞ք գյուղատնտեսության արտադրատեսակների (հումքի) անվանումները, իսկ աջ մասի վանդակներում գրե՞ք դրանք վերամշակող թեթև, սննդի և արդյունաբերության այլ ճյուղերն ու ենթաճյուղերը (արտադրությունները): Ապա, ինչպես ցույց է տրված օրինակում, սլաքներով միացրե՞ք համապատասխան վանդակները (տես խաղողի, բրդի և թեթև ու սննդի արդյունաբերության ճյուղերի արտադրական կապերի տրված օրինակը):
- ◆ Գյուղատնտեսական արտադրատեսակների (մթերքների) և այն վերամշակող արդյունաբերության ճյուղերի գծապատկերի տրված վանդակների քանակը կարող եք ըստ անհրաժեշտության ավելացնել:



ԴԱՍ 46. ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տրանսպորտը ամեն մի տարածքի **ենթակառուցվածքի՝** կարևորագույն ճյուղն է:

Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտի տարբեր տեսակների զարգացումը պայմանավորված է **աշխարհագրական դիրքի և լեռնային մակերևույթի** առանձնահատկություններով:

ՀՀ-ում առկա են **երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային, էլեկտրահաղորդային (էլեկտրոնային)** տրանսպորտի ճյուղերը: Բացակայում է միայն ջրային տրանսպորտը: Վերջին գրեթե 25 տարիների ընթացքում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման բացասական հետևանքները մեղմելու նպատակով վերակառուցվել, իսկ առանձին հատվածներում՝ կառուցվել են նոր ռազմավարական նշանակության՝ Հայաստանը Վրաստանի և Իրանի հետ կապող միջպետական ավտոմոբիլային մայրուղիներ:

Ավտոճանապարհների և երկաթուղիների միասնական ցանց Հայաստանում ձևավորվել է XX դարի սկզբին: Այն լրացվել է խողովակաշարերով ու բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերով 1960-ական թվականներին:

¹ Ենթակառուցվածք է կոչվում տվյալ տարածքում գտնվող այն տարրերի ամբողջությունը (ճանապարհներ, խողովակաշարեր, էլեկտրահաղորդման գծեր, օժանդակ շինություններ, կրթական, մշակութային, առողջապահական և այլ կառույցներ), որոնք անհրաժեշտ են տնտեսությունը կազմակերպելու և բնակչությանը սպասարկելու համար:



Ձեզ հայտնի է, որ որևէ երկրի տրանսպորտի զարգացման մակարդակը ցույց տվող կարևոր ցուցանիշ է ճանապարհային **ցանցի խտությունը**:

Ինչպե՞ս է որոշվում ճանապարհային ցանցի խտության ցուցանիշը:

Ներկայումս հանրապետության ամբողջ տարածքի **ավտոճանապարհային ցանցի** միջին խտությունը հավասար է մոտավորապես 35 կմ/100կմ²: Սակայն ՀՀ-ի տարբեր մասերում այդ ցուցանիշը խիստ տարբեր է: Եթե, օրինակ, բարձրլեռնային շատ շրջաններով (2500 մ-ից բարձր) չի անցնում

ոչ մի ճանապարհ, խողովակաշար կամ էլեկտրահաղորդման գիծ, ապա ցածրադիր, տնտեսապես յուրացված շրջաններում (Արարատյան դաշտ), հատկապես քաղաքային կենտրոններին հարող տարածքներում այս ցուցանիշը տասնապատիկ, հարյուրապատիկ անգամ մեծ է երկրի միջին ցուցանիշից:

Տրանսպորտի զարգացման մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներ են բեռնափոխադրումների ծավալը, փոխադրված ուղևորների թիվը, **բեռնաշրջանառությունն ու ուղևորաշրջանառությունը**:

ՀՀ-ում, ինչպես և ամբողջ աշխարհում, տրանսպորտը զարգացել է արագ տեմպերով: Սակայն, ի տարբերություն ընդարձակ տարածություններ ունեցող երկրների, ՀՀ-ում այդ աճը տեղի է ունեցել առավելապես փոխադրվող բեռների ծավալների և ուղևորների թվի, բայց ոչ հեռավորությունների աճի հաշվին: Փոխադրումների միջին հեռավորությունը մնացել է անփոփոխ կամ շատ դանդաղ է աճել:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շարունակվող տրանսպորտային շրջափակման պայմաններում Հայաստան ներմուծվող և արտահանվող ապրանքների փոխադրման հեռավորությունը մեծացել է: Փոխադրման միջին հեռավորության մեծացման շնորհիվ ՀՀ բեռնաշրջանառության կառուցվածքում առաջատար է խողովակաշարային և երկաթուղային տրանսպորտը: Ընդ որում՝ խողովակաշարային տրանսպորտի բեռնաշրջանառությունը մոտ 7 անգամ, իսկ երկաթուղային տրանսպորտինը՝ ավելի քան 3 անգամ գերազանցում է ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությանը (տե՛ս գծագիրը, էջ 159):

Հայաստանը միջպետական սերտ տրանսպորտային-տնտեսական կապեր ունի ինչպես մեր անմիջական հարևաններ Վրաստանի և Իրանի, այնպես էլ այդ երկրների տարածքով անցնող տրանսպորտային ուղիներով՝ Ռուսաստանի, Եվրոպական և Հարավարևմտյան Ասիայի մի շարք երկրների հետ:

Հանրապետության ներսում կատարվող տրանսպորտային փոխադրումների կազմում գերիշխում են լայն սպառման ապրանքները (պարենամթերք, կենցաղային ու առօրյա օգտագործման իրեր) և հանքային շինանյութերը (որմնաքար, խիճ, ավազ, պեռլիտ, կրաքար, պեմզա և ցեմենտ):

Հարցեր և առաջադրանքներ

1. Խնչ գործոններ են ազդում ՀՀ-ում տրանսպորտի զարգացման վրա: Ինչպիսի՞ տրանսպորտային հնարավորություններ կբացվեն ՀՀ-ի առջև, եթե այն ունենար ծովային սահման և անմիջական ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:
2. Ինչպե՞ս են փոփոխվում ճանապարհային ցանցի միջին խտության և բեռնաշրջանառության (ուղևորաշրջանառության) ցուցանիշները ՀՀ-ում:
3. ՀՀ ուրվագծային քարտեզի վրա սլաքներով միացրե՛ք բեռների հետևյալ տեսակների առաքման և ստացման վայրերը (պղնձի խտանյութ, մոլիբդենի խտանյութ, կրաքար, ոսկու հանքաքար, ցեմենտ, ալյուր):

ԴԱՍ 47. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի պես փոքր տարածքով, լեռնային մակերևույթ ունեցող երկրի համար անփոխարինելի նշանակություն ունի ավտոմոբիլային տրանսպորտը: Ավտոմոբիլային տրանսպորտը առաջին տեղն է գրավում բեռնափոխադրումների ծավալով և ուղևորների փոխադրումների ընդհանուր քանակով:

Դեպի ծով ելք չունեցող երկրներում, ինչպիսին է ՀՀ-ն, տրանսպորտային ցանցի զարգացման գործում կարևոր դեր է կատարել նաև երկաթուղային տրանսպորտը:


Դեռևս XIX դ. վերջերին կառուցվել է Սև և Կասպից ծովերն իրար միացնող Փոթի-Թբիլիսի-Բաքու գիծը, որից և ճյուղավորվել է Հայաստան եկող գիծը: 1899 թ. շահագործման են հանձնվել Թբիլիսի-Ալեքսանդրապոլ (Գյումրի)-Կարս, 1902 թ.՝ Գյումրի-Մասիս-Երևան, 1908 թ.՝ Մասիս-Նախիջևան-Ջուլֆա ճյուղավորումները: Ավելի ուշ, երբ կառուցվեց Կասպից ծովի հյուսիսային ուղղության մերձափնյա գիծը, հարավկովկասյան երկաթգծերը միացան Ռուսաստանի և դրա միջոցով էլ՝ Եվրոպայի երկաթուղային ցանցին: Հետագայում երկաթգծեր կառուցվեցին արևմտյան ուղղությամբ (Կարսից դեպի Միջերկրական ծովի ափերը), կառուցվեց նաև Ջուլֆա-Բաքու երկաթգիծը, որն անցավ Հայաստանի ծայր հարավով: Հայաստանը մտավ Եվրասիա մայրցամաքի՝ աշխարհի ամենահզոր երկաթուղային ցանցի մեջ: Սակայն ներկայումս (սկսած 1990-ական թթ. սկզբից) Հայաստանը ադրբեջանա-հայկական, թուրք-հայկական և վրաց-ռուսական հակամարտությունների պատճառով հայտնվել է երկաթուղային մեկուսացման մեջ: Չեն գործում Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Բաքու, դրանից դեպի Կապան ճյուղավորվող, Երևան-Իջևան-Աղստաֆա, Գյումրի-Կարս, ինչպես նաև Սև ծովի ափով Վրաստանը (դրա միջոցով և Հայաստանը) Ռուսաստանին կապող երկաթգծերը:

Մեր հանրապետությունը ոչ միայն շահագրգռված է այժմ չգործող գծերի վերագործարկումով, այլև նոր գծերի կառուցման կարիք ունի:

Երկաթուղային շրջափակումը մեղմելու նպատակով տնտեսական ու ռազմավարական փոխշահավետ համագործակցության շրջանակում նախատեսվում է կառուցել Հայաստան-Իրան երկաթգիծ: **Ենթադրվում է, որ նոր երկաթուղու ընդհանուր երկարությունը կկազմի 540 կմ, որից մոտ 480 կմ-ը կանցնի Հայաստանի տարածքով, իսկ մնացած 60 կմ-ը՝ Իրանի: Ավելի հավանական է, որ երկաթուղին կանցնի Գագարին-Գավառ-Մարտունի-Ջերմուկ-Վայք-Սիսիան-Կապան-Մեղրի երթուղով, իսկ իրանական մասը կհասնի մինչև Մերանտ:**


ՀՀ գործող երկաթուղային ցանցի առանձնահատկությունն այն է, որ գլխավոր՝ Այրում-Վանաձոր-Գյումրի-Մասիս-Երասխավան մայրուղին **հանրապետության տարածքի նկատմամբ եզրային դիրք ունի:** Այդ հանգամանքը դժվարացնում է ներքին շրջանների, հատկապես Սյունիքի և Վայոց ձորի սպասարկումը:

« Բեռնաշրջանառության կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների (2012 թ.)



- Խողովակաշարային
- Երկաթուղային
- Ավտոմոբիլային
- Օդային

« Ուղևորաշրջանառության կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների (2012 թ.)



- Ավտոմոբիլային
- Օդային
- Երկաթուղային և էլեկտրատրանսպորտ

« Երկաթուղային ցանցի երկարությունը շուրջ 900 կմ է: Բոլոր գծերը լայնադուր՝ են: Ներկայումս **հանրապետության բոլոր երկաթուղիները էլեկտրիֆիկացված են:** Երկաթուղային կայարանների թիվը հասնում է մի քանի տասնյակի: Բեռնաշրջանառությամբ և ուղևորաշրջանառությամբ առաջատար են երկաթուղային հանգույցներ **Երևանը, Գյումրին և Հրազդանը:**

Վերջին երկու տասնամյակներին փոքրացել է **երկաթուղային տրանսպորտի դերը** մեր երկրի թե՛ արտաքին և թե՛ ներքին տնտեսական-արտադրական կապերի զարգացման գործում: **Դրան հակառակ՝ մեծացել է ավտոմոբիլային տրանսպորտի դերը:** Որո՞նք են դրա պատճառները:

Առաջինը բարդ ռելիեֆային պայմաններն են, որոնք ավելի հեշտ է հաղթահարել ավտոմեքենայով: Բացի այդ, ավտոճանապարհների կառուցումը կրկնակի էժան է, բնակավայրերն իրար կապող ավտոճանապարհներն ավելի կարճ են, քան երկաթուղիները: Օրինակ՝ Երևանից Ալավերդի տարածությունը երկաթուղով կրկնակի անգամ ավելի երկար է, քան ավտոմեքենայով:

Երկրորդ պատճառը հանրապետության տարածքի փոքրությունն է, որի հետևանքով **փոխադրումների հեռավորությունները կարճ են**, այսինքն՝ դրանք ավելի հարմար են ավտոմոբիլային, քան երկաթուղային տրանսպորտի համար (դա տնտեսապես ձեռնտու է մեծ հեռավորությունների դեպքում):

1 Տարբեր երկրների երկաթուղիների աղուրի լայնությունը տարբեր է: Հարավային Կովկասի տարածքում երկաթգիծը դեռևս ԽՍՀՄ ժամանակներից մնացած 1520 մմ, իսկ դեպի Թուրքիա (Գյումրի-Կարս) հատվածը՝ Արևմտյան Եվրոպայում ընդունված 1435 մմ լայնության է: Աղուրի մի լայնությունից մյուսին անցնելու համար սահմանային կայարաններում (Գյումրի) կատարում են վագոնների անիվների (առևինների հետ միասին) փոխարինում:



*Թասի լեռնանցքի ոլորանները
(Գորիս-Կապան ճանապարհահատված)*



*Հայաստանի օդային դարպասը՝
«Զվարթնոց» միջազգային օդանավակայանը*

Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունն ավելի քան 10,4 հազ. կմ է:

Ամենից ավելի բարեկարգ են **հանրապետական նշանակության** ճանապարհները: Դրանցից են՝ Երևան-Սևան-Իջևան, Երևան-Աշտարակ-Գյումրի-Աշոցք, Երևան-Արտաշատ-Սիսիան-Գորիս-Կապան-Մեղրի, Երևան-Սպիտակ-Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհները, որոնք ունեն նաև **միջպետական նշանակություն**: Վերջին տարիներին հանրապետությունում, ավտոմոբիլային ճանապարհների (այդ թվում՝ համայնքային նշանակության) վերանորոգմանը զուգահեռ, կառուցվել են համապետական նշանակության նոր ճանապարհահատվածներ, որոնցից նշանավոր են **Վարդենյաց լեռնանցքով Սևանի ավազանը Արփա գետի հովտին կապող և Կապան-Մեղրի նոր ճանապարհահատվածները**:

Այժմ մեկնարկել է տարածաշրջանային միջպետական նշանակության **Հյուսիս-Հարավ 556 կմ** երկարությամբ ավտոմոբիլային ճանապարհային միջանցքի (տես քարտեզը, էջ 156) շինարարությունը, որը նախատեսվում է ավարտել 2017 թ.: Ճանապարհային այս միջանցքը, հատելով Հայաստանի տարածքը հարավից հյուսիս, ընդգրկում է **Ագարակ-Կապան-Երևան-Գյումրի-Բավրա** մայրուղիները և ճանապարհային ենթակառուցվածքները: Ճանապարհային միջանցքը հնարավորություն կտա բարելավել ցամաքային կապը Հայաստանի երկու հարևանների՝ Իրանի և Վրաստանի հետ՝ ապահովելով ելք դեպի Փոթի և Բաթումի նավահանգիստներ ու միջազգային առևտրային շուկաներ:

Տրանսպորտի այլ տեսակներ: ՀՀ-ում **օդային տրանսպորտը** ծնավորվել է 1930-ական թվականներին: Մեր երկրի ամենախոշոր օդանավակայանը «Զվարթնոցն» է, որը նաև միջազգային մեծ օդանավակայան է և դասվում է տարածաշրջանի խոշոր օդանավակայանների շարքին: Արտասահմանյան թռիչքներ կատարվում են նաև «Էրեբունի» (Երևան) և «Շիրակ» (Գյումրի) օդանավակայաններից: Օդային տրանսպորտն առաջատար դեր

է կատարում արտաքին ուղևորափոխադրումներում: Երևանը կանոնավոր կապեր ունի աշխարհի տարբեր երկրների տասնյակ քաղաքների հետ:

Խողովակաշարային տրանսպորտը հանրապետությունում ամենաերիտասարդն է, որը սկսել է գործել 1960 թ.: Տրանսպորտի այս տեսակով հանրապետություն գազ է ներմուծվում Ռուսաստանից և հարևան Իրանից: Արդեն շահագործվող Իրան-Հայաստան 120 կմ երկարություն ունեցող գազատարը մեծ հեռանկարներ կարող է բացել Հայաստանի առջև՝ որպես գազի տարանցիկ երկրի: ՀՀ գազաբաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը հասնում է մոտ 15 հազ. կմ, որի 2/3-ը շահագործվում է:

Գազամուղները պատկերված են «Էլեկտրաէներգետիկա» քարտեզում (տե՛ս էջ 117), որտեղ ցույց են տրված նաև բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը:



*Ճանապարհահարված
Հյուսիս-Հարավ մայրուղուց*



Իրան-Հայաստան գազամուղի հարված

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործոններով է պայմանավորված ՀՀ երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային, օդային և էլեկտրահաղորդման տրանսպորտի տեղաբաշխումը:
2. Բնութագրե՞ք երկաթուղու նշանակությունը մեր երկրի ներքին և արտաքին տնտեսական կապերի զարգացման համար:
3. Համեմատե՞ք ՀՀ ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի զարգացման պայմանները:
4. Ի՞նչ հեռանկարներ կարող է բացել Հայաստանի համար Իրան-Հայաստան միջազգային տարանցիկ երկաթգծի, գազամուղի, նավթամուղի և ավտոմոբիլային ճանապարհային միջանցքի կառուցումը:

ԴԱՍ 48. ՀՀ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Նախորդ դասով մենք ավարտեցինք տնտեսության արտադրական ոլորտի և դրա ճյուղերի ուսումնասիրությունը:

Տնտեսության մյուս ոլորտը սպասարկման (կամ ծառայությունների) ոլորտն է (օգտագործվում է նաև ոչ արտադրական ոլորտ անվանումը): Այն միավորում է տնտեսության այն ճյուղերն ու մարդկային գործունեության տեսակները, որոնք ուղղակիորեն չեն մասնակցում նյութական արժեքների ստեղծմանը, որոշում են մարդկանց ապրելակերպը, կյանքի մակարդակը, բարեկեցությունն ու սպառումը, բավարարում են նրանց հոգևոր և նյութական պահանջները: Այդ ճյուղերն ու գործունեության տեսակները նույնպես բազմազան են (առևտուր, կրթություն, գիտություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ, կապ, կենցաղային սպասարկում, ֆինանսավարկային սպասարկում և այլն):

Աշխարհի շատ երկրների նման, Հայաստանի Հանրապետությունում ևս սպասարկման ոլորտն ավելի արագ է զարգանում, քան արտադրականը: Դրա բաժինն աճում է երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) և ազգային եկամտում: Առաջընթաց տեմպերով մեծանում է այդ ոլորտում զբաղվածների թիվը: Ներկայումս հանրապետության զբաղվածության շուրջ 44%-ը բաժին է ընկնում սպասարկման ոլորտին:

Սպասարկման ոլորտի զարգացումն ու տարածքային կազմակերպումը պայմանավորող գլխավոր գործոններն են՝ երկրի տնտեսական զարգացման մակարդակը, բնակչության թիվը և կազմը, կենսամակարդակը, տարաբնակեցման բնույթը, աշխատանքային ռեսուրսների թիվն ու որակը, տրանսպորտային համակարգի զարգացման մակարդակը: Ինչքան այդ ցուցանիշները բարձր են, այնքան զարգացած է սպասարկման ոլորտը և արդյունավետ է դրա տարածքային կազմակերպումը:

Սպասարկման ոլորտի ճյուղերի մի մասի տեղաբաշխումը հիմնականում կրկնում է բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման պատկերը: Այդպիսի ճյուղեր կան ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում: Որքան մարդաշատ է բնակավայրը և որքան ավելի կենտրոնական տեղ է գրավում տարաբնակեցման ցանցում, այնքան շատ են այդտեղ առկա սպասարկման ոլորտի տեսակները:

ՀՀ-ում 2012 թ. ծառայությունների ընդհանուր ծավալի 86%-ը բաժին է ընկել Երևանին: Մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալով Երևանը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 2,5 անգամ: Մինչդեռ բոլոր մարզերը մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալով զիջում են միջին հանրապետական ցուցանիշին 3-ից (Կոտայքի մարզ) 10 (Գեղարքունիքի մարզ) անգամ:

Կան նաև սպասարկման ոլորտի այնպիսի ճյուղեր (գովազդ, տեղեկատվություն և այլն), որոնց համար բնորոշ է **համակենտրոնացված**

տեղաբաշխումը, այսինքն՝ դրանք համատարած չեն և կենտրոնանում են միայն որոշակի բնակավայրերում:

Ծանոթանանք ՀՀ սպասարկման ոլորտի մի քանի կարևոր ճյուղերին ավելի մանրամասն:

Կրթությունը: Հայ ժողովուրդը միշտ էլ առանձնահատուկ նշանակություն է տվել կրթությանը:

Խորհրդային Հայաստանում 1929 թ. սկսվեց ընդհանուր տարրական ուսուցումը, իսկ 1970 թ.՝ համընդհանուր միջնակարգ պարտադիր կրթությունը:

Այժմ Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 683 նախադպրոցական հաստատություն, 1435 հանրակրթական դպրոց, 220-ից ավելի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ:

Նախադպրոցական և հանրակրթական հիմնարկների տեղաբաշխումը համընկնում է բնակավայրերի տեղաբաշխման, այսինքն՝ տարաբնակեցման ցանցի հետ: Ընդ որում՝ դրանք ներկայացված են բնակավայրերի մեծ մասում: Ընդհանուր օրինաչափություն է որքան բնակավայրը խոշոր է, և որքան խիտ է դրա հարակից տարածքների բնակչությունը, այնքան շատ ու բազմատեսակ են կրթական հիմնարկները:

Միջին մասնագիտական հաստատությունները կամ քոլեջները (թվով 97) տեղաբաշխված են քաղաքների մեծ մասում, մինչդեռ բարձրագույն ուսումնական հաստատությունները (թվով 65) հիմնականում կենտրոնացված են Երևանում: Երևանում է կենտրոնացած ուսանողների թվաքանակի 80%-ը: Համեմատաբար խոշոր բուհեր կամ մասնաճյուղեր կան մարզկենտրոններում և մի քանի այլ քաղաքներում:

ՀՀ անկախացումից հետո մի քանի տասնյակ պետական և մասնավոր բուհերի ստեղծումը նպաստեց բարձրագույն կրթության ապակենտրոնացմանը: ՀՀ բուհերից առաջնելը և խոշորագույնը Երևանի պետական համալսարանն է (ԵՊՀ):

Մեր հանրապետության համար նոր երևույթ են արտասահմանյան երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) հետ համատեղ ստեղծված պետական համալսարանները:



Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքը



ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գլխավոր մասնաշենքը

Հանրապետության բուհերը մասնագետներ են պատրաստում **ժամանակակից տնտեսության արտադրական և սպասարկման ոլորտների գրեթե բոլոր մասնագիտությունների գծով:**

Գիտությունը: Կրթության հետ միասին գիտությունը ոչ արտադրական ոլորտի այն ճյուղն է, որը երկրի հզորացման, միջազգային հեղինակության, բնակչության նյութական ու հոգևոր մակարդակի բարձրացման համար **ունի հիմնարար նշանակություն:** Հայաստանում գիտության՝ որպես ինքնուրույն ճյուղի հիմքերը դրվեցին առաջին հանրապետության տարիներին: Սկզբում այն սկսեց զարգանալ նոր ստեղծվող բուհերում: Հետագայում հիմնվեցին նաև գիտահետազոտական ինքնուրույն հիմնարկներ: Ավելի ուշ դրանք միավորվեցին հանրապետության նորաստեղծ **Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) համակարգում (1943 թ.):**

Հայաստանի անկախության նախօրյակին գիտական աշխատողների թիվը գերազանցում էր 23 հազ.-ը: Յուրաքանչյուր 1000 բնակչին բաժին ընկնող գիտնականների թվով Հայաստանն առաջնակարգ տեղ էր գրավում նախկին ԽՍՀՄ-ում: Գիտության ամենատարբեր ճյուղերի գծով գիտական մշակումներ էին իրականացնում Գիտությունների ակադեմիայի և նախարարությունների մի քանի տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ և ավելի մեծ թվով բուհական ամբիոններ:

Անկախության առաջին տարիներին սկսված խոր տնտեսական ճգնաժամը մեծ հարված հասցրեց նաև գիտությանը: Փակվեցին մի շարք գիտական հիմնարկներ, զգալիորեն նվազեց գիտաշխատողների թիվը, խիստ կրճատվեցին պետական բյուջեից գիտությանը հատկացվող միջոցները, գիտահետազոտական ոլորտում մեծ հեռանկարներ ունեցող շատ երիտասարդներ ստիպված հեռացան հայրենիքից: Այդ ամենով հանդերձ՝ հայ գիտության մեծ ներուժի հիմնական մասը պահպանվել է:

Գիտական կազմակերպություններն ու հիմնարկները, ի տարբերություն կրթական հիմնարկների, համատարած տեղաբաշխում չունեն: Դրանք առավելապես կենտրոնացած են Երևանում: Մյուս կենտրոններից հիշարժան են Գյումրին, Վանաձորը, Աշտարակը, Բյուրականը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գնահատե՞ք սպասարկման ոլորտի տեղը և դերը ՀՀ տնտեսության մեջ:
2. Որո՞նք են սպասարկման ոլորտի հիմնական ճյուղերը, ի՞նչ խմբերի մեջ են դրանք միավորվում:
3. Որո՞նք են սպասարկման ոլորտի զարգացումն ու տարածքային կազմակերպումը պայմանավորող հիմնական գործոնները:
4. Բնութագրե՞ք կրթության և գիտության ճյուղը: Ինչպե՞ս են դրանք տեղաբաշխված ՀՀ տարածքում:

ԴԱՍ 49. ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ

Մշակույթը: Հայերը աշխարհի հնագույն մշակույթ ունեցող ժողովուրդներից են: Հոգևոր ոլորտի տարբեր բնագավառներում ունեցած իր ձեռքբերումներով ու նվաճումներով (երաժշտություն, կերպարվեստ, պոեզիա, ճարտարապետություն, գիտություն) հայ ժողովուրդը նկատելի ավանդ ունի համաշխարհային մշակույթի մեջ: Այսօր էլ մշակույթի բազմաթիվ հայ գործիչներ, զարգացնելով ազգային ավանդույթները, ամրապնդում են հայ ազգային մշակույթի արժանի տեղը համաշխարհային մշակույթի տարբեր բնագավառներում:

1990-ականների կեսերից, տնտեսության աշխուժացմանն ու վերակառուցմանը զուգընթաց, վերակենդանացավ նաև մշակութային կյանքը: Հանրապետությունում ներկայումս գործում է **28 թատրոն**, որից 18-ը՝ Երևանում:

Իրենց գործունեությունն են շարունակում նաև շուրջ **100 թանգարաններ** (որից 61-ը՝ Երևանում), այդ թվում՝ Երևանի պետական պատկերասրահը, Պատմության պետական թանգարանը: Թանգարաններ կան բոլոր մարզերում: Դրանք հիմնականում երկրագիտական բնույթի են:

Ավելի համաչափ են տեղաբաշխված գործող ավելի քան **900 գրադարանները**: Հանրապետությունում խոշորագույն են համարվում Ազգային գրադարանը, ԳԱԱ-ի և ԵՊՀ-ի գրադարանները: Երևանում և հատկապես մարզերում կրկին սկսել է աճել գրադարաններից օգտվողների թիվը:

Առողջապահությունը: Աշխատողների թվով և նյութական ու ֆինանսական միջոցների, կատարվող ծախսերի ծավալով առողջապահությունը մեր երկրում սպասարկման ոլորտի խոշոր ճյուղերից է: **Այն միավորում է բազմապիսի բուժփիմնարկներ**, որոնք զբաղվում են քաղաքացիների առողջության պահպանման ու վերականգնման, հիվանդությունների կանխարգելման ու բուժման հարցերով:

Առողջապահության դերը մեծ է նաև **բնակչության վերարտադրության, ծննդաբերության սպասարկման և աշխատանքային ռեսուրսների աշխատունակության պահպանման գործում**:

Ներկայումս ՀՀ-ում հիվանդանոցային մահճակալների թիվը գերազանցում է 12 հազարը, բժիշկների թիվը շուրջ 13 հազար է:

Առողջապահական հիմնարկների խիտ ցանց ունի Երևանը, որտեղ 10000 բնակչին բաժին ընկնող բժիշկների և



Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական թատրոնի շենքը

մահճակալների թիվը միջին հաշվով 3 անգամ գերազանցում է մարզերի համապատասխան ցուցանիշները:

Երևանը առանձնանում է ոչ միայն բժիշկների և հիվանդանոցային մահճակալների համեմատաբար լավ ապահովվածությամբ, այլև առողջապահական ծառայությունների բազմազանությամբ և սպասարկման բարձր որակով: Մի շարք հայտնի մասնագիտացված հիվանդանոցներից օգտվում են նաև ՀՀ մարզերի բնակիչներ և նույնիսկ արտասահմանցիներ:

Առևտուրը: Առևտրի զարգացման մակարդակը ցույց տվող հիմնական ցուցանիշն **ապրանքաշրջանառության, այսինքն՝ գնվող ու վաճառվող ապրանքների ծավալն է՝ արժեքային արտահայտությամբ:**

Մանրածախ (անմիջական սպառման կամ տնային տնտեսությունների համար) առևտրի ապրանքաշրջանառության շուրջ 78%-ն իրականացվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում:

Վերջին տարիներին առևտրի շրջանառության կառուցվածքում նվազել է **պարենային ապրանքների և աճել է ոչ պարենային ապրանքների բաժինը:**

Առևտուրն անհամաչափ է տեղաբաշխված ՀՀ տարածքում: Մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ավելի քան 80%-ը բաժին է ընկնում Երևանին:

Սպասարկման ոլորտի համակարգում աչքի ընկնող դեր ունի **բնակչության կենցաղային սպասարկում կոչվող ճյուղը** (կենցաղային ծառայությունների արդիական ձևերը՝ **ավտոտեխսպասարկումը, լվացքատները, քիմիական մաքրման կետերը, կենցաղային մեքենաների ու սարքերի, այդ թվում՝ հեռուստացույցների և հաշվողական տեխնիկայի սպասարկումը և այլն):**

Ժամանակակից պայմաններում սպասարկման ոլորտի և ամբողջ տնտեսության զարգացման կարևոր ցուցանիշ է **բանկային գործի և բնակչության ֆինանսավարկային սպասարկման մակարդակը:** Մեր երկրում բանկային գործի գլխավոր կազմակերպիչը ՀՀ **Կենտրոնական պետական բանկն է:** Դրան զուգահեռ գործում են մի քանի տասնյակ ոչ պետական (առևտրական կամ ճյուղային) բանկեր, այդ թվում՝ նաև **աշխարհում հայտնի մի քանի բանկերի բաժանմունքներ:** Դրանք, հիմնականում կենտրոնացած լինելով Երևանում,

իրենց մասնաճյուղերն են ստեղծել հանրապետության բոլոր մարզերում և տասնյակ քաղաքներում: **Պետական մակարդակով ծրագրված է բանկերի մի մասը փոխադրել Դիլիջան քաղաք և այն վերածել բանկային կենտրոնի:**



ՀՀ Կենտրոնական բանկը

Սպասարկման ոլորտի արագ զարգացող ճյուղերից են **կապն ու տեղեկատվությունը**: Վերջին տասնամյակներին «համակարգչային հեղափոխության» շնորհիվ **տեղեկատվությունը ձեռք է բերել ապրանքի բոլոր հատկանիշները, սկսել է գնվել ու վաճառվել**:

Տեղեկատվական հատվածի զարգացման շնորհիվ մարդկությունն այժմ ապրում է **տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում**: Մեր հանրապետությունը բացառություն չի կազմում: Ինչպես ամբողջ աշխարհում, մեզանում նույնպես կտրուկ աճում է **համակարգիչներից, ինչպես նաև համացանցից** (ինտերնետ) օգտվող մարդկանց թիվը:

Ներկայումս տեղեկատվության հաղորդումն ու փոխանակումն ապահովող ճյուղը՝ **կապը**, դարձել է ՀՀ **ամբողջ տնտեսությանը սպասարկող հատուկ կարևորության** ճյուղ: Այժմ կապի ծառայության մակարդակը, այդ ծառայությունն իրականացնող հիմնարկների թիվը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր չափանիշ են: Կապի բաժանմունքները և կազմակերպությունները, հեռախոսային կայանները տեղաբաշխված են ՀՀ ամբողջ տարածքում: Յուրաքանչյուր 100 ընտանիքին միջին հաշվով ընկնում է շուրջ 70 տնային հեռախոսային ապարատ: **Լայն տարածում է ստացել ոչ լարային հեռախոսային կապը**: Այժմ բջջային կապի բաժանորդների քանակը 2001 թ. 25 հազարից հասել է ավելի քան 4,3 մլն-ի¹:

Աճի բարձր տեմպ ունի նաև համացանցի (ինտերնետի) բաժանորդների թիվը: 2001 թ. 7 հազարից 2012 թ. այն հասել է **442** հազար բաժանորդի:

ՀՀ-ում տարեցտարի ավելանում է նաև պարբերական տպագրական և էլեկտրոնային մամուլի (թերթերի, ամսագրերի) տեսականին և տպաքանակը, հեռուստակայանների թվաքանակը:

Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն տեսակներն ու նորամուծությունները զարգանում են նախ մայրաքաղաք Երևանում, ապա օրինաչափորեն հասնում են Հայաստանի Հանրապետության մնացած մարզերն ու բնակավայրերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրե՛ք ՀՀ սպասարկման ոլորտի մշակույթի ճյուղը:
2. Բնութագրե՛ք ՀՀ սպասարկման ոլորտի առողջապահության ճյուղը:
3. Որո՞նք են առևտրի և կենցաղային սպասարկման զարգացման միտումները:
4. Գնահատե՛ք ՀՀ-ում կապի ու տեղեկատվության նորագույն տեսակների ու միջոցների ներկա վիճակը և զարգացման մակարդակը:
5. Որո՞նք են սպասարկման ոլորտի տարբեր ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները:

¹ Պետք է հաշվի առնել այն, որ մեկ մարդը կարող է միաժամանակ հանդիսանալ մի քանի բջջային կապի օպերատորի բաժանորդ:

ԴԱՍ 50. ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության արագ զարգացող ճյուղերից է:

Մեր հանրապետությունում նույնպես զբոսաշրջությունը հայտարարված է տնտեսության առաջնահերթ նշանակության ճյուղ և զարգանում է բարձր տեմպերով:

Զբոսաշրջությունը տնտեսության այն ճյուղն է, որն ապահովում է բնակչության հանգստի կազմակերպումը, աշխատանքից ազատ ժամանակի արդյունավետ օգտագործումը, մարդկանց ուժերի և առողջության վերականգնումը:

Զբոսաշրջությունը պետական մակարդակով Հայաստանում սկսել է զարգանալ խորհրդային տարիներին: Անկախացման նախօրյակին հանրապետությունում գործում էին 110 առողջարանային և հանգստի տներ, զբոսաշրջային (տուրիստական) 30 հանգրվաններ: Արտասահմանյան զբոսաշրջիկների թիվը 1987 թ. հասավ շուրջ 100 հազ., դրան գումարած 300 հազ. զբոսաշրջիկ ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից:

Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարիներին արտասահմանյան զբոսաշրջիկների թիվը կտրուկ նվազեց: Ճյուղի վերելքն սկսվեց տնտեսության վերականգնման հետ մեկտեղ: Կատարվեցին մեծածավալ, այդ թվում՝ արտասահմանյան կապիտալ ներդրումներ: Վերակառուցվեցին նախկին խոշոր հյուրանոցները, կառուցվեցին նոր, արդիական հյուրանոցներ ու զբոսաշրջային հանգրվաններ: Ստեղծվեցին ոչ պետական զբոսաշրջային կազմակերպություններ:

Ճյուղի զարգացմանը նպաստեց զբոսաշրջային ծառայությունների մակարդակի բարձրացումը, ժամանակակից ավտոմայրուղիների կառուցումը, զբոսաշրջության համար մասնագետ կադրերի պատրաստումը: Դրանց շնորհիվ ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը տարեցտարի ավելանում է:

Ներկայումս ՀՀ այցելում է տարեկան մոտ 850-900 հազ. զբոսաշրջիկ: Նրանց մեծ մասը սփյուռքահայերն են, որոնք այցելում են Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իրանից և այլ հայաշատ երկրներից:

Ավելանում է նաև Հայաստանից տարբեր երկրներ մեկնող զբոսաշրջիկների թիվը: Միայն 2012 թ. ՀՀ-ից այլ երկրներ է այցելել ավելի



քան 800 հազ. զբոսաշրջիկ: Նրանց մեծ մասը մեկնում է հանգստի և ժամանցի նպատակով: ՀՀ-ն զբոսաշրջային կապերի մեջ է աշխարհի ավելի քան 90 երկրների հետ:

Բացի միջազգային զբոսաշրջությունից, Հայաստանի Հանրապետությունում մեծ չափերի է հասնում նաև ներքին զբոսաշրջությունը, երբ ՀՀ քաղաքացիներն իրենց հանգիստը կազմակերպում են հանրապետության ներսում՝ զբոսաշրջության և հանգստի տարբեր կենտրոններում:

Բնակչությունն իր հանգիստը կազմակերպում է կարճ ժամանակահատվածում՝ 1-2 օրվա ընթացքում (որպես կանոն՝ շաբաթ և կիրակի օրերին), կամ էլ համեմատաբար երկար ժամանակահատվածում՝ 2-3 շաբաթվա ընթացքում:

Կարճաժամկետ և երկարաժամկետ հանգստի տարածքային կազմակերպման բնույթը տարբեր է:

Կարճաժամկետ հանգստի կենտրոնները և վայրերը սովորաբար գտնվում են Երևանից և այլ քաղաքային կենտրոններից մինչև 1-2-ժամյա տրանսպորտային մատչելիության սահմաններում: Դրանք են Սևանա լճի հյուսիսարևմտյան ափերը, Ծաղկաձորը, Գառնի-Գեղարդի հանգստի գոտին, Երևանի շուրջը ստեղծված ամառանոցները և այլն:

Ի տարբերություն կարճաժամկետ հանգստի՝ երկարաժամկետ հանգստի տարածքային կազմակերպումն ընդգրկում է նաև Երևանից և այլ խոշոր քաղաքային կենտրոններից ավելի հեռու վայրեր (Ջերմուկ, Դիլիջան, Ստեփանավան, Հանքավան, Սևանա լճի արևելյան և հարավային ափեր, Վանաձոր, Գորիս և այլն):

ՀՀ բնական պայմանները բարենպաստ նախադրյալներ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար: Դրանք են լեռնային մաքուր օդը, գեղեցիկ անտառային և ալպյան մարգագետնային լանդշաֆտները, խորը կիրճերը, լճերն ու ջրամբարները, սառնորակ աղբյուրները և հանքային ջրերը, քարանձավները և այլ բնական հուշարձաններ:

Մեծաթիվ զբոսաշրջիկների ձգում են Հայաստանի ներկա տարածքում պատմական տարբեր ժամանակաշրջաններում կառուցված և մասամբ կամ ամբողջովին պահպանված բազմաթիվ պատմական, ճարտարապետական ու մշակութային հուշարձաններ՝ տաճարներ



Ժամանակակից հյուրանոց Երևանում



Գառնիի հեթանոսական տաճարը

րը, վանքային համալիրները, եկեղեցիները, ամրոցները, բերդերը, հնագույն բնակատեղիները:

«Հ ողջ տարածքով ցրված այդ տեսարժան վայրերը զբոսաշրջիկներին **լիարժեք պատկերացում են տալիս Հայաստանի գեղեցիկ ու բազմազան բնության և հարուստ ու ինքնատիպ մշակույթի մասին:**

Ինչպես գիտեք, մեր հայրենիքում պահպանվել են կրոնական և պատմաճարտարապետական բազմաթիվ կոթողներ և հուշարձաններ, որոնք վկայում են մեր հայրենիքի հնագույն քաղաքակրթությունների և քրիստոնեական հարուստ ժառանգության մասին:

Նշեք զբոսաշրջության համար հեղաքրքիր պատմաճարտարապետական հուշարձանները և կոթողները:

Հայաստանի Հանրապետությունում զարգանում են **զբոսաշրջության տարբեր տեսակներ (ենթաճյուղեր):** Այսպես՝ հանքային բուժիչ ջրերը, մաքուր լեռնային օդը, անտառային լանդշաֆտները, Սևանի լողափերը նպաստավոր են **բուժիչ (առողջարար) զբոսաշրջության** զարգացման համար (Ջերմուկ, Դիլիջան, Հանքավան, Արզնի և այլն):

«Հ-ում զարգանում է նաև **էկոլոգիական զբոսաշրջությունը:** Դրա համար գլխավոր օբյեկտներ են ծառայում ազգային պարկերը, արգելոցները, բնության տարբեր հուշարձանները՝ ջրվեժները (Շաքիի, Թռչկանի), քարանձավները (Մոզրովի), քարե բուրգերը (Գորիս), բուսական բացառիկ համակեցությունները, բազալտի «Քարերի սիմֆոնիան» (Գառնի) և այլն: **Էկոլոգիական զբոսաշրջությունը նպաստում է երիտասարդների, հատկապես դպրոցականների բնապահպանական գիտելիքների հարստացմանը:**

Դեռևս խորհրդային տարիներից **Ծաղկաձորը և Մարմարիկ գետի հովիտը** հայտնի են մարզական կառույցներով, հանգստյան տներով, դպրոցական ճամբարներով, որոնք դեպի իրենց են ձգում ամառային և ձմեռային մարզաձևերի հազարավոր սիրահարների:

Վերջին տարիներին, հաշվի առնելով Ծաղկաձորի՝ հանգստի և հատկապես ձմեռային սպորտի **համահայկական գլխավոր կենտրոնի** բարե-



«Տաթևեր» ճոպանուղին Սյունիքում

նպաստ տրանսպորտային դիրքը, գեղեցիկ անտառային լանդշաֆտների առկայությունը, այստեղ մեծ ներդրումներ կատարվեցին: Կառուցվեցին ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր հյուրանոցային համալիրներ, հանգստյան տներ, մարզահրապարակներ, նոր ճոպանուղիներ և լեռնադահուկային վազքուղիներ: Դրանք հիմք են տալիս պնդելու, որ **Ծաղկաձորն աստիճանաբար**

դառնում է միջազգային նշանակության զբոսաշրջության կենտրոն, որտեղ նախատեսվում է անցկացնել լեռնադահուկային և այլ մարզաձևերի նաև միջազգային մրցումներ:

Ջբոսաշրջության զարգացման համար բարենպաստ նախադրյալներ կան նաև Սյունիքի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերում: Այդ նախադրյալների ճիշտ օգտագործումը լրացուցիչ խթան կլինի նոր ճանապարհների կառուցման, սպասարկման ոլորտի զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բոլոր մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այդ ուղղությամբ Սյունիքի մարզում կատարվել են առաջին քայլերը, կառուցվել է դեպի Տաթևի վանական համալիրը տանող՝ աշխարհում ամենաերկարը համարվող «Տաթևեր» ճոպանուղին:

Նոր հյուրանոցային համալիրների կառուցումը և այլ ծառայությունների ստեղծումը Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում մեծացնում է դրանց զբոսաշրջային նշանակությունը:

Չնայած ՀՀ ամբողջ տարածքում առկա զբոսաշրջային հսկայական ռեսուրսներին՝ մայրաքաղաք Երևանը շարունակում է մնալ ՀՀ գլխավոր զբոսաշրջային կենտրոնը:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման արդի տեմպերը և առկա ծրագրերը ցույց են տալիս, որ այն կդառնա տնտեսության առաջատար ու եկամտաբեր ճյուղերից մեկը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործոններ են նպաստում միջազգային զբոսաշրջության զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում:
2. Որո՞նք են ՀՀ ներքին զբոսաշրջության զարգացման և տարածքային կազմակերպման բնորոշ գծերը:
3. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության գլխավոր կենտրոնները և շրջանները:
4. Նշե՞ք ՀՀ-ում զարգացող զբոսաշրջության գլխավոր ենթաճյուղերը և դրանց կենտրոնները:

ԴԱՍ 51. ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԲԱԺՆԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Նշե՞ք ՀՀ ժամանակակից տնտեսության կառուցվածքի բնորոշ գծերն ու գլխավոր բաղադրիչները (ոլորտները):
2. Թվարկե՞ք տնտեսությունը և նրա ճյուղերը բնութագրելու համար օգտագործվող տնտեսական ցուցանիշները և տվե՞ք դրանց համեմատական վերլուծությունը:


3. Համեմատե՞ք խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների Հայաստանի արդյունաբերության ճյուղային կառուցվածքները: Նշե՞ք գլխավոր ճյուղերը:
4. Որո՞նք են անցումային տարիներին արդյունաբերության անկման պատճառները:
5. Ինչպիսի՞ք են էլեկտրաէներգիայի զարգացման նախադրյալները ՀՀ-ում: Քարտեզի վրա ցո՞ւյց տվե՞ք ՀՀ գլխավոր էլեկտրակայանները՝ նշելով դրանց տիպերը:
6. Ինչպիսի՞ք են ՀՀ-ում մետալուրգիայի զարգացման բնական նախադրյալները և տնտեսական պայմանները: Թվարկե՞ք գլխավոր ճյուղերը, և քարտեզի վրա ցո՞ւյց տվե՞ք գլխավոր կենտրոնները:
7. Թվարկե՞ք և բնութագրե՞ք ՀՀ քիմիական արտադրական համալիրները և գլխավոր կենտրոնները:
8. Բնութագրե՞ք և գնահատե՞ք մեքենաշինության դերն ու ճյուղային կառուցվածքը խորհրդային տարիներին և ներկայումս:
9. Ինչպիսի՞ն է ՀՀ թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Ի՞նչ գործոններ են ազդել դրա ձևավորման վրա:
10. Որո՞նք են արդյունաբերության նորագույն ճյուղերը: Գնահատե՞ք դրանց զարգացման նախադրյալներն ու հեռանկարները ՀՀ-ում:
11. ՀՀ ներկայիս անկախ զարգացման պայմաններում ինչո՞ւ է անհրաժեշտ արդյունաբերության կառուցվածքային բարեփոխումներ կատարել:
12. Որո՞նք են ՀՀ արդյունաբերական համալիրի հետագա զարգացման գլխավոր ուղղություններն ու նախադրյալները:
13. Տվե՞ք ՀՀ գյուղատնտեսության և հողային ֆոնդի ընդհանուր բնութագիրը:
14. Բնութագրե՞ք ՀՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և յուրաքանչյուր ճյուղի տեղաբաշխումը պայմանավորող գործոնները:
15. Որո՞նք են ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի գլխավոր առանձնահատկությունները:
16. Բնութագրե՞ք և գնահատե՞ք ՀՀ տրանսպորտային-աշխարհագրական դիրքը:
17. Որո՞նք են ՀՀ տրանսպորտային ցանցի ձևավորման նախադրյալները և բնորոշ գծերը:
18. Որո՞նք են սպասարկման ոլորտի զարգացումն ու տարածքային կազմակերպումը պայմանավորող գլխավոր գործոնները:
19. Որո՞նք են մշակույթի, առողջապահության, առևտրի, սպասարկման ոլորտի մյուս ճյուղերի աշխարհագրական առանձնահատկությունները:
20. Ինչո՞ւ է զբոսաշրջությունը համարվում ՀՀ տնտեսության զարգացման գերակա ճյուղ: Համեմատե՞ք արդյունաբերության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԸ

Դասընթացը մենք սկսեցինք՝ ծանոթանալով մեր երկրի վարչատարածքային կառուցվածքին: Տեսանք, որ այն բաղկացած է 10 վարչական մարզից և ավելի քան 915 քաղաքային ու գյուղական համայնքներից: Այնուհետև ուսումնասիրեցինք Հայաստանի Հանրապետության բնական պայմաններն ու հարստությունները, դրանց օգտագործման ու պահպանության վիճակը, բնակչության և տնտեսության կառուցվածքն ու տեղաբաշխման առանձնահատկությունները: Իմացանք, որ ՀՀ-ի թե՛ բնությունը, թե՛ բնակչությունը և թե՛ տնտեսությունն առանձնանում են իրենց բազմազանությամբ ու տարածքային մեծ տարբերություններով:

ՀՀ տարածքային հիմնական միավորները՝ մարզերը, առանձնանում են աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, բնակչության և տնտեսության ինքնատիպ գծերով և սերտ փոխկապակցվածությամբ: Ներկայացնենք Հայաստանի Հանրապետության 10 վարչական մարզերից յուրաքանչյուրի համալիր աշխարհագրական պատկերը:

ԴԱՍ 52. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



Սահմանները, աշխարհագրական դիրքը: Արագածոտնը ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ միջին տեղ է գրավում, իսկ բնակչության թվով գերազանցում է միայն Վայոց ձորի և Տավուշի մարզերին: Այն կազմավորվել է Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի նախկին վարչական շրջանների միավորումից:

Արագածոտնի մարզն իր անունը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից:


Մարզի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ գտնվում է մայրաքաղաք Երևանի և Արագած լեռնագագաթի միջև:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ (ԳԳ մարզերի քարտեզների)

- Բնակավայրեր
- ԵՐԵՎԱՆ** Մայրաքաղաք
- Աշտարակ** Մարզկենտրոն
- Ապարան** Բաղաք
- Օշական** Գյուղ
- Սահմաններ**
- Պետական
 - Մարզերի
 - Հատուկ պահպանվող տարածքների
- Հաղորդակցության ուղիներ**
- Միջպետական նշանակության ճանապարհներ
 - Հանրապետական նշանակության ճանապարհներ
 - Տեղական նշանակության ճանապարհներ
 - Ավտոճանապարհային թունելներ
 - Երկաթուղիներ
 - Երկաթուղային թունելներ
 - Վանքեր և եկեղեցիներ
 - Խաչքարեր
 - Բերդեր և ամրոցներ

Մասշտաբ 1:750 000

- Ջրանցքներ
- Որոտան-Արվա-Սևան ջրատար
- 4090 \pm Բարձրությունների
- 2152 \times Լեռնանցքներ (բարձրությունը ծովի մակարդակից հաշված մետրերով)



Կիսաօղակաձև գոտևորելով Արագած լեռնազանգվածը՝ մարզի տարածքն արևմուտքում ձգվում է մինչև Թուրքիայի հետ պետական սահմանը:

Քարտեզով որոշեք, թե Արագածոտնի մարզը ՀՀ որ մարզերին է սահմանակից: Պարզե՞ք, թե այդ սահմաններն ինչ բնական օբյեկտներով են անցնում:

Արագածոտնի տարածքով անցնում են **համապետական (միջպետական) նշանակության 3 ավտոճանապարհ՝** Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի, Երևան–Աշտարակ–Ապարան–Սպիտակ և Երևան–Արմավիր–Քարակերտ–Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին, բայց միայն ծայր արևմտյան հատվածով, ուստի մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում:

Բնական պայմանները և ռեսուրսները: Արագածոտնի մարզը զբաղեցնում է Արարատյան դաշտից մինչև Արագածի լեռնագագաթ՝ 950-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունների միջև ընկած տարածքը:

Մարզի մակերևույթի մեծ մասը ծածկված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներով: Այստեղ են գտնվում **Թալինի, Կարմրաշենի, Շամիրամի, Ապարանի սարավանդները**, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները:

Բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, որոնցից սնվում են գետակները: Մարզի ջրային հիմնական զարկերակը **Քասաղ գետն է՝** Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Քասաղի վրա կառուցվել է **Ապարանի ջրամբարը:**

Հայտնի է **Մաստարայի սելավային գետակը**, որը, հաճախ վարարելով, մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին:

Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է **Քարի լիճը:** Տարածքի մակերևույթի բացարձակ բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ մարզի **կլիման նույնպես բազմազան է:** Մեծ են ցածրադիր և բարձրադիր մասերի կլիմայական պայմանների տարբերությունները: Եթե տարվա ամենատաք ամսվա՝ հուլիսի միջին ջերմաստիճանը լեռան ստորոտում լինում է $+24^{\circ}$ -ից ոչ պակաս, ապա բարձրլեռնային գոտում չի անցնում $+6^{\circ}$ -ից:

Նույն օրինաչափությամբ էլ լանջերն ի վեր փոխվում է մթնոլորտային տեղումների քանակը՝ 400-ից մինչև 1000 մմ:

Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են **չոր լեռնատափաստանային և լեռնատափաստանային լանդշաֆտները**, որտեղ տարածված են **շագանակագույն հողերն ու սևահողերը:**

Արագածոտնի բարձրլեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են **մերձալպյան և ալպյան մարգագետիններ**, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ:

Մարզի տարածքում օգտակար հանածոները բազմազան չեն, բայց պաշարները մեծ են: Դրանք հիմնականում հրաբխածին ապարատեսակներն են. բազմազույն **տուֆերը (Աշտարակ, Բյուրական), պեռլիտը (Արագածավան), բազալտը, հրաբխային խարամը**, որոնք իրենց գոյությամբ պարտական են Արագած լեռան հրաբխային ժայթքումներին և ծառայում են որպես որակյալ շինանյութ:

Մարզը հարուստ է նաև բարձրորակ խմելու ջրի պաշարներով:

Արագածոտնը ՀՀ-ում առանձնանում է զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսներով: Այստեղ շատ են ոչ միայն բնական, այլև **պատմական ու ճարտարապետական հուշարձանները:** Մարզկենտրոնի հարևանությամբ գտնվող **Օշական գյուղում է գտնվում հայ գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմ-դամբարանը** և վրան կառուցված եկեղեցին (V դ.):



Քարի լիճը Արագածի մերձգագաթային սարավանդի վրա



Ամբերդ

Հայտնի են նաև Ամբերդի ամրոցը (X-XIII դդ.), Աշտարակի կամուրջը (XVII դ.), Թալինի քարավանատունը (XIII-XIV դդ.), Սաղմոսավանքը (XIII դ.):

Արագածոտնի մարզում է գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը:

Հանգստի և ժամանցի կազմակերպման լայն հնարավորություններ կան Քասաղի ձորի Աշտարակի հատվածում:

Բնակչությունը և բնակավայրերը: Արագածոտնի մարզի տարածքը Հայաստանի ամենավաղ բնակեցված շրջաններից է:

Բնակչության տարաբնակեցման ներկայիս պատկերը հիմնականում ձևավորվել է վերջին հարյուրամյակի ընթացքում, երբ նախկինում եղած բնակավայրերի կողքին նոր յուրացված հողերի շրջաններում ստեղծվեցին մի շարք նոր բնակավայրեր:

Արագածոտնը ՀՀ ամենագյուղաբնակ մարզն է: Բնակչության շուրջ 77%-ն ապրում է գյուղերում: Բնակավայրերի և բնակչության ճնշող մեծամասնությունը կենտրոնացած է 900-1500 մ բացարձակ բարձրությունների համեմատաբար հարթ ու մեղմաթեք տարածքներում, թեև մարզի հյուսիսային մասում կան զգալի թվով բարձրլեռնային գյուղեր, որոնք իրենց մեծությամբ մի քանի անգամ զիջում են ցածրադիր գոտու գյուղերին:

Արագածոտնում են հիմնականում կենտրոնացած Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից **եզդիները**: Նրանք բնակվում են ինչպես խառը՝ հայերի հետ միասին, այնպես էլ առանձին, մեծամասամբ՝ բարձրլեռնային գյուղերում: Եզդիաբնակ գյուղերի բնակչության հիմնական զբաղմունքն արոտային անասնապահությունն է:

Մարզի 3 հազ.-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերն են Օշականը, Բյուրականը, Ոսկեվազը, Արտենին:

Մարզի ամենամեծ բնակավայրը **մարզկենտրոն Աշտարակ քաղաքն է (19 հազ. մարդ): Այն ՀՀ գեղատեսիլ բնակավայրերից է:** Տարածվում է Արագած լեռան հարավային ստորոտին Քասաղ գետի կիրճի երկու ափերին, ծովի մակարդակից ավելի քան 1100 մ բարձրության վրա:

Քաղաքն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք. գտնվում է մայրաքաղաքից ընդամենը 20 կմ հեռավորության վրա՝ **Երևան-Գյումրի և Երևան-Ապիտակ-Վանաձոր** ավտոճանապարհների խաչմերուկում:

Աշտարակը, 1960-ական թվականներից սկսած, զարգացել է որպես Երևանի **արբանյակ քաղաք:** Մարզային կենտրոն դառնալուց հետո (1995 թ.) կատարում է նաև մարզի ընդարձակ տարածքի **վարչական, տնտեսական, կրթամշակութային կազմակերպիչ կենտրոնի գործառույթ:**

Մարզի քաղաքներից են նաև **Ապարանը և Թալինը:**

Տնտեսությունը: Արագածոտնի տնտեսության զարգացման վրա ազդող գործոններից հարկ է առանձնացնել հատկապես երկուսը՝ **բնական պայմանների բազմազանությունը՝** կաաված վերընթաց լանդշաֆտային գոտիականության հետ, և **մայրաքաղաքին մոտ լինելը:**

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը **գյուղատնտեսությունն է:** Գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 218,2 հազ. հա (մարզի տարածքի շուրջ 80%-ը), որից վարելահողերը՝ 54 հազ. հա:

Գյուղատնտեսությունը վերընթաց տարբեր բնական գոտիներում մասնագիտացման տարբեր ուղղություններ ունի: Ստորին գոտուն բնորոշ են **խաղողագործությունն ու այգեգործությունը**, միջին գոտուն՝ **հացահատիկային տնտեսությունը և անասնապահությունը**, իսկ վերին գոտուն՝ **արոտային անասնապահությունը:**

Ոռոգովի հողագործությունն այստեղ լայն տարածում գտավ վերջին տասնամյակների ընթացքում, երբ կառուցվեցին **Արզնի-Շամիրամի և Թալինի** ջրանցքները, ինչպես նաև **Ապարանի** ջրամբարը:

Արհեստական ոռոգումը և քարամաքրումը հնարավորություն տվեցին բարձրության ստորին և միջին գոտիներում յուրացնել նախկինում անմշակ հազարավոր հեկտար հողատարածություններ (ղբեր)՝ վերածելով դրանք այգիների և հացահատիկի, կերային մշակաբույսերի ու բանջարեղենի դաշտերի:

Վերին գոտու գյուղատնտեսության գլխավոր ուղղությունը՝ արոտային անասնապահությունը, զարգանում է **ալպյան և մերձալպյան հարուստ մարգագետինների բազայի վրա:** Ամռան ամիսներին անասունների հոտերի հետ այստեղ է բարձրանում նաև ցածրադիր գոտիների բնակչության մի մասը:

Արագածոտնի մարզի արդյունաբերությունը զարգանում է տեղում արտադրվող գյուղատնտեսական մթերքների վերամշակման, ինչպես նաև շինանյութերի հանքավայրերի շահագործման հիման վրա: Ամենազարգացած ճյուղը **սննդի արդյունաբերությունն է**, որը թողարկում է տարբեր

տեսակի գինիներ (Աշտարակ), կաթնամթերք (Աշտարակ, Ապարան, Թալին) և այլ արտադրատեսակներ: Թալինում է գտնվում թանկարժեք իրերի արտադրության գործարանը:

Հարցեր և առաջադրանքներ


1. Քարտեզի օգնությամբ վերլուծե՞ք Արագածոտնի մարզի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:
2. Բնութագրե՞ք և գնահատե՞ք Արագածոտնի մարզի զարգացման բնական նախադրյալները:
3. Ինչպիսի՞ն է Արագածոտնի մարզի տարաբնակեցման արդի պատկերը, և ինչպե՞ս է այն ձևավորվել:
4. Որո՞նք են Արագածոտնի մարզի տնտեսության բնորոշ գծերը:
5. Բացատրե՞ք Արագածոտնի մարզի գյուղատնտեսության մասնագիտացման ներքին տարբերությունները:

ԴԱՍ 53. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ: ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ


Արարատի մարզ
Տարածքը՝ 2090 կմ²
Բնակչությունը՝ 260,4 հազ. բնակիչ
Կենտրոնը՝ ք. Արտաշատ

Արմավիրի մարզ
Տարածքը՝ 1242 կմ²
Բնակչությունը՝ 265,8 հազ. բնակիչ
Կենտրոնը՝ ք. Արմավիր

Արարատի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (%. 2012 թ.)



Արմավիրի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (%. 2012 թ.)



Արարատյան գոգավորությունում գտնվող Արարատը և Արմավիրը տարածքով ամենափոքր, բայց առավել խիտ բնակեցված մարզերն են: Դրանց համար զարգացման բարենպաստ գործոններ են մերձերևանյան և տրանսպորտային բարենպաստ աշխարհագրական դիրքը, տարածքի հարթ մակերևույթը, բերրի հողերը և ջերմության առատությունը, ոռոգման հնարավորությունները, ազատ աշխատանքային ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև ճանապարհների և բնակավայրերի խիտ ցանցը: Ընդհանուր է նաև գյուղատնտեսության մասնագիտացումը (բանջարաբուստանային, խաղողագործական և պտղաբուծական ուղղվածու-



թյան բուսաբուծություն), որը հիմք է ծառայում պահածոների և գինու-կոնյակի արտադրության զարգացման համար:

Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Վերը նշված ընդհանրություններից բացի, մարզերից յուրաքանչյուրն ունի նաև աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, բնակչության և տնտեսության որոշակի յուրահատկություններ:

Արմավիրի մարզը կազմավորվել է Էջմիածնի, Արմավիրի և Բաղրամյանի, իսկ Արարատի մարզը՝ Մասիսի, Արտաշատի և Արարատի նախկին վարչական շրջանների միավորումից:

Արարատի և Արմավիրի մարզերի տարածքները կազմել են պատմական Հայաստանի **Այրարատ նահանգի** մի մասը:

Երկու մարզերի համար կարևոր հանգամանք է Երևանին անմիջական հարևանությունը: Սրանք տարանցիկ տրանսպորտային-աշխարհագրական դիրք են գրավում ՀՀ-ի հյուսիսային և հարավարևելյան մարզերի միջև ավտոմոբիլային և երկաթուղային հաղորդակցության համար:

Քարտեզի վրա ցույց տվեք սահմանակից մարզերը և երկրները:

Արմավիրի մարզի **Մարգարա գյուղի մոտ՝ Արաքս գետի վրա** կառուցված ավտոճանապարհային կամուրջը ՀՀ-ն կապում է Թուրքիայի հետ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Երկու մարզերի տարածքների մեծ մասը հարթավայրային է և գտնվում է 800-1000 մ բարձրություններում: **Արարատի մարզի** լեռնային մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի, Դահնակի ու Երանոսի միջին բարձրության լեռները: Վերջիններիս նախալեռներում՝ չորային կլիմայի պայմաններում, հիմնականում ջրամերժ ապարների վրա գոյացել է **ռելիեֆի՝ ձեզ հայտնի յուրահատուկ տիպ՝ վատահողեր (բեդլանդներ):** Այստեղ մակերևույթը խիստ



մասնատված է, հողաբուսական ծածկույթից համարյա զուրկ: **Վատահողերը հողագործության համար պիտանի տարածքներ չեն:**

Արարատի մարզում՝ Արաքսի Ագատ ու Վեղի վտակների վերին հոսանքի շրջանում, առանձին կղզյակներով պահպանվում է **անտառը, որը հիմնել է հայոց Խոսրով Կոտակ թագավորը IV դարում:** Այդտեղ մեր օրերում կազմակերպվել է Խոսրովի պետական արգելոցը:

Երկու մարզերի տարածքում է ձևավորվել Արարատյան արտեզյան ավազանը, որտեղ գտնվում է ստորերկրյա ջրերի պաշարների զգալի մասը:

Արմավիրի մարզի կլիման, հետևապես և հողաբուսական ծածկը գրեթե նույնությամբ կրկնում են Արարատի մարզի հարթավայրային մասի կլիման և հողաբուսական ծածկը: Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը չի գերազանցում 300 մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև $+40^{\circ}+42^{\circ}$: Գարունը կարճատև է:

Մարզերի հարթավայրային մասի **բնական կիսաանապատային լանդշաֆտները** խիստ փոփոխված են: Ներկայումս տիրապետում են **մարդածին լանդշաֆտները:** Բնական հողածածկը, որը **հումուսով աղքատ գորշահողերն են,** հազարամյակների ընթացքում ոռոգովի հողագործության պայմաններում վերածվել է **կուլտուր-ոռոգելի հողերի:** Հարթության ցածրադիր մասերում գոյացել են ճահճուտներ: Կան նաև աղուտներ:

Երկու մարզերն այնքան էլ հարուստ չեն օգտակար հանածոներով:

Արարատի մարզում կան կրաքարի, մարմարի, ֆոսֆորիտների, իսկ Արմավիրի մարզում՝ տուֆի, պեռլիտի և կերակրի աղի հանքավայրեր:

Երկու մարզերն էլ աչքի են ընկնում զբոսաշրջային ռեսուրսներով: Բազմաթիվ են **պատմական և ճարտարապետական հուշարձանները**: Արմավիրի մարզում հայտնաբերված են **Մեծամորի բրոնզեդարյան մետաղաձուլարանը, Վանի թագավորության քաղաք Արգիշտիխինիլիի ավերակները**: Պատմաճարտարապետական մեծագույն արժեք են ներկայացնում **Էջմիածնի վանական կառույցները, Ջվարթնոց տաճարի ավերակները**:

Բնակչությունը: Արմավիրի և Արարատի մարզերը բնակչության թվով և խտությամբ ՀՀ մարզերի շարքում գրավում են համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերը:

Երկու մարզերում էլ գերակշռում է գյուղական բնակչությունը: Արմավիրի մարզի բնակչության 68%-ն է գյուղաբնակ, իսկ Արարատի մարզում՝ 71%-ը: Երկու մարզերում էլ բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ: Արարատի մարզի **հարթավայրային մասում են գտնվում գրեթե բոլոր բնակավայրերը**. այստեղ բնակչության խտությունը շատ բարձր է՝ 300-400 մարդ/կմ²: Դրան հակառակ՝ մարզի լեռնային մասում խորհրդային տարիներին տասնյակ գյուղերի վերացման հետևանքով չնչին բնակչություն է մնացել:

Արմավիրի մարզում, չնայած ռելիեֆային պայմանների միատարրությանը, բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ: Բնակչության ամենամեծ կուտակումը մարզի արևելյան հատվածում է: Դեպի արևմուտք շարժվելիս այն կտրուկ նվազում է:

Մինչև 1970-ական թվականների վերջերը այդ տարբերությունն ավելի ակնհայտ էր, և մարզի ամբողջ արևմտյան կեսը գրեթե բնակեցված չէր: Միայն վերջին տասնամյակներին, երբ տարածքը ոռոգվեց և յուրացվեց, հիմնադրվեցին նոր բնակավայրեր, բնակչությունն ավելացավ:

Մարզերի հարթավայրային մասի տարաբնակեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ գյուղական **բնակավայրերի խտությունը մեծ**



Վափահողերը Երանոսի լեռներում

է, հաճախ չի նկատվում, թե որտեղ է վերջանում մի բնակավայրը և սկսվում մյուսը: Բնորոշ են խոշոր գյուղերը: Արարատի մարզում առավել խոշոր գյուղերն են Այնթափը, Արարատը և Նոր Խարբերդը, իսկ Արմավիրի մարզում՝ Մրգաշատը, Սարդարապատը և Փարաքարը:

Արարատի մարզն ունի չորս քաղաք՝ Արտաշատը (22,3 հազ. բն.), Արարատը (20,3 հազ. բն.), Մասիսը (20,4 հազ. բն.) և Վեդին (13,8 հազ. բն.): Մարզկենտրոն Արտաշատը գտնվում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ ավտոխճուղու վրա՝ հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևելք, որից և ստացել է իր անվանումը:

Արտաշատն ունի բազմաճյուղ արդյունաբերություն: Նա այդպիսին է դարձել վերջին 4-5 տասնամյակների ընթացքում, երբ կառուցվեցին սննդի, շինանյութերի և այլ ճյուղերի ձեռնարկություններ:

Արմավիրի մարզն ունի երեք քաղաք՝ Արմավիրը (29,4 հազ. բն.), Վաղարշապատը (46,7 հազ. բն.) և Մեծամորը (9,2 հազ. բն.):

Արմավիրը մարզի ամբողջ տարածքի նկատմամբ կենտրոնական դիրք ունի, գտնվում է երկրի երկաթուղային գլխավոր մայրուղու և Երևան-Վաղարշապատ-Արագած-Գյումրի ավտոճանապարհի վրա: Քաղաքում կան արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, կրթամշակութային, առողջապահական և մարզային նշանակության հիմնարկներ:

Տնտեսությունը: Արարատի և Արմավիրի մարզերը ՀՀ առավել զարգացած գյուղատնտեսություն ունեցող մարզերից են: Արմավիրի մարզը տալիս է ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 17,6%-ը (2-րդ տեղը Գեղարքունիքի մարզից հետո), իսկ Արարատի մարզը՝ 14,9%-ը: Տնտեսության հիմքը կազմող գյուղատնտեսությունը ձեռք է բերել մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն:



Արարատյան դաշտը՝ խաղողագործության և գինեգործության օրրան

Բացադրե՞ք՝ ինչ է մերձքաղաքային փնտրությունը:

Երկու մարզերում էլ բուսաբուծության համախառն արտադրանքը մի քանի անգամ գերազանցում է անասնապահությունը: Վարելահողերը Արմավիրի մարզի տարածքում ավելի մեծ բաժին ունեն (31,7%), քան Արարատի մարզում (12,2%):

Երկու մարզերում էլ գյուղատնտեսության զարգացման գլխավոր նախադրյալն արհեստական ոռոգումն է: Բուսաբուծությունն ունի բանջարաբուստանային և այգեգործական ուղղություն: Ցանքատարածությունները ոռոգման ջուր ստանում են Հրազդանից և Արաքսից սնվող մայր ջրանցքներից, արտեզյան ավազանի տասնյակ ջրհորներից, ինչպես նաև հզոր պոմպակայաններից և Ազատի ջրամբարից: Ոռոգման հետ կապված՝ առաջանում են **բնապահպանական այնպիսի հիմնախնդիրներ**, ինչպիսիք են գյուղատնտեսական հողերի **երկրորդային աղակալումը և արտեզյան ավազանի աղտոտման վտանգը**:

Բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի ցանքատարածություններով, բերքատվությամբ և համախառն բերքով Արմավիրի և Արարատի մարզերը հաջորդաբար առաջին և երկրորդ տեղերն են գրավում՝ զգալիորեն առաջ անցնելով ՀՀ այլ մարզերից: Արմավիրի և Արարատի մարզերը հաջորդաբար առաջին և երկրորդ տեղն են զբաղեցնում նաև խաղողագործության և պտղաբուծության զարգացման մակարդակով՝ միասին արտադրելով ՀՀ խաղողի և պտղի համախառն բերքի մեծ մասը:

Արհեստական լճակներում զարգանում է ձկնաբուծությունը:

Երկու մարզերում էլ **արդյունաբերության առաջատար ճյուղը** տեղական գյուղատնտեսական հումքի՝ խաղողի, պտուղների և բանջարեղենի վերամշակման սննդի արդյունաբերության ճյուղերն են: Գինու-կոնյակի և պահածոների արտադրության կենտրոններն են Արտաշատ, Արարատ, Մասիս, Արմավիր և Վաղարշապատ քաղաքները: **Գինու-կոնյակի գործարաններ** կան նաև մի շարք գյուղերում: Գործարանների արտադրանքը լայն սպառում ունի նաև արտասահմանում:

Արարատի մարզի տարածքում շահագործվող կրաքարի բազայի վրա Արարատ քաղաքում գործում է ցեմենտի խոշոր գործարան: Այստեղ է գտնվում նաև ոսկու կորգման ՀՀ միակ ֆաբրիկան:

Արմավիրի մարզի Արմավիր և Վաղարշապատ քաղաքներում կառուցվել են **մեքենաշինական, շինանյութերի և այլ ճյուղերի ձեռնարկություններ**:

Այդ ամենով հանդերձ՝ ՀՀ արդյունաբերության մեջ Արմավիրի մարզի տեղը և դերը որոշող գլխավոր ճյուղը էլեկտրաէներգետիկան է: **Այստեղ կառուցված է Հայաստանում և Հարավային Կովկասի տարածաշրջանում միակ ատոմային էլեկտրակայանը**: Դրա կառուցման և սպասարկման համար հիմնվել է **Մեծամոր քաղաքը**:


Հարցեր և առաջադրանքներ

1. Գնահատե՛ք և համեմատե՛ք Արարատի և Արմավիրի մարզերի աշխարհագրական դիրքերը:
2. Վերլուծե՛ք Արարատի և Արմավիրի մարզերի բնական պայմանները: Նշե՛ք ընդհանուր և տարբերիչ գծերը:
3. Արարատի և Արմավիրի մարզերը տարաբնակեցման ի՞նչ բնորոշ գծեր ունեն:
4. Նշե՛ք Արարատի և Արմավիրի մարզերի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Համեմատե՛ք դրանց զարգացման նախադրյալները:
5. Որո՞նք են Արմավիրի և Արարատի մարզերի արդյունաբերության գլխավոր ճյուղերը: Առանձնացրե՛ք այն արտադրությունները, որոնք հենվում են տեղական ռեսուրսների վրա:

ԴԱՍ 54. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Տարածքը՝ 5349 կմ²
 Բնակչությունը՝ 235 հազ. բնակիչ
 Կենտրոնը՝ ք. Գավառ

Գեղարքունիքի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% 2012 թ.)



Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Գեղարքունիքը կազմավորվել է Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի նախկին վարչական շրջանների միավորումից: Գեղարքունիքի մարզն իր տարածքով ամենամեծն է և այնքան է, ինչքան Կոտայքի, Արմավիրի և Արարատի մարզերը միասին վերցրած: Մյուս առանձնահատկությունն այն է, որ տարածքի 1/4-ը ծածկված է Սևանա լճի ջրով: Բնակչության թվով հանրապետության մարզերի շարքում միջին տեղ է գրավում:

Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի **Սյունիք աշխարհի** մի մասը՝ հիմնականում Գեղարքունիքի, Սոթքի և Արեգունու գավառները:

Մարզը հյուսիսից սահմանակից է **Տավուշի մարզին, արևելքից՝ Ադրբեջանին և ԼՂՀ-ին, հարավից՝ Վայոց ձորի, արևմուտքից՝ Կոտայքի և Արարատի մարզերին:**

Մյուս մարզերի համեմատությամբ Գեղարքունիքի **տրանսպորտային աշխարհագրական դիրքը պակաս նպաստավոր է**, ինչը, ընդհանուր առմամբ, փակուղի է հիշեցնում: Համապետական տարանցիկ նշանակության միակ մայրուղին, որը երկրի մայրաքաղաքը կապում է հյուսիս-արևելքին, հատում է մարզի տարածքի արևմտյան փոքր անկյունը միայն: Մարզից դուրս եկող մյուս՝ Ճամբարակ-Բերդ և Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհների նշանակությունը փոքր է: Փակուղային է նաև միակ՝



Երևան–Սևան–Սոթք երկաթուղին: ԼՂՀ-ի հյուսիսային մասի հետ կապող ավտոճանապարհի կառուցումը մարզի համար կունենա տարանցիկ դեր:

Բնական պայմանները և ռեսուրսները: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը:

Հիշեք Սևանա լճի հիմնական ջրագրական ցուցանիշները, և քարտեզի վրա ցույց տվեք ջրհավաք ավազանը եզերող լեռները:

Վարդենիսի և Գեղամա լեռներում տասնյակների են հասնում հրաբխային կոները: Հատկապես դիտարժան են **Աժդահակ** և **Արմաղան** հրաբուխները, որոնց ծագարածն խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ:

Արեգունու և Սևանի լեռնաշղթաների՝ դեպի Սևանա լիճն իջնող լանջերը զառիթափ են, ամենուրեք հանդիպում են լերկացած տարածություններ:



Սևան. Ժամանցի հանգի վայր

Բավականին շատ են սելավային հոսքերը, որոնք վտանգավոր են լճափով անցնող ավտոճանապարհի և երկաթգծի համար:

Սևանա լճի մերձակա ամենահարթ տեղամասերը գտնվում են նրա հարավարևելյան և հարավային մասերում՝ 1900-2200 մ բարձրությունների վրա: Հայտնի է **Մասրիկի** դաշտը, որը ծածկված է արգավանդ սևահողերով:

Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը ցուրտ է, հունվարի միջին ջերմաստիճանը՝ $-5^{\circ}-10^{\circ}$: Ձևավորվում է հաստատուն ձնածածկույթ: Ամառը տաք է (հուլիսին՝ $+18^{\circ}+20^{\circ}$), գերիշխում են քիչ ամպամած, արևոտ եղանակները: **Սևանա լիճը** նկատելիորեն մեղմացնում է ափամերձ գոտու ձմռան սառնամանիքը և ամռան շոգը:

Մթնոլորտային տեղումները շատ չեն. **լճի վրա և առափնյա գոտում**՝ 400-450 մմ, բարձրլեռնային գոտում՝ մինչև 1000 մմ:

Սևանա լճի հարակից շրջաններում տարածված են լեռնային տափաստանները, իսկ ավելի բարձրադիր գոտում՝ մերձալպյան և ալպյան լանդշաֆտները:

Սևանա լճից ազատված առափնյա գոտին այժմ հիմնականում զբաղեցված է արհեստական անտառով: Սևանի և Արեգունու լեռները պատմական անցյալում անտառապատ են եղել: Այժմ տեղ-տեղ պահպանվել են խղճուկ գիհուտներ և կաղնուտներ:

Վերջին տարիներին Սևանա լճի մակարդակի ավելի քան երեք մետրով բարձրացումը ոչ միայն խնդիրներ է լուծում, այլև առաջացնում է նոր բնույթի խնդիրներ՝ կապված շինությունների, լողափերի և անտառների առանձին հատվածների՝ ջրով ծածկվելու հետ:

Բազմազան ու հարուստ են մարզի **օգտակար հանածոները**: Մեծ արժեք են ներկայացնում **քրոմիտի (Շորժա), ոսկու (Սոթք), բազալտի և այլ շինանյութերի պաշարները, հանքային աղբյուրները (Լիճք և այլն)**:

Մարզի և ամբողջ Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ունեն **Սևանա լճի քաղցրահամ ջրի պաշարները**:

Բնակչությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո մարզի տարածքում վերաբնակեցվել են զգալի թվով հայեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև ռուս աղանդավորներ (մոլոկաններ): Ներկայումս Գեղարքունիքի բնակչության ազգային կազմը միատարր է:

Բնակավայրերի տեղաբաշխումն անհամաչափ է, հարմարված է լճի ափամերձ գոտու գծագրությանը ու ռելիեֆային պայմաններին: Սևանի ավազանի հյուսիսային նեղ՝ լճի ու լեռների միջև սեղմված գոտում ընդամենը մի քանի գյուղ կա: Դրան հակառակ՝ այդ գոտու արևելյան և հատկապես հարավային հատվածում գյուղերի թիվը կտրուկ մեծանում է, իսկ շատերն էլ լճափից բավական հեռու են գտնվում:

Մարզի 93 գյուղերում ապրում է բնակչության 70%-ը: Հարթավայրային տարածքներում շատ են խոշոր գյուղերը: Դրանցից Վարդենիկը, Սարուխանը, Ներքին Գետաշենը, Զոլաքարը, Նորատուսը, Գեղհովիտը, Լիճքը, Վերին Գետաշենը ունեն 5 հազ.-ից ավելի բնակչություն:

Մարզի հինգ քաղաքներն էլ եղել են նախկին վարչական շրջանների կենտրոններ՝ Գավառը (20,8 հազ. մարդ), Սևանը (19,2 հազ. մարդ), Մարտունին, Վարդենիսը և Ճամբարակը:

Մարզկենտրոն Գավառը հիմնադրել են 1830 թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից վերաբնակեցված հայերը: Ռուսական կայսրության ժամանակ քաղաքը կոչվել է Նոր Բայազետ, իսկ խորհրդային իշխանության տարիներին վերանվանվել է Կամո:

Գավառը նախախորհրդային Հայաստանի չորս քաղաքներից մեկն էր: Նրա բնակչությունը, գյուղատնտեսությունից բացի, զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով: Արդյունաբերությունը թափ առավ խորհրդային տարիներին: Կառուցվեցին մեքենաշինական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության գործարաններ, որոնց շնորհիվ Գավառը դարձավ Հայաստանի աչքի ընկնող արդյունաբերական կենտրոններից մեկը: Այստեղ է գտնվում Գավառի պետական համալսարանը:

Տնտեսությունը: Գեղարքունիքի մարզի տնտեսության մեջ առաջատարը գյուղատնտեսությունն է, որի արտադրանքի ծավալով ՀՀ մարզերի թվում Գեղարքունիքը գրավում է առաջին տեղը և տալիս է ՀՀ-ի գյուղատնտեսական համախառն արտադրանքի 18,1%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի 2/3-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը:

Գյուղատնտեսական հողահանդակների մեծ մասն արոտավայրերն ու խոտհարքներն են: Ընդարձակ են վարելահողերը: Այսպես՝ գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսը 345 հազ. հա է, որից 1/4-ը վարելահողեր են:

Մարզի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն են հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլագործությունը և անասնապահությունը: ՀՀ մարզերի թվում առաջինն է հացահատիկի և կարտոֆիլի



Սոթքի ոսկու հանքավայրը

ցանքատարածություններով և դրանց համախառն բերքով: ՀՀ հացահատիկի 27%-ը և կարտոֆիլի 46%-ը արտադրվում է Գեղարքունիքի մարզում: Մարզը խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակով նույնպես առաջինն է:

Մարզի արդյունաբերության մասնագիտացումը պայմանավորված էր ազատ աշխատանքային ռեսուրսների և գյուղատն-

տեսական հուճքի առկայությամբ: Այդ պատճառով էլ, սննդի արդյունաբերությունից բացի, մի քանի խոշոր գյուղական բնակավայրերում խորհրդային ժամանակներում ստեղծվել էին մեքենաշինության և թեթև արդյունաբերության աշխատատար արտադրություններ:

Գեղարքունիքի մարզում են գտնվում **Սոթքի ոսկու խոշոր հանքավայրը**, որին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող ոսկու հանքաքարի մեծ մասը, և Սևան-Հրազդան կասկադի գլխամասային՝ **Սևանի ստորգետնյա ջրաէլեկտրակայանը**:

Սևանա լճի ափամերձ գոտին («Սևան» ազգային պարկը) ՀՀ զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ամենաակտիվ շրջաններից է և ունի զարգացման լայն հեռանկարներ: Վերջին տարիներին այստեղ կառուցվել են հյուրանոցներ և հանգստի այլ օբյեկտներ:

Մարզի տեղն ու դերը Հայաստանի տնտեսության մեջ **չի սահմանափակվում նրա տարածքում եղած արտադրություններով**: Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ մարզում գտնվող **Սևանա լճի ջրային պաշարներն օգտագործվում են մյուս մարզերի հազարավոր հեկտար հողերը ոռոգելու, Հրազդան գետի վրա կառուցված մյուս ջրէկ-ներն աշխատեցնելու և ամբողջ երկրին էլեկտրաէներգիա մատակարարելու համար**:


Հարցեր և առաջադրանքներ

1. Վերլուծեք և գնահատեք Գեղարքունիքի մարզի տարածքը և աշխարհագրական դիրքը:
2. Գնահատեք Սևանա լճի և նրա ջրային պաշարների նշանակությունը Գեղարքունիքի մարզի և ամբողջ հանրապետության համար:
3. Վերլուծեք մարզի բնակչության տեղաբաշխման բնորոշ գծերը:
4. Բնութագրեք մարզի տնտեսությունը:
5. Քարտեզի օգնությամբ անցկացրեք զբոսաշրջային երթուղի Սևանա լճի ափամերձ բնակավայրերով և պատմամշակութային հուշարձաններով:

ԴԱՍ 55. ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Տարածքը՝ 3799 կմ²
 Բնակչությունը՝ 235,5 հազ. բնակիչ
 Կենտրոնը՝ ք. Վանաձոր

Լոռու մարզի մի քանի հիմնական
 ցուցանիշների մասնաբաժինը << ում
 (% 2012 թ.)



Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Լոռու մարզը տարածքի մեծությամբ հանրապետությունում երրորդն է, իսկ բնակչության թվով՝ հինգերորդը: Մարզը կազմավորվել է Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի, Ստեփանավանի և Տաշիրի նախկին վարչական շրջանների միավորումից:

Լոռին ունի համեմատաբար նպաստավոր աշխարհագրական դիրք: Տարածքի կենտրոնական մասով անցնում է Հայաստանի գլխավոր երկաթուղին: Դրա միջոցով հյուսիսային ուղղությամբ մարզը ելք ունի դեպի Վրաստան և նրա սևծովյան նավահանգիստները, իսկ արևմտյան ուղղությամբ՝ Գյումրու միջով դեպի Թուրքիա, ինչպես նաև դեպի մայրաքաղաք Երևան: Բացի այդ, մարզը բարեկարգ ավտոճանապարհներով կապվում է հարևան բոլոր մարզերի ու Վրաստանի հետ:

Լոռու մարզի տարածքը զբաղեցնում է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի արևելյան կեսը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ: Այն ունի ցայտուն արտահայտված բնական սահմաններ:

Թվարկեր և քարտեզի վրա ցույց տված սահմանակից երկրները և մարզերը, սահմաններում գտնվող լեռները:

Տարածքի մակերևույթը լեռնային է, ամենաբարձր կետը **Թեժ լեռան գագաթն** (3101 մ) է, ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանում է (մոտ 380 մ): Մարզին բնորոշ են ծալքաբեկորավոր լեռները, աստիճանակերպ լանջերը, լավային սարավանդները և անդնդախոր ձորերը:

Մարզի հյուսիսային հատվածում **Լոռու** գոգավորությունն է, իսկ հարավում՝ **Փամբակի**: Դրանք միմյանցից բաժանվում են **Բազումի** լեռնաշղթայով: Այստեղ է գտնվում **Պուշկինի** լեռնանցքը, որտեղով անցնում է Վանաձոր–Ստեփանավան խճուղին: Այստեղ 1828 թ. էրզրում մեկնող Ալեքսանդր Պուշկինը հանդիպել է Ալեքսանդր Գրիբոյեդովի դիակը Պարսկաստանից Թիֆլիս փոխադրող խմբին:

Լոռու գոգավորությունը մի սարահարթ է, որի արևմտյան տափարակ մասում՝ **Տաշիրի** դաշտում կան ճահճապատ տեղամասեր:



Մարզի կլիման համեմատաբար խոնավ է: Տարեկան տեղումների քանակը 500-800 մմ է: Նախալեռնային մասերում ձմեռը կարճատև է ու մեղմ, ամառը՝ տևական ու շոգ: Միջին բարձրություններում ձմեռը ձևառատ է, բայց ոչ խիստ, ամառն արևոտ է, տաք, օդը՝ մաքուր և խաղաղ:

Մարզի գլխավոր գետը **Դեբեդն** է՝ Ձորագետ, Փամբակ, Մարցագետ գլխավոր վտակներով: Գետերն արագահոս ու ջրառատ են, ունեն էներգետիկ և ոռոգիչ նշանակություն: Մարզը հարուստ է նաև հանքային աղբյուրներով:

Լոռու մարզում տիրապետում են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները: Անտառածածկ է տարածքի մոտ 1/5-ը:

Լոռին Հայաստանի **օգտակար հանածոներով հարուստ մարզերից է**: Հայտնի են հատկապես **պղնձի ու բազմամետաղների** (Ալավերդի, Շամլուղ, Ախթալա, Թեղուտ), **հրակայուն կավերի** (Թումանյան), **գրանիտի** և **զանազան այլ շինանյութերի** հարուստ հանքավայրերը:

Շատ են տարբեր դարերից մեզ հասած **պատմաճարտարապետական հուշարձանները**: Առանձնապես ուշագրավ են **Սանահինի** ու **Հաղպատի** եկեղեցական համալիրները (X-XIII դդ.), Օծունի վանքը (VI դ.), Ախթալայի բերդն ու վանքը (X-XIII դդ.), Լոռի բերդաքաղաքի ավերակները (XI դ.):

Նշված **պատմաճարտարապետական հուշարձանները**, ինչպես նաև անտառային լայնատարած զանգվածները, բնական տեսարժան վայրերն ու հուշարձանները (Թռչկանի ջրվեժը, Դեբեդնի կիրճը և այլն),

մեղմ կլիման բարենպաստ նախադրյալներ են ստեղծում բնակչության հանգստի կազմակերպման և զբոսաշրջության զարգացման համար:

Բնակչությունը: Լոռու մարզը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Մարզի բնակչության թվի ավելացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին XIX դարում՝ Ռուսաստանին միացվելուց հետո, երբ այստեղ բնակեցվեցին ոչ միայն հայեր, այլև հազարավոր ռուս աղանդավորներ (մոլոկաններ):

Բնակչության, հատկապես քաղաքային բնակչության արագ աճը եղել է խորհրդային տարիներին՝ կապված արդյունաբերության զարգացման հետ: Անկախության տարիներին բնակչության թիվը, ինչպես այլ մարզերում, նվազել է արտագաղթի պատճառով: Միայն 2001-2011 թթ. բնակչության թիվը նվազել է 50 հազարով, որն ամենամեծ ցուցանիշն է այլ մարզերի համեմատությամբ:

Վերջին տարիներին Լոռու մարզում են գրանցվում ՀՀ-ում բնական աճի ամենացածր ցուցանիշները (1,5-2%): Ուրբանիզացման մակարդակով (59%) երկրորդն է ՀՀ-ում (Սյունիքի մարզից հետո): Այստեղ է գտնվում բնակչության թվով ՀՀ երրորդ քաղաքը՝ Վանաձորը (85,7 հազ. մարդ):

Համեմատաբար մեծ բնակչություն ունեն (8-14 հազ. մարդ) նախկին վարչական շրջանների կենտրոնները՝ Ալավերդին, Ստեփանավանը, Սպիտակը, Տաշիրը: Մարզի մնացած երեք քաղաքները՝ Թումանյանը, Ախթալան և Շամլուղը, հանքագործական կենտրոններ են՝ բնակչության ոչ մեծ թվաքանակով:

Մարզի 122 գյուղերից հայտնիներն են Գուգարքը, Մեծավանը, Օձունը, Մարգահովիտը, Ջրաշենը, որոնք ունեն 3 հազ.-ից ավելի բնակչություն:

Լոռու մարզն ունի բնակչության տարաբնակեցման յուրահատուկ պատկեր: Բոլոր քաղաքները և գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնությունը կենտրոնացված են միջլեռնային գոգավորությունների հատակային մասում և Դեբեդ գետի ոչ ընդարձակ հովտում:

Մարզկենտրոնը՝ Վանաձոր քաղաքը, առավել արագ զարգացել է խորհրդային տարիներին, երբ դարձավ Հայաստանի երրորդ քաղաքը թե՛ բնակչության թվով և թե՛ արդյունաբերական արտադրանքի ու սպասարկման ոլորտի ծառայությունների ծավալով:

Տնտեսությունը: Լոռու մարզը ՀՀ-ի բազմաճյուղ արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող մարզերից է: Արդյունաբերության արտադրանքի ծավալով ՀՀ-ի 10 մարզերի մեջ գրավում է 4-րդ տեղը:

Տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է, որտեղ առաջատարը ի սկզբանե եղել է ծանր արդյունաբերությունը: Այստեղ են գտնվում Վանաձորի ջերմաէլեկտրակայանը, Ձորագետի ջրաէլեկտրակայանը և Հայաստանի ծանր արդյունաբերության առաջնեկը՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանը:

Շահագործման է հանձնվել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը, թեև դա բնապահպանական լուրջ խնդիր է հարուցել. արդեն հատվել են տասնյակ հեկտար անտառներ:



Դերեդի հովիտ



Հաղպատի վանական համալիրը

Լոռու մարզի տնտեսության մյուս կարևոր ճյուղը **քիմիական արդյունաբերությունն** է: Խորհրդային տարիներին Վանաձորի և Ալավերդու ձեռնարկությունները թողարկում էին քիմիական պարարտանյութեր, քիմիական թելեր, ծծմբաթթու և այլ նյութեր, որոնք արտահանում էին այլ հանրապետություններ և արտասահմանյան երկրներ: Ներկայումս քիմիական գործարաններն աշխատում են ընդհատումով և հզորության մի մասով:

Մարզի **լեռնահանքային, մետալուրգիական և քիմիական ձեռնարկությունները** մեծ չափով աղտոտում են Վանաձոր և Ալավերդի քաղաքների օդային ավազանները, Փամբակ և Դերեդ գետերն ու հարակից անտառային տարածքները:

Նախկինում մարզում ձևավորվել էր նաև **մեքենաշինական** զարգացած ճյուղ, որի ձեռնարկությունները Վանաձորում, Սպիտակում և Ստեփանավանում արտադրում էին հաստոցներ,

ավտոմատ սարքեր, վերելակներ և այլն:

Երկրաշարժը մեծ վնաս հասցրեց մարզի ամբողջ արդյունաբերությանը: Դադարեցին արտադրանք տալ շատ այլ գործարաններ ու ֆաբրիկաներ ևս: Այժմ դրանց մի մասը վերականգնվում ու վերագործարկվում է:

Լոռու մարզի բնական պայմանների բազմազանությունը պայմանավորվել է **գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի ու տարածքային կազմակերպման բազմազանությունը**: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են տարածքի 66%-ը, որի մեծ մասը կազմում են արոտավայրերը և խոտհարքները: Մարզի տարբեր մասերում, կախված տեղական պայմաններից, գերակշռում են **այգեգործությունը, հացահատիկային տնտեսությունը և կարտոֆիլի մշակությունը**: Ամբողջ մարզի համար բնորոշ է **անասնապահության մասնագիտացումը**: Անասնաբուծության արտադրանքը մոտ երկու անգամ գերազանցում է բուսաբուծության արտադրանքին: Լոռին վերջին տասնամյակների ընթացքում եղել և այժմ էլ մնում է որպես տոհմային տավարաբուծության

առաջատար շրջան: Մարզն աչքի ընկնող տեղ է գրավում կաթի արտադրության և պանրայուղագործության գծով:

Բարենպաստ ՏԱԴ-ը, բազմազան բնական ռեսուրսները, որակյալ աշխատանքային ռեսուրսները, խոշոր կազմակերպիչ կենտրոնի առկայությունը նպաստավոր նախադրյալներ են ստեղծում **բազմաճյուղ տնտեսության, այդ թվում՝ զբոսաշրջության զարգացման ու համաչափ տեղաբաշխման համար:**


Հարցեր և առաջադրանքներ

1. Արդյո՞ք Լոռու մարզի աշխարհագրական դիրքը նպաստավոր է Պատասխանը հիմնավորե՞ք:
2. Բնութագրե՞ք և գնահատե՞ք մարզի գլխավոր բնական հարստությունները:
3. Ինչպիսի՞ն են մարզի ժողովրդագրական և տարաբնակեցման բնորոշ գծերը:
4. Տվե՞ք մարզի արդյունաբերության ճյուղային կառուցվածքի և տեղաբաշխման բնութագիրը:
5. Որո՞նք են մարզի գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը: Բնական պայմանների բազմազանությունն ինչպե՞ս է ազդել դրանց տեղաբաշխման վրա:
6. Ինչի՞ վրա կարող է հենվել մարզի հեռանկարային զարգացումը:

ԴԱՍ 56. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Տարածքը՝ 2086 կմ²
 Բնակչությունը՝ 254,4 հազ. բնակիչ
 Կենտրոնը՝ ք. Հրազդան

Կոտայքի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% 2012 թ.)




Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Կոտայքը կենտրոնական դիրք է գրավում Հայաստանի Հանրապետության տարածքում: Նա միակ մարզն է, որը որևէ արտասահմանյան պետության հետ սահման չունի: Կոտայքը միաժամանակ այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Թվարկե՞ք և քարտեզի վրա ցույց տվե՞ք Կոտայքին սահմանակից մարզերը և սահմաններով ձգվող լեռները:

Մարզի տարածքը հնում կազմել է **Մեծ Հայքի Այրարատ նահանգի** մի մասը՝ զբաղեցնելով հիմնականում նրա **Կոտայք** և **Նիգ** գավառները:

Մարզը կազմավորվել է նախկին երեք վարչական շրջանների՝ Հրազ-



դանի, Աբովյանի և Նաիրիի միավորումից: Մարզի ներկայիս տրանսպորտային-աշխարհագրական դիրքի առանձնահատկությունն այն է, որ տարածքի կենտրոնական մասով անցնում են հանրապետության հյուսիսը հարավին և հարավն արևելքին կապող առանցքային նշանակության ավտոմայրուղիները, Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը: Դրանց շնորհիվ **Կոտայքը դարձել է ՀՀ ամենակարևոր տարանցիկ մարզերից մեկը:**

Կոտայքն աչքի է ընկնում ռելիեֆի բնական լանդշաֆտների և ռեսուրսների մեծ բազմազանությամբ:

Տարածքի արևելյան մասում, որտեղ **Գեղամա լեռներն** են, լայն տարածում ունեն ռելիեֆի հրաբխային ձևերը՝ հրաբխային կոները, քարացրոնները, լավային ընդարձակ ծածկույթներն ու հոսքերը:

Հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հռչակված են **Քառասունակնի, Արզնու և Գառնու աղբյուրները**, որոնց սառնորակ ջրերը հատուկ խողովակներով հասցվում են նաև մայրաքաղաք Երևան:

Մարզի կենտրոնական հատվածում՝ Հրազդանի երկու ափերին տարածվում են **Եղվարդի և Կոտայքի թույլ մասնատված լավային սարավանդ-**

ները: Այստեղ հայտնի են Արայի, Գութանասար և Հատիս լեռնագագաթները:

Մարզի հյուսիս-արևմուտքում և հարավում համապատասխանաբար գտնվում են Ծաղկունյաց և Ողջաբերդի լեռնաշղթաները:

Եղվարդի ու Կոտայքի սարավանդներում կլիման չոր ցամաքային է, իսկ մարզի միջին բարձրություններում՝ բարեխառն լեռնային: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը սարավանդներում 400 մմ է, իսկ բարձրադիր գոտիներում՝ 800 մմ:

Սարավանդներին բնորոշ են չոր տափաստանային լանդշաֆտները: Ավելի վեր տարածվում են սևահողային տափաստանային, իսկ Ծաղկունյաց լեռներում՝ անտառային լանդշաֆտները: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ են լեռնամարգագետնային լանդշաֆտները:

Կոտայքի մարզի տարածքում կան պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ: Այստեղ են գտնվում Գառնու հեթանոսական տաճարը (I դ.), Գեղարդի վիմափոր վանքը (XII-XIII դդ.), Կեչառիսի վանքը (XI-XIII դդ.), Բջնիի բերդը (XI դ.) և այլն:

Կոտայքի ընդերքը հարուստ է բազմապիսի օգտակար հանածոներով: Հայտնի են նեֆելինային սիենիտների (Թեժ լեռ), երկաթի (Աբովյան, Հրազդան), ոսկու (Մեղրաձոր) և ոչ մետաղային հանածոների (մարմար, պեռլիտ և այլն) հանքավայրերը, հանքային աղբյուրները (Բջնի, Արզնի, Հանքավան):

Մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով: Կոտայքի կենտրոնով հոսող Հրազդանը և մնացած գետերն ունեն էներգետիկ և ոռոգիչ նշանակություն:

Բնակչությունը: Կոտայքի մարզը բնակչության թվով և միջին խտությամբ Հայաստանի Հանրապետությունում երրորդն է (զիջում է Արմավիրի և Արարատի մարզերին), իսկ ուրբանիզացման մակարդակով (54%) չորրորդն է (զիջում է Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերին):

Մարզի ներկայիս բնակչության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել բնակչության մեխանիկական աճը: Առավել մեծ ներհոսք եղել է XX դ. 50-ական թվականներից հետո, երբ բուռն զարգացում է ապրել արդյունաբերությունը, և աշխատող ուժի մեծ կարիք է զգացվել: Այդ ամենի

շնորհիվ խորհրդային տարիներին արագորեն աճել են Հրազդան (42,0 հազ. բն.), Աբովյան (43,9 հազ. բն.), Չարենցավան (20,4 հազ. բն.), Եղվարդ, Նոր Հաճն, Բյուրեղավան քաղաքները: Ծաղկաձորը թեև բնակչության թվով ամենափոքր քաղաքն է, սակայն որպես հանգստի և զբոսաշրջության կենտրոն առանձնահատուկ տեղ է գրավում մարզում և ՀՀ քաղաքների շարքում:



Գեղարդի վանքը



Ծաղկածորի ճոպանուղին

Մարզի բնակչության տարաբնակեցմանը բնորոշ է այն, որ բնակավայրերը մոտ են ընկած Հրազդան գետին և դրան զուգահեռ անցնող երկաթգծին ու ավտոմայրուղուն: Միայն մարզի ծայր հարավում՝ **Եղվարդի** ու **Կոտայքի սարավանդներում** է, որ բնակավայրերը հեռանում են Հրազդան գետից և տարածվում դեպի աջ ու ձախ: Մարզի 62 գյուղերից 7-ն ունեն ավելի քան 5000 բնակիչ (Գառնի, Նոր Գեղի, Քասախ, Զովունի, Առինջ, Զրվեժ, Պռոշյան):

Արովյանը ստեղծվել է որպես **Երևանի արբանյակ քաղաք** և Հայաստանի արդյունաբերական բուռն զարգացման տարիներին դեպի իրեն է ձգել Նոր կառուցվող գործարաններ՝ դրանով իսկ դանդաղեցնելով Երևանի անհարկի աճը:

Չարենցավանը հայտնի է որպես մեքենաշինության, **Արզնին**՝ հանքային ջրերի արտադրության ու առողջարանային, **Նոր Հաճնը**՝ թանկարժեք քարերի մշակման, **Եղվարդը**՝ թեթև և սննդի արդյունաբերության, **Բյուրեղավանը**՝ ապակե տարաների և հախճապակու արտադրության, **Ծաղկածորը**՝ հանգստի կազմակերպման կենտրոն:

Տնտեսությունը: Կոտայքը Հայաստանի առավել զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է, որտեղ արդյունաբերության արտադրանքը ծավալով երկու անգամ գերազանցում է գյուղատնտեսությանը: Արդյունաբերական արտադրանքի ծավալով երկրորդն է (Սյունիքի մարզից հետո): Մարզը բացառիկ դեր ունի **հատկապես էլեկտրաէներգետիկայի բնագավառում:** Այստեղ են գտնվում **Սևան-Հրազդան կասկադի վեց** կայաններից երեքը և Հրազդանի՝ հանրապետության խոշորագույն ցերմաէլեկտրակայանը: Այստեղից են սկսվում **հանրապետության բարձր լարման գլխավոր էլեկտրահաղորդման գծերը** և էլեկտրաէներգիան փոխանցվում է հանրապետության տարածքով մեկ:

Կոտայքի մարզն աչքի ընկնող դեր է կատարում նաև հանրապետության մեքենաշինության, շինանյութերի (ցեմենտի) արտադրության և սննդի արդյունաբերության մեջ:

Մարզի գյուղատնտեսության մասնագիտացումն ընդհանուր առմամբ ունի **մերձքաղաքային բնույթ:** Ինչո՞վ է դա պայմանավորված: Մի կողմից՝ Երևան քաղաքի մոտիկությունը, մյուս կողմից՝ քաղաքային բնակչության բարձր տոկոսը մարզի ներսում, իսկ ամառվա ամիսներին՝ նաև բուժվողների ու հանգստացողների մեծ հոսքն ավելացնում է թարմ մթերքների պահանջարկը: Գյուղատնտեսությունը մարզում ունի **կաթնամատու անասնապահական**, իսկ ցածրադիր շրջաններում՝ նաև **պտղաբու-**

ծական ուղղություն: Մարզը երկրորդն է (զիջում է Արմավիրի մարզին) հանրապետությունում ձվի արտադրությամբ, խոզերի գլխաքանակով:

Կոտայքն առանձնանում է նաև իր **ռեկրեացիոն ռեսուրսներով**, որոնց օգտագործման շնորհիվ զարգանում է բնակչության հանգստի կազմակերպման ճյուղը: Այստեղ են գտնվում **Արզնի** և **Հանքավան առողջարանները** (հանքային աղբյուրների մոտ), **Մարմարիկի առողջարանային գոտին**՝ հանգստի ու առողջարանական բազմաթիվ ճամբարներով: Այստեղ է նաև **Ծաղկաձորի միջազգային հռչակ ունեցող մարզական համալիրը**:

Մարզի կենտրոնական բարենպաստ դիրքը, ջրային և ռեկրեացիոն ռեսուրսներով ապահովվածությունը, ազատ աշխատուժի առկայությունը, էներգետիկ հզորություններն ու առկա տնտեսական ներուժը և Երևանի մոտիկությունը բարենպաստ նախադրյալներ են մարզի հեռանկարային զարգացման համար:


Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրեք և գնահատեք Կոտայքի մարզի աշխարհագրական դիրքը:
2. Որո՞նք են մարզի գլխավոր բնական ռեսուրսները:
3. Ի՞նչ գիտեք մարզի բնակչության մասին:
4. Որո՞նք են մարզի արդյունաբերական զարգացմանը նպաստող գործոնները: Քարտեզի վրա ցույց տվեք գլխավոր արդյունաբերական կենտրոնները:
5. Մարզի հեռանկարային զարգացման համար ի՞նչ նպաստավոր բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալներ կարող եք առանձնացնել:

ԴԱՍ 57. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Տարածքը՝ 2680 կմ²
 Բնակչությունը՝ 251,9 հազ. բնակիչ
 Կենտրոնը՝ ք. Գյումրի

Շիրակի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% 2012 թ.)



Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Շիրակի մարզը տարածքի մեծությամբ Հայաստանում միջին տեղ է գրավում, բնակչության թվաքանակով և խտությամբ չորրորդն է: Մարզը կազմավորվել է Արթիկի, Անիի, Ախուրյանի, Աշոցքի և Ամասիայի նախկին վարչական շրջանների միավորումից:

Շիրակը ՀՀ արտաքին սահման ունի մեզ հարևան Թուրքիայի և Վրաստանի հետ: Հարավից սահմանակից է Արագածոտնի, արևելքից՝ Լոռու մարզին:



ՀՀ վարչական քարտեզի վրա ցույց տվեք այն մարզերը, որոնք ընդհանուր սահման ունեն երկու պետության հետ:

Շիրակի աշխարհագրական դիրքի կարևոր կողմերից մեկն այն է, որ հյուսիսում **սահմանակից է հայաբնակ Ջավախքին:**

Շիրակի մարզն իր անունը ստացել է **պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Շիրակ գավառից**, որն ավելի ընդարձակ տարածություն էր գրավում, քան ներկա մարզը:

Գտնվելով ՀՀ տարածքի ծայր հյուսիս-արևմուտքում՝ Շիրակի մարզն ունի եզրային դիրք: Չնայած դրան՝ նրա տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոճանապարհը: Նրա միջոցով են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը: Ընդհատված կապի վերականգնման դեպքում կտրուկ կաճի մարզի տարանցիկ նշանակությունը:



Մարզի տարածքում

Բնական պայմանները և ռեսուրսները: Մարզի տարածքում հյուսիսից հարավ առանձնանում են Աշոցքի սարահարթը, Շիրակի գոգավորությունը և Արագածի լեռնալանջերը:

Շիրակի գոգավորությունը մի ընդարձակ իջվածք է, որի հատակը՝ Շիրակի դաշտը (1500-1600 մ), ծածկված է բերրի սևահողերով: Գոգավորությունը հյուսիսից հարավ հատում է Ախուրյանի բավական լայն ու խոր կիրճը:

Մարզի հարավային մասին բնորոշ է Արագածի լավաների գոյացրած բլրոտ ու քարքարոտ մակերևույթը:

Մարզի հյուսիս-արևմուտքում եղնախաղի, իսկ հյուսիսարևելյան եզրում Զավախքի հրաբխային լեռներն են, որոնց միջև տարածվում է Աշոցքի բարձրադիր սարահարթը (1800-2200 մ): Այստեղ կան մի շարք գոգավորություններ, որոնց մի մասը, ի տարբերություն Շիրակի դաշտի, ճահճապատ է: Այստեղ է գտնվում Արփի լիճ-ջրամբարը:

Երկրակեղևի շարժումները Շիրակում տակավին շարունակվում են: Այդ մասին են վկայում 1926 թ. և 1988 թ. տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերը:

Մարզում ձմեռը ցուրտ է և ձնառատ, հյուսիսում լինում են սառնամանիքներ (-30°-40°): Աշոցքի սարահարթում՝ Պաղակն բնակավայրում, գրանցվել է օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը Հայաստանում՝ -46°: Ամառը մարզի հարավում շոգ է ու չոր (+22°), իսկ հյուսիսում՝ զով (+15°):

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը Շիրակի դաշտում 500-550 մմ է, Աշոցքի սարահարթում և նրա շրջակա լեռներում՝ 700 մմ:

Մարզի միակ խոշոր գետը Ախուրյանն է, որն սկիզբ է առնում Արփի լճից: Ախուրյանի վտակներից են Գյումրիգետը, Զաջուռգետը և Մանթաշը, որոնք ամռանը համարյա ցամաքում են:

Մարզի տարածքում են գտնվում Ախուրյանի (ՀՀ-ում խոշորագույն), նաև Կառնուտի, Մանթաշի, Սառնաղբյուրի, Հոռոմի ջրամբարները:

Շիրակի բնական լանդշաֆտները, ի տարբերություն մյուս մարզերի,

միատարր են: Բնական անտառներն ամբողջովին բացակայում են: **Տիրապետողը լեռնային տափաստաններն են՝** հումուսով հարուստ սևահողերով և խոտային բուսականությամբ: Բարձրադիր գոտում ընդարձակ տարածություններ են զբաղեցնում մերձալպյան ու ալպյան ծաղկաշատ մարգագետինները:

Շիրակի մարզը հարուստ է **շինանյութերի՝ տուֆի (Արթիկ), պեմզայի (Պեմզաշեն) և բազալտի հանքերով:** Կան նաև գորշ ածխի ոչ հարուստ հանքավայրեր (Ջաջուռ), ոսկու երևակումներ:

Մարզի տարածքում են գտնվում լայն ճանաչում ունեցող **ճարտարապետական հուշարձաններ՝ Վահրամաբերդի ուրարտական ամրոցը (Ք.ա. I հազարամյակ), Հառիճի և Մարմաշենի վանքերը (X-XIII դդ.), Երերուլքի եկեղեցին (V դ.) և այլն:** Պետական սահմանից այն կողմ՝ Թուրքիայի տարածքում, ընդամենը մի քանի կիլոմետրի վրա երևում են **Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները:**

Բնակչությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց (1828 թ.) հետո Արևմտյան Հայաստանից վերաբնակեցված հայության զգալի մասը հաստատվել է Շիրակում և ավելացրել բնակչության թվաքանակը:

Բնակչությանը ծանր հարված հասցրեց 1988 թ. երկրաշարժը: Դրա պատճառով հազարավոր մարդիկ զոհվեցին, շատերն արտագաղթեցին:

Բնակչության խտությունն ավելի բարձր է մարզի տարածքի կենտրոնական մասում՝ **Շիրակի դաշտի ավելի հարթ հատվածում**, որտեղ շատ են վարելահողերը, գյուղերն ավելի խոշոր են: Այստեղ է նաև մարզկենտրոն **Գյումրին:** Նոսր է բնակեցված մարզի հյուսիսը՝ Աշոցքի սարահարթը:

Մարզի բնակչության գրեթե կեսը և քաղաքային բնակչության 4/5-ից ավելին ապրում են Գյումրիում: Մարզի մյուս երկու քաղաքները՝ Արթիկը և Մարալիկը, նախկին վարչական շրջանների կենտրոններ են:

Մարզի 128 գյուղերից Ախուրյանը, Ագատանը, Պեմզաշենը, Փանիկը, Փոքր Մանթաշը ունեն 3 հազ.-ից ավելի բնակչություն:

Ներկայումս մարզի **բնակչության գլխավոր հիմնախնդիրը նրա զբաղվածության ապահովումն է:** Այն ընդհանուր է ամբողջ հանրապետության համար, բայց Շիրակի մարզում ավելի սուր բնույթ ունի:

Տնտեսությունը: Մինչև 1988 թ. Սպիտակի երկրաշարժը Շիրակի մարզն իր զարգացման մակարդակով և տնտեսական ներուժով երկրում **գրավում էր երկրորդ տեղը՝** զիջելով միայն Երևան քաղաքին: Վերջին երկու տասնամյակներին մարզի տնտեսությունն ավելի խորը անկում է ապրել, քան այլ մարզերը: Դրա պատճառն այն է, որ ընդհանուր տնտեսական ճգնաժամից բացի, Շիրակում ավելի կործանիչ էին երկրաշարժի տնտեսական հետևանքները:

Երկրաշարժի հետևանքների լիակատար վերացումը պահանջում է տեղական բնակչության և մեր երիտասարդ պետության ուժերի գերազույն լարում: Ընդունվել և իրականացվում է երկրաշարժի հետևանքների վերացման կառավարական ծրագիր:

Ճիշտ է՝ դանդաղորեն, բայց հաստատուն կերպով վերականգնվում են Շիրակի մարզի տնտեսության ենթակառուցվածքները և արտադրական հզորությունները: Նպատակ է դրված առաջիկա մի քանի տարում վերականգնել Շիրակի մարզի երբեմնի տեղը հանրապետության մարզերի շարքում: Մարզկենտրոնում կառուցվում է ՀՀ-ում առաջին տեխնոպարկը: Գյումրին ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակելով՝ լայն հնարավորություններ են առաջանում զբոսաշրջության զարգացման համար:

Հայաստանի միասնական տնտեսական համալիրում խորհրդային տարիներին Շիրակն առանձնանում էր առաջին հերթին **թեթև արդյունաբերության, մեքենաշինության և սննդի արդյունաբերության ճյուղերով:**

Արդյունաբերության համախառն արտադրանքի գրեթե կեսը բաժին էր ընկնում թեթև արդյունաբերությանը: Հայաստանի չափանիշներով խոշորագույն ձեռնարկություններ էին Գյումրու տեքստիլ կոմբինատը (հիմնովին ավերվել էր և այժմ մասամբ վերականգնվում է), Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկան:

Ներկայումս Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը դարձել է սննդի արդյունաբերությունը: Հայտնի է Գյումրու մսի կոմբինատը:

Գյումրու հարևանությամբ՝ Ախուրյան գյուղում կառուցվել է շաքարի խոշոր գործարան: Այն **կխթանի նաև շաքարի ճակնդեղի մշակման վերականգնմանը** (Շիրակի մարզը մինչև երկրաշարժը հանրապետությունում շաքարի ճակնդեղի ամենախոշոր արտադրողն էր):

Մարզի տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավում բնական շինանյութերի արդյունահանումը: Հայտնի է Արթիկի տուֆի արդյունահանման խոշորագույն ձեռնարկությունը:

Ներկայումս ՀՀ տնտեսության մեջ Շիրակը համարվում է նախ և առաջ գյուղատնտեսական մասնագիտացում ունեցող մարզ:

Մարզը խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, ինչպես նաև մսի և կաթի արտադրությամբ զիջում է միայն Գեղարքունիքին: Անասնապահությունը հենվում է բարձրադիր գոտու փարթամ արոտավայրերի ու բնական խոտհարքների, ինչպես նաև դաշտավարությունից ստացվող անասնակերի վրա:

Մարզի **գյուղատնտեսության** մյուս առաջատար ճյուղերն են **հացահատիկի մշակությունը, կարտոֆիլագործությունը**: Վարելահողերը (80 հազ. հա) զբաղեցնում են մարզի տարածքի մոտ 30%-ը: Ոռոգովի հողերի մեծ մասը գտնվում է Շիրակի դաշտում, որը ոռոգվում է Ախուրյան գետից սնվող Շիրակի ջրանցքով: Շիրակի մարզը հացահատիկի և կարտոֆիլի բերքով մարզերի մեջ երկրորդն է (զիջում է Գեղարքունիքի մարզին):

Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղություններն են համարվում արդյունաբերության գիտատար և աշխատատար նորագույն

ճյուղերը, տեղական գյուղատնտեսական հումքի և շինանյութերի վերամշակման ճյուղերը, զբոսաշրջությունը:


Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք և վերլուծեք Շիրակի մարզի աշխարհագրական դիրքի գլխավոր առանձնահատկությունները:
2. Նշեք մարզի բնական պայմանների ներքին տարբերությունները:
3. Ինչ գիտեք մարզի բնակչության և նրա տարաբնակեցման մասին:
4. Տվեք մարզի տնտեսական զարգացման նախաերկրաչափային և ներկա ժամանակների համեմատական բնութագիրը:
5. Որո՞նք են մարզի տնտեսության զարգացման հիմնախնդիրները: Ինչպիսի՞ն են տեսնում զարգացման հեռանկարը:

ԴԱՍ 58. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Տարածքը՝ 4506 կմ²
 Բնակչությունը՝ 141,8 հազ. բնակիչ
 Կենտրոնը՝ ք. Կապան

Սյունիքի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% 2012 թ.)



Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Սյունիքը տարածքի մեծությամբ ՀՀ-ում երկրորդն է, իսկ միայն ցամաքային տարածքի չափերով՝ առաջինը:

Նախկինում Սյունիք (Սիսական) անունով կոչվել է **Մեծ Հայքի իններորդ նահանգը**, որի մի հատվածն է միայն ներկայիս Սյունիքի մարզը: Մարզը կազմավորվել է **Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրու** նախկին վարչական շրջանների միավորումից:

Յուրահատուկ են մարզի տարածքի ձևը և սահմանների ուրվագիծը: Այն զբաղեցնում է ՀՀ տարածքի ծայր հարավարևելյան հատվածը, որը նախկինում երեք կողմից սեղմված էր Ադրբեջանի, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Իրանի միջև: Միայն հյուսիսարևմտյան շուրջ 40 կմ լայնության տարածքով է, որ Սյունիքը միանում է ՀՀ-ի մնացած տարածքին (Վայոց ձորի մարզի միջոցով): Այժմ Սյունիքն ամբողջ արևելյան մասով սահմանակցում է ԼՂՀ-ին:

Նախկինում Սյունիքի տրանսպորտային-աշխարհագրական դիրքը խիստ անբարենպաստ էր. գլխավոր ճանապարհները, բացառությամբ մեկի, որը Նախիջևանը կապում էր Ադրբեջանին, մտնում էին փակուղի: Այժմ Արաքս գետի վրա նոր կամրջի կառուցումով և Իրանի հետ առևտրատնտեսական կապերի հաստատումով Սյունիքը խիստ կարևոր տարանցիկ նշանակություն է ձեռք բերել: Սյունիքի տարածքով Պարսից ծոցը և Իրա-



Նր կապվում են Հայաստանին, Վրաստանին ու Սև ծովին, իսկ արևմուտք-արևելք ուղղությամբ Թուրքիան ու Նախիջևանի Հանրապետությունը կարող են կապվել Ադրբեջանին ու Կասպից ծովին: Սյունիքի մարզի տարածքով է անցնում ՀՀ-ն ԼՂՀ-ի հետ կապող հիմնական ավտոմայրուղին:

Բնական պայմանները և ռեսուրսները: Սյունիքը մեր երկրի ամենալեռնոտ և մակերևույթի բարձրությունների ամենամեծ տարբերություններ ունեցող մարզն է. նրա ամենաբարձր (Կապուտջուղ լեռ՝ 3904 մ) և ամենացածր (Մեղրու կլ լճ՝ 400 մ) կետերի բարձրությունների տարբերությունն անցնում է 3500 մ-ից և ավելին է, քան որևէ այլ մարզում:



Բնության հուշարձան քարե բուրգերը

Մարզի արևմտյան սահմանով միջօրեականի ուղղությամբ ձգվում է **Զանգեզուրի լեռնաշղթան**: Նրա ջրբաժան գոտին ատամնավոր է, ունի անանցանելի ժայռոտ կատարներ: Լեռնաշղթայից ճյուղավորվում են **Բարգուշատի** և **Մեղրու լեռնաբազուկները**:

Մարզի հյուսիսում Սյունիքի (Ղարաբաղի) հրաբխային բարձրավանդակն է՝ բազմաթիվ կոնաձև բարձրացումներով (**Մեծ Իշխանասար, Ծղուկ**): Նրա

համեմատաբար փոքրաթեք լանջերը ծածկված են լավային դաշտերով ու հոսքերով, ընդարձակ «քարային ծովերով»: Այստեղ են գտնվում Սիսիանի և Գորիսի սարավանդները:

Բարձրավանդակի փեշերին՝ Գորիսին հարող տարածքին բնորոշ են մակերևույթի յուրահատուկ ձևեր՝ «բուրգեր», «սնկեր» և այլ զանազան պատկերներ հիշեցնող ֆիզիկական հողմահարության ժայռամնացուկներ:

Մարզի մակերևույթի խիստ մասնատվածությունը և բարձրությունների մեծ տարբերություններն առաջ են բերել **կլիմայի բացառիկ բազմազանություն**:

Մարզի ցածրադիր մասերում մթնոլորտային տեղումները սակավ են՝ տարեկան 260-300 մմ: Ամառը շոգ է (+25°+26°), ձմեռը՝ մեղմ (հունվարի միջին ջերմաստիճանը՝ 0°+1°): Կայուն ձնածածկույթ չի առաջանում: Այստեղ կլիման **չոր մերձարևադարձային է**:

Հակադիր պատկերն է բարձրլեռնային գոտում, որտեղ տեղումներն առատ են և, ամառը զով է: Ձմեռը ցուրտ է ու ձնառատ, հաճախակի ձնաբքերի հետևանքով փակվում են լեռնանցքները:

Սյունիքի մարզի գետերից նշանավոր են **Որոտանը, Ողջին, Մեղրիգետը**:

Որոտանի ջրերի մի մասը ջրատար թունելով հասնում են Կեչուտի ջրամբար և այստեղից էլ՝ խառնվելով Արփայի ջրերին՝ **Սևանա լիճ**: Մարզի բարձրլեռնային գոտում շատ են մանր լճակները (Սև, Ալ, Կապույտ):

Սյունիքի մարզի **հողաբուսական ծածկը** նույնպես ենթակա է վերընթաց գոտիականությանը: **Անտառային լանդշաֆտները** զբաղեցնում են մարզի տարածքի մոտ 20%-ը: Հիմնական ծառատեսակը կաղնիին է:

Դաս 18-ի լանդշաֆտային գոտիների քարտեզով որոշեք Սյունիքի մարզում փիրապետող լանդշաֆտները:

Ծավ գետի ավազանում ստեղծվել է **Շիկահողի արգելոցը**, որտեղ հայտնի է բնական սոսիների պուրակը (64,2 հա):

Սյունիքն օգտակար հանածոներով ՀՀ ամենահարուստ մարզն է: Առանձնապես հայտնի են **Կապանի պղնձի, Քաջարանի և Ագարակի պղնձամուլիբդենային, Սվարանցի երկաթաքարի, այլ մետաղների (ալյումինի հումք, ազնիվ մետաղներ) հարուստ հանքավայրերը:** Բազմապիսի են բնական շինանյութերը (բազալտ, հրաբխային խարամ, ավազ և այլն):

Մարզում շատ բազմազան են **բնական ու պատմաճարտարապետական** հուշարձանները: Բնական հուշարձաններից են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու այրերը, Շաքիի ջրվեժը (18 մ), Որոտանի ու Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը» և այլն: Ճարտարապետական գլուխգործոցներ են Տաթևի վանական համալիրը (IX դ.), Վահանավանքը (X դ.), Որոտնաբերդն ու Որոտնավանքը (X-XI դդ.), Հալիձորի բերդը (XVII-XVIII դդ.) և այլն: Սիսիանից 3,2 կմ դեպի հյուսիս գտնվում է «Զորաց քարեր» հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունչ անունով (Ք.ա. III հազարամյակ):

Բնակչությունը: Սյունիքի մարզի տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Նոր և նորագույն ժամանակներում (Ռուսաստանի և ԽՍՀՄ կազմում) աշխարհագրական աննպաստ դիրքը և ռելիեֆային բարդ պայմանները խոչընդոտել են տնտեսության զարգացմանը: **Տեղի է ունեցել բնակչության մշտական արտահոսք:** Դա է պատճառը, որ մարզի ընդարձակ տարածքում այժմ ապրում է փոքր թվով բնակչություն: Բնակչության խտությունը շատ ցածր է, զիջում է բոլոր մարզերին, բացառությամբ Վայոց ձորի:

Այդուհանդերձ, կա մի ցուցանիշ, որով **Սյունիքի մարզը գրավում է առաջին տեղը: Դա ուրբանիզացման բարձր մակարդակն է՝ 67%:** Դրան համապատասխան էլ համեմատաբար շատ են քաղաքները: Դրանք 7-ն են՝ Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Քաջարան, Ագարակ, Դաստակերտ:

Մարզի բոլոր քաղաքները երիտասարդ են: Դրանք քաղաք են դարձել 1930-ական թվականներից հետո: Միայն Գորիսն է, որ քաղաք է եղել դեռևս ցարական իշխանության օրոք (1885 թ.):

Կապանը (43,2 հազ. մարդ), լինելով մարզկենտրոն, միաժամանակ արդյունաբերական, կրթական և մշակութային գլխավոր կենտրոնն է:

Մարզի մյուս կարևոր տնտեսական, կրթական և մշակութային կենտրոնը **Գորիսն է** (20,6 հազ. մարդ), որը մարզի տարածքի նկատմամբ ունի բարենպաստ աշխարհագրական դիրք: Սիսիան և Մեղրի քաղաքները նախկինում եղել են համանուն վարչական շրջանների կենտրոններ:

Մարզի մյուս քաղաքները հանքարդյունաբերության կենտրոններ են, որոնցից խոշորագույնը Քաջարանն է (մոտ 8 հազ. մարդ): Անկախության



Տաթևի վանական համալիրը



Ձեռակերպ քարանձավներ Խնածախ գյուղում



Հանքարդյունաբերության կենտրոն Քաջարան քաղաքը

տարիներին, ի տարբերություն ՀՀ այլ քաղաքների, Քաջարանից բնակչության արտահոսք գրեթե տեղի չի ունեցել:

Յուրահատուկ պատկեր ունի մարզի **տարաբնակեցումը**, որը ճշտորեն կրկնում է տարածքի ռելիեֆային առանձնահատկությունները: Գյուղական բնակավայրերը սովորաբար փոքր են (մինչև 500 բնակիչ) և տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ: **Բնակավայրերի խտությունը մեծ է** գետահովիտներում: Մարզի 127 գյուղերից միայն Խնձորեսկը, Տեղը, Շինուհայրը և Վերիշենը ունեն 2 հազ-ից ավելի բնակչություն: Մարզի մի քանի գյուղեր չունեն մշտական բնակչություն:

Տնտեսությունը: Խորհրդային տարիներին Սյունիքը դարձել

է Հայաստանի հանքարդյունաբերության գլխավոր շրջանը: Այժմ նույնպես հանքարդյունաբերության գծով **Սյունիքի մարզը հանրապետությունում առաջինն է:** Այդ ճյուղի (մոլիբդենի և պղնձի խտանյութի արտադրության) խոշոր կենտրոններ են **Քաջարանը, Ագարակը, Կապանը:** Ներկայումս մարզը տալիս է ՀՀ արդյունաբերական արտադրանքի մոտ 18%-ը, և այդ ցուցանիշով զիջում է միայն Երևան քաղաքին: Ընդ որում՝ մարզի արդյունաբերական արտադրանքի 85%-ը բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրն աշխարհի խոշորագույններից է: Նրա բազայի վրա աշխատող **Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ խոշորագույն ձեռնարկություններից է:** Անկախության տարիներին կառուցված և Սյունիքի տարածքով անցնող Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման գծի և գազամուղի շնորհիվ հանրապետության վառելիքաէներգետիկ ճյուղում մեծանում է մարզի նշանակությունը: Այստեղ է գտնվում **ջրային էլեկտրակայանների Հայաստանում երկրորդ՝ Որոտանի կասկադը՝ Սպանդարյանի, Շամբի և Տաթևի ջրէկներով:**

Մարզի **սննդի արդյունաբերությունը** հիմնականում ունի տեղական նշանակություն: Ապրանքային նշանակություն ունեն միայն մրգի պահածոները, գինիները (Մեղրի) և պանիրը (Սիսիան):

Մարզի զբոսաշրջության զարգացմանը նպաստում է 2010 թ. շահագործ-

ման հանձնված 5,7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար՝ «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը՝ 380 մ): Այն անցնում է Որոտան գետի կիրճով և Հալիձոր գյուղից հասնում է Տաթևի վանական համալիր:

Սյունիքի մարզի բնական պայմանների բազմազանությունը պայմանավորում է նաև գյուղատնտեսության բազմաճյուղ բնույթը՝ չնայած որ տարածքի միայն 68%-ն են գյուղատնտեսական նշանակության հողեր, այն էլ՝ հիմնականում որպես արոտավայրեր: Վարելահողերը կազմում են գյուղատնտեսական հողահանդակների ընդամենը 14%-ը: Գյուղատնտեսության զարգացմանը նպաստում են Սիսիանի և Որոտանի ջրանցքները, Սպանդարյանի, Տոլորսի և Շամբի ջրամբարները:

Գյուղատնտեսության մասնագիտացման առումով նկատելի տարբերություն կա մարզի հյուսիսի և հարավի միջև: Հյուսիսում տիրապետում են լեռնային տափաստաններն ու մարգագետինները և դրանց համապատասխան էլ՝ հացահատիկային տնտեսությունն ու անասնապահությունը: Հարավի ցածրադիր գոտիների համար ավելի բնորոշ են մերձարևադարձային պտղաբուծությունը (նուռ, թուզ և այլն):

Տարանցիկ աշխարհագրական դիրքը, բնական մեծ և բազմազան հարստությունները, որակյալ աշխատուժի առկայությունը, բնական ու պատմաճարտարապետական հուշարձանների մեծ քանակը, նոր ճանապարհների և ենթակառուցվածքների կառուցումը, ՀՀ-ի և Իրանի միջև տնտեսական կապերի զարգացումը մեծ հեռանկարներ են ստեղծում մարզի տնտեսության համալիր զարգացման համար: Միաժամանակ ռազմավարական առումով խիստ կարևոր այս մարզի զարգացմանը խոչընդոտում են երևանից ունեցած մեծ հեռավորությունը, նոսր բնակեցումը և տնտեսապես թույլ յուրացումը, տրանսպորտային կապերի այլընտրանքային միջոցների բացակայությունը և խոշոր քաղաքային կենտրոնի բացակայությունը:

Հարցեր և առաջադրանքներ


1. Ինչն է բնորոշ Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքի, մակերևույթի և գետային ցանցի համար:
2. Թվարկեք և բնութագրեք մարզի տարածքի վերընթաց լանդշաֆտային գոտիները:
3. Բնութագրեք մարզի բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցումը:
4. Որո՞նք են մարզի տնտեսության առաջատար ճյուղերը, ինչպե՞ս են դրանք տեղաբաշխված:
5. Բնութագրեք մարզի հեռանկարային զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալները և խոչընդոտները:

ԴԱՍ 59. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ: ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ


Վայոց ձորի մարզ
Տարածքը՝ 2308 կմ²
Բնակչությունը՝ 52,3 հազ. բնակիչ
Կենտրոնը՝ ք. Եղեգնաձոր

Տավուշի մարզ
Տարածքը՝ 2704 կմ²
Բնակչությունը՝ 128,6 հազ. բնակիչ
Կենտրոնը՝ ք. Իջևան

Վայոց ձորի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% , 2012 թ.)



Տավուշի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (% , 2012 թ.)



Վայոց ձորը և Տավուշը բնակչության թվով և տնտեսական ներուժով Հայաստանի Հանրապետության ամենափոքր մարզերն են, նաև ունեն բնական և սոցիալ-տնտեսական պայմանների ընդհանուր գծեր:

Երկու մարզերին էլ բնորոշ են ծայրամասային աշխարհագրական դիրքը, լեռնային կտրտված ռելիեֆը, ռեսուրսապահովվածության ցածր մակարդակը, տարածքի թույլ բնակեցվածությունը, տրանսպորտային նոսր ցանցը, տնտեսության զարգացման ցածր մակարդակը և ագրարային բնույթը, գյուղական բնակչության խիստ գերակշռությունը, տնտեսական խոշոր կազմակերպիչ կենտրոնի բացակայությունը: Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի ծավալներով հանրապետությունում նրանք գրավում են վերջին երկու տեղերը՝ զգալիորեն զիջելով մյուս մարզերին:

Այս մարզերն ունեն նաև տարբերիչ գծեր, ընդգծված յուրահատկություններ:

Վայոց ձորի մարզ: Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Վայոց ձորի աշխարհագրական դիրքի համար բնորոշ է այն, որ երկու կողմից ունի ներքին և երկու կողմից՝ արտաքին սահմաններ:

Քարտեզի օգնությամբ որոշե՛ք մարզի հարևաններին և տարածքը հափող ճանապարհները՝ նշելով դրանց վերջնակետերը:

Նախկինում Վայոց ձորի տարածքը մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ՝ կազմելով նրա Վայոց ձոր գավառը: Ներկայիս Վայոց ձորի մարզը կազմավորվել է նախկին երկու վարչական շրջանների՝ Եղեգնաձորի և Վայքի միավորումից:



Սարգի աշխարհագրական դիրքի համար բնորոշ է այն, որ հարևանների հետ կապող գլխավոր ճանապարհներն անցնում են դժվարամատչելի լեռնանցքներով:

Քարտեզի օգնությամբ գտե՛ք լեռնանցքները:

Բնական պայմանները և ռեսուրսները: Վայոց ձորն աչքի է ընկնում բնական պայմանների մեծ հակադրություններով: Մակերևույթի բարձրությունների տարբերությունն ավելի քան 2500 մ է: Լեռնալանջերն ամենուրեք կտրտված են խոր կիրճերով ու ձորերով: Այդ է պատճառը, որ շատ տեղանուններ վերջանում են «ձոր» բառով՝ Եղեգնաձոր, Աղավնաձոր, Գլաձոր, Ագարակաձոր և այլն:

Սարգի ռելիեֆի կարևոր միավորներից է Արփայի գոգավորությունը, որին հարավից եզերում է Վայքի լեռնաշղթան:

Սարգի հյուսիսով ձգվող Վարդենիսի լեռների տակով անցնում է Արփա-Սևան ջրատար թունելը, որը սկսվում է Արփա գետի վրա կառուցված Կեչուտի ջրամբարից:

Սարգի ցածրադիր գոտում տիրապետում են կիսաանապատային և չոր տափաստանային լանդշաֆտները և չորասեր (ֆրիգանսիդ)



Նորավանք վանական համալիրը

բուսականությունը: Այդ պատճառով էլ մարզի գլխավոր ջրային զարկերակ Արփայի և նրա վտակների երկայնքով ձգվող այգիները թողնում են օազիսների տպավորություն:

Վայոց ձորը ճարտարապետական և բնական **հուշարձանների բացօթյա թանգարան է**: Առանձնապես հայտնի են **Գնդեվանքը** (X դ.), **Նորավանքը** (XII դ.), **Պռոշաբերդը**, **Մոզ ավանի ավերակները** (VIII դ.) և այլն: Գեղեցիկ բնապատկերներով

առանձնանում են Արփայի և Եղեգիսի հովիտները: Բնական հուշարձաններից հայտնի են Մոզրովի և Մագիլի քարանձավները:

Բնակչությունը: Վայոց ձորի մարզը բնակչության թվաքանակով և միջին խտությամբ (23 մարդ/կմ²) ՀՀ մարզերի թվում վերջինն է: Մարզի բնակչության թվի ձևավորման գործում մեծ դեր է խաղացել XIX դարում Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից հայ բնակչության ներգաղթը:

Մարզի **տարաբնակեցման** կարևոր առանձնահատկությունն այն է, որ այստեղ չկան մեծ քաղաքներ և ոչ էլ գյուղերի խոշոր կուտակումներ: Մարզի երեք քաղաքներն էլ՝ **Եղեգնաձորը**, **Վայքը** և **Ջերմուկ քաղաքառողջարանը**, փոքր են: Մարզի բնակչության մեծ մասը (մոտ 65%) ապրում է գյուղերում, որոնցից մի քանիսը մշտական բնակչություն չունեն: Տարածված են փոքր գյուղերը: Ամենամեծ գյուղը Մալիշկան է (4,5 հազ. բն.) բնակչությամբ:

Մարզկենտրոն Եղեգնաձորը (8 հազ. մարդ) պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից է: Ներկայումս մարզի տնտեսական, կրթական և մշակութային գլխավոր կենտրոնն է:

Տնտեսությունը: Վայոց ձորի տնտեսական հզորությունը մեծ չէ: Արտադրության ընդհանուր ծավալում **գերակշռողը գյուղատնտեսությունն է**, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է արդյունաբերական արտադրանքի ծավալին: Գյուղատնտեսական հողահանդակների մեծ մասն արոտավայրեր են: Մշակովի հողատարածքները քիչ են, կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 8%-ը և բաղկացած են փոքր հողակտորներից:

Մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է, որին բաժին է ընկնում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի ավելի քան 2/3-ը:

Վայոց ձորի **ցածրադիր գոտու** ոռոգելի հողերում զբաղվում են խաղողագործությամբ և պտղաբուծությամբ, ցորենի մշակությամբ: **Միջին բարձրության և բարձրլեռնային գոտիներում** գյուղատնտեսության առա-

ջատար ճյուղերն են բրդատու ոչ-խարաբուծությունը և կաթնատու անասնապահությունը:

Վայոց ձորը արդյունաբերության զարգացման համար հումքային նախադրյալներ չունի: Ապագայում արդյունաբերության զարգացման գլխավոր գործոններ մնում են աշխատանքային ռեսուրսները և գյուղատնտեսական հումքը (խաղող, կաթ, բուրդ և այլն):

Մարզի ներկայիս արդյունաբերությունը բաղկացած է պանրի, գորգերի և շինանյութերի արտադրության փոքր ձեռնարկություններից, որոնք գտնվում են **Եղեգնաձոր** և **Վայք** քաղաքներում: Հայտնի են նաև խաղողի գինու արտադրությունը (Գետափ, Արենի) և Ջերմուկի հանքային ջրերի գործարանը:

Տավուշի մարզ: Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Մարզն ունի արտաքին սահմաններ Վրաստանի և Ադրբեջանի, իսկ ՀՀ-ի ներսում՝ Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի հետ:

Խորհրդային տարիներին մարզի տարածքը Հայաստանի համար գլխավոր դարպասի դեր էր կատարում, որով **Հայաստան մուտք էին գործում երկու գլխավոր երկաթուղիները, գլխավոր ավտոմայրուղին և գլխավոր գազատար խողովակը:** Այստեղով էր անցնում Հայաստանն Անդրկովկասի միասնական էներգահամակարգին կապող էլեկտրահաղորդման բարձր լարման գլխավոր գիծը:

Բնորոշ է նաև այն, որ Տավուշը մյուս մարզերի հետ իր կապերը գրեթե բացառապես իրականացնում է իր հարավային սահմանագծով: Արևմտյան սահմանագծի երկարությամբ, որտեղ դժվարամատչելի **Գուգարաց լեռներն են**, տրանսպորտային հաղորդակցություն չկա:

Նախկինում Տավուշի տարածքի մեծ մասը մտել է **Մեծ Հայքի Գուգարք և Ուտիք նահանգների մեջ:**

Տավուշի մարզն իր ներկայիս սահմաններով կազմավորվել է **Նոյեմբերյանի, Իջևանի, Տավուշի** նախկին վարչական շրջանների միավորումից:

Բնական պայմանները և ռեսուրսները: Տավուշի մակերևույթը տիպիկ լեռնային է. բաղկացած է տարբեր ուղղության լեռնաշղթաներից և դրանց միջև ձգվող լայն ու նեղ գետահովիտներից:

Հարավից դեպի հյուսիս մակերևույթն աստիճանաբար ցածրանում է՝ 3000 մ բացարձակ բարձրությունից հասնելով 400 մ-ի:

Մարզի հովտային մասերում՝ մասնավորապես **Դիլիջանի գոգավորության սահմաններում**, լայն տարածում ունեն սողանքները, որոնք մեծ



Ջերմուկի Գլաձոր առողջարանը



վնաս են պատճառում տնտեսությանը, մանավանդ շենքերին ու ճանապարհներին:

Մարզի ընդերքը հարուստ է ոչ մետաղային **օգտակար հանածոներով** (մարմար, քենթոնիտային կավ, ածուխ և այլն):

Ձմեռը մեղմ է, ամառը՝ շոգ: Տարեկան տեղումների քանակը հյուսիսում 450-500 մմ է, հարավում՝ 600-700 մմ:

Գետային ցանցը բավական խիտ է: Ամենամեծ գետն **Աղստևն** է, որի աջքի ընկնող վտակներն են **Գետիկը** և **Ոսկեպարը**:

Միափորի լեռներից սկսվում և գեղատեսիլ հովիտներով դեպի Կուր գետն են հոսում **Հախում**, **Վարագաջուր**, **Խնծորուտ** գետերը: Գետերի վրա կառուցված են ջրամբարներ (**Տավուշ**, **Խնծորուտ**): **Լճերից** հայտնի է գեղատեսիլ **Պարզ լիճը**:

Տավուշը Հայաստանի ամենաանտառաշատ մարզն է. տարածքի համարյա կեսն անտառապատ է: Աղստև գետի ավազանում է գտնվում **Դիլիջանի ազգային պարկը**:

Տավուշում բազմաթիվ են բնական հուշարձանները՝ կիրճերը,

քարանձավները, ջրվեժները և այլն: Մարզի գեղատեսիլ բնության գրկում կան բազմաթիվ պատմական հուշարձաններ, որոնցից առանձնապես ուշագրավ են **Գոշավանքը** (XII դ.), **Հաղարծինի վանքը** (XII դ.), **Մակարավանքը** (X դ.), **Տավուշ բերդը** (X դ.) և այլն:

Բնակչությունը: Տավուշի մարզը բնակեցված է եղել հին ժամանակներից սկսած: Բնակչության որոշ ներգաղթ նկատվել է XVIII դարի սկզբին, երբ դաշտային Արցախի առանձին գավառներից զգալի թվով հայեր վերաբնակեցվել են մարզի ստորին գոտու գյուղերում:

Տավուշի մարզում նույնպես բնակչության մեծ մասը (58%) ապրում է գյուղերում: Քաղաքները 5-ն են՝ **Իջևան**, **Դիլիջան**, **Նոյեմբերյան**, **Այրում**, **Բերդ**: Առավել խոշոր և հայտնի գյուղերն են Աչաջուրը, Կողբը, Հաղարծինը, Այգեհովիտը, Գանձաքարը, որոնք ունեն 3 հազ.-ից ավելի բնակչություն:

Բնակավայրերը մեծամասնությամբ գտնվում են մարզի տարածքի ընդամենը 1/3-ը կազմող ստորին սահմանամերձ գոտում՝ մինչև 1000 մ բացարձակ բարձրություններում: Բացառություն են կազմում **Դիլիջան** քաղաքը և դրան հարող գյուղերի խումբը, որոնք գտնվում են Աղստև գետի վերին հոսանքի շրջանում:

Մարզկենտրոն Իջևանը (21,1 հազ. մարդ): Մարզի տարածքի նկատմամբ ունի հարմար ՏԱԴ: Նրա տնտեսական դերը մեծացել է XIX դարի վերջերին, երբ կառուցվել է Ղազախ-Իջևան-Սևան-Երևան ռազմավարական նշանակության խճուղին:

Տավուշի մարզի ամենահին քաղաքը՝ **Դիլիջանը** (17,7 հազ.մարդ), առողջարանային գործառույթից բացի, ձեռք է բերում նաև ֆինանսական և կրթական գործառույթներ:

Տնտեսությունը: Տավուշի մարզը ՀՀ վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը վեց անգամ գերազանցում է արդյունաբերական արտադրանքին:

Ինչն է բնորոշ մարզի գյուղատնտեսությանը: Նրա **առաջատար ճյուղը՝**



Սողանքապարվարային ծագման Պարզ լիճը



Հաղարծինի վանքը

ծխախոտագործությունը, վերջին տարիներին կրկին վերելք է ապրում: Աստիճանաբար մարզի գյուղատնտեսության **դիմագիծը որոշող ճյուղի** նախկին համբավը վերականգնում է նաև **պտղաբուծությունը**, հատկապես դեղձի մշակությունը: Տավուշը խաղողի համախառն բերքով Արմավիրի և Արարատի մարզերից հետո երրորդն է:

Տավուշի մարզի **անասնապահությունը** ևս ունի իր յուրահատկությունը: **Այն մարզերի մեջ միակն է, որտեղ գերակշռողը խոզաբուծությունն է**, որի զարգացման համար դրական նախադրյալ է անտառային կերի առատությունը:

Այն փաստը, որ մարզի տարածքի միջին գոտին զբաղված է համատարած անտառներով, ազդել է **գյուղատնտեսության տեղաբաշխման վրա**: Անտառից ցած գտնվող ստորին խտաբնակ գոտում կենտրոնացված են **ոռոգովի հողատարածությունները և գրեթե ամբողջ դաշտավարությունն ու այգեգործությունը**: Անտառից վեր, որտեղ մերձալպյան ու ալպյան մարգագետինների թագավորությունն է, գյուղատնտեսության միակ ճյուղն արոտային անասնապահությունն է:

Գյուղատնտեսական հումքի մշակման համար ստեղծվել են **մրգի պահածոների** (Այրում, Բերդ), **գինու** (Իջևան) և **պանրի գործարաններ**: Անտառափայտի բազայի վրա ավելի վաղ Իջևանում ստեղծվել էր **փայտամշակման կոմբինատ**, որը խոշորագույնն է ՀՀ-ում:

Ինչպես Վայոց ձորի, այնպես էլ Տավուշի մարզերի զարգացման **հեռանկարները կապվում են գյուղատնտեսության, գյուղատնտեսական հումքը վերամշակող արտադրությունների, զբոսաշրջության և ծառայությունների ոլորտների զարգացման հետ**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ընդհանուր գծերով են բնութագրվում Վայոց ձորի և Տավուշի մարզերը:
2. Տվե՞ք Վայոց ձորի և Տավուշի մարզերի աշխարհագրական դիրքի համեմատական բնութագիրը:
3. Որո՞նք են Վայոց ձորի և Տավուշի մարզերի բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման առանձնահատկությունները:
4. Ինչ ընդհանուր և տարբերիչ գծերով են բնութագրվում Վայոց ձորի ու Տավուշի գյուղատնտեսությունը:
5. Գնահատե՞ք Վայոց ձորի և Տավուշի մարզերի տնտեսական զարգացման հնարավորություններն ու հեռանկարները:

ԴԱՍ 60. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասի նպատակն է ամփոփել ձեր մարզի (որտեղ գտնվում է ձեր դպրոցը) մասին դասագրքում եղած տեղեկությունները և դրանցից առանձնացնել գլխավորն ու բնութագրականը: Աշխատանքը դասարանում չավարտելու դեպքում կարելի է շարունակել և ավարտել տանը:

Անհրաժեշտ է.

1. Աշխարհագրության տետրում արտագրել և լրացնել հետևյալ աղյուսակը.

ԱՂՅՈՒՍԱԿ

----- մարզի բնության, բնակչության ու տնտեսության առանձնահատկությունները բնութագրող գլխավոր ցուցանիշները

<p>1. ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</p> <ul style="list-style-type: none"> - տարածքը, կմ² - մարզերի շարքում զբաղեցրած տեղը - մակերևույթի բացարձակ բարձրությունների տարբերությունը - գլխավոր լեռները - գլխավոր լեռնագագաթները - գլխավոր լեռնանցքները - օդի ջերմության ցուցանիշները - մթնոլորտային տեղումների քանակը - գլխավոր գետերը, լճերը և ջրամբարները - վերընթաց լանդշաֆտային գոտիները - բնորոշ վնասաբեր բնական երևույթները - բնական և պատմաճարտարապետական գլխավոր հուշարձանները <p>2. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ</p> <ul style="list-style-type: none"> - թվաքանակը, հազ. մարդ - մարզերի շարքում զբաղեցրած տեղը - խտությունը, մարդ/կմ² - ուրբանիզացման մակարդակը, % - քաղաքները - տարաբնակեցման առանձնահատկությունները - հայտնի և խոշոր գյուղերը <p>3. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ</p> <ul style="list-style-type: none"> - գլխավոր բնական հարստությունները, որոնց վրա հենվում է մարզի տնտեսական զարգացումը - տնտեսության կառուցվածքը և զարգացման գլխավոր ուղղությունը - արդյունաբերության առաջատար ճյուղերը - գլխավոր արդյունաբերական կենտրոնները - գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը - գլխավոր մշակաբույսերը - գլխավոր ճանապարհները (ըստ տրանսպորտի տեսակների) - մարզի տնտեսական զարգացման գլխավոր հիմնախնդիրները - տնտեսական կապերը 	
---	--

2. Համառոտ նկարագրե՞ք մարզի ֆիզիկաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքը, բացատրե՞ք դրա բնորոշ գծերը:

ԴԱՍ 61. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Նախորդ դասընթացներից դուք գիտեք, թե ինչ է աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանումը:

Ցուրաքանչյուր երկիր աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցում է այն արտադրանքով, որի գծով մասնագիտացել է: Միաժամանակ ներմուծում է այն արտադրանքը, որի կարիքն ունի, բայց տեղում բավարար պայմաններ չկան դրա թողարկումը կազմակերպելու համար:

Ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը միաժամանակ դրա մասնագիտացման խորացումն է: Այսինքն՝ ավելի ու ավելի շատ արտադրատեսակներով ու դրանց ավելի մեծ քանակով է երկիրը մասնակցում աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանմանը:

Նախկինում Հայաստանի մասնակցությունն աշխատանքի աշխարհագրական բաժանմանը հիմնականում տեղի էր ունենում Խորհրդային Միության սահմանների ներսում: Մինչդեռ շատ թույլ էր նրա մասնակցությունն աշխատանքի միջազգային բաժանմանը, հետևապես և համաաշխարհային շուկային:

Այժմ ՀՀ-ն՝ որպես ինքնիշխան պետություն, ինքն է որոշում իր արտաքին տնտեսական կապերի բնույթը և ուղղությունը. այսինքն՝ ինչ, ինչքան և դեպի ո՞ր արտահանի և դրա դիմաց ինչ և որտեղի՞ց ներմուծի:

Բայց ակնհայտ է նաև, որ երկրի արտաքին տնտեսական կապերի զարգացումը պայմանավորված չէ միայն ցանկությամբ: Այն որոշվում է տնտեսական օրենքներով և կախված է տվյալ պետության հնարավորություններից ու զարգացման մակարդակից: Աշխատանքի միջազգային բաժանման համակարգում կայուն տեղ զբաղեցնելու համար պետք է դիմանալ դաժան մրցակցությանը:

Աշխատանքի միջազգային բաժանմանը մեր մասնակցության նախադրյալներն ընդհանուր առմամբ բավարար են: Կան և՛ բազմազան բնական հարստություններ, և՛ հմուտ մասնագետներ, և՛ բազմաճյուղ տնտեսություն: Բարձր է մի շարք արտադրությունների նկատմամբ միջազգային շուկայի պահանջը: Կարևոր նախադրյալ է նաև այն, որ ձևավորվել են մասնագիտացման ճյուղեր, որոնց հնարավորություններն ավելի են, քան ներքին պահանջարկն է:

ՀՀ-ի արտաքին տնտեսական կապերը բնութագրվում են երկու հիմնական ցուցանիշներով: Առաջինն արտահանման և ներմուծման կա-

ռուցվածքն է, երկրորդը՝ արտահանման և ներմուծման աշխարհագրությունը:

Ներկա անցումային ժամանակաշրջանում խիստ կրճատվել է ՀՀ-ի արտահանման ծավալը: Վերջին տարիներին այն սովորաբար երեք-չորս անգամ գիջում է ներմուծման ծավալին:

Ակնհայտ է, որ ամեն մի երկրի արտահանման ու ներմուծման կառուցվածքն ուղղակիորեն առնչվում է նրա տնտեսության ճյուղային կառուցվածքին:

Արտահանմանը մասնակցում են մասնագիտացման ճյուղերը, իսկ ներմուծումով լրացվում է այն ճյուղերի արտադրանքը, որը չի բավարարում ներքին շուկայի պահանջը:

Մինչ անկախացումը Հայաստանի արտահանմանը մասնակցում էին հարյուրավոր անուն ամենատարբեր տեսակի ապրանքներ: Արտահանման կառուցվածքում առաջին տեղը գրավում էր մեքենաշինության արտադրանքը: Արտահանվում էին էլեկտրաշարժիչներ, գեներատորներ, հաստոցներ, ժամացույցներ և այլն:

Մեծ էր նաև քիմիական արտադրանքի բաժինը: Արտահանվող գլխավոր արտադրատեսակներն էին սինթետիկ կաուչուկը, արհեստական մանրաթելը, արհեստական քարերը, ավտոդողերը, քիմեակտիվները:

Արտահանման ծավալում մեծ տեղ էին զբաղեցնում նաև գունավոր մետաղները, թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքը (կոշիկ, տրիկոտաժ, գորգեր, կոնյակ, գինի, պահածոներ և այլն):

Բնական է, որ սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական նոր պայմաններում փոխվել է ՀՀ-ի ինչպես արտահանման և ներմուծման կառուցվածքը, այնպես էլ աշխարհագրությունը:


Ներկայումս արտահանման կառուցվածքում կարևոր տեղ է գրավում **գունավոր մետալուրգիայի արտադրանքը՝** մոլիբդենի, պղնձի ու բազմամետաղների խտանյութը, ալյումինե փայլաթիթեղը: Արտահանման կառուցվածքում զգալի բաժին ունեն նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները, ոսկե զարդերը, բնական և արհեստական մարգարիտը:

Արդյունաբերության մյուս ճյուղերի արտադրատեսակներից արտահանվում են մրգի ու բանջարեղենի պահածոներ, գինիներ, կոնյակ, հանքային ջրեր, թարմ մրգեր, ծխախոտ, ձուկ, էլեկտրական ապարատներ, ապակե իրեր, հագուստ և այլն:

Ներմուծման կառուցվածքում գլխավորներն են **էներգակիրները** (նավթամթերքներ, բնական գազ), սև մետաղները, հացահատիկը, սննդամթերքի տարբեր տեսակները, արդյունաբերական սարքավորումը, ավտոմեքենաները, քիմիական ապրանքները, հագուստեղենը, կոշկեղենը և դեղորայքը:

ՀՀ արտահանման ծավալների շուրջ կեսը և ներմուծման ծավալների 4/5-ից ավելին բաժին է ընկնում Երևանին: Արտահանման ծավալներում զգալի են նաև Սյունիքի, Լոռու մարզերի բաժինները:

«Արտաքին առևտրի հիմնական գործընկերները (% 2012 թ.)»



Խորհրդային Միության և նրա միասնական տնտեսական համալիրի փլուզումով խախտվեցին, իսկ շատ դեպքերում էլ ամբողջովին ընդհատվեցին նախկին տնտեսական կապերը: Դա մեծ վնաս հասցրեց բոլոր հանրապետություններին և ամենուրեք արտադրության կազմալուծման պատճառ դարձավ:

Այժմ ձևավորվում են արտաքին տնտեսական կապերի նոր կառուցվածք և նոր աշխարհագրություն: Արտահանման ու ներմուծման կառուցվածքը պետք է կատարելագործվի ու հարմարվի միջազգային շուկայի պահանջներին:

Ավելի լուրջ տեղաշարժեր կկատարվեն **արտահանման ու ներմուծման աշխարհագրության մեջ:** ԱՊՀ անդամ երկրների հետ նախկին շատ կապեր կարող են վերականգնվել ու զարգանալ:

Ներկայումս ԱՊՀ երկրներին բաժին է ընկնում ՀՀ-ի արտահանման ընդհանուր ծավալի 22%-ը և ներմուծման՝ 29%-ը: ՀՀ-ի թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ծավալներում մեծագույն մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: ԱՊՀ երկրներ զգալի չափով արտահանում է սննդի արդյունաբերության ապրանքներ (կոնյակ, գինի, պահածո և այլն), ներմուծում է էներգակիրներ (նավթամթերքներ, գազ, ածուխ) և սև մետաղներ:

ՀՀ-ի արտաքին առևտրի կառուցվածքում մեծ է Իրանի, Գերմանիայի, Բուլղարիայի, Բելգիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի և մի քանի այլ պետությունների բաժինը (տե՛ս գծագիրը):

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրե՛ք ինչ է աշխատանքի միջազգային բաժանումը:
2. Ինչպիսի՞ն են աշխատանքի միջազգային բաժանման համակարգում ՀՀ մասնակցության նախադրյալները:
3. Նախկինում ինչո՞ւ են թույլ եղել Հայաստանի արտաքին (միջազգային) տնտեսական կապերը:
4. Բնութագրե՛ք և գնահատե՛ք ՀՀ-ի արտահանման և ներմուծման կառուցվածքը:
5. Համեմատե՛ք արտահանման կառուցվածքը խորհրդային և անկախության տարիներին:
6. ՀՀ-ն արտասահմանյան ո՞ր երկրների հետ է առավել ակտիվ տնտեսական կապերի մեջ և ի՞նչ ապրանքների գծով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 62. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տարածքը՝ 11,4 հազ. կմ²
 Բնակչությունը՝ 144,8 հազ. մարդ
 Մայրաքաղաքը՝ Ստեփանակերտ

**Պատմաաշխարհագրական համառոտ
 ակնարկ:** Լեռնային Ղարաբաղի Հանրա-

պետությունը (ԼՂՀ) որպես **հայկական երկ-
 րորդ անկախ պետություն** հռչակվեց 1991 թ.,
 Խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվող
 Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի
 (ԼՂԻՄ) և նրա հարևան հայաբնակ Շահումյա-
 նի վարչական շրջանի **բնակչության միահա-
 մուռ կամքով**: ԼՂՀ հռչակումը լիովին համա-
 պատասխանում էր միջազգայնորեն ճանաչ-
 ված **ազգերի ինքնորոշման իրավունքին և
 ԽՍՀՄ օրենքներին**: Չնայած դրան՝ Ադրբեջա-
 նը փորձեց ռազմական ուժով ճնշել հայ բնակ-
 չության ազգային-ազատագրական պայքարը:



Հայ բնակչությունը ռազմական գործողություն-
 ների արդյունքում պաշտպանեց ոչ միայն ինքնորոշման իր իրավունքը,
 այլև իրեն միացրեց ԼՂՀ-ի սահմաններից դուրս գտնվող՝ պատմականո-
 րեն հայկական համարվող շրջաններ և ստեղծեց **անվտանգության գոտի**:
 Այդպես ձևավորվեցին ԼՂՀ-ի ներկայիս սահմանները:

ԼՂՀ-ն գտնվում է Հարավային Կովկասի գրեթե կենտրոնական մասում՝
 Փոքր Կովկասի ծալքաբեկորային լեռների արևելքում: Արևմուտքից սահ-
 մանակից է ՀՀ-ին, արևելքից և հյուսիսից՝ Ադրբեջանին, իսկ հարավից՝
 Իրանին:

Այժմ ԼՂՀ-ն վարչականորեն բաժանված է 7 շրջանների՝ Շահումյանի,
 Մարտակերտի, Ասկերանի, Շուշիի, Մարտունու, Հադրութի, Քաշաթաղի, և
 263 համայնքների, որից 10-ը՝ քաղաքային, 253-ը՝ գյուղական: Վարչական
 կենտրոնները շրջանների հետ համանուն են, բացառությամբ Շահումյանի
 շրջանի (կենտրոնը՝ Քարվաճառ) և Քաշաթաղի շրջանի (կենտրոնը՝ Բեր-
 ծոր):



Քարտեզի վրա ցույց տվեք ԼՂՀ սահմանները, վարչական շրջանները և դրանց կենտրոնները:

ԼՂՀ-ի ներկա տարածքը հիմնականում ընդգրկում է **Մեծ Հայքի պատմական Արցախ նահանգի մի մասը**: Պատմական երկարատև ժամանակաշրջանում, չնայած սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների, պարսիկների ներխուժումներին, Արցախը շարունակում էր մնալ հայաբնակ, իսկ իշխանությունները կարողանում էին պահպանել իրենց հարաբերական անկախությունը:

Արևելյան Անդրկովկաս թափանցած թուրքալեզու ցեղերը XV դարից սկսած Արցախի տարածքը կոչել են **Ղարաբաղ**: Այս անունը հետագայում լայն տարածում է ստացել:

Արցախ-Ղարաբաղը XIX դարի սկզբներին պատերազմական գործողությունների հետևանքով Պարսկաստանից անցնում է Ռուսաստանին: Դա ամրագրվում է 1813 թ. **Գյուլիստանի պայմանագրով**: Ռուսաստանի կազմում Ղարաբաղի տարածքը Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մի մասն էր:

Այժմ ԼՂՀ-ն կայացել է որպես ինքնիշխան պետություն, ունի իր խորհրդարանը, կառավարությունը, բանակը, պետական դրոշը, զինանշանը, օրհներգը, զարգացնում է իր տնտեսությունը, ապրում է անկախ պետությամբ լիարժեք կյանքով:

Բնական պայմանները: ԼՂՀ-ն ունի լեռնային բարդ ռելիեֆ: ԼՂՀ-ի ընդհանուր տարածքի 3/4-ը լեռնային է: Մակերևույթի բարձրությունների տարբերությունը ավելի քան 3600 մ է: Հանրապետության տարածքի հյուսիսային մասում արևմուտքից արևելք ձգվում է **Մռավի լեռնաշղթան**, որտեղ գտնվում է ԼՂՀ-ի ամենաբարձր կետը՝ **Գոմշասար գագաթը** (3724 մ): Ամենացածր տեղը (100 մ) հյուսիսարևելյան հատվածն է, որը միացված է Կուր-Արաքսյան դաշտավայրին:

Մռավի լեռնաշղթայի հյուսիսային լանջերը երկար են և մի շարք լեռնաճյուղերով ցածրանում են դեպի Կուրի հովիտը: Հարավային լանջերը կարճ են, ժայռոտ, զառիթափ և մասնատված խոր գետահովիտներով: Մռավի լեռնաշղթայի միջին բարձրության լանջերն անտառապատ են:

Հանրապետության արևմտյան մասում՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ ձգվում է **Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան**: Դրա ամենաբարձր գագաթը **Մեծ Քիրսն** է: Լեռնաշղթայի մոտավորապես կենտրոնական հատվածում գտնվում է **Լիսագորի լեռնանցքը** (2080 մ), որով անցնում է **Գորիս-Ստեփանակերտ խճուղին**:



ԼՂՀ Ազգային ժողովի շենքը



Մռավի լեռնաշղթան

Արցախի լեռնաշղթան ունի անհամաչափ կառուցվածք: Դրա արևմտյան լանջերը կարճ են, զառիթափ և ժայռոտ, իսկ արևելյան լանջերը երկար են, մեղմաթեք և անտառածածկ, մասնատված գետահովիտներով: Հանրապետության ողջ տարածքով դեպի արևելք տարածվում են մի շարք անտառապատ լեռնաճյուղեր: Հայտնի է **Շուշիի սարավանդը**, որն ունի նեղ լեզվակի տեսք և գահավեժ իջնում է **Կարկառ գետի** ու նրա վտակ **Քարինտակի**

հովիտները: Կրաքարային ապարաշերտերի մեջ գոյացել են բազմաթիվ քարանձավներ ու այրեր: Առանձնապես հայտնի է **Ազոխի քարանձավը**:

ԼՂՀ-ի կլիման հիմնականում բարեխառն է, մեղմ, չափավոր և ենթակա է վերընթաց գոտիականության: Արևելքում՝ հարթավայրային մասում այն չոր մերձարևադարձային տիպի է, նախալեռներում՝ չափավոր տաք, չորային, միջին բարձրության լեռներում՝ չափավոր տաք, խոնավ, իսկ առավել բարձրադիր վայրերում՝ բարձրլեռնային ցուրտ:

Հարթավայրային մասերում հունվարի միջին ջերմաստիճանը $-2+2^{\circ}$ է, հուլիսինը՝ $+24^{\circ}+25^{\circ}$, իսկ միջին բարձրության լեռնային գոտում՝ հունվարին $-2^{\circ}-4^{\circ}$, հուլիսին՝ $+20^{\circ}+24^{\circ}$:

Հիշեք՝ ԼՂՀ-ն իր կլիմայով Հայաստանի Հանրապետության ո՛ր մարզին է նման:

Տեղումների տարեկան քանակը նույնպես ըստ բարձրության փոխվում է՝ հարթավայրերում և նախալեռներում 300-450 մմ է, իսկ միջին բարձրություններում՝ 700-1000 մմ: Կայուն ձնածածկույթ ձևավորվում է 1400 մ-ից բարձր վայրերում, իսկ Մռավի լեռնաշղթայում նույնիսկ ամռանը պահպանվում են ձնաբծեր:

ԼՂՀ-ի ջրագրական ցանցը, ինչպես ՀՀ-ի ջրագրական ցանցը, բաժանվում է **Կուր և Արաքս գետերի միջև**: Ջրբաժանն անցնում է Արցախի լեռների կատարային հատվածով:

Գետերի **սնումը խառն է, հոսքը՝ սեզոնային**: Դրանք հորդանում են գարնանը, մասամբ՝ աշնանը, իսկ ամռանը բավական ծանծաղում են:

Կուրի ավազանին պատկանող գետերը՝ Թարթառը, Խաչենագետը, Կարկառը համեմատաբար երկար են և ջրառատ: Համեմատաբար խոշորը **Թարթառ** գետն է, որն սկսվում է Արցախի լեռնաշղթայի հյուսիսային և Մռավի լեռնաշղթայի հարավային լանջերից: Նշանավոր է նրա Թրղի վտակը:

Թարթառ գետի հոսքի ռեժիմը կարգավորելու և ջրերն առավել արդյու-

Նավետ օգտագործելու նպատակով կառուցվել են **Սարսանգի ջրամբարը** (ավելի քան 600 մլն մ³ ծավալով), ինչպես նաև Սարսանգի և Մադադիսի ջրէկ-ները:

Արաքսի ավազանին են պատկանում **Հագարու (Որոտան վտակով), Իշխանագետ, Վարանդա և Խոնաշեն գետերը**: Սրանք ավելի սակավաջուր են:

Արցախի բոլոր գետերի ավազանները հիմնականում անտառապատ են, հովիտները՝ գեղատեսիլ:

Հանրապետության ցածրադիր վայրերում տարածված են կիսաանապատային գորշ հողերը, գետահովիտներում՝ կուլտուր-ոռոգելի հողերը: Լեռներն ի վեր իրար հաջորդում են **վերընթաց հողային գոտիները** (շագանակագույն, անտառային դարչնագույն և գորշ, լեռնամարգագետնային):

Հարթավայրային շրջանների բնական **բուսածածկույթին** բնորոշ են օշինդրային և օշինդրատափաստանային համակցությունները: Նախալեռները ծածկված են խոտային բուսականությամբ, որն աստիճանաբար անցնում է թփուտների՝ ցաքուտների:

ԼՂՀ-ում 1500 մ-ից սկսվում է անտառային գոտին, որն զբաղեցնում է հանրապետության տարածքի 1/3-ը: Բնորոշ են կաղնին, բոխին, լորենին, հացենին, թխկին: Շատ են վայրի պտղատու ծառատեսակները: 2000-3500 մ բարձրություններում տիրապետում են մերձալպյան և ալպյան մարգագետինները:

Վայրի կենդանիներից բնորոշ են բեզուրյան այծը, այծյամը, գորշ արջը, լուսանը, վայրի խոզը, անտառի կատուն, սկյուռը, ինչպես նաև գայլը, աղվեսը, նապաստակը, բազմաթիվ կրծողներ: Հարթավայրերում և նախալեռներում կան սողուններ՝ օձ, մողես, կրիա: Հարուստ է թռչնաշխարհը:

ԼՂՀ-ի տարածքում ըստ բարձրության **հերթափոխում են** չոր տափաստանային, լեռնատափաստանային, լեռնանտառային, լեռնամարգագետնային և ձյունամերձ լանդշաֆտները:

Օգտակար հանածոներից հայտնի են բազմամետաղների, պղնձի, ոսկու, երկաթի հանքավայրերը՝ Թարթառ-Խաչենագետ միջագետքում: Ոչ մետաղային հանածոներից կան մարմարի, կրաքարի, վիմագրական քարի, գրանիտի, գրաֆիտի, գիպսի և կավի հանքավայրեր:



Սարսանգի ջրամբարը

Շատ են հանքային աղբյուրները (Թթուջուր, Հաթերք, Չարեքտար, Տումի):

Գեղեցիկ է Արցախ աշխարհը: Բազմաթիվ են բնական հուշարձանները՝ խորը կիրճերը, ջրվեժները, քարանձավները, «հողե բուրգերը» և այլն:

Հանրապետության տարածքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Հանրահայտ են **Տիգրանակերտը (Ք.ա. I դ.) Ամարասի վանքը (IV դ.), Գանձասարի վանքը (XIII դ.), Դադիվանքը (IV-XIII դդ.), Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին (XIX դ.)**, բազմաթիվ այլ կառույցներ ու միջնադարյան հարյուրավոր խաչքարեր, որոնք լուռ վկայությունն են այն իրողության, որ հարյուրամյակներ անընդմեջ Ղարաբաղը բնակեցված է եղել հայերով:

Հանրապետության շռայլ բնությունը և պատմամշակութային ժառանգությունը տալիս են բոլոր նախադրյալները բարձրակարգ առողջարաններ, հանգստյան տներ ու տուրիստական հանգրվաններ հիմնելու և զբոսաշրջությունը զարգացնելու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Օգտվելով քարտեզից՝ նկարագրեք ԼՂՀ-ի աշխարհագրական դիրքը:
2. Բնչ լեռնագրական տարրերից է բաղկացած ԼՂՀ-ի մակերևույթը:
3. Բնութագրեք ԼՂՀ-ի կլիման և բուսածածկը:
4. Բնչ օգտակար հանածոներ կան ԼՂՀ-ում:
5. Երբ և ինչպես է կազմավորվել ԼՂՀ-ն և ի՞նչ վարչական շրջաններ է ընդգրկում:

ԴԱՍ 63. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂՀ բնակչության ազգային կազմը միատարր է: Բացի հայերից (շուրջ 99%-ը), ապրում են ռուսներ և հույներ:

Բազմաթիվ հայկական և օտար գրավոր աղբյուրները, տարբեր ժամանակներում կառուցված պատմաճարտարապետական հուշարձանները վկայում են, որ հազարամյակներ շարունակ Արցախը բնակեցված է եղել հայերով: Այդպես է եղել նաև XIX դարի սկզբին, երբ Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին:

1913 թ. ԼՂՀ-ի ներկայիս տարածքում բնակվել է 176 հազ. մարդ: 1921 թ., երբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, բնակչության թիվը կազմել է 135 հազ. մարդ, որոնցից 95%-ը հայեր էին: Այլազգիները կազմել են ընդամենը 5%՝ մահմեդականներ (մարդահամարի ժամանակ նրանց գրանցում էին որպես մեկ ազգ) և ուրիշներ:

Խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվելու տարիներին Լեռնային Ղարաբաղի **բնակչության թիվն ու ազգային կազմը** փոխվում էր արհեստականորեն: Ադրբեջանի իշխանությունները ստեղծում էին բոլոր պայմանները, որպեսզի Լեռնային Ղարաբաղի արմատական բնակ-

չությունը՝ հայերը, արտագաղթեն: Նրանց հաջողվում էր այդ եղանակով խափանել հայ բնակչության թվաքանակի աճը: Այսպես, 1913 թ-ից ի վեր՝ մինչև 1959 թ. մարդահամարի տարին, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ոչ միայն չի աճել, այլև տվել է բացարձակ կրճատում (50 հազ.-ով):

Լեռնային Ղարաբաղի բնակչության 1913 թ. թվաքանակը վերականգնվեց միայն 1980-ականների կեսերին: Այն դեպքում, երբ Նույն ժամանակահատվածում մարզի հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Նախիջևանի բնակչությունը կրկնապատկվել ու եռապատկվել էր: Ընդ որում՝ աճը հիմնականում տեղի էր ունեցել ադրբեջանցիների ներգաղթի հաշվին: Բավական է նշել, որ 1989 թ. մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ-ի բնակչության թիվը կազմել է 189,1 հազ., որից 145,5 հազարը հայեր էին, իսկ 40,7 հազարը՝ ադրբեջանցիներ:

Այսպիսով՝ խորհրդային տարիներին ազգային կազմի փոփոխության հիմնական ուղղությունը ադրբեջանցիների թվի և բաժնի ավելացումն էր՝ ի հաշիվ հայերի:

Ադրբեջանի կազմից դուրս գալու նախօրյակին ԼՂԻՄ-ում վերացել էր ավելի քան 50 գյուղ և բոլորն էլ՝ հայկական: Հայ բնակչությունը ստիպված արտագաղթում էր: Դրան հակառակ տեղի էր ունենում ադրբեջանական բնակչության ներգաղթ:

Ադրբեջանի իշխանություններն ֆինչ նպատակ էին հետապնդում՝ այդպիսի քաղաքականություն վարելով:

ԼՂՀ-ի անկախացումից հետո, սկսած 1995 թ-ից, բնակչության թվաքանակի նվազման միտում չի արձանագրվել: Դեռ ավելին՝ 2005 թ. մարդահամարից հետո բնակչության թիվն աճել է 7,0 հազ.-ով և 2012 թ. կազմել 144,7 հազ.:

ԼՂՀ-ի բնակչության թվի աճը նախ և առաջ պայմանավորված է բնակչության համեմատաբար բարձր բնական աճով: Վերջին տարիներին



Արեփանակերտի համայնապատկերը

ծնելիության ընդհանուր գործակիցը կազմել է 18-19%, մահացությանը՝ 9%, իսկ բնական աճինը՝ 9-10%, որը զգալիորեն բարձր է ՀՀ-ի համապատասխան ցուցանիշից:

Բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք՝ 51,9%: Կանանց գերակշռությունն զգալի է հատկապես մեծահասակ բնակչության մեջ: 2012 թ. ԼՂՀ բնակչության ընդհանուր թվաքանակի 25,3%-ը մինչաշխատունակ տարիքի բնակչությունն էր, 62,4%-ը՝ աշխատունակ տարիքի, 12,3%-ը՝ հետաշխատունակ տարիքի բնակչությունը: Ընդհանուր առմամբ, ԼՂՀ-ն ապահովված է աշխատանքային ռեսուրսներով:

Ցածր է բնակչության խտությունը (13 մարդ/կմ²): Բնակչությունն ավելի խիտ է ԼՂՀ-ի արևելյան և հարավարևելյան մասերում՝ **Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի և Հադրուփի շրջանների նախալեռնային գոտում**: Լեռներն ի վեր բնակավայրերի և բնակչության խտությունը պակասում է:

Համեմատաբար նոսր է արևելյան հարթավայրային գոտու բնակչությունը: Վերջին ռազմական գործողությունների հետևանքով սահմանամերձ գյուղերից հեռացած բնակչության մեծ մասը դեռևս չի վերադարձել իր հայրենի օջախը:

Ընդհանուր առմամբ, բնակչության տեղաբաշխման պատկերը, որն անցած տարիներին մեծ փոփոխություններ կրեց, դեռևս չի կայունացել և չի ստացել իր վերջնական տեսքը: Դա հատկապես վերաբերում է ազատագրված և խիստ նոսր բնակեցված տարածքներին՝ Քաշաթաղի և Շահումյանի շրջաններին:

Հաշվվում է 377 բնակավայր, որից 10-ը՝ քաղաքներ: Քաղաքներում ապրում է բնակչության 52,9%-ը: Առավել հայտնի քաղաքներն են **Ստեփանակերտը և Շուշին**:

Գյուղերը փոքր են, գերակշռում են մինչև 500 բնակիչ ունեցող, իսկ ազատագրված տարածքներում՝ մինչև 50 բնակիչ ունեցող գյուղերը:

Ստեփանակերտը՝ ԼՂՀ մայրաքաղաքը, նախկինում **Վարարակն կոչվող հին հայկական բնակավայրն է**: Այն կառուցված է Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթայի արևելյան ստորոտին՝ Կարկառ գետի ձախ ափին, Գորիս-Տիգրանակերտ ավտոխճուղու վրա: Այստեղ է ավարտվում Թբիլիսի-Բաքու երկաթուղու՝ Եվլախից սկիզբ առնող ճյուղավորությունը: Ստեփանակերտով անցնում է նաև Ադրբեջանից Նախիջևան գնացող գազամուղը: Թե՛ երկաթուղին, թե՛ գազամուղն այժմ չեն գործում:



Նորակառուց դպրոց Քարվաճառում

Վերջին տարիներին Ստեփանակերտի համար բնորոշ է եղել բնակչության և քաղաքային տնտեսության համեմատաբար

արագ աճը: Նրան բաժին է ընկնում ԼՂՀ ամբողջ բնակչության մոտ 36%-ը (53,4 հազ. մարդ):

Ստեփանակերտը ԼՂՀ-ի ոչ միայն **վարչական-քաղաքական, այլև մշակութային և արդյունաբերական կենտրոնն է**: Այստեղ են գտնվում հանրապետության նախագահի աշխատակազմը, Ազգային ժողովը, կառավարությունը, ֆինանսական, մշակութային ու առողջապահական գլխավոր օջախները, Արցախի պետական համալսարանը:

Արդյունաբերական ձեռնարկություններից հայտնի են **մետաքսի և շինանյութերի կոմբինատները, էլեկտրատեխնիկական և գինու-կոնյակի գործարանները: Կան նաև գորգագործական, կոշիկի, կահույքի և այլ ոչ խոշոր ձեռնարկություններ**: Արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը չի գործում կամ գործում է փոքր հզորությամբ:

Ստեփանակերտի առաջին հատակագծի (1926 թ.) հեղինակը մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն է:

Շուշին (4,2 հազ. բն.) գտնվում է Ստեփանակերտից 10 կմ հարավ՝ շրջապատի նկատմամբ տիրապետող դիրք ունեցող սարավանդի վրա՝ Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհի հարևանությամբ:

Այժմ Շուշին վերականգնվում է և վերագտնում իր պատմական հայկական նկարագիրը: Քաղաքում գործում են արտադրական, մշակութային, կրթական, սպասարկման, առողջարանային տարբեր հիմնարկներ: Աստիճանաբար վերականգնվում է նրա նշանակությունը՝ որպես **մշակութային, առողջարանային և զբոսաշրջային կենտրոնի**:

ԼՂՀ մյուս քաղաքներից **Մարտունին** (5,8 հազ. բն.), **Մարտակերտը** (4,3 հազ. բն.), **Ասկերանը**, (2,2 հազ. բն.), **Հադրութը** (3,4 հազ. բն.), **Բերձորը** (1,8 հազ. բն.) և **Քարվաճառը** վարչական շրջանների կենտրոններ են: Քաջաթաղի վարչական շրջանում գտնվող **Միջնավան և Կովսական փոքր քաղաքները, ինչպես նաև Քարվաճառը, ունեն մինչև 1000 բնակիչ**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղում ինչպիսի՞ ազգային քաղաքականություն էին վարում և ինչո՞ւ:
2. Ովքեր են Ղարաբաղի արմատական բնակիչները: Ի՞նչ փոփոխություններ է կրել հայ բնակչության թիվը:
3. Որո՞նք են ԼՂՀ ներկայիս ժողովրդական իրավիճակի բնորոշ գծերը:
4. Նկարագրե՛ք ԼՂՀ բնակչության տարաբնակեցման և տեղաբաշխման ընդհանուր պատկերը:

ԴԱՍ 64. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂՀ-ի բազմապիսի բնական հարստությունները և աշխատանքային ռեսուրսները լավագույն նախադրյալներ են բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու և զարգացնելու համար:

Այսպիսով՝ մի կողմից առկա էին տնտեսության զարգացման նպաստավոր նախադրյալներ, մյուս կողմից՝ ադրբեջանական իշխանությունները խոչընդոտում էին այդ նախադրյալների օգտագործմանը և նպաստում էին երկրից աշխատուժի հեռանալուն:

Արցախն իր անկախությունը ձեռք բերելու նախօրյակին դեռևս մնում էր չօգտագործված հնարավորությունների երկիր՝ ագրարային-ինդուստրիալ միակողմանի տնտեսությամբ: Բնակչության զբաղմունքի գլխավոր ոլորտը գյուղատնտեսությունն էր: Մարզը սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով **հետ էր մնում թե՛ Հայաստանից և թե՛ բուն Ադրբեջանից:**

Վերջին տարիներին ԼՂՀ-ում կայուն կերպով աճում են արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի, շինարարության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալները:

2011 թ. տվյալներով ԼՂՀ արդյունաբերության արտադրանքի ծավալը մի փոքր գերազանցում էր գյուղատնտեսության արտադրանքի ծավալին: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի 62,8%-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, 37,2%-ը՝ անասնապահությանը: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ 47%-ը տալիս են Մարտունու և Ասկերանի շրջանները:

ԼՂՀ-ի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հացահատիկի մշակությունը (31%), այգեգործությունը (մոտ 10%), բանջարաբուծությունը և կաթնամսատու անասնաբուծությունը:

Վարելահողերի ընդհանուր տարածքի մեծ մասը (53,1 հազ. հա) հացահատիկի ու հատիկարնդեղենի ցանքատարածություններն են, իսկ բազմամյա տնկարկները զբաղեցնում են 4,6 հազ. հա տարածք: Բնակչության մեկ շնչի հաշվով ԼՂՀ-ն գյուղատնտեսական հանդակների այդ տեսակներով մի քանի անգամ ավելի լավ է ապահովված, քան ՀՀ-ն:



Հացահատիկի բերքահավաք Արցախում

Արցախում մշակվող հացահատիկի գլխավոր տեսակը աշնանացան ցորենն է: Այն մշակում են ամենուրեք, բայց ընդարձակ դաշտերով ու բարձր բերքատվությամբ հատկապես աչքի են ընկնում Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի շրջանների հարթավայրային տարածքները:

Բազմամյա տնկարկներից պտղատու այգիները կազմում են 1,8 հազ. հա, խաղողի այգիները՝ 1,9 հազ. հա, թթենու տնկարկները՝ 0,9 հազ. հա:

Խաղողագործությունը առաջատար ճյուղ է ԼՂՀ-ի դաշտային ու նախալեռնային տնտեսությունների համար: Ի տարբերություն ՀՀ-ի՝ այստեղ ավելի մեղմ ձմռան պայմաններում **խաղողի վազը չեն թաղում**, այդ ճյուղի վրա ավելի քիչ աշխատանք է ծախսվում, և շահութաբերությունը բարձր է:

Լայն տարածում ունի պտղաբուծությունը: Դրանով զբաղվում են բոլոր վերընթաց գոտիներում, սակայն գլխավոր շրջանը **Մարտունին** է:

Ամենուրեք տարածված են **խնձորն ու տանձը, իսկ ցածրադիր գոտիներում՝ նաև դեղձը, ծիրանը, թուզը, նուռը, սերկևիլը**:

Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի համար ամենաբնորոշը **թթաստաններն են**: Թուփն օգտագործվում է որպես սնունդ, իսկ թթենու տերևը շերամի որդի կերն է և օգտագործվում է շերամապահության զարգացման համար: **Իսկ շերամապահությունը մետաքսագործության հիմքն է**:

Անասնապահության գլխավոր ենթաճյուղերն են **տավարաբուծությունը** (ցածրադիր գոտում՝ նաև գոմեշաբուծությունը), **ոչխարաբուծությունը և խոզաբուծությունը**: Արցախցու համար ավանդական զբաղմունք են նաև շերամապահությունը, մեղվաբուծությունն ու ձիաբուծությունը: Անասնապահության ճյուղերն առավել զարգացած են Մարտակերտի, Քաչաթաղի և Ասկերանի շրջաններում:

Արդյունաբերությունը: ԼՂԽՄ-ում արդյունաբերության զարգացումը եղել է թույլ և միակողմանի: Գործել են այնպիսի ճյուղեր, որոնք հենվում էին **տեղական գյուղատնտեսական և անտառային հումքի վրա**: Այդ ճյուղերն են սննդի, թեթև և փայտամշակման արդյունաբերությունը:

Ստեղծվել էին նաև **մեքենաշինական ու շինանյութերի** ոչ հզոր ձեռնարկություններ: Սակայն այդ ճյուղերի զարգացման մակարդակը շատ ցածր էր և չէր համապատասխանում մարզի ոչ բնական ու տնտեսական հնարավորություններին և ոչ էլ տեղական պահանջարկին:

Թերի էին օգտագործվում նաև Լեռնային գետերի հարուստ ու էժան **ջրաէներգետիկ ռեսուրսները**:

Լեռնային Ղարաբաղը բարձր լարման էլեկտրահաղորդման գծով **սնվում էր Ադրբեջանի էլեկտրահամակարգից**: Դրան հակառակ՝ Թարթառ գետի վրա կառուցված **Սարսանգի ջրաէներգետիկ հանգույցը** (ջրամբար և ջրաէլեկտրակայաններ), մտնելով ադրբեջանական համակարգի մեջ, ուղիղ գծով չէր կապվում մարզի էներգասպառողների հետ: Այժմ այդպիսի գիծ կառուցված է: Բացի այդ, ԼՂՀ-ն էլեկտրահաղորդման բարձր լարման գծով միացել է Հայաստանի միասնական էներգահամակարգին:



Դրմբոնի հանրահարստագույցի կոմբինատը

Ներկայումս ԼՂՀ արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում գերակշռում է հանքագործական արդյունաբերության բաժինը (40%): Մինչդեռ նախկինում առաջատար հանդիսացող մշակող արդյունաբերության բաժինը զգալիորեն նվազել է և կազմում է 38%: Դրա հիմնական պատճառն այն է, որ ԼՂՀ-ի այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Ղարաբաղի մետաքսի կոմբինատը և Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանը, գրեթե չեն գործում:

Ներկայումս հանքագործական արդյունաբերության խոշորագույն ձեռնարկությունը **Դրմբոնի հանքահարստացուցիչ կոմբինատն է**, որը պղնձի խտանյութ է մատակարարում ՀՀ-ի Ալավերդու պղնձածուլարանին:

Գորգագործությունը Արցախ-Ղարաբաղում հարուստ ավանդույթներ ունեցող ճյուղ է: Դրա արտադրանքը միշտ էլ արտաքին շուկայում մեծ պահանջարկ է ունեցել: Հայտնի է **Ստեփանակերտի գորգագործական ֆաբրիկան**:

Սննդի արդյունաբերությունը տալիս է մշակող արդյունաբերության շուրջ 64%-ը: Սննդի արդյունաբերության գլխավոր ճյուղը **գինու-կոնյակի արտադրությունն է**: Գինու-կոնյակի գործարանները տեղաբաշխված են Ստեփանակերտում, Ասկերանում, Մարտունու և Մարտակերտի շրջանների մի քանի գյուղերում ու ավաններում:

Փայտամշակման ճյուղի գլխավոր ձեռնարկությունը Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան է: Անտառահատում և փայտամթերում կատարվում է հիմնականում Մարտակերտի, Ասկերանի ու Հադրութի շրջաններում, որտեղ կան անտառանյութի բավարար պաշարներ: Այդ շրջաններում էլ գործում են **սղոցարաններ ու փայտամշակման արհեստանոցներ**:

ԼՂՀ-ում զարգանում է նաև շինանյութերի արդյունաբերությունը: Արդյունահանում են տարբեր տեսակի բնական շինանյութեր, արտադրում են երեսպատման սալեր, գաջ, բետոն և այլն:

ԼՂՀ-ի արդյունաբերությունը տեղաբաշխված է **խիստ անհամաչափ**: Արդյունաբերության համախառն արտադրանքի մոտ կեսը տալիս է Ստեփանակերտը, իսկ 40%-ը՝ Մարտակերտի շրջանը՝ շնորհիվ **Դրմբոնի հանքահարստացուցիչ կոմբինատի**:

ԼՂՀ-ի տրանսպորտի գլխավոր տեսակը **ավտոմոբիլայինն է**: Երկաթուղին (Եվլախ-Ստեփանակերտ գիծը) հանրապետության ներքին ապրանքա- և ուղևորափոխադրումներին չի մասնակցում: Այն խորհրդային շրջանում օգտագործվում էր միայն արտաքին կապերի համար, իսկ այժմ՝ ԼՂՀ շրջափակման պայմաններում, չի գործում ընդհանրապես:

Ավտոմոբիլային ներքին հաղորդակցություն կա մայրաքաղաքի և բոլոր շրջկենտրոնների միջև: Նախկինում շրջկենտրոնները, ինչպես և գյուղերն իրար կապող ճանապարհները մի շարք դեպքերում կառուցված էին այնպես, որ անպայման անցնեն Ադրբեջանի տարածքով: Այդպիսով **ճանապարհային ցանցը նույնպես ծառայում էր ԼՂԻՄ-ը Ադրբեջանից կախյալ վիճակում պահելու նպատակին**: Այժմ այդ ցանցը լրացվում ու կատարելագործվում է այն հաշվով, որ բարեկարգ ճանապարհներով ուղ-

ղակի հաղորդակցությունն ապահովվի հանրապետության բոլոր բնակավայրերի հետ:

ԼՂՀ-ի համար կենսական նշանակություն ունի հուսալի տրանսպորտային հաղորդակցությունը ՀՀ-ի հետ, մասնավորապես **Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոճանապարհը**, որը հիմնովին վերակառուցվել ու բարեկարգվել է: Ներկայումս բարեկարգվում է ՀՀ-ն ԼՂՀ-ի հյուսիսի հետ կապող ավտոմայրուղին: Ավարտվել է ԼՂՀ-ի տարածքը հատող **Հյուսիս-Հարավ մայրուղու կառուցումը**:



Ստեփանակերտի օդանավակայանը

Այդ աշխատանքներին իր ֆինանսական միջոցներով մասնակցել է նաև սփյուռքահայությունը:

Նկատի ունենալով ԼՂՀ-ի քաղաքական-աշխարհագրական դիրքը՝ նրա միջազգային կապերի զարգացման համար անգնահատելի է օդային տրանսպորտի դերը: Դրա հետ կապված՝ վերակառուցվել և միջազգային չափանիշների է դարձել Ստեփանակերտի օդանավակայանը:

Զարգանում են արտաքին տնտեսական կապերը, հատկապես արտաքին առևտուրն ու զբոսաշրջությունը:

ԼՂՀ-ն **արտահանում** է պղնձի խտանյութ, փայտամշակման իրեր, կոնյակ, գինի, թթի օղի և գյուղատնտեսական տարբեր մթերքներ (հացահատիկ, խաղող, մրգեր, միս և այլն): **Ներմուծում է** վառելիք, տարբեր տեսակի արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքներ:

Նախկինում գտնվելով Ադրբեջանի գերիշխանության տակ՝ Լեռնային Ղարաբաղն ի վիճակի չէր արդյունավետ տնտեսական կապեր զարգացնել արտաքին աշխարհի հետ: Այդ կապերը թույլ էին հատկապես Հայաստանի հետ: Վերջինիս բաժինը ԼՂԽ-ի արտահանման ընդհանուր ծավալում կազմում էր ընդամենը 0,3%, իսկ ներմուծման ծավալում՝ 1%-ից քիչ ավելի:

Ներկայումս Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ին պարտադրված տրանսպորտային շրջափակման և պատերազմական վիճակի պայմաններում **նորանկախ երկրի տնտեսական կյանքն ամբողջությամբ կողմնորոշված է դեպի ՀՀ-ն**: Տեղի է ունենում երկու հայկական պետական կազմավորումների տնտեսական միասնացում՝ ինտեգրում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ԼՂՀ տնտեսության զարգացման նախադրյալները:
2. Թվարկե՞ք գյուղատնտեսության առաջատար ճյուղերը և քարտեզի վրա ցույց տվե՞ք դրանց տարածման գլխավոր շրջանները:

3. Գնահատե՞ք ԼՂՀ արդյունաբերության զարգացման արդի մակարդակը, կառուցվածքն ու հնարավորությունները: Ինչքանով է արդյունաբերության զարգացումը համապատասխանում այդ հնարավորություններին:
4. Բնութագրե՞ք ԼՂՀ տրանսպորտը և տնտեսական կապերը:
5. Բացատրե՞ք՝ ինչ էք հասկանում Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ տնտեսական միասնացում (ինտեգրում) ասելով:

ԴԱՍ 65. ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓԻՉ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ավարտելով Հայաստանի աշխարհագրության դասընթացը՝ փորձենք մեր ուսումնասիրած նյութն ամփոփել հետևյալ հարցերով ու առաջադրանքներով.

1. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի երկրաբանական առանձնահատկությունները: Վերլուծե՞ք ներծին և արտածին ուժերի դերը Հայկական լեռնաշխարհի մակերևույթի ձևավորման գործում:
2. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի բնական պայմանների գլխավոր առանձնահատկությունները:
3. Թվարկե՞ք և քարտեզի վրա ցոյց տվե՞ք ու բնութագրե՞ք Հայկական լեռնաշխարհի հիմնական վերընթաց լանդշաֆտային գոտիները:
4. Վերլուծե՞ք և գնահատե՞ք Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերը:
5. Քարտեզի վրա ցոյց տվե՞ք և բնութագրե՞ք ՀՀ լեռնագրական հիմնական միավորները:
6. Որո՞նք են ՀՀ կլիման պայմանավորող հիմնական գործոնները: Դրանք ինչպե՞ս են ազդում տարվա եղանակների և կլիմայական պայմանների վերընթաց փոփոխությունների վրա:
7. Որո՞նք են ՀՀ գետերի հիմնական հատկանիշները: Թվարկե՞ք և համեմատե՞ք Արաքսի և Կուրի ավազանի գետերը:
8. Որո՞նք են ՀՀ հողերի, բուսականության և կենդանական աշխարհի բազմազանության պատճառները և վերընթաց ուղղությամբ փոփոխության առանձնահատկությունները:
9. Որո՞նք են ՀՀ բնապահպանական հիմնախնդիրները: Նշե՞ք ՀՀ հատուկ պահպանվող տարածքները և դրանցում պահպանվող բնական օբյեկտները, բուսատեսակներն ու կենդանատեսակները:
10. Դիագրամների օգնությամբ բնութագրե՞ք ՀՀ բնակչության թվի փոփոխությունները 1828–2013 թթ., բնական ու մեխանիկական շարժերի ցուցանիշների փոփոխությունների հիմնական միտումները:
11. Քարտեզի օգնությամբ բնութագրե՞ք ՀՀ բնակչության տեղաբաշխումը:
12. Վերլուծե՞ք և գնահատե՞ք ՀՀ արդյունաբերության զարգացման տեմպերն ու ճյուղային կառուցվածքի բնորոշ գծերը մինչև անկախացումը:
13. Բնութագրե՞ք և գնահատե՞ք ՀՀ-ի արդյունաբերության վիճակը, կա-

ռուցվածքային տեղաշարժերը և անկման պատճառներն անցումային տարիներին:

14. Որո՞նք են արդյունաբերության գլխավոր ճյուղերի զարգացման և տեղաբաշխման բնորոշ գծերը:
15. Որո՞նք են ՀՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները: Բնական և տնտեսական ռիզործոններն են նպաստում գյուղատնտեսության զարգացմանը կամ սահմանափակում այն:
16. Վերլուծե՞ք և գնահատե՞ք ՀՀ տրանսպորտային ցանցը: Համեմատե՞ք տրանսպորտի ճյուղերի զարգացման վրա ազդող գործոնները:
17. Վերլուծե՞ք և գնահատե՞ք ՀՀ սպասարկման ոլորտի ճյուղերի և զբոսաշրջության զարգացման պայմաններն ու արդի վիճակը:
18. Բնութագրե՞ք ՀՀ վարչատարածքային կառուցվածքը: Քարտեզի վրա ցույց տվե՞ք ՀՀ մարզերը և դրանց կենտրոնները: Առանձնացրե՞ք տարածքով և բնակչության թվով առավել մեծ և փոքր մարզերը:
19. Առանձնացրե՞ք բնական տարբեր ռեսուրսներով (հանքային, հողային, ջրային, անտառային) առավել հարուստ և աղքատ մարզերը:
20. Տարբեր մարզերի օրինակով ցույց տվե՞ք գյուղատնտեսության մասնագիտացման կախվածությունը բնական պայմաններից:
21. Համեմատե՞ք Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերը: Առանձնացրե՞ք բնության, բնակչության և տնտեսության ընդհանուր և տարբերիչ գծերը:
22. Գնահատե՞ք ՀՀ տեղն աշխատանքի միջազգային բաժանման մեջ: Նշե՞ք արտահանման և ներմուծման գլխավոր ապրանքատեսակները:
23. Բնութագրե՞ք ԼՂՀ ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական դիրքերը:
24. Ինչպիսի՞ն են ԼՂՀ տնտեսական զարգացման նախադրյալները և նախկին ու ներկայիս տնտեսական կապերը:
25. Ի՞նչ է նշանակում երկու հայկական պետությունների տնտեսական և քաղաքական միասնացում (ինտեգրում):

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԵԱՐԿԻ ԾԱԼՔԱԲԵԿՈՐԱՎՈՐ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐԸ

Անունը	Երկարությունը, կմ	Ամենաբարձր գագաթը, բացարձակ բարձրությունը, մ
Այծաաունքի	180	Այծաաունք - 3124
Անտիտավրոս	210	Բեյ - 3054
Արեգունո	56	Կարկտասար - 2740
Արցախի (Ղարաբաղի)	120	Մեծ Բլրս - 2724
Արևելաարնտական	500	Կաշկար (Քաջքար) - 3937
Արևելյան Սևանի	42	Ծարասար (Քեթի) - 3437
Բագունի	66	Հայար (Բովաքար) - 3015, Ուրասար - 2992
Բարգուշատի	70	Արանագր - 3392
Գուգարաց	100	Չարինյեռ - 2246
Զանգեզուրի	130	Կապուտջուղ - 3904
Ճաղկունյաց	42	Թեղեմիս - 2851
Հայկական Պար	250	Սուկավետ - 3445
Հայկական Տավրոս	650	Մարուբատար - 2967, Առնոս - 3550
Հաքյարի (Կորդվաց, Քրդստանի)	320	Ջիլո - 4168
Մեղրու	59	Բաղացսար - 3256
Միավորի	54	Մուրղուզ - 2993
Մնձուրի	230	Մնձուր (Սկրաքա) - 3449
Մռավասարի	90	Գոմշասար (Գյամիշ) - 3724
Շիրակի	36	Եզնասար - 2556
Սևանի	50	Քաշաթաղ - 2901, Հինալ - 3373
Վայքի	64	Գուգի - 3120
Վասպուրականի (Կոտուրի)	170	Ավրին - 3623
Վիրահայոց	73	Լավվար - 2544
Ուրծի	45	Ուրծ - 2445
Փամբակի	106	Թեժեռ - 3101

Աղյուսակ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՐԱՌԻԱՅԻՆ ԼԵՌՆԵՐԸ

Լեռնագանգված	Բարձրագույն գագաթը, բացարձակ բարձրությունը, մ	Լեռնագանգված	Բարձրագույն գագաթը, բացարձակ բարձրությունը, մ
Աբուլ	Աբուլ - 3301	Ճղուկի	Ճղուկ - 3582
Արագած	Արագած - 4090	Հատիս	Հատիս - 2528
Արայի լեռ	Արայի լեռ - 2577	Հարամդաղ (Սեհենյ)	Հարամդաղ - 3710
Արմաղան	Արմաղան - 2829	Մասիս (Արարատ)	Մեծ Մասիս - 5165 (Արարատ)
Արսիանի	Արսիան - 3165	Նեմրոթ	Նեմրոթ - 3050
Բյուրակնի	Սրճանց - 3250 (Սերճանց)	Ջավախքի	Աչքատար - 3196
Գեղամա	Աժդահանկ - 3598	Սավալան	Սավալան - 4821
Եղնախաղի	Մեծ Եղնախաղ - 3042	Սիփան	Սիփան - 4434
Իշխանասարի	Մեծ Իշխանասար - 3549	Վայոցսար	Վայոցսար - 2577
Ծաղկանց (Ալադաղ)	Թոնդրակ - 3542	Վարդենիսի	Վարդենիս - 3522
Ծաղկավետի	Ծաղկավետ - 3147		

Աղյուսակ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՍԱՐԱՀԱՐԹԵՐՆ ՈՒ ՈԱՐՉՐԱՎԱՆԿԱԿՆԵՐԸ

Անունը	Բարձրությունը, մ	Անունը	Բարձրությունը, մ
Ախալքալաքի	1700-2000	Կամախի	1200-1600
Աշոցքի	1900-2100	Կարնո (Էրզլումի)	1800-2000
Արղանանի	1800-2400	Կարալի	1650-1900
Գորիսի (Տեղի)	1300-2000	Կոռույքի	1300-1500
Եղվարդի	1000-1500	Շամիրամի	1300-1600
Եռաբլրի	1400-2400	Սյունիքի	2500-3200
Թալինի	1250-1800	Տեկորի	1200-2000

Աղյուսակ 4

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՍԻՉԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐԸ (ՎԱՇՏԵՐԸ)

Անունը	Բացարձակ բարձրությունը, մ	Անունը	Բացարձակ բարձրությունը, մ
Ալաշկերտի	1650-1900	Խնուսի	1500-1600
Աշկալայի	1650-1750	Կոզովտի	1500-1800
Արարատյան	800-1200	Շապաղջյուլի	1000-1200
Արզիճիի	2100-2300	Մալաթիայի	600-1000
Բաղանովտի (Բալուխ)	950-1100	Մանազկերտի	1500-1700
Բասենի	1700-1850	Մասրիկի	1900-2000
Գերջանի	1400-1500	Մշո	1200-1500
Էրզնկայի	1200-1400	Նախիջևանի	600-900
Լոռվա	1400-1600	Շիրակի	1500-1600
Խարբերդի	900-1000		

Աղյուսակ 5

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՈՒՄՔԻ ԳԻՏԵՐԸ

Անունը	Երկարությունը, կմ	Ջրիավար մակերեսը, հազ. կմ ²	Միջին տարեկան ծախսը, մ ³ /վրկ (դիտման կայանը)
Ազատ	55	0.572	7 (Ջովաշեն)
Ախուրյան	186	9.700	30.7 (Հայկաձոր)
Ադսուն	133	2.589	9.2 (Իջևան)
Արածանի	650	40.0
Արաքս	1072	102.0	222 (Կարադոնի)
Արգիճի	51	0.366	5.2 (Գետաշեն)
Արփա	128	2.630	21.2 (Արենի)
Գավատագետ	24	0.467	3.82 (Նորադուզ)
Դեբեդ	178	4.080	35.8 (Այրում)
Եփրատ	3065	673.0	840 (Հիտ քաղաքի մոտ)
Կուր	1364	188.0	575 (գետաբերան)
Հրազդան	141	2.560	23 (Մասիս)
Չորագետ	71	1.450	16.8 (Գյառգյառի գետախառնուրդից ցած)
Շորոխ	438	22.0	285 (գետաբերան)
Մասրիկ	45	0.685	4.14 (Տորֆ)
Մեծամոր-Քաաղ	38/89	3.540	33.1 (Ռամշալար)
Մեղրիգետ	36	0.274	3.23 (Մեղրի)
Ռոջի	82	1.175	9.6 (Կապան)
Ռոտան	178	5.650	23 (Էյվազլար)
Վեդի	58	0.790	2.57 (գետաբերան)
Տիգրիս	1900	375.0	1240 (Բաղդադ)
Փամբակ	86	1.370	12 (Թումանյան)
Քասաղ	89		6.75 (Աշտարակ)

Աղյուսակ 6

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՈՒՄՔԻ ԼՆԵՐԸ

Անունը	Գտնվելու վայրը	Բացարձակ բարձրությունը ծովի մակարդակից, մ	Մակերեսը, կմ ²	Առավելագույն խորությունը, մ
1	2	3	4	5
Ալ	Սյունիքի բարձրավանդակ	2900	0.6	4.5
Ալ (Ալագյոլ)	Վարդենիսի լ-շղ	2974	0.53	4.0
Ակմա	Գեղամա լ-շղ	3030	0.53	մոտ 15
Այլը (Մեծամոր)	Արարատյան դաշտ	860	0.07	9.4
Արփի	Աշոցքի սարահարթ	2025	22.0	8.0

Աղյուսակ 6 (շարունակություն)

1	2	3	4	5
Գայլատու (Բալքեյոլ)	Հայկական Պար	2247	33.0	մոտ 10
Խանչալի	Ախալքալաքի սարահարթ	1931	13.7	1.2
Խոզալյին	Ախալքալաքի սարահարթ	1801	26.6
Կապուտան	Զանգեզուրի լեռներ	3300	0.1	22.0
Ղազան	Զանգեզուրի լեռներ	3590	0.06	10.0
Մադաթափա	Ախալքալաքի սարահարթ	2113	8.9	1.2
Նեմրուք	Նեմրուք լեռ	2400	9.0
Պարզ	Արեգունու լեռներ	1334	0.03	10.0
Սադանո	Ախալքալաքի սարահարթ	1998	5.0	2.5
Սև	Սյունիքի բարձրավանդակ	2666	2.0	7.5
Սևանա	Լեռնաշխարհի հյուսիս-արևելք	1898 (1916)	1260.0 (1416)	81.0 (99)
Վանա	Լեռնաշխարհի հարավ	1720	3764.0	451
Տաբաթուրի	Ախալքալաքի սարահարթ	1990	14.2	40.2
Ռոմիա	Լեռնաշխարհի հարավ-արևելք	1275	5775.0	15.5
Փարվանա	Ախալքալաքի սարահարթ	2074	37.5	33
Քարի	Արագած լեռնազանգված	3190	0.12	8.0

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետության մարզերի հիմնական տնտեսական ցուցանիշները (մլրդ. դրամ) 2012 թ.

Մարզերը	Ամբողջ արդյունաբերությունը	Այդ թվում			Ամբողջ գյուղատնտեսությունը	Այդ թվում		Ծառայությունների ծավալի
		Հանքագործական արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրականության, գազի, ջրի գոյորշու		Բուսաբուծություն	Անասնապահություն	
Հայաստանի Հանրապետություն	1121,9	193,4	699,4	229,1	841,5	516,0	325,5	974,6
ք. Երևան	450,1	2,2	365,1	82,8	8,2	3,5	4,7	845,6
Արագածոտն	19,6	0,6	15,5	3,5	86,0	49,5	36,5	8,2
Արարատ	104,8	1,0	92,9	10,9	126,3	102,9	22,4	13,2
Արմավիր	44,5	0,2	17,1	27,2	148,4	117,6	30,8	16,8
Գեղարքունիք	21,7	8,9	7,9	4,9	152,7	100,5	52,2	7,9
Լոռի	80,0	9,8	61,2	9,0	57,4	20,9	36,5	14,7
Կոտայք	144,9	1,1	84,8	59,0	53,0	18,1	34,9	28,2
Շիրակ	40,7	0,1	34,2	6,4	94,0	47,8	46,2	18,5
Սյունիք	198,7	168,9	9,6	20,2	57,7	29,5	28,2	11,7
Վայոց ձոր	9,1	0,1	6,1	2,9	18,4	6,3	12,1	4,4
Տավուշ	7,8	0,5	5,0	2,3	40,4	19,4	21,0	5,4

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաս 1. Ներածություն.....	3
ՀԱՅԱՍՏԱՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ	6
Դաս 2. Հայաստանը աշխարհի քարտեզում: Սահմանները: Աշխարհագրական դիրքը.....	6
Դաս 3. Երկրաբանական առանձնահատկությունները: Մակերևույթի հիմնական գծերը	8
Դաս 4. Կլիմայական առանձնահատկությունները	16
Դաս 5. Ջրագրական ցանցը.....	18
Դաս 6. Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը.....	22
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	27
Դաս 7. Ընդհանուր ակնարկ: ՀՀ սահմանների ձևավորումը, աշխարհագրական դիրքը	27
Դաս 8. Վարչատարածքային կառուցվածքը և տարածքային կառավարումը.....	30
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ	34
Դաս 9. Երկրաբանական կառուցվածքը: Օգտակար հանածոները	34
Դաս 10. Մակերևույթը	39
Դաս 11. Մակերևույթը (շարունակություն)	43
Դաս 12. Կլիմայի ընդհանուր բնութագիրը.....	46
Դաս 13. Տարվա կլիմայական եղանակները: Կլիմայի վերընթաց գոտիականությունը	49
Դաս 14. Ջրագրությունը: Գետերը.....	52
Դաս 15. Ջրագրությունը: Լճերը: Սևանա լիճ.....	56
Դաս 16. Հողային ծածկույթը.....	60
Դաս 17. Բուսականությունը: Կենդանական աշխարհը.....	63
Դաս 18. Լանդշաֆտները: Վերընթաց գոտիականություն	66
Դաս 19. Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները	70
Դաս 20. Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ «Կարմիր գրքերը»	73
Դաս 21. Էքսկուրսիա բնության գրկում	77
Դաս 22. Հարցեր և առաջադրանքներ «Հայկական լեռնաշխարհ» և «Հայաստանի Հանրապետության բնությունը» բաժինների կրկնության համար.....	78
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ	80
Դաս 23. Ընդհանուր ակնարկ: Թվաքանակի շարժընթացը.....	80
Դաս 24. Բնակչության թվի բնական և մեխանիկական շարժերը.....	83
Դաս 25. Բնակչության կազմը	87
Դաս 26. Աշխատանքային ռեսուրսները.....	90
Դաս 27. Բնակչության տեղաբաշխումը: Տարաբնակեցումը.....	93
Դաս 28. Խոշոր քաղաքները.....	98
Դաս 29. Մայրաքաղաք Երևան	102
Դաս 30. Հարցեր և առաջադրանքներ «Հայաստանի Հանրապետության բնակչությունը» բաժնի կրկնության համար	107
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	108
Դաս 31. Ընդհանուր բնութագիրը	108
Դաս 32. ՀՀ արդյունաբերությունը: Ընդհանուր բնութագիրը: Ճյուղային կառուցվածքը.....	112
Դաս 33. Վառելիքաէներգետիկ համալիրը	116
Դաս 34. Մետալուրգիական արդյունաբերությունը.....	120

Դաս 35. Մեքենաշինությունը	123
Դաս 36. Քիմիական արդյունաբերությունը	126
Դաս 37. Թեթև արդյունաբերությունը	128
Դաս 38. Արդյունաբերության նորագույն ճյուղերը.....	131
Դաս 39. Արդյունաբերության այլ ճյուղերը.....	134
Դաս 40. ՀՀ գյուղատնտեսությունը: Ընդհանուր բնութագիրը	137
Դաս 41. Հողային ֆոնդը: Գյուղատնտեսական հողաբարելավումը.....	140
Դաս 42. Բուսաբուծությունը	144
Դաս 43. Անասնապահությունը	147
Դաս 44. Գյուղատնտեսական մթերքների վերամշակումը: Ագրոարդյունաբերական համալիրը	151
Դաս 45. Գործնական աշխատանք	154
Դաս 46. ՀՀ տրանսպորտը: Ընդհանուր բնութագիրը	155
Դաս 47. Տրանսպորտի գլխավոր տեսակները	158
Դաս 48. ՀՀ սպասարկման ոլորտը: Ընդհանուր բնութագիրը: Կրթության և գիտության ճյուղերը	162
Դաս 49. Մշակույթը, առողջապահությունը, առևտուրը և այլ ճյուղեր	165
Դաս 50. Զբոսաշրջությունը	168
Դաս 51. Հարցեր և առաջադրանքներ «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը» բաժնի կրկնության համար.....	171
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԸ	173
Դաս 52. Արագածոտնի մարզ	173
Դաս 53. Արարատի մարզ: Արմավիրի մարզ	178
Դաս 54. Գեղարքունիքի մարզ	184
Դաս 55. Լոռու մարզ	189
Դաս 56. Կոտայքի մարզ	193
Դաս 57. Շիրակի մարզ	197
Դաս 58. Սյունիքի մարզ	202
Դաս 59. Վայոց ձորի մարզ: Տավուշի մարզ	208
Դաս 60. Գործնական աշխատանք	215
Դաս 61. Հայաստանի Հանրապետությունն աշխատանքի միջազգային բաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը.....	216
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԻԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	219
Դաս 62 Ընդհանուր բնութագիրը: Սահմանները: Բնական պայմանները	219
Դաս 63. Բնակչությունը	224
Դաս 64. Տնտեսությունը	228
Դաս 65. Հարցեր և առաջադրանքներ դասընթացի ամփոփիչ կրկնության համար	232
ՀԱՎԵԼՎԱԾ	234

ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

ՀԱՅԱՍՏԱՆ

9-րդ դասարան

Քարտեզները՝ Վարդան Մխիթարյանի

Խմբագիր՝ Արտակ Ոսկանյան
Սրբագրիչ՝ Անահիտ Պապյան
Ձևավորումը՝ Նվարդ Հայրապետյանի
Շապիկը՝ Արամ Ուռուտյանի

Պատվեր՝ 1109: Տպաքանակ՝ 28317:
Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 70x100/16: 15 տպ. մանուկ:
Տառատեսակը՝ GHEA Arpi Sans:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

